

Պիքսը յուսադատճեճահանվել է

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Պիքսը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՌԻ ԱՆՔՆԱԿՆԻ ՎԱՐՈՂ ԵՔ ՁՅԻ ՆՅՐԿՈՒՄՆԸ ԱՐԿԵՍԱԸ ԼՅՅԱՅԱՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՐԱՆՈՂ
ԼՈՒՄԻՆՈՍԱՑՔԵՆԱԿՆԵՆԻ ԳՐԵՐ:

Ք-ՈՒՅՈՒՆ ԳՐԵՐԻ ՄՔԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆԵՐՈ ՎԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՐԱՆ "ՏԱՐԱԾՄԱՅՈՒՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻՍՏԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ՎՈՅՔԻՑ

www.freebooks.do.am

ՇԱՐՁՄԱԿԱՆ ԵՒՐ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ՎՈՅՔԻՑ:
ՏԱՐԱԿՈՒՄ ԵՒՐ ԼՈՒՅԵԼԻ ԸՆԹՐՏՈՒՆԻՔՅԱԿՆԸ:



ԳՐԵՐ ՄԻՐ՝ freebooks@yambler.ru

Ինչ Ընդհանրությամբ



ՀԱՅԿԱՆ ԶԱՆԿԱԾԻՒԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

451° ՇՍՏ ԶԱՐԵՆՀԱՅԹ



ԳԻՏԱԿԱՆ ՖԱՆՏԱՍՏԻԿԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Իմ իմ Լյուսին

**451°
ԸՍՏ ՖԱՐԵՆՀԱՅԹԻ**

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱՂ»

1986

ԳՄԴ 84 . 7ԱՄՆ

Բ 906

Բտ $\frac{84(3)}{Բ906}$

Անգլերենից թարգմանեց
ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆԸ

Ռ. Բրեդբերի


Բ 906 451° ըստ Ֆարենհայթի: Վեպ: Պատմվածքներ: Ռպր. բարձր տարիքի համար /Ռեյ Բրեդբերի: Անգլ. թարգմ. Լ. Անանյանը: Նկ. Վ. Հարությունյան].— Եր.: Սովետ. գրող, 1986, 232 էջ:

Ռեյ Բրեդբերին ամերիկյան հայտնի ֆանտաստ գրող է, որն իր ստեղծագործության մեջ միահյուսում է ֆանտաստիկայի, հեքիաթի ու փիլիսոփայական ակաբանության տարրերը: «451° ըստ Ֆարենհայթի» վեսյում և պատմվածքներում հեղինակը պատկերում է գիտատեխնիկական հեղափոխության բուռն աճի և մարդու բարոյական «հասունացման» խզման հնարավոր հետևանքները, մտորում ապագայի քաղաքակրթության մասին:

Բ $\frac{4803020000(509)}{705(01)86}$ 135 86 «Տ»

ԳՄԴ 84 . 7ԱՄՆ

451° Ը Ս Տ Ֆ Ա Ր Ե Ն Հ Ա Յ Թ Ի



Տարենիայթի 451 աստիճանում թուղթը
բռնկվում է ու այրվում:

«Եթե քեզ տողատամ թուղթ տան,
գրիր հակառակ ուղղությամբ»:
ԽՈՒԱՆ ՈԱՄՈՆ ԽԻՍԵՆԵՄ՝

Ա ո ա ջ ի ն մ ա ս

ԱՅՐԵԼՈՒ ՀԱՃՈՒՅՔԸ

Մի ուրիշ, առանձնահատուկ հաճույք էր տեսնել, թե
ինչպես է կրակը լափում իրերը, ինչպես են դրանք սևա-
նում ու ձևափոխվում: Փողրակի պղնձե ծայրը սեղմված է
բռունցքի մեջ, վիթխարի պիթոնի երախից դուրս է ժայթքում
նավթի թունավոր շիթը, արյունը խուժում է քունքերը: Չեղքերը
թվում են կրակի և ավերումի սիմֆոնիա արարող զարմանա-
հրաշ դիրիժորի ձեռքեր, որ մոխրի են վերածում պատմու-
թյան պատառոտված, ամխացած էջերը: 451 թվակիր խորհրդ-
դանշական սաղավարտն իջեցված է աչքերին, որոնք տենդա-
զին սպասումից նարնջագույն փայլ են արձակում: Նա սեղմում
է բռնկիչը, և կրակն ագահորեն կլանում է տունը՝ իրիկնա-
լին երկինքը ներկելով կարմրադեղնասևավուն երանգներով: Նա
քայլում է հրակարմիր կայծոռիկների թվացյալ պարսի միջով և
շատ է ուզում կրկնել իր մանկական հրապուրանքը՝ բոցի մեջ
մտցնել սառնաշաքարով փայտիկը, մինչդեռ գրքերը, աղավնի-
ների նման թափահարելով էջաթևերը, մեռնում են սանդղա-

¹ Խուան Ռամոն Խիմենես (1881—1958) — իսպանացի բանաստեղծ,
Նոբելյան մրցանակի դափնեկիր:

Այս և հետագա ծանոթագրությունները թարգմանչինն են:

մութին և տան դիմաց փոված փոքրիկ մարգագետնում: Գըրքերը թռչում են բոցեղեն մրրիկի մեջ, և Յխախառն քամին բշում տանում է նրանց:

Ռաժան ժպիտը սառեց Մոնթազի դեմքին: Այդպիսի ժպիտ հայտնվում է մարդու շուրթերին, երբ անակնկալ դաղում է կրակը, և նա կտրուկ ետ է ցատկում նրա բարկ հպումից:

Մոնթազը գիտեր, որ հրակայան վերադառնալով, ինքը՝ կրակի քուրմը, նայելով հայելու մեջ, մտերմաբար աչքով կանի իր խանձված, մրոտ կերպարանքին: Ավելի ուշ, արդեն անկողին մտնելով, խավարի մեջ նա դեռ երկար պիտի շրթունքներին զգար սառած ջղաձիգ ժպիտը: Որքան հիշում է, այդ ժպիտը երբեք չի անհետացել իր դեմքից:

Նա փայլեցրեց սև սաղավարտը, կախեց հրակայուն բաձկոնի հետ, հանույթով լվացվեց ցնցողի ուժեղ շիթի տակ, ապա ձեռքերը գրպանները խոթած, սուլելով կտրեց անցավ հրակայանի գրասենյակի վերնահարթակն ու ցած սահեց բաց անցքից: Վերջին պահին, երբ զգաց, որ աղետն անխուսափելի է՝ ձեռքերը գրպաններից հանեց, բրոնզե ձողից բռնեց և ներքնահարկի ցեմենտե հատակին կրունկները դիպչելուց մի վայրկյան առաջ ճոխնչով արգելակեց:

Կեսգիշեր էր: Հրակայանից ամալի փողոց դուրս գալով՝ նա քայլեց մետրոլի ուղղությամբ: Օդամուղ գնացքը անաղմուկ սահեց ստորգետնյա թունելի՝ հիանալի լուռած խողովակով և տաք օդի ուժեղ հոսանքով նրան դուրս բերեց դեպի քաղաքի արվարձաններից՝ մեկը տանող բաց դեղնավուն շարժասանդուղքի մոտ:

Մոնթազը սուլելով բարձրացավ շարժասանդուղքով՝ գիշերալին լուռությանն ընդառաջ: Որոշակի ոչ մի բանի մասին չմտածելով՝ նա հասավ անկյունադարձին: Բայց շրջվելուց առաջ դանդաղեցրեց քայլերը: Ինչ-որ տեղից սկիզբ առած քամի՞ն վզգալով սուրաց, թե՞ մեկը տվեց իր անունը:

Արդեն մի քանի գիշեր էր, ինչ մոտենալով շրջադարձին, իրեն աստղալույսի տակ տուն հասցնող մայթին, նա տարօրինակ զգացում էր ունենում: Նրան թվում էր, թե շրջվելուց մի պահ առաջ ինչ-որ մեկը անկյունից հետամտում է: Ծրջակայքում կատարյալ անդորր էր, բայց ասես նա թաքնված սպա-

սում էր և միայն իր հայտնվելուց մի ակնթարթ առաջ հանկարծ վերածվում էր ստվերի, ու ինքն անցնում էր նրա միջով: Թերևս նրա ունգերը թույլ բուրմունք էին որսում, գուցե դեմքի ու ձեռքերի մաշկն զգում էր ջերմության աննշան ավելացում այնտեղ, ուր կանգնած էր անտեսանելին: Անհնար էր ըմբռնել: Ամեն անգամ, անկյունում շրջվելով, նա տեսնում էր սուկ ամալի մայթի ճերմակ սալերը: Միայն մի գիշեր նրան թվաց, թե ինչ-որ ստվեր երևութացավ մարգագետնում և մինչ կփորձեր ստուգել կամ որևէ բան անել՝ տեսիլքն իսկույն անհետացավ:

Իսկ այս գիշեր Մոնթագն այնքան դանդաղեցրեց քայլերը, որ համարյա կանգ առավ: Նա մտովի անկյունադարձում էր արդեն, երբ թույլ շրջյուն լսեց: Ինչ-որ մեկի շնչառությո՞ւնն էր կամ գուցե օդը տատանվում էր ինչ-որ մեկի ներկայությունի՞ց, որ կանգնել ու սպասում էր:

Նա թեքվեց փողոցի անկյունադարձում:

Քամուց քշված աշնանային տերևները պտտվում էին լուսնի լույսով ողողված մայթի վրա, իսկ ընդառաջ եկող աղջիկը թվում էր՝ ոչ թե քայլում, այլ պարզապես սահում էր տերևների ու քամու միջով: Նա գլխահակ հետևում էր, թե ինչպես են կոշիկների ծայրերը դիպչում պարող տերևներին: Նրա նուրբ, մեղմ ու կաթնագույն դեմքը անհագ հետաքրքրասիրություն էր արտահայտում: Հայացքը՝ թեթև զարմանք: Մուգ աչքերով այնպես ուշադիր էր գննում շուրջը, որ թվում էր՝ ոչինչ չի վրիպի նրանից: Աղջիկը ճերմակ, խշխշան զգեստ էր հագել: Մոնթագին թվում էր, թե ինքը, քայլքին համապատասխան, տեսնում է նրա ձեռքերի ամեն մի շարժումը, դեմքի շենշող դողը, լսում նույնիսկ անորսալի թվացող հնչյունները: Հանկարծ աղջիկը գլուխը բարձրացրեց ու տեսավ, որ ընդամենը մի քանի քայլ, և ինքը կբախվի մայթի մեջտեղում կանգնած տղամարդուն:

Նրանց գլխավերևում խշշացող ճյուղերը չոր տերևների անձրև տեղացին: Աղջիկը կանգ առավ: Անակնկալի գալով՝ նա ուզում էր ետ ցատկել, բայց սուկ անքթիթ նայեց Մոնթագին: Նրա մուգ, կայծկլտուն ու կենսախի՛նդ աչքերն այնպես շողացին, ասես ինչ-որ փաղաքուշ խոսք լսեց: Սակայն Մոնթագը գիտեր, որ ինքը ողջունեց նրան: Ապա նկատելով, որ աղջիկը

Լախարդվածի պես նայում է իր համազգեստի թևքի սալմանդրի և կրծքի փյունիկի պատկերներին, հարցրեց.

— Ղուբ մեր նոր հարնանուհի՞ն եք:

— Իսկ դուք, հավանաբար...,— վերջապես նա հայացքը կտրեց նրա մասնագիտական նշաններից,— հրկիզո՞ղ եք:— Աղջկա ծայնը մարեց:

— Այդ ի՞նչ տարօրինակ ձևով ասացիք:

— Ես... ես գլխի կընկնեի նույնիսկ աչքերս փակ,— ցածրածայն ավելացրեց նա:

— Նավթի հոտից, չէ՞: Կինս միշտ դժգոհում է:— Սոնթազը ծիծաղեց:— Երբեք հնարավոր չէ մաքուր լվանալ:

— Այո, հնարավոր չէ,— չգիտես ինչու վախվորած ասաց աղջիկը:

Սոնթազին թվաց, թե նա պտտվում է իր շուրջը, շուտուժուտ է տալիս իրեն, թեթևակի թափահարում, դատարկում գըրպաններն՝ առանց որևէ շարժումի:

— Նավթի հոտը,— ձգվող լուրջությունը խզելու համար ասաց նա,— ինձ համար ասես օժանելիքի բույր լինի:

— Իսկապե՞ս:

— Իհարկե, իսկ ինչո՞ւ ոչ:

— Չգիտեմ,— առժամանակ մտածելուց հետո պատասխանեց նա, ապա շրջվեց իրենց տների կողմը:— Կարելի՞ է քայլել ձեզ հետ: Իմ անունը Քլարիս Մըքլելըն է:

— Քլարիս... Ես Գայ Սոնթազն եմ: Գնացի՞նք: Մենակ ի՞նչ եք անում այս ուշ ժամին: Քանի՞ տարեկան եք:

Տաք, հողմաշունչ գիշերվա մեջ նրանք քայլում էին լուսնից արծաթագծած մայթով. Սոնթազին թվում էր, թե օղը հագեցած է թարմ ծիրանի բույրով: Նա նայեց շուրջը և հասկացավ, որ խաբկանք է: Չէ՞ որ ուշ աշուն էր: Ո՛չ, այդ ամենը չկար: Կար միայն կողքից քայլող աղջիկը, որի դեմքը ձյան պես փայլաժում էր լուսնի լույսի տակ: Նա զգում էր, որ Քլարիսը մտորում է իր տված հարցերի շուրջը, որպեսզի ավելի լավ պատասխան տա:

— Ղե՛,— վերջապես ասաց նա,— ես տասնյոթ տարեկան եմ և խենթ: Քեռիս պնդում է, թե մեկն անխուսափելիորեն ուղեկցում է մյուսին: Նա ասում է՝ եթե տարիքդ հարցնեն,

միշտ պատասխանիր, որ տասնյոթ ես և խենթ...: Գիշերով զբոսնելը հաճելի է, չէ՞: Ես սիրում եմ զննել իրերը, հոտոտել, երբեմն ամբողջ գիշերը թափառում եմ և դիմավորում արևածագը:

Որոշ ժամանակ նրանք քայլում էին լուռ: Հանկարծ աղջիկը մտախոհ ասաց.

— Գիտե՞ք, ես ձեզնից ամենևին չեմ վախենում:

— Իսկ ինչո՞ւ պիտի վախենայիք, — զարմացած հարցրեց Մոնթագը:

— Ձեզնից, այսինքն՝ ուզում եմ ասել՝ հրկիզողներից, շատերն են վախենում: Բայց դուք էլ, ի վերջո, նույնպիսի մարդ եք...

Նրա աչքերում, ինչպես ջրի երկու զուլալ կաթիլներում, Մոնթագը տեսավ իր արտացոլանքը՝ խավար, պստիկ, բայց ծշգրիտ, նույնիսկ բերանի շուրջը եղած փոսիկներն էին երեվում, — ասես նրա աչքերը մանուշակագույն սաթի երկու կախարդական բեկորներ էին, որ իրենց մեջ էին առել իր պատկերը: Իր կողմը շրջված աղջկա դեմքը նման էր հանդարտ, անմար լույս ծառագող դյուրաբեկ, կաթնագույն բյուրեղի: Ծակող ու վառ էլեկտրական լույս չէր դա, այլ մոմի՝ տարօրինակ կերպով հանգստացնող, չափազանց մեղմ ցոլանք: Երեխա ժամանակ, վթարի հետևանքով մի անգամ էլեկտրական լույսը մարեց, և մայրը գտավ ու վառեց վերջին մոմը: Այդ կարճ միջոցին, հրաշալի հայտնագործությունների այդ պահին, աշխարհն ասես փոխվեց, տարածությունը դադարեց անսահման լինելուց՝ հարմարավետորեն խտացավ նրանց շուրջը: Մայր ու որդի մի տեսակ կերպարանափոխված նստել էին՝ սրտանց ցանկանալով, որ էլեկտրականությունը հնարավորին չափ ուշ միացվի...

Հանկարծ Զլարիսն ասաց.

— Կարելի՞ է մի հարց տալ... Վաղո՞ւց եք հրկիզող աշխատում:

— Զսան տարեկանից: Արդեն տասը տարի է:

— Իսկ դուք երբևէ կարդո՞ւմ եք ձեր այրած գրքերը:

Մոնթագը ծիծաղեց.

— Դա պատժվում է օրենքով:

— Հասկանալի է:

— Հիանալի աշխատանք է: Երկուշաբթի Միլլեյի¹ գրքերն այրել, չորեքշաբթի՝ Ուիթմենի, ուրբաթ՝ Ֆոլկների: Վառել-մոխրացնել, հետո էլ մոխիրն այրել: Սա է մեր մասնագիտության նշանաբանը:

Նրանք մի քիչ քայլեցին, ապա աղջիկն ասաց.

— Ասում են՝ ժամանակին հրշեջներ են եղել, որ հրկիզողների նման ոչ թե վառել, այլ հանգցրել են հրդեհները, ճի՞շտ է:

— Ո՛չ, շենքերը միշտ էլ հրակայուն են եղել, կարող եք չկասկածել:

— Տարօրինակ է: Ես լսել եմ, որ առաջներում տներն այրվել են անզգուշության հետևանքով, և հրշեջներ էին պետք կրակը հանգցնելու համար:

Մոնթագը ծիծաղեց:

Աղջիկը թոուցիկ հայացք նետեց նրա կողմը:

— Ինչո՞ւ եք ծիծաղում:

— Չգիտեմ: — Նա կրկին ծիծաղեց, բայց հանկարծ լռեց: — Իսկ ի՞նչ կա որ:

— Դուք ծիծաղում եք, թեպետ ես ոչ մի ծիծաղելի բան չասացի, և ամեն ինչի պատասխանում եք անմիջապես: Երբեք չեք մտաճում իմ հարցրածի մասին:

Մոնթագը կանգ առավ:

— Դուք իրոք որ տարօրինակ եք, — ասաց նա՝ նայելով աղջկան: — Ի՞նչ է, բոլորովին չե՞ք հարգում ձեր գրուցակցին:

— Ես չեի կամենում ձեզ վիրավորել: Պարզապես շատ եմ սիրում ուսումնասիրել մարդկանց:

— Իսկ սա մի՞թե ձեզ ոչինչ չի հուշում: — Նա թեթև մատնահարեց իր սևաթուր բաճկոնի թևքին դաջված 451 թիվը:

— Հուշում է, — շշնջաց աղջիկը և արագացրեց քայլերը: — Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք, թե հրթիռային ավտոմեքենաները ինչպես են սլանում բուլվարին հարող մայրուղիով:

— Խոսակցության նյութն եք փոխում:

— Երբեմն ինձ թվում է, թե դրանց վարորդները չգիտեն՝ ինչ են խոտը կամ ծաղիկները: Չէ՛ որ այդ ամենը նրանք կա-

¹ Էդնա Սենթ-Վինսենթ Միլլեյ (1892—1950) — ամերիկյան բանաստեղծուհի:

րող են տեսնել միայն մեծ արագության ընթացքում,— շարունակեց նա:— Տույց տվեք կանաչ բիծ, և նրանք կասեն. «Օ՛, այո՛, խոտ է»: Տույց տվեք վարդագույն բիծ, կասեն՝ վարդանոց է: Սպիտակ բծերը շենքեր են, դարչնագույնը՝ կովեր: Մի անգամ քեռիս փորձեց մեքենան վարել ժամում քառասուն մղոն արագությամբ, նրան ձերբակալեցին և երկու օր բանտ նստեցրին: Ե՛վ ծիծաղելի է, և՛ տխուր, այնպես չէ՞:

— Դուք չափազանց շատ եք մտածում,— անհարմար զգալով ասաց Մոնթագը:

— Ես հազվադեպ եմ հեռուստատեսային հաղորդումներ դիտում, գրեթե չեմ այցելում զվարճավայրեր, այդ պատճառով էլ խելացնոր մտքերը հաճախ են այցելում ինձ: Տեսե՛՛լ եք քաղաքից դուրս տանող ճանապարհին տեղադրված ազդավահանակները: Այժմ դրանց երկարությունը երկու հարյուր ոտնաչափ է, իսկ գիտե՞ք, որ ժամանակին ընդամենը քսան ոտնաչափ են եղել: Հիմա մեքենաներն այնքան մեծ արագություն են զարգացնում, որ ստիպված են եղել ազդագրերը մեծացնել, այլապես ոչ ոք չէր կարող կարդալ:

— Ո՛չ, չգիտեի,— պոռթկաց Մոնթագի ծիծաղը:

— Իսկ ես մի բան էլ գիտեմ, որ դուք երևի չգիտեք: Առավոտները կանաչի վրա ցող է իջնում:

Նա այդպես էլ չկարողացավ հիշել՝ երբևէ իմացե՛՛լ է, թե ոչ և հանկարծ նեղսրտեց:

— Իսկ եթե այնտեղ նայեք,— Զլարիսը գլխով ցույց տվեց երկինքը,— ապա լուսնի վրա մարդ կտեսնեք:

Բայց Մոնթագը վաղուց առիթ չէր ունեցել երկնքին նայելու... Նրանք շարունակեցին քայլել. աղջիկը՝ մտախոհ, Մոնթագը՝ սրտնեղած և անհարմարության զգացումից ժամանակ առ ժամանակ նրա վրա կշտամբալից հալացքներ նետելով: Երբ մոտեցան աղջկա տանը, բոլոր պատուհանները վառ լուսավորված էին:

— Ի՞նչ է կատարվում այստեղ,— բնակելի տներում այդպիսի լուսավորություն Մոնթագը երբևէ չէր տեսել:

— Ոչինչ էլ չի պատահել: Պարզապես մայրիկս, հայրիկս և քեռիս միասին նստել ու զրուցում են: Այժմ դա նույնքան հազվադեպ է, որքան ոտքով քայլելը: Ես ձեզ ասացի՞, որ քե-

ոռա մի անգամ էլ ձերբակալեցին: Այո՛, այն պատճառով, որ քայլում էր: Օ՛, մենք շատ տարօրինակ ենք:

— Բայց ինչի՞ մասին են գրուցում:

Աղջիկը ծիծաղեց:

— Բարի գիշեր,— ասաց նա և շրջվեց տան կողմը: Հանկարծ կանգ առավ, ասես ինչ-որ բան հիշելով՝ կրկին մոտեցավ Մոնթագին և զարմանքով ու հետաքրքրասիրությամբ նայեց նրա դեմքին:

— Դուք երջանի՞կ եք, — հարցրեց:

— Ինչ ասացի՞ք, — բացականչեց Մոնթագը:

Բայց աղջիկն արդեն գնացել էր. նա վազում էր լուսնի լուսով ողողված ճանապարհով:

Տան դուռը կամացուկ փակվեց:

— Երջանի՞կ եմ, արդյոք, ես: Ամենամեծ հիմարությունը, որ երբևէ լսել եմ:

Մոնթագն այլևս չէր ծիծաղում:

Նա մատները թեթևակի հպեց իր դռան խոռոչին, և դուռը բացվեց:

— Իհարկե, երջանիկ եմ: Իսկ ի՞նչ է, նա կարծում է՝ դժբա՛խտ եմ,— հարցն ուղղված էր դատարկ սենյակներին: Նախասրահում նրա հայացքն ընկավ օդափոխիչ ցանցին: Հանկարծ նրան թվաց, թե դրա ետևում թաքցրածը ուշադիր իրեն է նայում, և արագ փախցրեց աչքերը:

Ի՞նչ տարօրինակ գիշեր էր, ի՞նչ տարօրինակ հանդիպում: Նման բան նրա հետ երբեք չէր պատահել: Թերևս միայն մեկ տարի առաջ, երբ զբոսայգում հանդիպեց մի ծերունու և գրույցի բռնվեց հետը...

Մոնթագը գլուխը տարուբերեց: Նայեց դիմացի դատարկ պատին, և անմիջապես նրա վրա հայտնվեց աղջկա դեմքը,— այնպես, ինչպես պահպանվել էր իր հիշողության մեջ՝ գեղեցիկ, դեռ ավելին՝ զարմանահրաշ: Այդ քնքուշ դեմքը հիշեցնում էր փոքրիկ ժամացույցի թվատախտակ, որն աղոտ լուսավորվում է խավար սենյակում, երբ կեսգիշերին արթնանալով՝ ուզում ես իմանալ ժամանակը, և տեսնում ես, որ սլաքները ճշգրիտ ցույց են տալիս ժամը, րոպեն, վայրկյանը: Եվ

այդ լուսավոր, լուին դեմքը հանդարտ ու վստահորեն ասում է քեզ, որ թեպետ մուրթը թանձրանում է, բայց գիշերն անցնում է, և շուտով նորից կծագի արևը:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց Մոնթագը իր երկրորդ՝ ենթագիտակցական եսին, այդ խենթուկին, որը մերթընդմերթ հանկարծ այլևս չի հնազանդվում և անհիմաստ շաղակրատում է՝ չենթարկվելով ո՛չ կամքին, ո՛չ սովորույթին, ո՛չ ողջամտությանը:

Նա նորից հայացք նետեց պատին: Աղջկա դեմքն ինչքա՞ն նման է հայելու: Ուղղակի անհավատալի է: Շատերի՞ն գիտես, արդյոք, որ կարող են այդպես բեկել քո սեփական լույսը: Մարդիկ ավելի շատ նման են... Նա հապաղեց համեմատելին որոնելիս, ապա գտավ (հիշելով իր արհեստը)՝ նման են ջահերի, որոնք այրվում են իսպառ: Բայց որքան հազվադեպ է պատահում, երբ ուրիշ մարդու դեմքին կարող ես տեսնել քո զգացմունքների, քո նվիրական, թրթռուն մտքերի արտացոլանքը:

Վերամարմնավորման ի՞նչ անհավանական կարողություն ունի այդ աղջիկը: Նա նայում է Մոնթագին, ինչպես տիկնիկալին թատրոնի կախարդված հանդիսատես, կռահում է իր աչքերի ամեն մի թարթում, ձեռքի ամեն մի շարժում, մատների ամեն ցնցում: Որքա՞ն ժամանակ քալեցին նրանք կողք-կողքի: Երե՞ք թույլ: Հի՞նգ: Եվ այժմ ինչքա՞ն երկար էր թվում այդ ժամանակը: Ի՞նչ վիթխարի էր թվում նրան այժմ աղջկա արտացոլումը պատին, ինչպիսի՜ ստվեր էր նետել նրա նրբակազմ իրանը: Նա զգում էր, որ եթե իր աչքը քոր գա, աղջիկը կթարթի, եթե փոքր-ինչ լարվեն դեմքի մկանները՝ աղջիկը կհորանջի ավելի շուտ, քան ինքը կհասցնի այդ անել:

Եվ, հիշելով իրենց հանդիպումը, Մոնթագը մտածեց. «Իրոք, ասես նա գիտեր, որ ես գալու եմ, ասես փողոցում հենց ինձ էր սպասում այդ ուշ ժամին...»:

Նա բացեց ննջարանի դուռը: Թվաց, թե լուսնի մայր մտնելու պահին ինքը հայտնվեց ցուրտ, մարմարապատ դամբարանում: Անթափանց խավար: Դրսի արժաթափայլ աշխարհի գոյությունը հիշեցնող ոչ մի նշույլ: Պատուհաններն ամուր փակված են, և սենյակը նման է գերեզմանի, որտեղ չի

թափանցում մեծ քաղաքի և ոչ մի հնչյուն: Մինչդեռ սենյակը դատարկ չէր:

Նա ականջ դրեց:

Մոծակի տզզոց հիշեցնող նրբահունչ ծայն էր լսվում. իր հարմարավետ, տաքուկ ու վարդագույն բնիկում թաքնված էլեկտրական իշամեղվի բզզյունն էր: Երաժշտությունն այնքան պարզ էր հնչում, որ նա կարող էր տարբերել մեղեդին:

Մոնթագը զգաց, որ ժպիտը սահեց-չքացավ իր դեմքից, որ այն հալվեց ու թափվեց, ինչպես չափազանց երկար վառված ու մարած արտասովոր մոմը: Մթություն: Ո՛չ, դու երջանիկ չես: Երջանիկ չես: Նա այդ բառերն ուղղեց իրեն և ընդունեց որպես ճշմարտություն: Երջանկությունն ինքը կրում էր դիմակի նման, բայց աղջիկը հանեց դիմակը և փախավ գնաց փոքրիկ մարգագետնով, ու հիմա այլևս չի կարելի թակել նրա դուռը, ետ վերցնել դիմակը:

Լույսը չվառելով՝ նա պատկերացրեց, թե ինչ տեսք ունի սենյակը: Կինը փոված էր մահճակալին՝ չժածկված, մահարձանի պես պաղ և անտարբեր, անշարժ աչքերը հառած առաստաղին, ասես պողպատե անտեսանելի թելերով գամված էր նրան: Նրա ականջները ամուր խցանված են խեցիներով՝ պստիկ, մատնաչափ ուղիղ կոճակներ, և երաժշտության ու ծայների էլեկտրոնային օվկիանոսի ալիքները ողողում են նրա արթուն ուղեղի ափերը: Ո՛չ, սենյակը դատարկ էր: Ամեն գիշեր այստեղ էր խուժում հնչյունների օվկիանոսը և, բաց աչքերով պառկած Միլդրեդին առնելով իր լայն թևերին, օրորելով տանում էր առավոտին ընդառաջ: Վերջին երկու տարում ամեն գիշեր Միլդրեդը լողում էր այդ ալիքների վրա՝ չհոգնելով ու չձանձրանալով:

Սենյակում ցուրտ էր, բայց, այնուամենայնիվ, Մոնթագն զգաց, որ շնչահեղձ է լինում: Սակայն նա ո՛չ վարագույրները քաշեց, ո՛չ էլ ֆրանսիական պատուհանը՝ բացեց: Չէր ուզում՝ լուսնի լույսը ներս թափանցի: Այսպես, այն մարդու դատապարտվածությամբ, որ շուտով մեռնելու է շնչարգելությունից, նա խարխափելով շարժվեց դեպի իր առանձին, չհավաքված ու պաղ անկողինը:

¹ Ապակեպատ, փեղկավոր դուռ-պատուհան:

Ոտքը հատակին ընկած առարկային դիպչելուց մի ակընթարթ առաջ նա արդեն գիտեր, որ կպչելու է: Մասամբ այդ զգացումն ուներ, երբ անկյունադարձում թեքվելով՝ քիչ մնաց բախվեր ընդ առաջ եկող աղջկան: Իր շարժումով օդը տարտըղնելով, նրա ոտքը անդրադարձ ազդանշան ստացավ ծանապարհին եղած փոքրիկ խոչընդոտի մասին և գրեթե նույն պահին զարնվեց ինչ-որ բանի, որը խուլ զնգոցով սահեց մթության մեջ:

Մոնթագը կտրուկ ուղղվեց և ականջ դրեց կնոջ թույլ շնչառությանը. պառկած էր նա անկողնում, փոքրիկ սենյակի ակնակուր խավարում: Ծնչառությունը ընդհատվող էր, հազիվ լսելի՝ գրեթե չէր զգացվում կյանքի տրոփը, դրանից կարող էին սոսկ դողդողալ պստիկ տերևը, փետուրը, մեն մի մագաթել:

Նա դեռևս չէր ուզում, որ սենյակ թափանցի դրսի լույսը: Հանելով վառիչը՝ նա շոշափեց սկավառակին փորագրված արծաթավուն սալամանդրը, սեղմեց...

Երկու լուսնաքար նայեցին նրան ափով ծածկված բոցի աղոտ լույսի տակ, երկու փայլատ լուսնաքար, ընկած ջինջ առվակի հատակին, որոնց վրայով հանդարտ հոսում էին կյանքի ջրերը՝ ամենևին չդիպչելով նրանց:

— Միլդրեդ:

Կնոջ դեմքը նման էր ծյունաճերմակ կղզու. եթե անձրև տեղա, նա չի զգա անձրևը, եթե ամպերը նրա վրա գցեն իրենց հարաշարժ ստվերը, նա չի զգա ստվերը: Միայն Միլդրեդի ականջները ամուր փակած մոծակ-խցուկի բզբոց, ասյակիացած հայացք ու թույլ շնչառություն, հազիվ թրթռացող ունեզեր՝ ներշնչում և արտաշնչում, ու լրիվ անտարբերություն այն բանի հանդեպ, որ ուզած թոպեին նույնիսկ այդ էլ կարող է դադարել ընդմիջտ:

Առարկան, որին դիպել էր Մոնթագի ոտքը, աղոտ լույս էր արձակում մահճակալի կողքին. փոքրիկ բլուրեղապակյա սըրվակ էր, որի մեջ դեռ առավոտյան երեսուն քնաբեր հաբ կար: Այժմ այն ընկած էր առանց կափարիչի, դատարկ և փայլում էր վառիչի մարմրուն լույսի տակ:

Նա կանգնել մնացել էր, երբ հանկարծ երկինքը որոտաց տան վրա: Այնպիսի սարսուռի պայթյուն լսվեց, կարծես թե

երկու վիթխարի ձեռք հազար մղոնանոց սև քաթան էին ճոթառում: Մոնթագն ասես կիսվեց, ասես կուրծքը ճեղքեցին ու փորկերեցին խոր բացված վերքը: Տան վրայով սրընթաց անցան կրթիռային ոմբակոծիչները՝ առաջինը, երկրորդը, առաջինը, երկրորդը, առաջինը, երկրորդը: Վեց, ինը, տասներկու՝ մեկը մյուսի ետևից, մեկը մյուսի ետևից՝ օդը թնդացնելով խլացուցիչ դղրդյունով: Մոնթագը բացեց բերանը, և աղմուկը ատամների արանքով խուժեց ներս: Տունը ցնցվեց: Վառիչի բոցը մարեց: Լուսնաքարերը հալվեցին մթնում: Ձեռքը ինքնաբերաբար մեկնեց հեռախոսին:

Ոմբակոծիչները թռան գնացին: Նրա դողացող շրթունքները ակամա հպվեցին խոսափողին:

— Անհետաձգելի օգնության հիվանդանոց...

Սարսափազդու շշուկ...

Նրան թվաց, թե սև ոմբակոծիչների աղմուկից աստղերը փոշիացան, և վաղն առավոտյան երկիրը ամբողջովին կծածկվի արտասովոր ծյուն հիշեցնող փոշու հաստ շերտով:

Այդ անհեթեթ միտքը չէր լքում նրան, քանի դեռ կանգնած էր մթության մեջ, հեռախոսի մոտ, ողջ մարմնով դողալով, շուրթերը անձայն շարժելով:

Նրանք իրենց հետ մաքրող սարք էին բերել: Ավելի ճիշտ՝ երկու սարք: Մեկը սողոսկում էր ստամոքսի մեջ, ինչպես սև կոբրան լքված ջրհորի հատակը՝ փնտրելով նեխած ջրակույտ ու հավաքելով անցյալի հնոտին: Նա խմում էր կանաչավուն ջրի խլուսը և դուրս թափում:

Կարո՞ղ էր նա խմել ողջ խավարը: Կամ՝ ողջ թույնը, որ տարիների ընթացքում կուտակվել էր այնտեղ: Նա ներծծում էր լոբլյայն, ժամանակ առ ժամանակ խեղդվելով և տարօրինակ չպպոցներ հանելով, ասես հատակում ինչ-որ բան էր կորցրել: Սարքը Աչք ուներ. նրան սպասարկող պաղ դեմքով մարդը կարող էր հագնել օպտիկական սաղավարտը, լարված նայել հիվանդի հոգու մեջ և հայտնել, թե ինչ է տեսնում մեքենայի Աչքը: Բայց մարդը լուռ էր, նա նայում, սակայն չէր տեսնում այն, ինչ տեսնում էր Աչքը: Ամբողջ այս գործողությունը այգում առու փորել էր հիշեցնում: Անկողնում պառկած կինը մարմարե կարծր ապար էր սոսկ, որին դեմ էր առել բահը:

Էլի՛ փորեք, հորատող մեքենան ավելի խոր մխրձեք, դուրս քաշեք դատարկությունը, եթե իհարկե այն կարող է կլանել այդ դողդողացող, չպչպացնող օձը: Բուժակը կանգնել և ծխում էր՝ հետևելով մեքենայի աշխատանքին:

Գործում էր նաև երկրորդ սարքը, որ կառավարում էր կարմրադարչնագույն արտահագուստով նույնպես անկիրք մի մարդ: Սարքը մարմնից արյուն էր քաշում և ներարկում թարմ արյուն ու թարմ շիճուկ:

— Նման դեպքերում հարկ է լինում մաքրել՝ գործի դնելով միանգամից երկու միջոցն էլ, — ասաց անշարժ կնոջ գլխավերևում կանգնածը, — ստամոքսը մաքրելուց օգուտ չկա, քանի դեռ չես մաքրել արյունը: Եթե թմրադեղը մնա, արյունը մուրձի պես կհարվածի ուղեղին. այդպես մի երկու հազար հարված, և հաշիվը փակված է: Ուղեղը տեղի է տալիս, պարզապես դադարում է գործել:

— Լո՛ւ՛ք, — ճչաց Մոնթագր:

— Ես միայն ուզում էի բացատրել, — ասաց բուժակը:

— Ի՛նչ է, արդեն վերջացրի՞ք, — հարցրեց Մոնթագր:

Նրանք խնամքով արկղերի մեջ տեղավորեցին սարքերը:

— Այո, վերջացրինք, — նրանց բնավ չէր հուզել Մոնթագրի գայրույթը, կանգնել ու ծխում էին: Ծուխը տարածվում էր, լըցվում քիթն ու աչքերը, բայց նրանք ոչ մի անգամ աչք չթարթեցին և չկնճոռտվեցին:

— Վճարեք 50 դոլար:

— Ի՛նչո՛ւ չեք ասում՝ նա կապաքինվի՞:

— Իհարկե, կապաքինվի: Ողջ աղտը այժմ այստեղ է, արկղի մեջ: Այլևս վտանգավոր չէ: Ախր ասացի. դուրս է մղվում հին արյունը, ներարկվում նորը, և վերջ:

— Բայց չե՞ որ դուք բժիշկ չեք: Ի՛նչո՛ւ բժիշկ չեն ուղարկել:

— Բժի՛շկ, — սիգարետը շարժվեց նրա շուրթերին: — Ամեն գիշեր այսպիսի ինը-տասը կանչ ենք ունենում: Վերջին տարիներին այնքան շատացան, որ հարկ եղավ նախագծել հատուկ սարքավորում: Ծիշտ է, նորույթը միայն օպտիկական ոսպնյակն է, մնացածը վաղուց հայտնի էր: Բժշկի կարիք չի զգացվում: Երկու բուժակ, և կես ժամից ամեն ինչ վերջացած է: Իսկ հիմա պետք է շտապել, — նրանք շարժվեցին դեպի

էլքը:— Հենց նոր ուղիով կանչ տվեցին: Այստեղից տասը թաղամաս հեռու մեկը ինքնասպանության փորձ է արել, կուլ է տվել մի ամբողջ տուփ քնաբեր: Եթե կրկին մեր կարիքն զգաք, գանգահարեք: Իսկ նրան այժմ միայն հանգիստ է պետք: Մենք ցավագրկող դեղ ներարկեցինք: Կարթանա շատ քաղցած: Ցտեսություն:

Եվ բարակ, պրկված շրթունքների մեջ սիգարետը սեղմած մարդիկ, իժի պաղ հայացքով մարդիկ, վերցնելով սարքերը, փողոսկն ու արկղը՝ լցված հեղուկ մեղամաղձով և մուգ խիտ զանգվածով, որ անուն չունի, հեռացան սենյակից:

Մոնթազը ծանրորեն փլվեց աթոռին և երկար գննեց իր առջև պառկած կնոջը. այժմ նրա դեմքը խաղաղ էր, աչքերը՝ փակ: Ձեռքը պարզելով՝ նա ափի վրա զգաց կնոջ տաք շունչը:

— Միլդրեդ, — վերջապես ասաց նա:

«Մենք չափազանց շատ ենք, — մտածեց նա, — միլիարդավոր ենք, և դա չափազանց շատ է: Ոչ ոք մյուսին չի ճանաչում: Գալիս են օտարները և բռնանում քեզ վրա: Օտարները գալիս են և պոկում քո սիրտը: Օտարները գալիս են և ծծում քո արյունը: Աստված իմ, ովքե՞ր էին այդ մարդիկ: Կյանքումս երբեք տեսած չկամ»:

Անցավ կես ժամ:

Այժմ օտար արյուն էր հոսում իր կնոջ երակներով, և այդ օտար արյունը վերակենդանացնում էր նրան: Կարդագունեցին այտերը, թարմ ու ալ կարմիր դարձան շուրթերը՝ վերստանալով իրենց նուրբ ու անխողով տեսքը: Ուրիշի արյուն՝ սեփականի փոխարեն... Այ թե հնարավոր լիներ փոխել նրա և՛ մարմինը, և՛ ուղեղը, և՛ հիշողությունը: Եթե հնարավոր լիներ նրա հոգին տալ մաքրման, որպեսզի մաս-մաս անեին, շրջեին գրպանները, գոլորշու վրա խոնավացնեին, ախտահանեին, իսկ առավոտյան ետ բերեին... Եթե հնարավոր լիներ...

Մոնթազը վեր կացավ, ետ քաշեց վարագույրները և լայն բացեց լուսամուտները. գիշերալին թարմ օդը սենյակ խուճեց: Գիշերվա ժամը երկուսն էր: Մի՞թե ընդամենը մեկ ժամ է անցել այն պահից, երբ ինքը փողոցում հանդիպեց Քլարիս Մըքլելընին, ընդամենը մեկ ժամ, երբ ինքը մտավ այս մութ սենյակը և ոտքով կայավ բյուրեղապակյա փոքրիկ սրվակին: Ըն-

դամենը մեկ ժամ, բայց ինչպես ամեն բան փոխվեց, անհետացավ առաջվա աշխարհը և նրա փոխարեն ծագեց նորը՝ սառըն ու անգույն...

Լուսնի լույսով ողողված մարգագետնի վրայով Մոնթագին ծիծաղի ձայներ հասան: Ծիծաղը լսվում էր այն տնից, որտեղ ապրում էին Քլարիսը, նրա հայրը, մայրը և քեռին, որ կարողանում էր ժպտալ այդպես պարզ ու անվրդով: Ռա անկեղծ ու բերկրալի ծիծաղ էր, անկաշկանդ ծիծաղ, որ այդ ուշ ժամին հնչում էր վառ լուսավորված տնից, մինչդեռ շուրջը բոլոր տներըն ընկղմված էին լուռության ու խավարի մեջ:

Մոնթագը լսեց գրուցող մարդկանց ձայները, նրանք ինչոր բան էին խոսում, հարցնում, պատասխանում, կրկին ու կրկին հյուսելով բառերի հիպնոսող ոստայնը:

Մոնթագը դուրս եկավ ապակեպատ դռնից և իրեն հաշիվ չտալով, թե ինչ է անում, կտրեց-անցավ մարգագետինը: Նա կանգ առավ կիսախավարում, այն տան կողքին, որտեղից ձայներ էին հնչում, և հանկարծ մտքով անցավ, որ եթե ցանկանա, կարող է նույնիսկ թակել դուռը և շշնջալ. «Ներս թողեք ինձ: Ես ոչ մի բան չեմ ասի: Կլոեմ: Միայն ցանկանում եմ լսել, թե ինչի մասին եք խոսում»:

Սակայն տեղից չշարժվեց: Նա կանգնել մնացել էր՝ ցրտից սրսփալով, սառած դեմքով, լսելով, թե ինչպես տղամարդը (հավանորեն՝ քեռին) խոսում է հանդարտ ու անշտապ:

— Վերջ ի վերջո, մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ մարդիկ այլևս արժեք չունեն: Մեր օրերում մարդը թղթե անձեռոցիկ է. մաքրիր քիթդ, ձմռթիր, դեն նետիր, վերցրու նորը, մաքրիր քիթդ, ձմռթիր, շպրտիր... Մարդիկ չունեն իրենց դեմքը: Ինչպե՞ս կարող ես ցավել քո քաղաքի ֆուտբոլային թիմի համար, երբ չգիտես ո՛չ մրցամարտի ծրագիրը, ո՛չ խաղացողների անունները: Հապա ասա, օրինակ, ի՞նչ գույնի մարգահագուստով են նրանք խաղադաշտ մտնում:

Մոնթագը դանդաղ քայլեց դեպի իր տունը: Նա բաց թողեց լուսամուտը, մոտեցավ Միլդրեդին, խնամքով ծածկեց և պառկեց իր անկողնում:

Լուսնի լույսը կաչում էր նրա այտոսկրերին, լայն ճակատի խոր կնճիռներին, արտացոլվում աչքերի մեջ՝ արժաթավուն կայծերի փայլով:

Ընկավ անձրևի առաջին կաթիլը: Քլարիսը: Մի կաթիլ ևս: Միլդրեդը: Մեկը ևս: Քեռին: Մեկը ևս: Այսօրվա հրդեհը: Մեկը: Քլարիսը: Մյուսը: Միլդրեդը: Երրորդը: Քեռին: Չորրորդը: Հրդեհը: Մեկը, մյուսը, երրորդը, չորրորդը, հինգերորդը, Միլդրեդը, Քլարիսը, քեռին, հրդեհը, քնաբեր հաբեր: Մարդիկ թռչթե անձեռոցիկ են, օգտագործիր, շպրտիր, վերցրու նորը: Մեկը, մյուսը, երրորդը: Անձրևը: Ամպրոպը: Քեռու ծիծաղը: Ամպրոպի որոտը: Աշխարհը փլվում է տեղատարափներից: Բոցը դուրս է ժայթքում հրաբխից: Եվ ամեն ինչ սրընթաց պտտվում է, մրրկածուփ գետի պես հորդում առավոտին ընդառաջ:

— Այլևս ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ հասկանում,— ասաց Մոնթագը և լեզվին դրեց քնաբեր հաբը: Այն դանդաղ հալվեց:

Առավոտյան ժամը իննին Միլդրեդի անկողինը դատարկ էր: Մոնթագը արագ վեր կացավ, սրտատրոփ վազեց միջանցքով և կանգ առավ խոհանոցի դռների մեջ:

— Բոված հացի պատառիկները դուրս էին թռչում արծաթե թավալից: Մետաղե նուրբ ձեռքն անմիջապես որսում էր դժանք և թաթախում հալած յուղի մեջ:

Միլդրեդը հետևում էր, թե ինչպես են կարմրեցրած հացի կտորները շարվում ափսեի մեջ: Նրա երկու ականջներն էլ ամուր խցանված էին բզզացող էլեկտրոնային մեղուներով: Գլուխը հանկարծ բարձրացնելով՝ նա տեսավ Մոնթագին և ողջունեց:

— Լա՛վ ես զգում,— հարցրեց Մոնթագը: Խեցի ռադիոկոճակներին ծանոթանալու տասը տարիների ընթացքում Միլդրեդը սովորել էր կարդալ շրթունքների շարժումները: Նա կրկին գլխով արեց և թավալի մեջ դրեց հացի թարմ շերտ:

Մոնթագը նստեց:

— Չեմ հասկանում՝ ինչո՞ւ եմ այսպես քաղցած,— ասաց կինը:

— Դու...,— սկսեց նա:

— Սոսկալի քաղցած եմ:

— Երեկ երեկոյան...

— Ես լավ չեմ քնել: Անասելի վատ եմ զգում,— շարունակեց նա:— Աստված իմ, ինչպե՛ս եմ ուտել ուզում: Չեմ հասկանում՝ ինչու...

— Երեկ երեկոյան...

Միլդրեդը ցրված հետևում էր նրա շրթունքներին:

— Ի՞նչ է պատահել երեկ երեկոյան:

— Մի՞թե ոչինչ չես հիշում:

— Իսկ ի՞նչ է եղել: Մենք հրավե՞րք ունեինք: Կերուխո՞ւմ էինք անում: Այսօր էլ կարծես խումհարի մեջ եմ: Աստվա՛ծ իմ, ինչպե՛ս եմ ուզում ուտել: Իսկ ո՞վ կար մեզ մոտ:

— Մի քանի հոգի,— ասաց նա:

— Այդպես էլ կարծում էի:— Նա կծեց բոված հացի մի կտոր:— Ստամոքսի ցավեր ունեմ, բայց սարսափելի քաղցած եմ: Երեկվա հավաքույթում հիմարություններ հո չարեցի:

— Ո՛չ,— պատասխանեց նա ցածրաձայն:

Թավայից դուրս թռավ յուղի մեջ կարմրեցրած հացի մի կտոր: Մոնթագը վերցրեց տարօրինակ շփոթմունքով, ասես իր հետ սիրալիր վարվեցին:

— Դու էլ վատ տեսք ունես,— նկատեց կինը:

Կեսօրից հետո անձրև տեղաց, և շուրջբոլորը մթնեց. աշխարհն ասես պատվեց գորշ շղարշով: Մոնթագը կանգնել էր նախասենյակում և բաժկոնին ամրացնում էր նշանը, որի վրա հուրհրատում էր նարնջագույն սալամանդրը: Մտքերի մեջ ընկած՝ նա երկար նայեց օդափոխիչ ցանցին: Կինը, որ սցենար էր կարդում հեռուստասենյակում, գլուխը բարձրացրեց և հայացքը հառեց նրան:

— Հապա մի տեսեք, նա մտածում է:

— Այո՛,— պատասխանեց Մոնթագը:— Քեզ հետ խոսելիք ունեմ:— Մի պահ հապաղեց:— Երեկ գիշեր դու կուլ էիր տվել սրվակի բոլոր հաբերը:

— Ի՞նչ ես ասում,— զարմացած գոչեց կինը:— Չի կարող պատահել:

— Սրվակը դատարկ ընկած էր հատակին:

— Ես չեի կարող այդ անել: Ինչո՞ւ պետք է խմել,— ասաց նա:

— Գուցե թե դու երկու հաբ ես խմել, իսկ հետո մոռացել և խմել ես ևս երկուսը, ապա կրկին մոռացել և էլի ես խմել, իսկ

հետո, արդեն թմրած, մեկը մյուսի ետևից կուլ ես տվել մնացած երեսուն կամ քառասուն հաբերը:

— Անհեթեթություն: Ինչո՞ւ պիտի ես այդպիսի հիմարություն անեի:

— Չգիտեմ,— պատասխանեց Մոնթազը:

Միլդրեդն ակնհայտորեն ցանկանում էր, որ Մոնթազը շուտ գնար:

— Ես դա չեի անի,— կրկնեց նա:— Միլիարդ տարի մնար, չեի անի:

— Լավ, թող քո ասածը լինի,— պատասխանեց նա:

— Ինչպես կասեր լեդին,— ավելացրեց Միլդրեդը և կրկին խորասուզվեց սցենարի ընթերցանության մեջ:

— Այսօր ի՞նչ կա ցերեկային ծրագրում,— հոգնած հարցրեց Մոնթազը:

Միլդրեդը պատասխանեց՝ հայացքը սցենարից չկտրելով.

— Ներկայացում է: Կսկսվի տասը րոպեից, պատկերները ցուցադրվում են սենյակի չորս պատերին: Դերն ինձ ուղարկել են այսօր առավոտյան. ստացել եմ իբրև մրցանակ՝ անհրաժեշտ քանակի կտրոններ ուղարկելով Ֆիրմային: Բոլորովին նոր գաղափար է. պիեսը գրում են՝ բաց թողնելով մի դեր: Տանտիրուհու այդ պակասող դերը ես եմ կատարում: Երբ գալիս է բաց թողած ռեպլիկն արտասանելու պահը, բոլորը նայում են ինձ: Եվ ես արտասանում եմ: Օրինակ՝ տղամարդն ասում է. «Ի՞նչ կասես այդ մասին, Հելեն»», և նայում է ինձ: Իսկ ես նստած եմ ահա այստեղ, ինչպես բեմի կենտրոնում: Ես պատասխանում եմ... Ես պատասխանում եմ...— Նա մատը շարժեց ձեռագրի տողերի վրայով:— Ահա, սա է. «Իմ կարծիքով՝ պարզապես հիանալի է»: Ապա նրանք շարունակում են առանց ինձ, մինչև որ տղամարդը հարցնում է. «Դու համաձա՞յն ես, Հելեն»»: Այդ ժամանակ ես պատասխանում եմ. «Դե, իհարկե, համաձայն եմ»: Իսկապես, հետաքրքիր է, չէ՞, Գայ:

Մոնթազը կանգնել էր նախասենյակում և լուռ նայում էր կնոջը:

— Իրոք, շատ հետաքրքիր է,— կրկին ասաց Միլդրեդը:

— Իսկ ինչի՞ մասին է պիեսը:

— Ես արդեն ասացի: Գործող անձինք երեքն են՝ Բոբը, Ռուբը և Հելենը:

— Օ՛հ...

— Անչափ հետաքրքիր է: Եվ ավելի հետաքրքիր կլիներ, եթե մենք ունենայինք չորրորդ հեռուստապատը: Ի՞նչ ես կարծում, դեռ երկա՞ր ենք կուտակելու, որպեսզի չորրորդ պատը փոխարինենք հեռուստատեսայինով: Ընդամենը երկու հազար դոլար արժե:

— Իմ տարեկան վաստակի մեկ երրորդը:

— Ընդամենը երկու հազար դոլար, — համառորեն կրկնեց նա: — Ձեր խանգարի՛ գոնե երբեմն էլ իմ մասին մտածեիր: Եթե մենք դնեինք չորրորդ պատը, այս սենյակը կլիներ արդեն ո՛չ միայն մերը, այնտեղ կբնակվեին տարաշխարհիկ, արտասովոր մարդիկ: Կարելի է ինչ-որ բանում տնտեսել:

— Առանց այդ էլ մենք շատ բանում ենք տնտեսում այն ժամանակվանից, երբ վճարեցինք երրորդ պատի արժեքը: Ձե՞ս հիշում, ընդամենը երկու ամիս առաջ են դրել:

— Ընդամենը երկու ամի՞ս: — Նա մտախոհ նայեց Մոնթագին: — Տոտսություն, սիրելի՛ս:

— Տոտսություն՛ն, — պատասխանեց նա՝ ուղղվելով դեպի ելքը, բայց հանկարծ կանգ առավ ու շրջվեց: — Իսկ պիտե՞ր իջանի՞կ ավարտ ունի:

— Մինչև վերջ դեռ չեմ կարդացել:

Մոնթագը մոտեցավ, կարդաց վերջին էջը, գլխով արեց, սցենարը վերադարձրեց կնոջն ու դուրս ելավ թաց փողոց:

Անձրևը գրեթե կտրվել էր: Մայթի կենտրոնով աղջիկը քայլում էր այնպես զգաստ, գլուխը բարձր պահած, որ նոսր կաթիլներն ընկնեն դեմքին: Տեսնելով Մոնթագին՝ ժպտաց.

— Բարև՛ ձեզ:

Մոնթագը պատասխանեց ողջույնին, ապա հարցրեց.

— Այդ ի՞նչ եք անում: Էլի ինչ-որ բա՞ն եք հնարել:

— Ղե, իհարկե, չէ՛ որ ես խենթ եմ: Գիտե՞ք, ինչ հաճելի է, երբ անձրևը ընկնում է դեմքիդ: Սիրում եմ քայլել անձրևի տակ:

— Ինձ երևի դուր չգար, — պատասխանեց նա:

— Գուցե և դուր գար, եթե փորձեիք:

— Երբեք չեմ փորձել:

Աղջիկը լիզեց շրթունքները:

- Նույնիսկ համն է հաճելի:
- Միշտ ուզում եք ինչ-որ բան փորձել, — ասաց նա: — Թեկուզ մի անգամ, բայց՝ փորձել:
- Պատահում է և մի քանի անգամ, — պատասխանեց աղջիկը ու նայեց ձեռքի մեջ թաքցրած առարկային:
- Ի՞նչ կա այդտեղ, — հարցրեց Մոնթագը:
- Խատուտիկ է, մարգագետնում գտա, գուցե վերջինն է: Երբեք մտքովս չէր անցնի, որ այսքան ուշ աշնանը խատուտիկ կլինի: Հիմա հարկավոր է քսել կզակին: Երբևէ լսե՞լ եք այդ մասին: Տեսե՛ք, — ասաց աղջիկը և ժպտալով ծաղիկը քսեց կզակին:
- Ինչի՞ համար:
- Եթե հետք մնա, նշանակում է՝ ես սիրահարված եմ: Հը, ինչպե՞ս է:
- Ուրիշ ելք չկար, պետք է կզակին նայեր:
- Հետք մնա՞ց, — հարցրեց աղջիկը:
- Ղեղնեց:
- Հիանալի է: Հիմա էլ փորձենք ձեզ վրա:
- Իմը չի դեղնի:
- Տեսնենք: — Եվ մինչև նա ուշքի կգար, խատուտիկը խցկեց նրա կզակի տակ: Մոնթագն ակամա ետ քաշվեց: Աղջիկը սրտանց թիծաղեց:
- Զգաստ կանգնեք:
- Ակնդետ նայելով Մոնթագի կզակին՝ նա մռայլվեց:
- Ղե, ի՞նչ կասես:
- Ինչ ամո՛թ է, — բացականչեց աղջիկը: — Ղուք սիրահարված չեք:
- Ո՛չ, սիրահարված եմ:
- Չի երևում:
- Սիրահարված եմ, այն էլ ինչպե՛ս: — Նա փորձեց հիշողության մեջ արթնացնել որևէ մեկի կերպարը, բայց ապարդյուն: — Սիրահարված եմ, — համառորեն կրկնեց նա:
- Այդպես մի նայեք, խնդրում եմ, հարկավոր չէ:
- Խատուտիկն է մեղավոր, — ասաց նա: — Ողջ ծաղկափռ շին ձեր կզակին թափվեց, ինձ ոչինչ չմնաց:
- Ես ձեզ վշտացրի, չե՞: Տեսնում եմ, որ վշտացրի: Նե-

րեցեք, ես իսկապես չեի ցանկանում... — աղջիկը թեթևակի կպավ նրա արմունկին:

— Ո՛չ, ո՛չ, — փութով պատասխանեց նա: — Ամեն ինչ կարգին է:

— Ես պետք է գնամ: Ասեք, որ ներում եք, չեմ ուզում, որ բարկանաք ինձ վրա:

— Չեմ բարկանում, պարզապես մի փոքր վշտացա:

— Ես գնում եմ հոգեբույժի մոտ: Ինձ ստիպում են գնալ: Ռե, ես էլ հորինում եմ նրա համար այլևայլ բաներ: Չգիտեմ, թե էլ ինչ է մտածում իմ մասին, բայց ասում է, որ ես իսկական սոխի գլուխ եմ: Հարկավոր է շերտ առ շերտ կծալել:

— Ես էլ եմ հակված մտածելու, որ դուք հոգեբույժի կարիք եք զգում, — ասաց Մոնթագը:

— Ծիշտ չէ: Դուք այդպես չեք մտածում:

Նա խոր շունչ քաշեց, ապա վերջապես ասաց.

— Իսկապես, այդպես չեմ մտածում:

— Հոգեբույժը ցանկանում է իմանալ՝ ինչու եմ սիրում թափառել անտառում, նայել թռչուններին, թիթեռներ որսալ: Երբևէ ձեզ ցույց կտամ իմ հավաքածուն:

— Լա՛վ, ցույց կտաք:

— Նրանք միշտ հարցուփորձ են անում՝ ինչո՞վ եմ զբաղվում: Ես նրանց ասում եմ, որ երբեմն պարզապես նստում եմ ու մտածում: Բայց չեմ ասում՝ ինչի մասին: Թող գլուխ կոտրեն: Երբեմն էլ ասում եմ, թե սիրում եմ գլուխս ետ զգա՞ծ, այ այսպես, լեզվով որսալ անձրևի կաթիլները: Գինու համ ունեն: Դուք երբևէ փորձե՞լ եք:

— Ոչ, ես...

— Դուք ինձ ներել եք, չե՞:

— Այո՛: — Մի պահ նա մտածեց: — Այո՛, ներել եմ: Աստված գիտե, թե ինչու: Դուք առանձնահատուկ եք, ձեզնից կարելի է վիրավորվել ու միաժամանակ հեշտությամբ ներել: Ասացիք՝ տասնյոթ տարեկան եք:

— Այո՛, մեկ ամսից հետո կլրանա:

— Տարօրինակ է: Ծատ տարօրինակ է: Կինս երեսուն է, բայց ինձ երբեմն թվում է, թե դուք շատ ավելի մեծ եք նրանից: Չեմ հասկանում՝ ինչի՞ց է այդ զգացողությունը:

— Դուք նույնպես առանձնահատուկ եք, միսոր Մոնթագ:

Երբեմն նույնիսկ մոռանում եմ, որ հրկիզող եք: Կարելի՞ է նորից ձեզ բարկացնել:

— Հապա՛, ձեզ տեսնեմ:

— Ինչպե՞ս սկսվեց: Ինչպե՞ս ընկաք այնտեղ: Ինչպե՞ս և ինչո՞ւ ընտրեցիք հենց այդ աշխատանքը: Դուք նման չեք ուրիշ հրկիզողների: Ես գիտեմ, տեսել եմ մի քանիսին: Երբ ես խոսում եմ, դուք ինձ եք նայում: Երեկ գիշեր, երբ խոսք բացեցի լուսնի մասին, դուք նայեցիք երկնքին: Նրանք, մյուսները, երբեք այդպես չէին վարվի: Ուղղակի կհեռանային և ինձ չէին լսի: Գուցե սպառնային: Այժմ մարդիկ ժամանակ չունեն իրար համար: Իսկ դուք այնքա՛ն լավ վարվեցիք ինձ հետ: Հազվագյուտ երևույթ է: Ահա թե ինչու է տարօրինակ, որ դուք հրկիզող եք: Մի տեսակ չի սազում ձեզ:

Մոնթագին թվաց, թե իր մարմինը ձեղքվեց երկու մասի, ըստ որում՝ մի կեսը կրակի պես տաք էր, մյուսը՝ սառցասառըն, մեկը՝ փխրուն, մյուսը՝ կարծր, մեկը՝ դողդոջուն, մյուսը՝ քարի պես պինդ: Եվ նրա երկատված եսի յուրաքանչյուր կեսը ջանում էր ոչնչացնել մյուսին:

— Ձեր գնալու ժամանակն է, շտապեք հոգեբույժի մոտ, — ասաց նա:

Աղջիկը փախավ՝ թողնելով նրան անձրևի տակ, մայթին կանգնած: Երկար ժամանակ անց միայն նա շարժվեց:

Մի քանի քալ անելուց հետո հանկարծ նա գլուխը ետ գցեց, դեմքը պահեց անձրևին, ապա բացեց բերանը...

Սեխանիկական շունը և՛ քնած էր, և՛ արթուն. ապրում էր ու միաժամանակ մեռած էր իր մեղմ դոռացող, մեղմ թրթռացող, աղոտ լուսավորված բնում, որը գտնվում էր հրակայանի գրասենյակի խավար միջանցքի ծայրում: Գիշերային երկնքի փայլատ շողերը ներս էին թափանցում քառակուսի մեծ լուսամուտի միջով ու ցանուցիր սփռվում հավաքովի գազանի արույրե, պղնձե և պողպատե մասերի վրա: Լույսն արտացոլվում էր սուտակափայլ ապակու կտորտանքների մեջ, մեղմ առկայծում տարօրինակ ոունգերի մազանոթի պես քարակ, դյուրազգաց նալլոնե մազիկներին: Նա հազիվ նկատելի ցնցվում էր իր սարդանման, ռետինապատ ութ թաթերի վրա:

Մոնթագը ցած սահեց բրոնզե ձողով: Նա դուրս ելավ նա-

յելու քնած քաղաքին: Ամպերը ցրվել էին, երկինքը ջինջ էր: Նա ծխեց, վերադարձավ ու կոանալով՝ հայացքը սևեռեց մեխանիկական շանը: Ծունը հիշեցնում էր վիթխարի մեղու, որ վերադարձել էր դաշտից, ուր ծաղիկների նեկտարին խառնրված է խելացնորություն և մղձավանջներ ծնող թույն: Նրա մարմինը հագեցած էր այդ թանձր ու քաղցր հաշիշով, և նա քնել էր՝ ջանալով հաղթահարել թույնի չար ուժը:

— Ողջո՛ւյն, — շշնջաց Մոնթագը՝ ինչպես միշտ կախարդված նայելով մեռած և միաժամանակ կենդանի գազանին:

Գիշերները, երբ ծանձրանում էին, իսկ դա պատահում էր ամեն գիշեր, հրկիզողները ներքև էին իջնում բրոնզե ձողերով, և շան հոտառության համակարգի տկտկացող սարքը լարելով որոշակի հոտի վրա, հրակայանի նկուղում բաց էին թողնում առնետներ, երբեմն ծտեր կամ էլ կատուներ, որոնց, միևնույն է, պետք է խեղդեին: Գրագ էին գալիս, թե շունն առաջինը որ զոհին է բռնելու: Մի քանի վայրկյան չանցած՝ խաղն ավարտվում էր. ծուռը, կատուն կամ առնետը չէին էլ հասցնում վազել մի քանի մետր, երբ հայտնվում էին շան փափուկ թաթերի մեջ. նրա դնչից խայթի պես դուրս ցցվող չորսդույմանոց ասեղը զոհին ներարկում էր զգալի քանակությամբ մորֆի կամ պրոկաին, որից հետո սպանված գազանիկին նետում էին աղբայրիչ վառարանը, և խաղը վերսկսվում էր:

Մոնթագը սովորաբար մնում էր վերևում և չէր մասնակցում այդ զվարճություններին: Միայն մեկ անգամ, երկու տարի առաջ, նա գրագ եկավ փորձառու խաղամուկներից մեկի հետ և կորցրեց շաբաթվա վաստակը: Հատուցումը Միլդրեդի կատարի գայրույթն էր. մինչև հիմա էլ նա հիշում է կնոջ կասկարմիր դեմքն ու պրկված երակները: Այժմ գիշերները նա պառկում էր մահձակալին, շրջվում պատի կողմը՝ ականջ դնելով ներքևից լսվող բրբիջի պոռթկումին, հատակի վրա առնետների ծանկերի մանրիկ կտկտոցին, մկների ջութակային ծվծվոցին, անսպասելի լուռությանը, երբ շունը անաղմուկ ցատկով, վիթխարի ստվերի պես դուրս էր պրծնում բնից, ինչպես ուժեղ լուսի տակ անակնկալ հայտնված գիշերաթիթեռ: Նա գտնում, բռնում էր զոհին, մխրձում ասեղը և վերադառնում իր բույնը, որպեսզի անմիջապես հանդարտվի ու մեռնի:

Մոնթագը կպավ շան մոտոֆին:

Շունը գոմոաց:

Մոնթազը ետ ցատկեց:

Շունը հանկարծ կենդանացավ, չոքեց բնի մեջ, նեոնային կայծեր արձակող կապտականաչ աչքերով նայեց նրան ու վերըստին գոմոաց. տարօրինակ, ականջ ծակող հնչյուն էր դա, էլեկտրական դզզոցի, թավաչի թշշոցի և մետաղի ճոխնչի խառնուրդ: Կարծես շարժման մեջ մտավ ինչ-որ հնամաշ, բարձիթողի արված սարք, որ ծոռում էր ժանգից ու հնությունից:

— Դե, դե, ծերո՛ւկ,— շշնջաց Մոնթազը, և նրա սիրտը ուժգին բաբախեց:

Նա տեսավ՝ ինչպես շան մոութից մատնաչափ արծաթավուն ասեղ դուրս ցցվեց ու իսկույն անհետացավ, նորից դուրս ցցվեց ու անհետացավ: Ծան որովայնում ուժեղանում էր գոմոոցը, փայլփլուն աչքերը գամված էին Մոնթազին:

Մոնթազն ընկրկեց: Շունը մի քալ արեց: Մոնթազը կտուցեց ձողից: Արձագանքելով նրա հպումին՝ ձողը վեր սլացավ և անաղմուկ դուրս հանեց առաստաղի բաց անցքով: Նա ոտք դրեց վերնահարկի կիսախավար հարթակին: Ամբողջովին դողում էր, դեմքը հողագույն էր դարձել: Ներքևում շունը խաղաղվեց և կրկին նստեց իր սարդանման, ութ աներևակայելի թաթերի վրա՝ շարունակելով մեղմ դռուլ: Նրա բազմանիստ ակնաբյուրեղները խամրեցին:

Մոնթազն անմիջապես չհեռացավ անցքի մոտից: Նա ուզում էր նախ մի քիչ հանգստանալ: Նրա թիկունքում, հեռավոր անկյունում, կանաչ լուսամփոփի լուսի տակ սեղանի շուրջ նստած չորս տղամարդ թուղթ էին խաղում: Նրանք թուուցիկ նայեցին Մոնթազին, բայց ոչինչ չասացին: Միայն փլունիկի պատկերով հրկիզապետի գլխարկ կրող մարդը, որ չորով ձեռքերում պահել էր խաղաթղթերը, վերջապես հետաքրքրվեց և գոչեց սենյակի մի ծայրից մյուսը.

— Ի՞նչ է պատահել, Մոնթազ:

— Նա ինձ չի սիրում:

— Ո՞վ: Շո՞ւնը:— Հրկիզապետը գննում էր խաղաթղթերը:— Վե՛րջ տվեք: Նա չի կարող սիրել կամ չսիրել: Մեխանիկական շունը պարզապես գործում է: Բալխստիկայի խնդրի նման է, նրա համար հետագիծ ենք հաշվարկել, որով շարժվում է: Ինքն է գտնում թիրախը, ինքն է վերադառնում իր բույնը,

ինքն էլ անջատվում է: Պղնձալար, մարտկոց, էլեկտրաէներգիա՝ ահա նրա պարունակությունը:

Սոնթազը ջղաձգորեն օդ կուլ տվեց:

— Նրա հոտառության համակարգը կարելի է հարմարեցնել ցանկացած գործողության. մի քիչ ամինաթթու, մի քիչ թծումբ, մի քիչ ծարպեր և որոշ չափով ալկալիներ: Այդպես չէ՞:

— Բոլորն էլ դա գիտեն:

— Մեզնից յուրաքանչյուրի արյան բաղադրությունը և տոկոսային հարաբերությունը գրանցված է ներքևի ընդհանուր քարտարանում: Ինչ դժվար բան է, եթե մեկնումեկը որոշի մեքենա-շան հիշողությունը թեկուզ մասնակի հարմարեցնել այս կամ այն բաղադրությանը, ասենք, ամինաթթուներին: Դա բավական է, որ նա անի այն, ինչ հիմա արեց, այսինքն՝ արձագանքեց իմ ներկայությանը:

— Գրո՛ղը տանի, — ասաց հրկիզապետը:

— Նա գրգռված է, բայց կատաղած չէ: Պարզապես ինչ-որ մեկը նրա հիշողությունը լարել է ձիշտ այնքան, որ նա սկսի գոմոալ, հենց որ կպչեմ նրան:

— Ախր ո՞վ կաներ նման բան, — հարցրեց հրկիզապետը: — Դուք այստեղ որևէ թշնամի ունե՞ք, Գա՛յ:

— Որքան գիտեմ՝ ոչ:

— Վաղը մեխանիկները կստուգեն շանը:

— Առաջին դեպքը չէ, որ վախեցնում է ինձ, — շարունակեց Սոնթազը: — Անցած ամիս երկու անգամ այդպես վարվեց:

— Վաղը ամեն ինչ կստուգենք: Մի՛ անհանգստացեք:

Բայց Սոնթազը դեռևս կանգնած էր բաց անցքի մոտ: Հանկարծ նա հիշեց իր տան նախասենյակի օդափոխիչ ցանցի և այն մասին, թե ինչ էր թաքնված նրա ետևում: Իսկ եթե հրակայանում որևէ մեկը գիտի այդ մասին և «պատմե՛լ է» շանը:

Հրկիզապետը մոտեցավ Սոնթազին և հարցական նայեց նրան:

— Ես փորձում եմ պատկերացնել, — ասաց Սոնթազը, — թե ինչի մասին է գիշերները շունը մտածում իր բնում: Նա իսկապե՞ս կենդանանում է, երբ նետվում է մարդու վրա: Սարսափելի է:

— Նա ոչինչ չի մտածում, բացի այն, ինչ մենք տեղադրել ենք նրա մեջ:

— Շատ ափսոս,— ցածրաձայն ասաց Մոնթագը,— որ մենք նրան մղում ենք միայն հետապնդելու, որսալու, սպանելու: Ի՞նչ ամոթ է, որ ուրիշ ոչինչ չենք կարող սովորեցնել:

Հրկիզապետ Բիթին քամահրանքով փնջացրեց.

— Հիմարություն է: Մեր շունը հիանալի նմուշ է այն բանի, թե ինչ կարող է ստեղծել մարդկային հանձարը՝ կատարելագործված հրացան, որ ինքն է գտնում թիրախը և խփում անվրեպ:

— Այդ է, որ կա: Հասկանո՞ւմ եք, ես չեմ ուզում դառնալ նրա հերթական զոհը,— ասաց Մոնթագը:

— Իսկ ինչո՞ւ է ձեզ այդպես անհանգստացնում: Ձեր խիղճը մաքուր չէ՞, Մոնթագ:

Մոնթագը արագորեն աչքերը հառեց նրան:

Բիթին կանգնել էր՝ չկտրելով նրանից սևեռուն հայացքը. հանկարծ հրկիզապետի շրթունքները բացվեցին, և նա մեղմ, գրեթե անձայն ծիծաղեց:

Մեկ օր, երկու օր, երեք, չորս, հինգ, վեց, յոթ օր: Եվ ամեն օր, տնից դուրս գալով, նա գիտեր, որ Քլարիսը ինչ-որ տեղ է, մոտերքում: Մի անգամ տեսավ, թե ինչպես է նա թափ տալիս ընկուզենին, մյուս անգամ մարգագետնում նստած՝ կապույտ սվիտեր էր գործում, երեք թե չորս անգամ իր տան առմուտքին նա գտավ աշնանային ծաղիկների փունջ, մի բուռ շագանակ՝ փոքրիկ տոպրակի մեջ, աշնանային տերևների տրցակ՝ խնամքով կպցված սպիտակ թղթի էջին ու ամրակով փակցված մուտքի դռանը: Եվ ամեն երեկո Քլարիսը ուղեկցում էր նրան մինչև անկյունադարձ: Մի օր անձրևոտ էր, մյուս օրը՝ պարզ եղանակ, ապա սաստիկ քամի էր փչում, հետո կրկին խաղաղ էր ու տաք, իսկ հետո՝ շոգ ու հեղձուկ, կարծես ամառը վերադարձել էր, և Քլարիսի դեմքը պատվել էր թեթև արևայրուկով:

— Ինչո՞ւ է ինձ թվում,— ասաց նա, երբ հասան մետրոյի մուտքին,— թե ձեզ վաղուց եմ ճանաչում:

— Որովհետև ինձ դուր եք գալիս,— պատասխանեց աղջի-

կը,— ես ձեզնից ոչինչ չեմ պահանջում: Նաև նրա համար, որ մենք հասկանում ենք իրար:

— Ձեզ հետ ես ինձ թեր եմ զգում, շատ թեր, ձեր հոր տեղն եմ զգում...

— Իսկապե՞ս: Իսկ ինչո՞ւ դուք աղջիկ չունեք, ինձ նման մի աղջիկ, եթե այդքան սիրում եք երեխաներին:

— Չգիտեմ:

— Կատակում եք:

— Ուզում էի ասել..., — նա կմկմաց և գլուխն օրորեց: — Գիտեք, իմ կինը... Մի խոսքով, նա չկամեցավ երեխա ունենալ: Ժպիտղ չքացավ աղջկա դեմքից:

— Ներեցեք: Ինձ թվաց, թե դուք թիծաղում եք ինձ վրա: Ես պարզապես հիմար եմ:

— Ո՛չ, ո՛չ,— բացականչեց նա: — Շատ լավ է, որ հարցրիք: Ինձ այնքան վաղուց ոչ ոք այդ մասին չի հարցրել: Ոչ մեկը ժամանակ չունի զբաղվելու քեզով... Շատ լավ է, որ հարցրիք:

— Եկեք ուրիշ բաների մասին խոսենք: Գիտե՞ք, ինչպես են բուրում թափված տերևները: Դարչինի հոտ ունեն: Հապա հոտ քաշեք:

— Այո... Իսկապես, դարչին է հիշեցնում:

Աղջիկը իր շողշողուն մուգ աչքերով նայեց նրան:

— Ինչո՞ւ եք ամեն անգամ զարմանում:

— Որովհետև նախկինում երբեք չեմ նկատել... Ժամանակ չկար...

— Իսկ դուք նայեցի՞ք ազդավահանակներին: Հիշո՞ւմ եք, ես ձեզ ասել եմ:

— Նայեցի: — Եվ ականա թիծաղեց:

— Այժմ շատ ավելի գեղեցիկ եք թիծաղում:

— Իսկապե՞ս:

— Այո՛: Ավելի անկաշկանդ:

Հանկարծ նա թեթև ու հանգիստ զգաց:

— Ինչո՞ւ դպրոց չեք գնացել: Սովորելու փոխարեն օրերով թափառում եք մենակ:

— Դե, դպրոցում ինձ չեն սպասում,— պատասխանեց աղջիկը: — Իսկ գիտեք ինչու, ասում են, իբր ես մարդամոտ չեմ, որ դժվար եմ մտերմանում: Տարօրինակ է: Իրականում շատ

մարդամոտ եմ: Կարևորն այն է, թե ինչ ենք հասկանում մարդամոտ ասելով: Իմ կարծիքով՝ մարդկանց հետ շփվել, նշանակում է այնպես գրուցել, ինչպես մենք ենք գրուցում:— Նա ասի մեջ չխկչխկացրեց մի քանի շագանակ, որոնք գտել էր այգում, ծառի տակ:— Կամ գրուցել այն մասին, թե ինչ զարմանալի է աշխարհը: Սիրում եմ մարդկանց հետ լինել: Բայց բոլորին իրար գլխի հավաքել և թույլ չտալ ոչ մեկին բառ ասել՝ ի՞նչ շփում է: Ռաս հեռուստացուցով, բասկետբոլի, բեյսբոլի կամ վազքի, հետո պատմության դաս՝ ինչ-որ բան ենք արտագրում, կամ էլ նկարչության դաս՝ ինչ-որ բան ենք արտանկարում, հետո կրկին սպորտ: Գիտե՞ք, դպրոցում մենք երբեք հարց չենք տալիս: Համենայն դեպս՝ մեծամասնությունը: Նստում ենք ու լռում, իսկ մեզ ոմբակոծում են պատասխաններով՝ թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ... Հետո մի չորս ժամ էլ նըստում ենք և ուսումնական կինոնկար դիտում: Այդ ի՞նչ շփում է: Բազմաթիվ ծագարներ են, որոնց մեջ ջրհորդաններով ջուր են լցնում միայն նրա համար, որ դուրս թափվի մյուս ծալրից: Ռեռ հետն էլ հավատացնում են, թե իբր գինի է: Օրվա վերջին այնպես ենք հոգնում, որ միայն կարող ենք ընկնել ու մրափել կամ էլ գնալ զվարճավայր՝ կոփվ սարքել և կամ ապակի ջարդելու հատուկ սրահում ապակի փշրել, կամ էլ պողպատե մեծ գնդով մեքենա խորտակել ավտովթարի տաղավարում, կամ թե նստել մեքենա և սլանալ փողոցներով: Այդպիսի մի խաղ կա՝ ո՞վ առաջինը կվախենա. սրընթաց դեմառդեմ քշում են իրար վրա, պարտվում է նա, ով առաջինն է խուլս տալիս: Թերևս նրանք իրավացի են. հավանաբար, ես մարդամոտ չեմ: Ընկերներ չունեմ: Ռա էլ կարծես տեղիք է տալիս, թե խախտված եմ: Բայց իմ բոլոր հասակակիցները կամ ծջում ու ցատկում են խելագարի պես, կամ էլ ծեծկոտում են իրար: Նկատե՞լ եք, որ այժմ մարդիկ անողոք են միմյանց նկատմամբ:

— Ռուք դատում եք պառավի նման:

— Երբեմն ինձ հենց պառավ եմ զգում: Վախենում եմ իմ հասակակիցներից: Նրանք սպանում են իրար: Մի՞թե միշտ այդպես է եղել: Քեռիս ասում է, որ ոչ: Միայն անցած տարի իմ տարեկիցներից վեցը սպանվեց: Տասը զոհվեց ավտովթարից: Ես նրանցից վախենում եմ, և այդ պատճառով էլ չեմ սի-

րում ինձ: Քեռիս ասում է, որ իր պապը դեռևս հիշում էր այն ժամանակները, երբ երեխաներն իրար չէին սպանում: Բայց դա շատ վաղուց է եղել, այն ժամանակ ամեն բան այլ կերպ է եղել: Քեռիս ասում է, որ այն ժամանակ մարդիկ կարծում էին, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա պատասխանատվության զգացում: Ի դեպ, ես ունեմ: Եվ դա այն պատճառով, որ վաղուց, երբ դեռ փոքր էի, ինձ մի լավ դնգստել են: Ինքս եմ կատարում տան բոլոր գնումները, ինքս եմ կարգի բերում բնակարանը:

— Բայց ամենից ավելի, — շարունակեց աղջիկը, — համենայն դեպս, սիրում եմ դիտել մարդկանց: Երբեմն ողջ օրը լինում եմ մետրոյում, նայում եմ մարդկանց, ականջ դնում նրանց խոսակցությանը: Ուզում եմ իմանալ՝ ովքե՞ր են, ի՞նչ են ցանկանում, ո՞րն են գնում: Երբեմն նույնիսկ այցելում եմ զվարճավայրեր, կամ կեսգիշերին զբոսնում քաղաքի արվարձաններով սլացող հրթիռային ավտոմեքենաներով: Ուստիկանությունը ուշադրություն չի դարձնում, միայն թե դրանք ապահովագրված լինեն: Եթե գրպանումդ կա տասը հազար դոլարի ապահովագրական անդորրագիր, ուրեմն՝ ամեն ինչ կարգին է, և բոլորը երջանիկ ու գոհ են: Երբեմն ծածուկ խոսակցություններ եմ լսում մետրոյում կամ էլ հանքային ջրի կրպակների մոտ: Եվ գիտե՞ք ինչ:

— Ի՞նչ:

— Մարդիկ ոչնչի մասին չեն խոսում:

— Չի կարող պատահել:

— Այո... Ոչնչի մասին: Դատարկախոսում են՝ նորաձևություն, լողավազաններ, ավտոմեքենաների մակնիշներ, և ամեն ինչին ավելացնում. «Փառահե՛ղ է»: Նրանք բոլորն էլ չաչանակի նման շարունակ նույն միտքն են կրկնում: Իսկ սրճարանում լարում են անեկդոտների տուփերը և լսում նույն մաշված սրախոսությունները կամ էլ միացնում են երաժշտական պատը և նայում, թե ինչպես են վետվետում գունավոր նախշերը: Բայց չէ՞ որ այդ ամենը կատարելապես անբովանդակ գունախաղ է: Հապա պատկերասրահները: Երբևէ մտե՞լ եք: Այնտեղ նույնպես ամեն ինչ վերացական է: Քեռիս ասում է, որ մի ժամանակ այդպես չի եղել, նկարները որոշակի ասելիք են ունեցել, նույնիսկ մարդկանց են պատկերել:

— Քեոիս այս է ասում, քեոիս այն է ասում... Հավանաբար ձեր քեոին նշանավոր մարդ է:

— Իհարկե, նշանավոր է: Ռե, ես պետք է գնամ: Ցտեսություն՝ն, միսոր Մոնթագ:

— Ցտեսություն:

— Ցտեսություն...

Սեկ օր, երկու օր, երեք, չորս, հինգ, վեց, յոթ օր: Հրակայան:

— Մոնթագ, այս ձողն այնպես եք մագլցում, ինչպես թռչունն է իջնում ծառի սաղարթին:

Երրորդ օր:

— Մոնթագ, ինչո՞ւ եք ետնամուտքից ներս գալիս: Էլի շո՞ւնն է անհանգստացնում ձեզ:

— Ոչ, ոչ:

Չորրորդ օր:

— Մոնթագ, հապա լսեք, թե ինչ զվարճալի դեպք է կատարվել: Ինձ առավոտյան պատմեցին: Սիեթլում մի հրկիզող կանխամտածված ձևով շանը լարել է իր իսկ քիմիական բաղադրության վրա և դուրս հանել բնից: Այ քեզ ինքնասպանության միջոց:

Հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ օր:

Հետո Քլարիսն անհետացավ: Սկզբում Մոնթագը նույնիսկ չհասկացավ, թե այդ օրն ինչո՞վ է տարբերվում մյուսներից, իսկ բանն այն էր, որ Քլարիսը ոչ մի տեղ չէր երևում: Մարգագետինը դատարկ էր, ծառերը դատարկ էին, փողոցը՝ դատարկ: Եվ մինչ կգիտակցեր, թե ինչն է հատկապես պակասում, մինչ սկսեց որոնել կորուստը, ինքը կորցրեց իրեն: Ստտենալով մետրոյին, նրան արդեն անորոշ տազնապ էր համակել: Ինչ-որ բան էր կատարվել՝ խաթարելով այն որոշակի կարգ ու կանոնը, որին վարժվել էր: Ծիշտ է, այդ կարգ ու կանոնը պարզ ու հասարակ էր, հաստատվել էր ընդամենը մի քանի օր առաջ, բայց, այնուամենայնիվ... քիչ մնաց ետ դառնար: Գուցե նորի՞ց անցնի մետրոյից մինչև տուն ընկած ճանապարհը: Մոնթագը համոզված էր, որ եթե մի անգամ էլ անցնի, Քլարիսը կհասնի իրեն, և ամեն ինչ կլինի առաջվա պես, բայց արդեն ուշ էր: Ստտեցող գնացքը վերջ դրեց երկմտանքին:

Խաղաթղթերի շրջուն, ձեռքերի շարժում, կոպերի թրթիռ, խոսող ժամացույցի ձայն, որը միայն ազդարարում է հրակայանի գրասենյակի առաստաղից. «... Գիշերվա ժամը մեկն անց է երեսունհինգ րոպե, հինգշաբթի, նոյեմբերի չորսը... ժամը մեկն անց է երեսունվեց րոպե... ժամը մեկն անց է երեսունյոթ րոպե...»: Խաղաթղթերի խշռոց կեղտոտ սեղանին: Չայները հասնում էին Մոնթագին, չնայած ամուր փակված կոպերի վարագույրին, որով նա ձգտում էր գեթ մի ակնթարթ պաշտպանվել: Բայց փակ աչքերով էլ նա պարզորոշ զգում էր այն ամենը, ինչ շուրջը կար. ցուլացող փայլեցված պղինձ, ճառագայթող լամպեր, հրակայանի լուսությունը: Եվ ոսկե ու արծաթե դրամների փայլը: Սեղանի շուրջը նստած մարդիկ, որոնց այժմ նա չէր տեսնում, նայում էին իրենց խաղաթղթերին, հոգոց հանում, սպասում: «Ժամը մեկն անց է քառասունհինգ րոպե...»: Խոսող ժամացույցն, ասես, ողբում էր մոռյլ առավուտի և անուրախ տարվա անցնող րոպեները:

— Ի՞նչ է պատահել, Մոնթագ:

Նա բացեց աչքերը:

Ինչ-որ տեղ խզխզաց ուղիղն.

— Ցանկացած պահին կարող է պատերազմ հայտարարվել: Երկիրը պատրաստ է պաշտպանելու իր...

Շրակայանի շենքը ցնցվեց. հրթիռային ուժակոծիչները դղրդոցով ակոսեցին լուսադեմի սևամած երկինքը:

Մոնթագը շփոթահար թարթեց աչքերը: Բիթին գննում էր նրան՝ որպես թանգարանային ցուցանմուշի: Ուր որ է նա ոտքի կելնի, կմոտենա, կկպչի Մոնթագին, կբացահայտի նրա հանցանքը, նրա տառապանքների պատճառը: Հանցա՞նքը: Բայց ո՞րն է իր հանցանքը:

— Ձեր խաղալու հերթն է, Մոնթագ:

Մոնթագը հայացք նետեց իր առջև նստած մարդկանց: Նրանց դեմքերը թխացել էին հազարավոր իսկական ու տասնյակ հազարավոր երևակայական հրդեհների բոցից, մասնագիտությունը անբնական կարմրությամբ էր ներկել նրանց այտերը և բորբոքել աչքերը: Նրանք հանգիստ, առանց աչքերը թարթելու նայում էին պլատինե վառիչների բոցին, ծխելով իրենց անփոփոխ սև ծխամորձը: Նրանք սևաեղ էին, մրահոն, կապույտին տվող, մաքուր սափրված և միաժամանակ ասես

մոխրոտ դեմքերով. ժառանգական արհեստի դրոշմը: Մոնթազը ցնցվեց, բերանը կիսաբաց մնաց, նրա գլխում սոսկալի միտք ծագեց: Ինքը երբևէ տեսե՞լ է մի հրկիզող, որը չունենար սև մազեր, սև հոնքեր, այրված դեմք և այդ կապտաբծերը՝ մաշուր սափրված ու միաժամանակ կարծես վաղուց չսափրված այտերին: Այդ մարդիկ ջրի երկու կաթիլի պես նման էին հենց իրեն: Մի՞թե հրկիզողներին ընտրում էին ոչ միայն ըստ հակումների, այլև ըստ արտաքին տեսքի: Նրանց դեմքերը մոխրի և մրի գույնից բացի, այլ երանգներ չունեին, նրանցից անբաժան էր մխացող ծխամորձերից փչող խանձահոտը: Ահա, ծխախոտի ծխի ամպով պարուրված ոտքի է ելնում հրկիզապետ Բիթին, վերցնում է ծխախոտի նոր տուփ, բացում է ցելոֆանե թաղանթը, որը ճմռթվում է ափի մեջ՝ կրակի ծարձատյունով:

Մոնթազը սևեռուն նայեց ձեռքի մեջ սեղմած խաղաթղթերին:

— Ես... ես մտքերի մեջ ընկա: Հիշեցի անցյալ շաբաթվա հրդեհը և այն մարդուն, որի գրադարանն այրեցինք: Ի՞նչ արեցին նրան:

— Ուղարկեցին գժանոց: Գժի պես բղավում էր:

— Բայց չէ՞ որ նա խելագար չէր:

Բիթին լուռ խառնեց խաղաթղթերը:

— Եթե մարդը մտածում է, որ կարող է խաբել կառավարությանը և մեզ, նա խելագար է:

— Ես փորձում էի պատկերացնել, — ասաց Մոնթազը, — թե ինչ են զգում նման իրավիճակում: Պատկերացրեք, եթե հրկիզողները վառեին մեր տներն ու մեր գրքերը:

— Մենք գրքեր չունենք:

— Իսկ եթե ունենայի՞նք:

— Գուցե դուք ունե՞ք:

Բիթին կկոցեց աչքերը:

— Ես չունեմ, — ասաց Մոնթազը և սեղանի շուրջը նստած մարդկանց կողքով ակնապիշ նայեց պատին կախված արգելված գրքերի ցուցակներին: Այդ գրքերի վերնագրերը փայլատում էին հրդեհների ցուլքերում, երբ տարիներն ու դարերը ավերվում էին իր իսկ կացնի հարվածների ներքո և իր ձեռքի մեջ սեղմած փողրակից ցայտող նավթի շիթից թրջված՝ վերածվում մոխրի:

— Ո՛չ,— կրկնեց նա և այտի վրա իսկույն զովասուն սլուք զգաց: Ասես կրկին կանգնած էր իր տան նախասենյակում, և ծանոթ օդափոխիչ ցանցից փչող օդի հոսանքը սառեցնում էր դեմքը: Եվ նորից նա նստած էր զբոսայգում ու զրուցում էր ծեր, շատ ծեր մարդու հետ: Զբոսայգում նույնպես պաղ քամի էր փչում...

Մի պահ Մոնթազը վարանեց, ապա հարցրեց.

— Մի՞շտ է, արդյոք... մի՞շտ է այսպես եղել՝ հրակայաններ, մեր աշխատանքը: Ժուկով-ժամանակով... եղել է, չի եղել:

— Ժուկով-ժամանակով... եղել է, չի եղել..., — գոչեց Բիթին: — Դրանք ի՞նչ խոսքեր են:

«Հիմար, ինչե՞ր ես դուրս տալիս,— մտածեց Մոնթազը իր մասին: — Ես ինձ մատնում եմ»: Վերջին հրդեհի ժամանակ մանկական հեքիաթների գրքույկ ընկավ ձեռքը, և նա կարդաց առաջին տողը...

— Ես նկատի ունեի հին ժամանակները,— ասաց նա: — Երբ տները դեռևս հրակայուն չէին..., — և հանկարծ նրան թվաց, թե այդ բառերը ինքը չի արտասանում, այլ ուրիշ, ավելի ջահել մեկը: Նա միայն բացեց բերանը, իսկ իր փոխարեն խոսեց Զլարիս Մըբլելը: — Մի՞թե այն ժամանակ հրշեջները հրդեհում էին, վառում և ոչ թե կանխում կամ հանգցնում հրդեհները:

— Ա՛յ քեզ զարմանալի բան,— Ստոնմընն ու Բլաքը, երկուսը միասին, ասես հրահանգով, գրպաններից արագորեն հանեցին կանոնագրքերը և դրեցին Մոնթազի առջև: Կանոններից բացի, այնտեղ Ամերիկայի հրկիզող խմբերի համառոտ պատմությունն էր, և այժմ բացված էր Մոնթազին լավ ծանոթ այդ էջը.

«Հիմնադրված են 1790 թվականին՝ գաղութներում անգլիամետ գրականությունն այրելու նպատակով: Առաջին հրկիզողը Բենջըմին Ֆրանկլինն է»:

Կանոններ.

1. Տագնապի ազդանշանով անհապաղ մեկնիր:
2. Արագորեն վառիր կրակը:
3. Արի՛ր ամեն ինչ մինչև վերջ:
4. Առաջադրանքը կատարելով՝ անմիջապես վերադարձիր հրակայան:

5. Եղիր պատրաստ նոր ահագանգի:

Բոլորը նայում էին Մոնթագին: Նա չէր շարժվում:

Հանկարծ ոռնաց տագնապի ազդանշանը:

Հերթապահության շենքի առաստաղին տեղադրված զանգը խփեց իր երկու հարյուր զարկերը: Չորս աթոռները ակնթարթորեն դատարկվեցին: Խաղաթղթերը ձյան պես թափվեցին հատակին: Բրոնզե ձողը դողաց: Մարդիկ անհետացան:

Մոնթագը նստած էր իր աթոռին: Աշխուժանալով՝ ներքեվում փնջաց նարնջագույն վիշապը:

Մոնթագը վեր կացավ և, ասես քնի մեջ, ձողով ցած իջավ:

Սեխանիկական շունը իրեն թափ տվեց քնի մեջ, աչքերը բռնկվեցին կանաչ կրակներով:

— Մոնթագ, դուք մոռացել եք ձեր սաղավարտը:

Նա պատից պոկեց սաղավարտը, վազեց, ցատկեց ոտնակին, և մեքենան սլացավ: Գիշերալին քամին շչակի ոռնոցն ու մետաղի ահեղ դղրդյունն էր տարածում չորսբոլորը:

Եռահարկ թեփաթափ տուն էր դա՝ հին թաղամասերից մեկում: Հավանաբար դիմացել էր մի հարյուրամյակից ոչ պակաս: Ժամանակին, ինչպես և քաղաքի բոլոր տները, պատված է եղել հրակայուն նյութի բարակ շերտով, և թվում էր, սոսկ այդ փրկարուն պահպանական կեղևն է փրկել նրան վերջնական ավերումից:

— Տեղ հասանք:

Շարժիչը մի անգամ էլ փնջացրեց ու լռեց: Բիթին, Ստոնմընը և Բլաքը արդեն վազում էին տան կողմը, հրակայուն արտահագուստների պատճառով այլանդակ և անձոռնի տեսքով: Մոնթագը վազեց նրանց ետևից:

Նրանք աղմուկով խուժեցին տուն և բռնեցին կնոջը, ջնայած նա չէր էլ փորձում փախչել կամ թաքնվել: Նա կանգնած էր, օրորվելով նայում էր առջևի դատարկ պատին, ասես շշմել էր գլխին իջած հարվածից: Շուրթերն անձայն շարժվում էին, աչքերում այնպիսի արտահայտություն կար, կարծես ջանում էր ինչ-որ բան հիշել, բայց չէր կարողանում: Վերջապես հիշեց, և նրա շրթունքները դողալով արտաբերեցին.

— Արիացեք, Ռիդլի: Աստծո ողորմածությամբ այսօր Անգ-

լիայում մենք այնպիսի մոմ կվառենք, որ վստահ եմ, նրանք երբեք չեն կարող հանգցնել:

— Վերջ տվեք, — ասաց Բիթին: — Որտե՞ղ են նրանք:

Մեծագույն անտարբերությամբ նա ապտակեց կնոջը և կրկնեց հարցը: Ժեր կինը հայացքը սկետեց Բիթին:

— Դուք գիտեք, թե որտեղ են, այլապես այստեղ չէիք լինի, — ասաց նա: Ստոունմընը մեկնեց քարտի վրա գրված հեռախոսային ահազանգի տեքստը. «Հիմքեր կան կասկածելու Էլմ-Սիթիի № 11 տան ձեղնահարկը:

Է. Բ.»:

— Հավանաբար միսիս Բլեյքն է՝ իմ հարևանուհին, — ասաց կինը՝ կարդալով սկզբնատառերը:

— Դե լավ, տղանե՛ր: Ի՛ գործ:

Հաջորդ վայրկյանին արդեն հրկիզողները, փայլփլող փոքրիկ կացիները ծոծելով, վազում էին աստիճաններով, ջարդում էին չկողպված դռները, դատարկ սենյակների խավարում բախվում էին իրար, անկարգ երեխաների նման ուրախ աղմուկելով ու գոռալով:

— Հե՛յ, էհե՛յ:

Գրքերի հեղեղ թափվեց Մոնթագի գլխին, երբ նա ծանր սրտով, սարսուղով բարձրանում էր ուղղաձիգ սանդուղքով: Ինչ վատ եղավ: Առաջներում ոչ մի հարց չէր ծագում... Նախ հայտնվում էին ոստիկանները, կայչուն ժապավենով փակում զոհի բերանը և կապկպելով, գցում էին փայլփլուն բզեզանման մեքենայի մեջ, ինչ-որ տեղ տանում: Երբ հրկիզողները տեղ էին հասնում, տունն արդեն դատարկ էր լինում: Ոչ մեկին ցավ չէին պատճառում, միայն իրերն էին ջարդում: Իսկ իրերը ցավ չեն զգում, նրանք չեն գոռում, չեն արտասվում, ինչպես կարող է գոռալ և արտասվել այդ կինը: Եվ խիղճդ հետո չէր տանջում: Սոսկ մաքրում էին. հավաքարարի աշխատանք: Արտգույքությամբ, ամեն ինչ տեղը-տեղին: Նավթ լցրեք: Ո՞վ լուցկի ունի:

Բայց այսօր ինչ-որ մեկը սխալ էր թույլ տվել: Այդ կինն իր ներկայությամբ փչացնում էր ողջ թիսակարգը: Այդ պատճառով էլ բոլորը ձգտում էին հնարավորին չափ շատ աղմկել, կատակել, ծիծաղել, որպեսզի խլացնեն նրա լուռության դատա-

պարտող կշտամբանքը: Թվում էր՝ կինը ստիպել է դատարկ պատերին աղաղակել վրդովմունքից, սենյակներում դետուդեն նետվող մարդկանց վրա թափել մեղքի մանր փոշի, որը սողուկում էր նրանց ունգերի մեջ, թափանցում հոգին... Ծփոթմունք է, անազնիվ գործ: Հանկարծ Մոնթազը չարացավ: Իբր քիչ հոգս ուներ, հենց միայն այդ էր պակաս: Այդ կինը այստեղ չափտի լիներ:

Գրքերը թափվում էին Մոնթազի ուտերին, ձեռքերին, վեր պարզած դեմքին: Ահա ճերմակ աղավնու պես թևերը թափահարելով, մի գիրք հնազանդորեն իջավ ուղիղ նրա ձեռքերի մեջ: Աղոտ, երերուն լույսի տակ հատ-հատ գեղագիր բաց էջը առկայծեց որպես ծյունաձերմակ փետուր: Աճապարանքի և եռուզեռի մեջ Մոնթազի հայացքը սոսկ մի ակնթարթ սահեց նրա վրայով, բայց կարդացած տողերը շամփրեցին նրա ուղեղը և դրոշմվեցին, ինչպես շիկացած երկաթի խարան: «Թվում էր թե ժամանակը խոնջացած նիրհում է՝ միջօրեի արևի տակ»¹: Նա վայր գցեց գիրքը: Եվ անմիջապես մեկ ուրիշն ընկավ ձեռքի մեջ:

— Հե՛յ, ո՞վ կա ներքևում: Մոնթազ, այստեղ արի:

Մոնթազի ձեռքը ամուր ծմլեց գիրքը, մոլի հավատացյալի նման սեղմեց կրծքին: Չեղնահարկում, փոշու ամպ հանելով՝ հրկիզողները խառնշտում էին ամսագրերի կույտերն ու ցած շարտում: Խփված թռչունների պես դրանք ընկնում էին, իսկ կինը, փոքրիկ աղջկա պես հնազանդ, կանգնել էր այդ մեռած մարմինների մեջ:

Ո՛չ, Մոնթազն ինքը ոչինչ չի արել: Ամեն ինչ արել է նրա ձեռքը: Նրա ձեռքն իր սեփական ուղեղն ունի, ամեն դողացող մատի մեջ խիղճ ու հետաքրքրասիրություն կա: Եվ այդ ձեռքը հանկարծ գող դարձավ: Ահա նա գիրքը խոթեց թևի տակ, ամուր սեղմեց քրտնած մարմնին և դուրս եկավ դատարկ... Չեռնածուի ճարակություն:

— Տեսեք, ոչինչ չկա: Խնդրեմ, ես անմեղ եմ: Ոչինչ չկա:

Նա ապշահար ու լարված զննում էր այդ սպիտակ ձեռքը,

¹ Ալեքսանդր Սմիթ (1830—1867)—շոտլանդացի բանաստեղծ:

մերթ հեռատեսությամբ տառապող մարդու նման հեռացնում
իրենից, մերթ կույրի պես մոտեցնում քթին:

— Մո՛նթագ:

Հոգոց հանելով նա շրջվեց:

— Հեռացե՛ք այդտեղից, ապո՛ւշ:

Գրքերը թափված էին, ինչպես թարմ ձկան շեղջերը ափին,
որոնց հետո աղ էին դնելու: Հրկիզողները ցատկոտում էին
նրանց վրայով, սայթաքում, ընկնում: Ոսկետառ վերնագրերը
փայլատակում էին և մարում...

— Նա՛վթ:

Պոմպերը միացրին, և նավթի սառը շիթերը դուրս ժայթ-
քեցին 451 թվակիր բաքերից. յուրաքանչյուր հրկիզողի մեջ-
քին փոկերով ամրացված էր այդպիսի մի բաք: Նրանք նավ-
թով ողողեցին սենյակները, ապա փութկոտ իջան սանդուղ-
քով: Նավթի գոլորշուց շնչահեղձ Մոնթագը գայթելով քայլում
էր վերջում:

— Դո՛ւրս եկեք, — կարգադրեցին նրանք կնոջը: — Ծո՛ւտ:

Նա ծունկի էր իջել խառնիխտուն թափված գրքերի մեջ,
մատներով քնքշորեն հպվում էր թրջված կազմերին, շոշափում
ոտուցիկ վերնագրերը, ապա կշտամբանքով նայեց Մոնթագին:

— Դուք չեք ստանա իմ գրքերը, — վերջապես ասաց նա:

— Օրենքը ձեզ հայտնի է, — ասաց Բիթին: — Որտե՞ղ է

ձեր ողջամտությունը: Այս գրքերում ամեն ինչ հակասական է:
Իսկական բաբելոնյան խառնաշփոթություն: Եվ դուք տարիներ
շարունակ փակվել եք այստեղ: Դեն նետեք այդ ամենը, ազա-
տություն ձեռք բերեք: Այդ գրքերի հերոսները երբեք գոյություն
չեն ունեցել: Հիմա գնացինք:

Կինը գլուխն օրորեց:

— Այժմ ամբողջ շենքը կայրվի, — ասաց Բիթին:

Հրկիզողների տձև կերպարանքներն ուղղվեցին դեպի դու-
ռը: Նրանք նայեցին Մոնթագին, որ կանգնած էր կնոջ կող-
քին:

— Հո նրան այստեղ չե՞նք թողնելու, — զայրացած գոչեց
Մոնթագը:

— Նա չի ուզում հեռանալ:

— Պետք է ստիպել:

Բիթին բարձրացրեց ձեռքը, որի մեջ վառիչն էր:

— Մենք պետք է վերադառնանք հրակայան: Սակայն այս մոլեռանդները միշտ փորձում են ինքնասպանություն գործել: Հայտնի բան է:

Մոնթագը բռնեց կնոջ թևքից:

— Եկեք ինձ հետ:

— Ո՛չ,— ասաց նա:— Համենայն դեպս, ձեզնից շնորհակալ եմ:

— Հաշվում եմ մինչև տասը,— ասաց Բիթին:— Մեկ, երկու...

— Խնդրում եմ,— ասաց Մոնթագը կնոջը:

— Հեռացե՛ք,— ասաց կինը:

— Երեք, չորս...

— Ռե, խնդրում եմ,— Մոնթագը կնոջը քաշեց իր ետևից:

— Ես կմնամ այստեղ,— ցածրաձայն պատասխանեց նա:

— Հինգ, վեց...

— Կարող եք այլևս չհաշվել,— ասաց կինը: Նա բացեց մատները, և նրա ափի մեջ երևաց մի փոքրիկ, բարակ փայտիկ:

Սովորական լուցկու հատիկ էր:

Տեսնելով այդ՝ հրկիզողները աճապարանքով դուրս նետվեցին տնից: Հրկիզապետ Բիթին, արժանապատվությունը չկորցնելով, դանդաղ նահանջեց դեպի ելքի դուռը: Նրա վարդագույն դեմքին հազարավոր հրդեհների ու գիշերալին տագնապների փայլն էր վառվում:

— Աստված իմ,— մտածեց Մոնթագը,— որքան ծիշտ է: Տազնապի ահազանգերը միշտ գիշերն են լինում: Ցերեկը՝ երբեք: Մի՞թե պատճառն այն է, որ հրդեհն ավելի գեղեցիկ է գիշերը:

Ղոների մեջ տատամսող Բիթիի դեմքին խուճապ հայտնը վեց: Կնոջ ձեռքը սեղմում էր լուցկու միակ հատիկը: Օդը հագեցած էր նավթի կոկորդ քերող հոտով: Մոնթագն զգաց, թե ինչպես է թաքցրած գիրքը կենդանի սրտի նման բաբախում թևատակին:

— Հեռացեք,— ասաց կինը:

Մոնթագն զգաց, որ ինքը Բիթիի ետևից շարժվում է դեպի

դուռը, ապա աստիճաններով իջնում ցած, քայլում մարգագետնի կողմը, որտեղ երևում էր նավթի մուգ, չարագույժ օձի նման վող հետագիծը:

Կինը գնում էր նրանց ետևից: Նա կանգ առավ առմուտքի հարթակին և երկար, հանդարտ հայացք ձգեց նրանց վրա: Նրա լուռությունը դատապարտող էր:

Բիթին չխկացրեց վառիչը:

Բայց նա ուշացավ: Մոնթազը սարսափից քարացավ:

Շեմին կանգնած կինը քամահրական հայացք նետելով նրանց վրա՝ լուցկին քսեց բազրիքին:

Մարդիկ տներից դուրս վազեցին փողոց:

Հրակայան վերադառնալիս նրանք լուռ էին: Իրար չէին նայում: Մոնթազը Բիթիի և Բլաքի հետ նստած էր առջևում: Նրանք նույնիսկ չէին ծխում, միայն անխոս նայում էին ծանապարհին: Սալամանդրը կտրուկ թեքվեց խաչմերուկում և սլացավ առաջ:

— Ռիդլի, — վերջապես ասաց Մոնթազը:

— Ի՞նչ, — հարցրեց Բիթին:

— Նա ասաց՝ Ռիդլի: Ինչ-որ տարօրինակ բան ասաց, երբ ներս մտանք: «Արիացեք, Ռիդլի», — ասաց նա: Եվ էլի ինչ-որ բան: Էլի ինչ-որ բան...

— «Աստժո ողորմածությամբ այսօր Անգլիայում մենք այնպիսի մոմ կվառենք, որը, լվատահ եմ, նրանք երբեք չեն կարող հանգցնել», — ասաց Բիթին:

Ստոնմընը և Մոնթազը ապշահար նայեցին նրան:

Բիթին մտախոհ շփեց կզակը:

— Սա ասել է Լաթիմեր անունով մարդը Նիկոլաս Ռիդլի¹ անունով մարդուն, երբ նրանց մեղադրելով իբրև հերետիկոսների՝ ողջակիզում էին խարույկի վրա Օքսֆորդում, 1555 թվականի հոկտեմբերի տասնվեցին:

Մոնթազը և Ստոնմընը իրենց հայացքները կրկին հառեցին սալարկուղուն, որն արագորեն առկայծում էր մեքենայի անիվների տակ:

¹ Հյու Լաթիմերը և Նիկոլաս Ռիդլին անգլիական Ռեֆորմացիայի նշանավոր դեմքերից են:

— Ես լեփ-լեցուն եմ քաղվածքներով, ամեն տեսակ մեջբերում-հատվածներով,— ասաց Բիթին: — Հրկիզապետներից շատերն են այդպիսին: Երբեմն զարմանում եմ ինքս ինձ վրա: Ուշադիր եղեք, Ստոնմըն:

Ստոնմընը սեղմեց արգելակները:

— Գրո՛ղը տանի,— ասաց Բիթին: — Մեր շրջադարձն անցել ենք:

— Ո՞վ է:

— Ուրիշ ո՞վ կլինի, ես եմ,— մթության միջից արձագանքեց Մոնթագը՝ ետևից փակելով ննջարանի դուռը:

Կինը վերջապես ասաց.

— Լուսը վառիր:

— Ինձ պետք չէ:

— Այդ դեպքում պակիր քնելու:

Նա լսեց, թե ինչպես է կինը դժգոհ շուռումուռ գալիս անկողնում: Ճոռացին ներքնակի զսպանակները:

— Հարբա՞ծ ես,— հարցրեց Միլդրեդը:

Ահա, ուրեմն, ինչպես եղավ: Ամեն ինչում մեղավոր էր իր ձեռքը: Նա զգաց, որ իր ձեռքերը, սկզբում մեկը, ապա՝ մյուսը քաշեցին հանեցին բաձկոնն ու նետեցին հատակին: Հասած տաբատը կախված էր ձեռքերից, և նա անտարբեր շարժուտեց մթության մեջ, ինչպես անդունդը նետեր:

Նրա ձեռքերը վարակված են, շուտով վարակը կախտահարի դաստակները, ապա կհասնի արմունկներին, կրոնի ուտերը, կայծի նման կտարածվի մի թիակից մյուսը: Նրա ձեռքերը համակված են անհագ ազահուությամբ: Եվ այժմ այդ ազահությունը փոխանցվել է նրա աչքերին, նա ուզում է նայել ու նայել, անվերջ նայել, ինչ-որ բանի, կարևոր չէ՝ ինչի, միայն թե նայել...

— Ի՞նչ ես անում,— հարցրեց կինը:

Նա օրորվում էր խավարում՝ գիրքը սեղմած քրտնաթոր ափի մեջ:

Մի րոպե անց կինն ասաց.

— Հը՞, երկա՞ր ես այդպես կանգնելու սենյակի կենտրոնում:

Նրա կրծքից անորոշ հնչյուն դուրս թռավ:

— Բա՞ն ասացիր,— հարցրեց կինը:

Կրկին նրա շուրթերից անհասկանալի հնչյուններ պոկվեցին: Նա սայթաքելով հասավ իր մահճակալին, գիրքն անփութորեն խցկեց սառցասառն բարձի տակ և ծանրորեն փլվեց անկողնուն: Կինը վախեցած ծչաց: Նրան թվաց, թե Միլդրեդը հեռվում է, սենյակի մյուս ծայրին, և որ իր անկողինը սառցե կղզի է անձիր օվկիանոսի մեջ: Կինն ինչ-որ բան էր ասում, խոսում էր տարբեր հարցերի մասին, բայց նրա համար դրանք սոսկ բառեր էին՝ անկապ ու անիմաստ: Ծիշտ այդպես բարեկամներից մեկի տանը նա լսել էր, թե ինչպես է երկու տարեկան երեխան արտաբերում անբովանդակ բառակոյտեր:

Բայց Մոնթագը ոչինչ չասաց: Բավական ժամանակ անց, լսելով նրա հոգոցները, Միլդրեդը վեր կացավ և մոտեցավ նրա անկողնուն: Խոնարհվելով՝ դիպավ նրա այտերին: Մոնթագը վստահ էր, որ երբ Միլդրեդը ետ քաշեց ձեռքը՝ ափը խոնավացել էր:

Ուշ գիշերին Մոնթագը նայեց Միլդրեդին: Նա քնած չէր: Օդում զնգում էր հազիվ լսելի մեղեդի՝ կնոջ ականջներում կըրկին խեցիներն էին, նա վերստին լսում էր հեռավոր երկրների հեռավոր ծայրերը: Լայն բացված աչքերը հառած էին առաստաղին, թանձր խավարին, որ պարուրել էր նրան:

Նա հիշեց մի հին անեկդոտ. կինը այնքան երկար է շաղակրատում հեռախոսով, որ հուսահատված ամուսինը հարկադրված է լինում վազել մոտակա հեռախոսախցիկը զանգահարելու նրան և պարզելու, թե ինչ է մատուցվելու ճաշին: Չգնի, արդյոք, իր համար ևս խեցետիպ դյուրակիր հաղորդիչ, որպեսզի գիշերները զրուցի կնոջ հետ, շնչա նրա ականջին, փսփսա, գոռա, ծչա, բղավի: Բայց ի՞նչ է փսփսալու: Ի՞նչ է բղավելու: Ի՞նչ կարող է ասել նրան:

Եվ հանկարծ կինը թվաց այնքա՛ն օտար, ասես ինքը բնավ չի էլ ծանաչել նրան: Պարզապես սխալմամբ ընկել է անծանոթ տուն, ինչպես անեկդոտի այն մարդը, որը գիշերը հարբած տուն վերադառնալով՝ բացել է ուրիշի դուռը, մտել ուրիշի տուն, պանկել ուրիշի կնոջ անկողնում, իսկ վաղ առավոտյան վեր է կացել ու գնացել աշխատանքի, և ոչ նա, ոչ կինը ոչինչ չեն նկատել...

— Մի՛լի, — շնչաց նա:

- Ի՞նչ:
- Մի՛ վախեցիր: Ես միայն ուզում էի հարցնել...
- Ասա:
- Ե՞րբ ենք մենք հանդիպել և որտե՞ղ:
- Ինչի՞ համար ենք հանդիպել, — հարցրեց նա:
- Ղե, չե՛: Ես հարցնում եմ մեր առաջին հանդիպման մա-

սին:

Նա գիտեր, որ հիմա կինն անբավական կխոստովի խավարի մեջ:

Նա պարզաբանեց իր միտքը:

— Ե՞րբ մենք առաջին անգամ տեսանք իրար: Ե՞րբ էր, որտե՞ղ:

— Դա եղել է..., — կմկմաց նա: — Չգիտեմ:

Նրա մարմնով դող անցավ:

— Մի՞թե չես կարող հիշել:

— Դա այնքա՞ն վաղուց էր:

— Տասը տարի առաջ: Ընդամենը տասը:

— Մի՛ վրդովվիր: Չէ՞ որ փորձում եմ հիշել: — Հանկարծ նա թիծաղեց տարօրինակ, պոռթկուն թիծաղով: — Ջվարձալի է: Իսկապես, որքա՞ն զվարձալի է: Մոռանալ, թե երբ ես առաջին անգամ հանդիպել ամուսնուդ... Ամուսինն էլ մոռացել է, թե որտեղ է հանդիպել կնոջը...

Մոնթազը պառկած դանդաղ շփում էր կուպերը, ծակատը, ծոծրակը: Ափերով ծածկել էր աչքերը և ամուր սեղմում էր, կարծես ձգտելով տեղը բերել հիշողությունը: Չգիտես ինչու, այժմ աշխարհում ամենից կարևոր բանն էր՝ հիշել, թե որտեղ է ինքն առաջին անգամ հանդիպել Միլդրեդին:

— Ախր դա ինչ նշանակություն ունի: — Նա, հավանորեն, վեր կացավ և գնաց լողարան: Մոնթազը լսեց ծորակից հոսող ջրի ծողփյունը, ապա կլկլոց. կինը հաբեր էր խմում:

— Այո, թերևս, չունի, — ասաց նա:

Նա փորձեց հաշվել, քանի հաբ կուլ տվեց Միլդրեդը, և հանկարծ հիշողության մեջ հսունեցին այն երկուսը, ցինկաներկի պես կապտագունատ դեմքերով, բարակ շրթունքների մեջ սիգարետներ, և էլեկտրոնային աչքով օձը, որը գալարվելով ավելի ու ավելի էր խորանում մթության, հատակում նեխած ջրակույտի մեջ... Նա ցանկացավ ձայն տալ Միլդրե-

դին, հարցնել՝ «Քանի՞ հաբ կուլ տվիր: Էլի քանի՞սը կուլ կտաս և չես զգա»: Եվ այդպես շարունակ: Եթե ոչ հիմա, ապա քիչ հետո, եթե ոչ այս գիշեր, ուրեմն հաջորդ գիշեր... Իսկ ես անընդհատ անքուն պետք է պառկեմ և՛ այս, և՛ հաջորդ գիշերը, և՛ Էլի շատ գիշերներ— այժմ, երբ դա սկսվել է: Նա մանրամասն հիշեց պատահարը. մահճակալին փոված կնոջ անշարժ մարմինը, երկու բուժակներին, որոնք ոչ թե հոգատարությամբ հակվել էին նրա վրա, այլ ձեռքերը կրծքներին խաչած՝ անտարբեր կանգնել: Այդ գիշեր կնոջ անկողնու մոտ նա զգաց, որ եթե նա մեռնի, ինքը չի սգա, քանզի դա կլինի օտար մարդու մահ, որի դեմքը անցողակի տեսել է փողոցում կամ թերթային լուսանկարում... Եվ դա այնքա՞ն սոսկալի թվաց, որ նա լաց եղավ: Նա արտասվում էր ոչ թե այն մտքից, որ Միլդրեդը կարող է մեռնել, այլ որ նրա մահն այլևս չի կարող արցունք քամել իրենից: Հիմար, դատարկ մարդ, և նրա կողքին՝ հիմար, դատարկ կին, որին իր աչքի առաջ էլ ավելի իմաստագրկեց էլեկտրոնային աչքով այդ քաղցած օձը...

«Որտեղի՞ց է այս դատարկությունը, — հարցրեց ինքն իրեն: — Ինչո՞ւ ինչ որ ունեիր, չքացել է, մնացել է լոկ դատարկությունը: Եվ մեկ էլ այդ ծաղիկը, այդ խատուտիկը»: Նա ամփոփեց արդյունքները: «Ի՞նչ ամոթ է: Ռուք սիրահարված չեք»: Իսկ ինչո՞ւ սիրահարված չե:

Ճշմարիտն ասած, եթե լրջորեն խորհի, ապա իր և Միլդրեդի միջև միշտ էլ պատ է եղել: Ավելի ստույգ՝ ոչ թե մեկ, այլ ամբողջ երեք պատ, որոնք այնքա՞ն թանկ նստեցին: Այդ պատերի վրա բոլոր քեռիները, մորաքույրերը, զարմիկ-զարմուհիները, բարեկամ-բարեկամուհիները փնթփնթան կապիկների ոհմակ են, որոնք անիմաստ ու անկապ բլբլացնում են, ոչինչ, ոչինչ չասելով, բա՛րձր, բարձր, բարձր գոռալով: Հենց սկզբից նա նրանց կոչեց «ազգականներ»: «Ինչպե՞ս է քեռի Լուին», «Ո՞վ», «Իսկ մորաքույր Մո՞ղը»:

Ի՞նչ կերպար էր ամենից հաճախ հառնում նրա երևակայության մեջ, երբ մտածում էր Միլդրեդի մասին. անտառում մոլորված փոքրիկ աղջիկ (միայն թե, որքան էլ տարօրինակ լինի, այնտեղ ծառեր չկային) կամ, ավելի ծիշտ... փոքրիկ աղջիկ, որ մոլորվել է անապատում, որտեղ մի ժամանակ ծառեր

են եղել (ցանուցիր հետքեր պահպանվել են), իսկ ավելի որոշակի՝ Միլդրեդը իր «խոսող» հյուրասենյակի կենտրոնում նըստած: «Խոսող հյուրասենյակ»: Որքա՞ն դիպուկ է ասված: Երբ էլ ինքը մտել է այնտեղ, պատերը միշտ էլ զրուցելիս են եղել Միլդրեդի հետ:

- Հարկավոր է ինչ-որ բան անել:
- Այո՛, այո՛, հարկավոր է:
- Էլ ինչո՞ւ ենք պարապ կանգնել:
- Եկեք գործ անենք:

— Ես այնպես զայրացած եմ, որ կարող եմ թքել:

Ինչի՞ մասին են նրանք խոսում: Միլդրեդը չէր կարողանում բացատրել: Ով ո՞ւմ վրա էր զայրացած: Ի՞նչ են ուզում նրանք անել: Միլդրեդը չգիտեր:

— Սպասիր և ինքդ կտեսնես, — ասում էր նա:

Մոնթագը նստում էր և սպասում:

Պատերից թափվում էր հուժկու ամպրոպի որոտը: Երաժշտությունը ոմբակոծում էր նրան այնպիսի վիթխարի ուժով, ասես թե նրա ջլերը պոկում են ոսկորից, ծնոտը ցնցում, և նրա աչքերը պտտվում էին ակնակապիճներում: Իսկական ցնցում: Իսկ երբ այդ ամենը վերջանում էր, նա զգում էր ժայռից ցած նետված այն մարդու նման, որին օդում պտտեցրել էին կենտրոնախույս ուժերից ստացված արագությանը ու շարտել ջրվեժի մեջ: Եվ նա թռչում էր սրընթաց, թռչում էր վիհի մեջ, և հատակը չէր երևում, արագությունն այնպիսին էր, որ չէր դիպչում պատերին անգամ... Գահավիժում էր ներքև՝... ներքև՝... Եվ շուրջը ոչի՞նչ չկար... Պատա՛րկ էր:

Որոտը հանդարտվեց: Երաժշտությունը լոտեց:

— Հը՛, ինչպե՞ս է, — ասաց Միլդրեդը, — ցնցող է, չե՞:

Այո՛, իսկապես ցնցող էր: Ինչ-որ բան էր կատարվել, թեպետ պատերի վրայի մարդիկ այդ ընթացքում գրեթե չջարժվեցին, և նրանց միջև ոչինչ էլ տեղի չունեցավ: Բայց զգացողությունն այնպիսին էր, որ կարծես քեզ անց են կացրել լվացքի մեքենայի միջով կամ կլանել վիթխարի փոշեծծիչով, որ շնչահեղձ ես լինում, խեղդվում ես երաժշտությունից, հընչյունների խառնաղմուկից: Քրտինքի մեջ կորած, ուժասպառ Մոնթագը դուրս թռավ հյուրասենյակից: Միլդրեդը մնաց իր

բազկաթոռին նստած, և կրկին Մոնթազին էին հասնում «ագ-գականների» ձայները:

— Այժմ ամեն ինչ լավ կլինի, — ասում էր մորաքույրերից մեկը:

— Օ՛, այդքան համոզված մի՛ եղիր, — պատասխանում էր զարմիկը:

— Խնդրում եմ, մի՛ բարկացիր:

— Ո՞վ է բարկանում:

— Դու:

— Ե՛ս:

— Այո՛: Ուղղակի գժվում ես:

— Ինչո՞ւ ես այդպես կարծում:

— Որովհետև...

— Ծատ լավ, — բացականչեց Մոնթազը, — բայց ինչի՞ մասին են նրանք վիճում: Ովքե՞ր են այս մարդիկ: Ո՞վ է այս տղամարդը, ով է այս կինը: Ի՞նչ է, նրանք մարդուկի՞ն են: Բաժանվա՞ծ են: Նշանվա՞ծ են: Աստվա՞ծ իմ, անհնար է որևէ բան հասկանալ:

— Նրանք..., — սկսեց Միլդրեդը: — Գիտե՞ս, նրանք... դե, տեսնում ես, վիճել են: Նրանք հաճախ են վիճում: Միայն թե լսեիր... Կարծում եմ՝ ամուսիններ են: Այո՛, այո՛, հենց ամուսիններ են: Ի՞նչ կա որ:

Իսկ եթե հյուրասենյակը չլիներ, եթե չլինեին այս երեք խոսող պատերը, որոնց, Միլդրեդի երազանքի համաձայն, շուտով կավելանա չորրորդը, այդ ժամանակ կլիներ բաց մեքենան, որը Միլդրեդը վարում էր ժամում հարյուր մղոն արագությամբ: Նրանք սլանում էին քաղաքով, և Մոնթազը գոռում, ձայն էր տալիս կնոջը, ի պատասխան՝ կինն էլ էր բղավում, և երկուսն էլ ոչինչ չէին լսում շարժիչի դրոշյունից բացի:

— Արագությունը հասցրու նվազագույնի, — գոչում էր Մոնթազը:

— Ի՞նչ, — ծչում էր Միլդրեդը:

— Նվազագույն արագությամբ շարժվիր: Իջեցրու մինչև հիսունհինգ:

— Ի՞նչ, — ծչում էր կինը՝ չլսելով:

— Դանդաղեցրո՛ւ, — գոռում էր նա:

Պակասեցնելու փոխարեն, Միլդրեդը մեծացնում էր ժամում

մինչև հարյուր հինգ մղոն, և Մոնթագի շունչը կտրվում էր:

Իսկ երբ իջնում էին մեքենայից, Միլդրեդի ականջներում արդեն դրված էին լինում խեցիները:

Լուռություն է: Միայն քամին է մեղմ սոսափում դրսում:

— Միլդրեդ:— Նա շրջվեց անկողնում: Ձեռքը մեկնելով՝ կնոջ ականջներից դուրս քաշեց պստիկ երաժշտամիջատները:

— Միլդրեդ, Միլդրեդ:

— Այո՛,— հազիվ լսելի հնչեց նրա ձայնը:

Մոնթագին թվաց, թե ինքը նույնպես փոխակերպվել է այն տարօրինակ էակներից մեկին, որոնք ապրում են հեռուստատեսային պատերի ապակե միջնորմների միջև: Նա խոսում էր, բայց ձայնը չէր ձեղքում-անցնում թափանցիկ պատները: Նա կարող էր բացատրվել միայն շարժումներով ու դիմախաղով՝ հուսալով, որ Միլդրեդը կշրջվի և կնկատի իրեն: Նրանք նույնիսկ չէին կարող դիպչել միմյանց այդ ապակե անջրպետի միջով:

— Միլդրեդ, հիշո՞ւմ ես, ես քեզ պատմել եմ մի աղջկա մասին:

— Ի՞նչ աղջիկ, — քնկոտ հարցրեց նա:

— Մեր հարևանուհու մասին:

— Ի՞նչ հարևանուհի:

— Դե, նա, որ սովորում էր դպրոցում: Անունը Քլարիս է:

— Ա՛յս, հա՛,— պատասխանեց կինը:

— Արդեն մի քանի օր է՝ նրան ոչ մի տեղ չեմ տեսնում:

Ավելի ծիշտ՝ չորս օր: Դու է՞լ չես տեսել:

— Ո՛չ:

— Ես ուզում էի քեզ պատմել նրա մասին: Նա շատ տարօրինակն է:

— Հա՛, իմացա ում մասին ես խոսում:

— Այդպես էլ կարծում էի, որ ճանաչում ես:

— Նա... — մթության մեջ հնչեց Միլդրեդի ձայնը:

— Նա՛ ի՞նչ, — հարցրեց Մոնթագը:

— Ես ուզում էի քեզ ասել, բայց մոռացել էի: Մոռացել էր...

— Դե հիմա ասա: Ի՞նչ էիր ուզում ասել:

— Նա կարծեմ այլևս չկա:

— Ինչպե՞ս թե չկա:

— Ընտանիքը մեկնել է ինչ-որ տեղ: Բայց նա բոլորովին չկա: Կարծեմ մեռել է:

— Դու, հավանորեն, ուրիշի մասին ես խոսում:

— Ոչ: Նույն աղջիկն է: Մըքլելընը: Նրան կոչում էին Մըքլելըն: Ընկել է ավտոմեքենայի տակ: Չորս օր առաջ: Հաստատ չգիտեմ, բայց կարծեմ մեռել է: Համենայն դեպս, ընտանիքը մեկնել է այստեղից: Իսկ նա կարծեմ մեռել է:

— Դու համոզված ես...

— Ո՛չ, համոզված չեմ: Ասենք, այո՛, լիովին համոզված եմ:

— Իսկ ինչո՞ւ շուտ չէիր ասում:

— Մոռացել էի:

— Չորս օր առա՛ջ:

— Բոլորովին մոռացել էի:

— Չորս օր, — մի անգամ ևս ցածրաձայն կրկնեց նա:

Նրանք անշարժ պանկած էին մթնայան մեջ:

— Բարի գիշեր, — ասաց կինը:

Նա թույլ խշշոց լսեց. Միլդրեդը ինչ-որ բան էր փնտրում բարձի վրա: Ռադիոկոճակը կենդանի միջատի պես շարժվեց նրա ձեռքի տակ և ահա կրկին բզզում է Միլդրեդի ականջներում:

Նա ականջ դրեց՝ կինը կամացուկ դնդնում էր:

Դրսում ստվեր սահեց: Աշնանային քամին աղմկեց ու լռեց: Բայց գիշերային լռության մեջ Մոնթագի լսողությունը որսաց էլի ինչ-որ տարօրինակ հնչյուն. կարծես մեկը արտաշնչեց պատուհանին: Կանաչավուն, ֆոսֆորափայլ թխի շիթ կամ քամու պոկած աշնանային մեծ տերև հիշեցնող ինչ-որ բան կարծես բջվեց-տարվեց մարգագետնի վրայով ու անհետացավ:

«Մեխանիկական շունն է, — մտածեց Մոնթագը: — Այսօր նա ազատության մեջ է: Թափառում է տան մոտերքը: Եթե բացեմ պատուհանը...»:

Բայց նա պատուհանը չբացեց:

Առավոտյան նա դողերոցք ունեցավ, ապա՝ տենդ:

— Հիվանդ ես, — հարցրեց Միլդրեդը: — Չի՛ կարող պատահել:

— Այո՛, հիվանդ եմ: — Պատասխանեց ու սաստիկ ջերմից փակեց աչքերը:

— Բայց երեկ երեկոյան միանգամայն առողջ էիր:

— Ո՛չ, երեկ արդէն հիվանդ էի:— Նա լսում էր՝ ինչպէս են հյուրասենյակում գոռգոռում «ազգականները»:

Միլդրեդը կանգնել էր նրա անկողնու մոտ և հետաքրքրութեամբ գննում էր ամուսնուն: Աչքը չբացելով, նա տեսնում էր կնոջը՝ ինչպէս որ կա՝ քիմիական ներկերից խանձված, ծղոտի պէտ փշրվող մազերով, փայլատ աչքերով, որոնց վրա ասես աներևույթ հատեր կային, կարմիր ներկած քմահաճ շրթունքներով, տեսնում էր մշտական բուժասնունդից նիհարած, ծոմ պահող ձգնավորի սմբած նրա մարմինն ու խոզածարպի պէս սպիտակ մաշկը: Որքան հիշում է, նա միշտ այդպիսին է եղել:

— Ինձ ջուր տուր և ասպիրին:

— Վեր կենալուդ ժամանակն է,— ասաց նա:— Արդէն կեսօր է: Դու սովորականից հինգ ժամ ավելի ես քնել:

— Խնդրում եմ՝ անջատիր հյուրասենյակը:

— Բայց այժմ այնտեղ «ազգականներն» են:

— Դու կարո՞ղ ես հարգել հիվանդ մարդու խնդրանքը:

— Լավ, ձայնը կիջեցնեմ:

Նա սենյակից դուրս գնաց, բայց անմիջապէս էլ վերադարձավ՝ ոչինչ չանելով:

— Հիմա լա՞վ է:

— Ծնորհակալութիւն:

— Իմ սիրած ծրագիրն է,— ասաց նա:

— Իսկ ո՞ր է ասպիրինը:

— Առաջ դու երբեք չէիր հիվանդանում:— Նա կրկին դուրս ելավ:

— Այո՛, իսկ հիմա հիվանդ եմ: Այսօր գործի չեմ գնալու: Զանգահարիր Բիթին:

— Գիշերը դու շատ տարօրինակ էիր,— քթի տակ դնդնալով նա մոտեցավ Մոնթագի անկողնուն:

— Բայց ո՞ր է ասպիրինը,— կրկնեց նա՝ նայելով իրեն պարզած ջրով լի բաժակին:

— Ա՛խ, հա՛,— կինը կրկին գնաց լողարան:— Երեկ բա՛ն էր պատահել:

— Հրդե՛հ: Ուրիշ ոչինչ:

— Իսկ ես շատ լավ անցկացրի երեկոն,— նրա ձայնը լրսվում էր լողարանից:

- Ի՞նչ էիր անում:
- Հաղորդում էի նայում:
- Ի՞նչ էին հաղորդում:
- Ծրագիր:
- Ինչպիսի՞:
- Շատ լավն էր:
- Ո՞վ էր խաղում:
- Պատկերացրու՝ ողջ խումբն էր:
- Ողջ խումբը, ողջ խումբը, ողջ խումբը... — նա մատներով սեղմեց մրմռացող աչքերը: Հանկարծ քիթը նավթի հոտ առավ, և նա փսխեց: Շարունակ դնդնալով՝ Միլդրեդը սենյակ մտավ:
- Այդ ի՞նչ ես անում, — զարմացած բացականչեց նա: Մոնթագը շփոթահար նայեց հատակին:
- Երեկ մենք մի թեր կնոջ վառեցինք իր գրքերի հետ...
- Դեռ լավ է, որ գորգը կարելի է լվանալ:
- Նա շոր բերեց և սկսեց հատակը սրբել:
- Երեկոյան Հելենի մոտ էի:
- Մի՞թե չէիր կարող ներկայացումը տանը նայել:
- Իհարկե, կարող էի: Բայց երբեմն հաճելի է հյուր գնալ:
- Նա մտավ հյուրասենյակ: Մոնթագը լսում էր, թե ինչպես է կինը երգում:
- Մի՛լորեդ, — կանչեց նա:
- Նա վերադարձավ՝ քթի տակ երգելով և մատներով տակտի հետ թեթևակի տկտկացնելով:
- Չե՞ս ուզում իմանալ, թե անցած գիշեր ի՞նչ է պատահել, — հարցրեց նա:
- Իսկ ի՞նչ է պատահել:
- Մենք այրեցինք շուրջ հազար գիրք: Մենք այրեցինք մի կնոջ:
- Հետո՞ ինչ:
- Հյուրասենյակը թնդում էր ծիչերից:
- Մենք այրեցինք Պանտեին, Սվիֆտին, Մարկ Ավրելիուսին...
- Եվրոպացի՞ է:
- Կարծեմ՝ այո:
- Ռադիկա՞լ է:

— Նրա գրքերը չեմ կարդացել:

— Պարզ է, ուրեմն ուղիկալ է:— Միլդրեդը դժկամորեն վերցրեց հեռախոսափողը:— Ուզում ես զանգահարեմ հրկիզապետ Բիթիի՞ն: Իսկ ինչո՞ւ, ինքդ չես զանգում:

— Ասացի՛ զանգահարիր:

— Մի՛ գոռա ինձ վրա:

— Չեմ գոռում:— Նա կիսանստեց անկողնու վրա, կարմրատակաժ, կատաղությունից դողալով:

Հյուրասենյակը դղրդում էր տաք օդի մեջ:

— Հո չեմ կարող զանգահարել ու ասել, որ ես հիվանդ եմ:

— Ինչո՞ւ:

«Որովհետև վախենում եմ,— մտածեց նա:— Երեխայի պես հիվանդ եմ ձևանում և վախենում եմ զանգահարել, քանզի գիտեմ, թե ինչով կվերջանա հեռախոսային այդ կարճ խոսակցությունը: «Այո, հրկիզապետ, այժմ արդեն լավ եմ զգում: Երեկոյան ժամը տասին կլինեմ աշխատանքի»:

— Դու բոլորովին էլ հիվանդ չես,— ասաց Միլդրեդը:

Մոնթագը հենվեց անկողնուն: Չեռքը խոթեց բարձի տակ: Գիրքն այնտեղ էր:

— Միլդրեդ, ի՞նչ կասես, եթե միառժամանակ աշխատանքը թողնեմ:

— Ինչպե՞ս: Դու ուզում ես հրաժարվել ամեն ինչի՞ց: Այսքան տարվա աշխատանքից հետո՞: Միայն այն պատճառով, որ ինչ-որ կին իր գրքերի հետ...

— Եթե դու նրան տեսնեիր, Մի՛լլի...

— Ես նրա հետ գործ չունեմ: Թող գրքեր չպահեր: Ինքն է մեղավոր: Հարկավոր էր նախապես մտածել: Ատում եմ նրան: Նա քեզ լրիվ շեղել է, և չենք էլ հասցնի աչքներս թարթել, երբ կհայտնվենք փողոցում՝ ո՛չ տանիք կունենանք գլխավերևում, ո՛չ աշխատանք. ոչինչ:

— Դու այնտեղ չես եղել, դու չես տեսել,— ասաց Մոնթագը:— Եթե այդ կինը հրաժարվեց հեռանալ այրվող տնից, ուրեմն գրքերում ինչ-որ բան կա, որը մենք նույնիսկ չենք պատկերացնում: Չի կարող չլինել: Մարդը առանց պատճառի մահվան չի գնա:

— Պարզապես մտազար է եղել:

— Ոչ, առողջ եր: Ինչպես ես և դու Գուցե՝ մեզնից էլ առողջ: Իսկ մենք նրան այրեցինք:

— Այդ ամենը կանցնի, կմոռացվի:

— Ո՛չ, չի անցնի, չի մոռացվի: Դու երբևէ տեսե՛լ ես հրդեհից այրված տուն: Մի քանի օր շարունակ միտում է: Իսկ այս հրդեհը ես չեմ կարող հանգցնել մինչև իմ կյանքի վերջը: Աստվա՛ծ իմ, ինչպես էի ջանում դուրս մղել նրան իմ հիշողությունից: Ամբողջ գիշերը տանջվում էի: Քիչ մնաց խելքս թոցնեմ:

— Այդ մասին պետք է նախապես մտածեիր, մինչև հրկիզող դառնալը:

— Մտածե՛լ, — բացականչեց նա:— Մի՞թե ես ընտրելու հնարավորություն ունեի: Իմ պապն ու հայրը հրկիզող են եղել: Ես նույնիսկ երագում ինձ հրկիզող էի պատկերացնում:

Հյուրասենյակից լսվում էր պարային երաժշտություն:

— Այսօր ցերեկային հերթափոխի ես, — հիշեցրեց Միլդրեդը:— Դու պարտավոր էիր գնալ դեռ երկու ժամ առաջ: Ես հենց նոր գլխի ընկա:

— Հարցը միայն այդ կնոջ մահը չէ, — շարունակեց Մոնթագը:— Անցած գիշեր ես մտածում էի, թե որքան նավթ եմ ծախսել այս տասը տարիների ընթացքում: Մեկ էլ մտածում էի գրքերի մասին: Եվ առաջին անգամ հասկացա, որ յուրաքանչյուր գրքի ետևում մարդ է կանգնած: Նա մտածել է, մըտքեր է հղացել, անհաշիվ ժամանակ է վատնել, որ դրանք հանձնի թղթին: Իսկ նախկինում երբեք մտքովս էլ չէր անցնում:

Նա վեր ցատկեց անկողնուց:

— Գուցե ինչ-որ մեկն իր ողջ կանքը վատնել է, որպեսզի գրի առնի իր մտածումների, իր տեսածի գոնե մի մասը: Իսկ հետո գալիս եմ ես, և փո՛ւ, երկու բուպեում ամեն ինչ մոխրի է վերածվում:

— Հանգիստ թող ինձ, — ասաց Միլդրեդը:— Ես ի՞նչ մեղք ունեմ:

— Ծատ լավ, քեզ հանգիստ կթողնեմ: Բայց ինչպե՛ս հանգիստ թողնեմ ինձ: Ո՛չ, չի կարելի մեզ հանգիստ թողնել: Մենք կարիք ունենք անհանգստանալու: Որքա՞ն ժամանակ է անցել այն օրից, երբ վերջին անգամ իսկապե՛ս հուզվել ես ինչ-որ նշանակալի, կարևոր բանից:

Եվ հանկարծ Մոնթագր լռեց: Նա մտաբերեց անցած շաբաթվա պատահարը. դեպի վեր, մթությանը հառած երկու լուսնաքար, էլեկտրոնային աչքով փողրակ-օձը և երկու անդեմ մարդ՝ ատամների արանքում սեղմած սիգարետներ: Այո՛, այն Միլդրեդին ինչ-որ բան հուզել էր, բայց նա ուրիշ Միլդրեդ էր, այնպես խոր պահ մտած այս մեկի մեջ, որ այդ երկուսը ոչ մի ընդհանրություն չունեն: Նրանք երբեք չեն հանդիպել, չեն ճանաչում իրար:

Նա դեմքը շրջեց:

Հանկարծ Միլդրեդն ասաց.

— Դու նպատակիդ հասար: Տե՛ս, թե ով է մոտենում տանը:

— Ինձ համար միևնույն է:

— «Փյունիկ» մակնիշի մեքենա, մեջը սև բաճկոնավոր, թևքին՝ նարնջագույն օձ: Այստեղ է գալիս:

— Հրկիզապետ Բիթին է:

— Այո՛, հրկիզապետ Բիթին:

Մոնթագր տեղից չշարժվեց: Նա կանգնել էր՝ հայացքը հանդիպակաց սպիտակ սառը պատին:

— Ներս թող: Ասա, որ հիվանդ եմ:

— Ինքդ ասա:— Միլդրեդը իրար անցած չափչփում էր սենյակը, երբ հանկարծ, աչքերը չռեց ու քարացավ տեղում: Մուտքի դռան խոսափողը ցածրաձայն տվեց իր անունը. «Միսիս Մո՛նթագ, միսիս Մո՛նթագ, ձեզ են հարցնում, ձեզ են հարցնում: Միսիս Մո՛նթագ, միսիս Մո՛նթագ, ձեզ են հարցնում»: Խոսափողը լռեց:

Մոնթագը ստուգեց՝ արդյոք գիրքը լա՛վ է թաքցված բարձի տակ, անշտապ անկողին մտավ ու վերմակը քաշեց կրծքին:

Աթափվելով՝ Միլդրեդը շարժվեց դեպի դուռը. հրկիզապետ Բիթին, ձեռքերը գրպանները խոթած, դանդաղ քայլերով մտավ ներս:

— Անջատեք «ազգականներին»,— ասաց նա՝ չնայելով տանտերերին:

Միլդրեդն իսկույն նետվեց դուրս. հյուրասենյակում լռեց աղմուկը:

Ընտրելով հարմարավետ աթոռը, Բիթին նստեց: Նրա կարմիր դեմքը պահում էր ամենախաղաղ արտահայտությունը: Նա

անշտապ լիքը լցրեց պղնձակուռ ծխամորձը, վառեց և բաց թողեց ծխի մի մեծ քուլա:

— Որոշեցի տեսության գալ հիվանդին:

— Ինչպե՞ս կռահեցիք, որ հիվանդ եմ:

Բիթին ժպտաց սովորականի նման՝ բացելով վարդագույն լնդերը և մանրիկ, շաքարի պես սպիտակ ատամները:

— Ես զգում էի, որ այդպես է լինելու: Գիտեի, որ մի գիշերով արձակուրդ կխնդրեք:

Մոնթազը նստեց անկողնում:

— Ի՞նչ կա որ, — ասաց Բիթին, — հանգստացեք:

Նա ձեռքին պտտեցնում էր անբաժան վառիչը, որի կափարիչին երևում էր «Երաշխավորվում է մեկ միլիոն բռնկում» մակագրությունը: Բիթին ցրված վառում հանգցնում էր քիմիական լուցկին. վառում էր, անփույթ արտասանում մի քանի խոսք, նայում պստիկ բոցին, նորից հանգցնում, կրկին վառում, հանգցնում ու նայում, թե ինչպես է օդի մեջ հալվում ծխի բարակ քուլան:

— Ե՞րբ եք մտադիր ապաքինվել, — հարցրեց նա:

— Վաղը: Գուցե վաղը չէ մյուս օրը: Հաջորդ շաբաթվա սկզբում:

Բիթին մերթընդմերթ փստացնում էր ծխամորձը:

— Յուրաքանչյուր հրկիզող վաղ թե ուշ բախվում է դրան: Կողմնորոշվելու համար նրանք օգնության կարիք ունեն: Անհրաժեշտ է, որ իմանան իրենց մասնագիտության պատմությունը: Առաջներում նորակոչիկներին բացատրում էին, իսկ հիմա՝ ոչ: Եվ շա՛տ ափսոս, փո՛ւ, միայն հրկիզապետներն են տակավին հիշում հրկիզային գործի պատմությունը: — Նորից փո՛ւ արեց: — Հիմա ձեզ կլուսավորեմ:

Միլդրեդը անհանգիստ շարժվեց աթոռին:

Բիթին ավելի հարմար տեղավորվեց, մի ամբողջ րոպե նա նստած էր լուռ ու մտախոհ:

— Ինչպե՞ս սկսվեց այդ ամենը, — կհարցնեք դուք, — նկատի ունեմ մեր աշխատանքը, որտե՞ղ, ե՞րբ և ինչո՞ւ: Իմ կարծիքով՝ սկսվեց մոտավորապես, այսպես կոչված, քաղաքացիական պատերազմի՝ շրջանում, թեպետ մեր կանոնագիրքը հա-

¹ 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում՝ բուրժուական հյուսիսի և ստրկատիրական հարավի միջև:

վաստում է, որ ավելի վաղ է հիմնադրվել: Սակայն իսկական ծաղկումը սկսվեց այն ժամանակ, երբ լուսանկարչությունը լայնորեն տարածվեց: Իսկ հետագայում էլ՝ քսաներորդ դարասկզբին, կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը: Ջարկ տրվեց գանգվածային արտադրությանը:

Մոնթազը անշարժ նստած էր անկողնում:

— Եվ քանի որ դարձավ գանգվածային, ուրեմն՝ հասարակացավ, — շարունակեց Բիթին: — Ինչ-որ ժամանակ գիրք կարդում էին միայն քչերը, այստեղ, այնտեղ, տարբեր վայրերում: Այդ պատճառով էլ գրքերը կարող էին բազմազան լինել: Աշխարհն ընդարձակ էր, բայց երբ նեղվածք սկսվեց աչքերի, արմունկների, բերանների առատությունից, երբ բնակչությունը կրկնապատկվեց, եռապատկվեց, քառապատկվեց՝ կինոնկարների, ռադիոհաղորդումների, ամսագրերի, գրքերի մակարդակն իջավ, համահարթվեց: Ժամոնի պես մի բան դարձավ: Դուք ինձ հասկանո՞ւմ եք, Մոնթազ:

— Թվում է՝ այո, — պատասխանեց Մոնթազը:

Բիթին ուշադիր նայում էր օդի մեջ հալվող ծխի գալարների:

— Փորձենք պատկերացնել տասնիններորդ հարյուրամյակի մարդուն՝ իր ձիերով, շներով, կառքերով, կյանքի դանդաղ ընթացքով: Հաջորդում է քսաներորդ դարը. արագընթաց ժամանակ: Գրքերը դառնում են փոքրածավալ: Համառոտ հրատարակություններ: Վերապատմություն: Ժաղկաքաղ: Մի՛ երկարաբանեք: Ծուտ դեպի վերջաբան:

— Ծուտ դեպի վերջաբան, — գլխով արեց Միլդրեդը:

— Ղասականների ստեղծագործությունները կրճատվում են մինչև տասնհինգ րոպեանոց ռադիոհաղորդում: Հետո ավելի շատ են սեղմվում՝ տեքստի մի սյունակ, որը կարելի է աչքի անցկացնել երկու րոպեում, ապա է՛լ ավելի՝ տասը-քսան տող հանրագիտարանային բառարանում: Իհարկե, ես չափազանցում եմ: Բառարանները գոյություն ունեին տեղեկությունների համար: Քիչ մարդիկ չկային, որոնց ծանոթությունը «Համլետին» (դուք Մոնթազ, իհարկե, քաջ գիտեք այդ վերնագիրը, իսկ ձեզ համար, միսիս Մոնթազ, դա հավանորեն, սոսկ աղոտ կերպով ծանոթ անուն է), ահա, ուրեմն, քիչ մարդիկ չկային, որոնց ծանոթությունը «Համլետին» սահմանափակվում էր ժո-

ղովածուում մի էջանոց համառոտ վերապատմությամբ, որը սնապարծորեն ազդարարում էր. «Վերջապես դուք կարող եք կարդալ բոլոր դասականներին: Ետ մի՛ մնացեք ձեր հարևաններից»: Հասկանո՞ւմ եք, մանկաստնյակից ուղիղ թուեջ, իսկ հետո՝ ետ դեպի մանկաստնյակ: Ահա ձեզ մտավոր կաղապարը, որ իշխում էր վերջին հինգ կամ ավելի հարյուրամյակներում:

Միլդրեդը կանգնեց և սկսեց քայլել սենյակում՝ իրերն անսպասակ վերադասավորելով: Նրա վրա ուշադրություն չդարձնելով՝ Բիթին շարունակեց.

— Իսկ այժմ արագ պտտեք ժապավենը, Սո՛նթագ: Ավելի՛ արագ: Բլիք: Փիք: Ֆլիք¹: Այստեղ, այնտեղ, եռանդով, արագ, այսպես, այնպես, վերև, ներքև: Ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ինչպե՞ս, ինչո՞ւ: Ա՛խ, օ՛հ: Դրը՛խկ, թրը՛խկ, շրը՛խկ, շրը՛մփ: Զը՛նգ, գրը՛նգ, դրը՛նգ: Կրճատե՛ք, սեղմե՛ք: Վերապատմության վերապատմում: Վերապատմության վերապատմումների ծաղկաքաղ: Քաղաքականություն: Մի սյունակ, երկու դարձվածք, մի վերնագիր: Եվ մի րոպե հետո ամեն ինչ արդեն ջնջվում է հիշողությունից: Պտտեք մարդկային բանականությունը կատաղի հողմամրրիկի մեջ, արա՛գ, արա՛գ՝ հրատարակիչների, գործամուների, հաղորդավարների ձեռքերով, այնպես, որ կենտրոնախույս ուժը դեն նետի ավելորդ, անպետք, անօգուտ բոլոր մըտքերը...

Միլդրեդը մոտեցավ և սկսեց կարգի բերել անկողինը: Սոնթագը վախից սրսփաց: Սիրտը նվաղեց, երբ կնոջ ձեռքերը կպան բարձին: Ահա նա քաշում է իր ուսից, փորձելով մի փոքր բարձրացնել, որ ինչպես հարկն է թափ տալով բարձր, նորից մեջքի ետևը դնի: Հիմա գուցե կգոռա ու զարմանքից կչոփ աչքերը կամ պարզապես, ձեռքը խոթելով բարձի տակ, կհարցնի՝ «Սա ի՞նչ է» և հուզիչ միամտությամբ ցույց կտա թաքցրած գիրքը:

— Դպրոցներում ուսուցման ժամկետը կրճատվում է, կարգապահությունն ընկնում է, փիլիսոփայությունը, պատմությունը,

¹ Այս բառերը քաղված են ամերիկյան բուլվարային հրատարակություններից, որոնք աչքի են ընկնում նվազագույն տեքստով և առատ լրատվարներով:

լեզուները դուրս են մղվում: Անգլերենն ու ուղղագրությունը աստիճանաբար անուշադրության են մատնվում, և վերջնականապես դադարեցվում է դրանց դասավանդումը: Կյանքը կարճ է: Ի՞նչ է հարկավոր մարդուն: Ամենից առաջ՝ աշխատանք, իսկ աշխատանքից հետո՝ զվարճություն, որ ամեն քայլափոխի սրտիդ ուզածի չափ կա, միայն վայելիր: Ուրեմն էլ ինչի՞ է պետք ինչ-որ բան սովորել, բացի կոճակը սեղմելու, անջատիչի բռնակը քաշելու, պնդողակը ամրացնելու, հեղույսը տեղը գցելու կարողությունից:

— Թող բարձր կարգի բերեմ, — ասաց Միլդրեդը:

— Հարկավոր չէ, — ցածր ասաց Մոնթագը:

— Կայծակ-ճարմանդ փոխարինեց կոճակին, և ահա արդեն պակասում է ավելորդ մի կես րոպեն, որպեսզի ինչ-որ բանի մասին մտածես, երբ լուսաբացի փիլիսոփայական և այդ պատճառով էլ թախժոտ ժամին հագնվում ես:

— Դե, թո՛ղ, — կրկնեց Միլդրեդը:

— Հեռացի՛ր, — ասաց Մոնթագը:

— Կյանքը դառնում է համատարած կարուսել, Մոնթագ: Գոռում-գոչուն-դղրդյուն: Շրը՛մփ, դրը՛խկ, շրը՛խկ:

— Շրըխկ..., — բացականչեց Միլդրեդը, քաշքշելով բարձր:

— Դե՛, վերջապես ինձ հանգիստ թող, — հուսահատված գոռաց Մոնթագը:

Բիթին զարմանքից չոեց աչքերը:

Միլդրեդի ձեռքը քարացել էր բարձի տակ: Նրա մատները շոշափում էին գրքի կազմը, դեմքի սովորական արտահայտությունն սկսեց փոխվել. նախ հետաքրքրասիրություն հայտնվեց, ապա՝ շփոթմունք... Շրթունքները բացվեցին... Հիմա կհարցնի...

— Վե՛րջ դրամային, թող թատրոնում մնա սոսկ կլոունահան, իսկ սենյակները կահավորեք ապակե պատերով, և թող դրանցից դուրս հորդեն գունազեղ հրավառություններ, թող միախառնվեն գույները, ինչպես գույնզգույն թղթերի բուլլեր կամ ինչպես արյունը, կամ խերեսը, կամ սոտեռնը: Դուք, իհարկե, սիրում եք բեյսբոլ, Մոնթագ:

— Բեյսբոլը հիանալի խաղ է:

Այժմ Բիթին գրեթե անպարտելի էր, նրա ձալնը հնչում էր ինչ-որ հեռու տեղից, ծխի թանձր վարագույրի ետևից:

— Այս ի՞նչ է, — համարյա հիացմունքով բացականչեց Միլդրեդը: Մոնթագը ծանրորեն հենվեց նրա ձեռքին: — Այս ի՞նչ է:

— Նստի՛ր, — կոպտորեն բղավեց Մոնթագը: Միլդրեդը ետ ցատկեց: Նրա ձեռքերը դատարկ էին: — Ինչ է, չե՞ս տեսնում, որ գրուցում եմք:

Բիթին շարունակեց, կարծես ոչինչ չէր պատահել:

— Գնդախաղ սիրո՞ւմ եք:

— Այո:

— Իսկ գո՞ւլֆ:

— Գուլֆը սքանչելի խաղ է:

— Բասկետբո՞լ:

— Հիասքա՞նչ է:

— Բիլիա՞րդ, ֆուտբո՞լ:

— Լավ խաղեր են: Բոլորն էլ լավ են:

— Հնարավորին չափ շատ սպորտ, խաղեր, զվարճալիքներ. թող միշտ մարդը լինի ամբոխի մեջ, այդ ժամանակ նա կարիք չի զգա մտածելու: Կազմակերպեցեք, ուրեմն, կազմակերպեցեք նորանոր մարզաձևեր, աստվածացրեք սպորտը: Ավելի շատ պատկերազարդ գրքեր: Ավելի շատ կինոնկարներ: Իսկ մտավոր սնունդ՝ ավելի ու ավելի քիչ: Արդյունքում՝ ինչ-որ անհանգստություն: Ճանապարհները հեղեղված են մարդկանցով, որոնք ինչ-որ տեղ են ձգտում, միևնույն է, թե ուր: Բենզինի աղետից խուճապահար փախչողներ: Քաղաքները վեր են ածվել տուրիստական ծամբարների, մարդիկ՝ քոչվոր հորդաների, որոնք տարերայնորեն խոնվում են մերթ այստեղ, մերթ այնտեղ, ինչպես ծովը մակընթացության և տեղատվության ժամանակ. և ահա այսօր նա գիշերում է այն սենյակում, որտեղ դրանից առաջ գիշերել էք դուք, իսկ նախօրեին՝ ես:

Դուռը շրխկացնելով Միլդրեդը դուրս եկավ: Հյուրասենյակում «մորաքույրերը» հոհոում էին «մորեղբայրների» վրա:

— Այժմ քննարկենք մեր քաղաքակրթության ներսում գտնվող տարբեր մանր խմբավորումների հարցը: Որքան շատ է քնակչությունը, այնքան շատ են այդպիսի խմբավորումները: Զգուշացեք վիրավորել նրանցից որևէ մեկին՝ շների կամ կատուների սիրահարներին, բժիշկներին, փաստաբաններին, առևտրականներին, պետերին, մորմոններին, բապտիստներին,

ունիթորներին¹, չինացի, շվեդ, իտալացի, գերմանացի վտարանդիների հետնորդներին, տեխասցիներին, բրուկլինցիներին, իուլանդացիներին, Օրեգոն կամ Մեխիկո նահանգների բնակիչներին: Գրքերի, պիեսների, հեռուստահաղորդումների հերոսները չպետք է հիշեցնեն իրական նկարիչների, քարտեզագիրների, մեխանիկների: Հիշեցեք, Մո՛նթագ, որքան ընդարձակ է շուկան, այնքան ավելի պետք է խուսափել բախումներից, բոլոր այդ խմբավորումների ու խմբերի հետ հարկավոր է հաշվի նստել, աստված մի արասցե, որ որևէ կերպ դիպչեք նրանց շահերին: Չարամիտ գրողնե՛ր, փակեցեք ձեր գրամեքենաները: Նրանք այդպես էլ արեցին: Հանդեսները վերածվեցին քաղցր-մեղցր շոկոբորթության: Գրքերը՝ քաղցրացված կեղտաջրերի: Այդպես էին պընդում քննադատները՝ այդ անիծյալ պճնամուլները: Չարմանալի չէ, ասում էին նրանք, որ ոչ ոք գիրք չի գնում: Բայց ընթերցողը հիանալի գիտեր՝ ինչ է հարկավոր իրեն և, պտտվելով գվարժությունների հողմի մեջ, նախընտրեց կոմիքսները: Իհարկե, նաև սեքս հրատարակությունները: Այսպիսի բաներ, Մո՛նթագ: Եվ այս ամենը տեղի ունեցավ առանց կառավարության միջամտության: Գրավոր կարգադրություններով չսկսվեց, ոչ էլ հրամաններով ու գրաքննչական սահմանափակումներով: Ամենևի՛ն: Տեխնիկան, զանգվածային սպառումը և նույն այդ խմբերի գործադրած ճնշումն էր, որ, փա՛ռք տիրոջը, հանգեցրեց ներկա վիճակին: Այժմ նրանց ջնորհիվ դուք կարող եք միշտ երջանիկ լինել. ձեր քեֆին կարդացեք կոմիքսները, սիրային տարբեր խոստովանանքներ և առևտրա-ռեկլամային հրատարակություններ:

— Բայց այդտեղ ի՞նչ գործ ունեն հրկիզողները, — հարցրեց Մոնթագը:

— Օ՛հ, — Բիթին հակվեց առաջ՝ թեթև ծխամշուշով պարուրված: — Ռե, դա շատ հեշտ է բացատրել: Երբ դպրոցներն սկսեցին հետազոտողների, քննադատների, գիտնականների և արվեստի մարդկանց փոխարեն պատրաստել ավելի ու ավելի ջատ վագորդներ, ցատկորդներ, ծիարշավորդներ, փինաչիներ, գուփոդներ, թալանչիներ, օդաչուներ և լողորդներ, «ինտելեկ-

¹ Աղանդավորական հոսանքներ:

տուալ» բառը արդարացիորեն դարձավ հայիոյանք: Մարդ միշտ սարսափում է արտասովորից: Հապա հիշեցեք՝ ձեր դասարանում հավանաբար որևէ բացառիկ ընդունակությունների տեր տղա կար: Նա բոլորից լավ էր արտասանում և բոլորից շատ էր պատասխանում դասերին, մինչդեռ մյուսները նստում էին քարե արձանի պես և սրտի խորքում ատում նրան: Դասերից հետո դուք ո՞ւմ եք ծեծել ու չարչարել, եթե ոչ այդ «բացառիկ» տղային: Մենք բոլորս պետք է լինենք միանման: Ոչ թե ազատ ու իրավահավասար ժննդյան օրվանից, ինչպես ասված է սահմանադրության մեջ, այլ պարզապես բոլորս պետք է դառնանք միանման: Թող մարդիկ կիսաժ խնձորի պես նմանվեն միմյանց: Այդ ժամանակ բոլորը երջանիկ կլինեին, քանզի հսկաներ չէին լինի, իսկ նրանց կողքին մյուսներն իրենց ոչնչությունը չէին զգա: Այսպես: Իսկ գիրքը լիցքավորված հրացան է՝ հարևանի տանը: Հարկավոր է այրել, լիցքաթափել հրազենը, սանձահարել մարդկային բանականությունը: Ինչ իմանաս՝ վաղն ո՞վ կդառնա շատ կարդացած մարդու հերթական թիրախը: Գուցե ե՞ս: Բայց ես այդ հասարակությանը տանել չեմ կարող: Եվ ահա, երբ ողջ աշխարհում տներն սկսեցին կառուցել չիրկիզվող նյութերից, ու այլևս անհրաժեշտություն չկար այն աշխատանքին, ինչ նախկինում կատարում էին հրշեջները (նրանք հանգցնում էին հրդեհները, երեկ դուք իրավացի էիք, Մոնթագ), այդ ժամանակ հրշեջների վրա դրվեցին նոր պարտականություններ՝ դարձրին մեր անդորրի պահպաններ: Նրանց մեջ, ինչպես կիզակետում, կենտրոնացել է ուրիշներից ցածր երևալու՝ միանգամայն հասկանալի և օրինական մեր սարսափը: Նրանք դարձան մեր պաշտոնական գրաքննիչները, դատավորներն ու դատավճիռն ի կատար ածողները: Նրանք, այսինքն՝ դու և ես, Մոնթագ:

Հյուրասենյակի դուռը բացվեց, և շեմքին հայտնվեց Միլդրեդը: Նա նախ Բիթիին նայեց, ապա՝ Մոնթագին: Նրա ետեվում, հյուրասենյակի պատերին, թմբուկների, տամտամների և ծնծղաների խուլ հարվածների նվազակցությամբ, թշշում և ծայթում էին կանաչ, դեղին ու նարնջագույն հրավառություններ: Միլդրեդի շուրթերը շարժվում էին, նա ինչ-որ բան էր ասում, բայց աղմուկը խլացնում էր նրա ձայնը:

Բիթին ծխամորժը թափ տվեց վարդագույն ափի մեջ և

սկսեց զննել մոխիրը, ասես դրանում ինչ-որ գաղտնի իմաստ կար, որին պետք է խորամուխ լիներ:

— Դուք պետք է հասկանաք, թե ինչ հսկայական է մեր քաղաքակրթությունը: Այնքան մեծ է, որ չենք կարող դրա կազմի մեջ մտնող խմբերի շրջանում թույլ տալ հուզումներ ու դժգոհություն: Հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ ամենից շատ ինչի՞ ենք ծարավի: Երջանկության, այդպես չէ՞: Ողջ կյանքում հենց միայն այդ չէ՞ք լսել: Մենք ուզում ենք երջանիկ լինել, ասում են մարդիկ: Մի՞թե նրանք երջանիկ չեն: Մի՞թե նրանց չենք պահում հավերժական շարժման մեջ, մի՞թե հնարավորություն չենք ընձեռում զվարճանալու: Չէ՞ որ մարդն ապրում է հենց դրա՝ հաճույքների, սուր զգացողությունների համար: Համաձայնեցեք, մեր մշակույթը լիովի տալիս է նման հնարավորություն:

— Այո՛:

Դուների մեջ կանգնած Միլդրեդի շրթունքների շարժումից Մոնթագը գուշակեց, թե ինչի մասին է խոսում: Սակայն ճղգտում էր չնայել նրան՝ վախենալով, որ Բիթին կշրջվի նույնպես և ամեն ինչ կհասկանա:

— Գունամորթներին դուր չի գալիս «Փոքրիկ սևամորթ Սամբո»¹ գիրքը: Հարկավոր է այրել: Սպիտակամորթներին հաճո չէ «Քեռի Թոմասի խրճիթը»։ նույնպես այրել: Ինչ-որ մեկը գիրք է գրել, որ ծխելը թոքերի քաղցկեղ է առաջացնում: Ծխախոտի գործարանատերերը խուճապի մեջ են: Այրել այդ գիրքը: Անդորր է հարկավոր, Մո՛նթագ, անխոռվ կյանք: Կորչի՛ այն ամենը, ինչ տագնապ է ծնում: Հարկավոր է նետել վառարանի մեջ: Հուղարկավորությունները վհատեցնում են, հեթանոսական թե՛ս են: Վերացնել հուղարկավորությունները: Մահվանից հինգ րոպե հետո մարդ արդեն «մեծ ծխնելույզի» ծանապարհին է: Ողջ երկրում դիակիզարանները սպասարկվում են ուղղաթիռներով: Մահվանից տասը րոպե անց մարդուց մնում է մի պտղունց սև փոշի: Չպետք է սզանք մեռյալներին: Մոռանանք նրանց: Այրել, մոխրացնել եղած-չեղածը: Կրակը այրում է, կրակը մաքրում է:

Միլդրեդի թիկունքին հյուրասենյակի հրացույքերը մարեցին: Եվ ինչպիսի՞ երջանիկ զուգադիպություն, զուգընթաց դադա-

¹ Ամերիկյան հանրաժանութ հեքիաթ:

րեցին շարժվել նրա շուրթերը: Սոնթագը ծանրորեն շունչ քաշեց:

— Կողքի տանը մի աղջիկ էր ապրում,— անշտապ ասաց նա:— Նա այլևս չկա: Երևի մեռել է: Ես նույնիսկ լավ չեմ հիշում նրա դեմքը: Բայց նա այդպիսին չէր: Ինչպե՞ս... ինչպե՞ս կարող էր այդ պատահել:

Բիթին ժպտաց:

— Ժամանակ առ ժամանակ պատահում է մերթ այստեղ, մերթ այնտեղ: Քլարիս Մըքլեյլընն է, չէ՞: Նրանց ընտանիքի մասին մենք տեղյակ ենք: Հսկողության տակ ենք առել: Ժառանգականությունը և միջավայրը, ես կասեի, հետաքրքրաշարժ բաներ են: Այնքան էլ դյուրին չէ ազատվել բոլոր տարօրինակ մարդկանցից, մի քանի տարում անհնար է: Ընտանեկան միջավայրը կարող է ջնջել շատ բան նրանից, ինչ ջանում է պատվաստել դպրոցը: Ահա թե ինչու մենք մշտապես նվազեցնում էինք մանկապարտեզ ընդունվելու տարիքը: Հիմա երեխաներին կորզում ենք համարյա թե օրորոցից: Մըքլեյլընների մասին մենք ահագանգեր էինք ստացել, երբ դեռ ապրում էին Չիկագոյում, բայց բոլորն էլ կեղծ էին դուրս գալիս: Նրանց տանը գրքեր չէինք գտնում: Քեռին բարի համբավ չունի, կասկածելիների թվում է, մարդախույս է: Ինչ վերաբերում է աղջրկան, նա դանդաղ գործողության ումբ էր: Ընտանիքը ազդել էր նրա ենթագիտակցության վրա. ես համոզվեցի՝ ծանոթանալով նրա դպրոցական բնութագրին: Նրան հետաքրքրում էր ոչ թե այն, թե ինչպես է արվում ինչ-որ բան, այլ թե ինչու և ինչի համար: Իսկ նման հետաքրքրասիրությունը վտանգավոր է: Միայն թե սկսիր հարցնել՝ ինչու կամ ինչի համար, և եթե ժամանակին չկանխես, ապա վերջը կարող է շատ տխուր լինել: Թերևս ավելի լավ էր, որ խեղճ աղջիկը մեռավ:

— Այո՛, մեռավ:

— Բարեբախտաբար այդպիսիք հազվադեպ են հանդիպում: Մենք կարողանում ենք սաղմի մեջ, ամենավաղ շրջանում խեղդել նման միտումները: Առանց տախտակների ու մեխերի տուն չես կառուցի և եթե ուզում ես, որ տունը չկառուցվի, թաքցրու տախտակներն ու մեխերը: Եթե չես ուզում, որ մարդը դառնանա, վշտանա, ընկճվի քաղաքականության պատճառով, նույն հարցը երկու կողմից տեսնելու հնարավորություն մի՛ ընձեռիր:

Թող տեսնի միայն մեկը, իսկ ավելի լավ է՝ ոչ մեկը: Թող մոռանա, որ աշխարհում գոյություն ունի պատերազմ: Եթե կառավարությունն անկարող է, ոչինչ չի հասկանում, հարկերով խեղդում է ժողովրդին, համենայն դեպս, ավելի լավ է, քան եթե ժողովուրդը ըմբոստանա: Ամենաեականը անդորրն է, Մո՛նթագ: Կազմակերպեցեք տարբեր մրցույթներ, օրինակ՝ ո՞վ է ավելի լավ հիշում հանրաժանոթ երգերի բառերը, ո՞վ կարող է թվարկել Նահանգների բոլոր գլխավոր քաղաքները կամ ո՞վ գիտե, թե Այովա նահանգը որքան հացահատիկ է տվել անցյալ տարի: Մարդկանց գլուխները լցրեք անպետք թվերով, խրցկեցեք այնքան չնչին փաստեր, մինչև որ նրանց սիրտը խառնի. ոչինչ, հետո նրանց կթվա, թե շատ կրթված են: Նույնիսկ կկարծեն, թե իրենք մտածում են, առաջ են շարժվում, թեպետ իրականում դոփում են տեղում: Եվ մարդիկ երջանիկ կլինեն, քանի որ փաստերը, որոնցով նրանց գլուխները լցված են, անփոփոխ են: Սակայն մի տվեք նրանց այնպիսի լպրծուն, անվստահելի, երկիմաստ, կասկածելի նյութ, ինչպիսին փիլիսոփայությունն է կամ սոցիոլոգիան: Աստված ոչ արասցե, որ նրանք սկսեն եզրակացություններ և ընդհանրացումներ անել. կընկնեն մեկամաղձության գիրկը: Այն մարդը, որ ունակ է քանդելու և հավաքելու հեռուստատեսային պատը, — իսկ մեր օրերում մեծամասնությունը կարողանում է, — շատ ավելի երջանիկ է նրանից, ով ջանում է չափել և հաշվարկել տիեզերքը, քանի որ չի կարելի այն չափել ու հաշվարկել՝ առանց սեփական ոչնչությունն ու մենակությունը զգալու: Ես գիտեմ, ես փորձել եմ: Ո՛չ, գրո՛ղը տանի: Տվեք նրանց զվարճալիքներ, երեկույթներ, մարմնամարզիկներ ու ձեռնաժուներ, կրկեսային հանդուգն համարներ, հրթիռային ավտոմեքենաներ, ուղղաթիռ-մոտոցիկլետներ, պոռնոգրաֆիա և թմրադեղեր: Ավելի շատ այն ամենից, ինչը հարուցում է պարզագույն ավտոմատ ռեֆլեքսներ: Եթե դրաման անբովանդակ է, կինոնկարը՝ անիմաստ, իսկ կատակերգությունը սնամեջ, գրգռեք իմ նյարդերը խլացուցիչ երաժշտությամբ: Եվ ինձ կթվա, թե պիեսը հուզում է ինձ, չնայած դա ընդամենը ռեակցիա է ձայնային ալիքների հանդեպ: Բայց ինձ համար միևնույն է: Սիրում եմ, երբ ինձ ինչպես հարկն է թափ են տալիս:

Բիթին ոտքի ելավ:

— Իմ գնալու ժամանակն է: Ղասախոսությունն ավարտվեց: Հուսով եմ, ամեն ինչ պարզաբանեցի: Մո'նթագ, հիշեցեք գլխավորը՝ մենք երջանկության մարտիկներ ենք՝ դուք, ես և մյուսները: Մենք պահպանում ենք մարդկությանը այն խղճով խմբակցությունից, որն իր հակասական գաղափարներով և տեսություններով բոլորին ուզում է ապերջանիկ դարձնել: Մենք ամբարտակի պահակներ ենք¹: Ամբացե՛ք, Մո'նթագ: Հետևեցեք, որ մեյամաղձի և մոայլ փիլիսոփայության հեղեղը չողողի մեր աշխարհը: Մեր հույսը դուք եք: Նույնիսկ չեք էլ պատկերացնում, թե ո՛րքան անհրաժեշտ եք, թե ես ու դուք որքան հարկավոր ենք այս երջանիկ աշխարհում:

Բիթին սեղմեց Մոնթագի անկենդան ձեռքը: Նա անշարժ նստած էր անկողնում: Թվում էր, եթե նրա գլխին փուլ գար առաստաղը, նա չէր շարժվի: Միլդրեդն այլևս դռների մեջ չէր:

— Վերջում մի բան էլ ասեմ, — ասաց Բիթին: — Ժառայության ընթացքում ամեն մի հրկիզողի գոնե մեկ անգամ համակում է բուռն հետաքրքրասիրությունը: Հանկարծ ցանկանում է իմանալ՝ ի՞նչ է գրված այդ գրքերում: Գիտե՛ք, այնպես է ցանկանում, որ չի կարողանում դիմադրել: Հավատացե՛ք ինձ, Մո'նթագ, ժամանակին ինքս քիչ գրքեր չեմ կարդացել՝ կողմնորոշվելու համար: Ես ձեզ ասում եմ՝ գրքերում ոչինչ չկա, չկա այնպիսի մի բան, որին կարելի է հավատալ կամ սովորեցնել ուրիշներին: Եթե վիպագրություն է, ապա պատմվում է երբևէ գոյություն չունեցած երևակայական մարդկանց մասին. կեղծիք, հորինվածք: Եթե գիտական գրականություն է, ավելի վատ. մի գիտնականը մյուսին ապուշ է անվանում, մի փիլիսոփան ջանում է ձայնակոխ անել մյուսին: Բոլորը պատեպատ են զարկվում, ձգտում են մարել աստղերը, խավարեցնել արևը: Կարդում ես՝ գլուխդ է պտտվում:

— Իսկ ի՞նչ կլինի, եթե հրկիզողը պատահաբար, առանց որևէ չար մտադրության, գիրք վերցնի:

Մոնթագի դեմքով ջղաձիգ դող անցավ: Բաց դուռը նայում էր նրան, ինչպես հսկա դատարկ աչք:

¹ Ըստ հոլանդական ավանդության՝ մի տղա փակում է ջրամբարի անցքը՝ քաղաքի բնակիչներին փրկելով ջրասույզ լինելուց:

— Միանգամայն բնական արարք է: Պարզ հետաքրքրասիրություն է, ոչ ավելին,— պատասխանեց Բիթին:— Նման դեպքերում մենք ո՛չ անհանգստանում ենք, ոչ՝ զայրանում: Թույլ ենք տալիս մի օր պահել գիրքը: Եթե քսանչորս ժամ հետո ինքը չի այրում, մենք ենք այրում նրա փոխարեն:

— Հասկանալի է,— Մոնթազի բերանը չորացավ:

— Այսքանը, Մոնթազ: Գուցե ուզում եք դուրս գալ ավելի ուշ, գիշերային հերթափոխի՞: Այսօր հավանաբար կհանդիպե՞նք:

— Չգիտեմ,— պատասխանեց Մոնթազը:

— Ինչպե՞ս թե,— Բիթիի դեմքին թեթև զարմանք հայտնվեց:

Մոնթազը փակեց աչքերը:

— Գուցե կգամ, ավելի ուշ:

— Եթե չգաս, քո պակասը կզգանք,— մտախոհ ասաց Բիթին՝ ծխամորժը դնելով գրպանը:

«Ես այլևս չեմ գա»,— մտածեց Մոնթազը:

— Դե, ապաքինվեք,— ասաց Բիթին:— Առողջացեք:

Նա շրջվեց ու դուրս ելավ բաց դռնից:

Մոնթազը պատուհանից տեսավ, թե ինչպես ածխառն անվաղող ունեցող փայլուն դեղնակարմիր բզեզ ավտոմեքենայով Բիթին մեկնեց:

Պատուհանից երևում էին փողոցներն ու հարթ ճակատներով տները: Ի՞նչ ասաց մի անգամ Քլարիսը նրանց մասին: Հիշեց. «Այլևս չկան առմուտքեր: Իսկ քեռիս ասում է, որ նախկինում բոլոր տները ունեին: Երեկոները մարդիկ նստում էին շեմին, գրուցում, եթե ցանկանում էին, իսկ եթե ոչ՝ լուռ ծածկում էին ճոճաթոռների մեջ: Պարզապես նստում էին և մտածում ինչ-որ բանի մասին, կշռադատում: Ծարտարապետները վերացրել են առմուտքերը, որովհետև դրանք իբր փչացնում էին շենքերի ճակատամասերը: Բայց քեռիս ասում է, որ դա սոսկ պատրվակ է եղել, իրականում չէին ուզում թույլ տալ, որ մարդիկ այդպես նստեին շեմին, հանգստանային, ծոճվեին ճոճաթոռների մեջ, գրուցեին: Դա վնասակար ժամանց է: Մարդիկ չափազանց շատ էին գրուցում: Եվ նրանք մտածելու ժամանակ ունեին: Այդ պատճառով որոշեցին առմուտքերը ոչնչացնել:

Պարտեզները նույնպես: Տների շուրջը այլևս չկան պարտեզներ, որտեղ կարելի լինի նստել: Հապա նայեցեք կահույքին: Ճոճաթոռները վերացան, քանի որ չափազանց հարմարավետ էին: Անհրաժեշտ է, որ մարդիկ ավելի շատ շարժվեն: Քեռիս ասում է... քեռիս ասում է... քեռիս...»: Քլարիսի ձայնը մարեց:

Մոնթազը հայացքը կտրեց պատուհանից և նայեց կնոջը. նա նստել էր հյուրասենյակում և խոսում էր հաղորդավարի հետ, որն իր հերթին դիմում էր նրան:

— Միսիս Մոնթազ, — ասում էր հաղորդավարը, և էլի ինչ-որ բաներ: — Միսիս Մոնթազ, և էլի ինչ-որ բան: Հատուկ սարքը, որը ձեռք բերեցին հարյուր դոլարով, հարկ եղած պահին ավտոմատ կերպով արտաբերում էր կնոջ անունը: Դիմելով իր լսարանին՝ հաղորդավարը դադար տվեց, և այդ պահին լուրաքանչյուր տան մեջ սարքը հնչեցնում էր տանտիրոջ անունը, իսկ մի այլ հատուկ սարքավորում, համապատասխանաբար, հեռուստատեկրանին փոփոխում էր հաղորդավարի շուրթերի ու դեմքի մկանների շարժումները: Կասկած չկար, որ հաղորդավարը տան բարեկամն էր, սրտամոտ ծանոթը...

— Միսիս Մոնթազ, իսկ այժմ այստեղ նայեցեք:

Միլդրեդը թեքեց գլուխը, թեպետ ակնհայտ էր, որ չէր լսում:

Մոնթազն ասաց.

— Բավական է այսօր գործի չգնալ, և արդեն կարելի կլինի վաղն էլ չգնալ, ընդհանրապես չգնալ:

— Բայց դու հո այսօր կգնա՞ս, — բացականչեց Միլդրեդը:

— Դեռ չեմ որոշել: Առայժմ մի սոսկալի ցանկություն ունեմ. ուզում եմ ամեն ինչ ջարդ ու փշուր անել:

— Մեքենայով գնա մի քիչ թարմացիր:

— Ո՛չ, շնորհակալություն:

— Բանալիները զարդասեղանի վրա են: Երբ ես այդպիսի տրամադրության մեջ եմ լինում, միշտ նստում եմ մեքենա և մեկնում՝ ուր աչքս կտրի, միայն հնարավորին չափ արագ: Ժամում իննսունհինգ մղոն սլանալը հիանալի օգնում է: Երբեմն ողջ գիշեր պտտվում եմ, տուն եմ վերադառնում լուսաբացին, իսկ դու չես էլ իմանում: Քաղաքից դուրս շատ հաճելի է: Եր-

բեմն անվի տակ սկյուռ է ընկնում, երբեմն՝ շուն: Մի քիչ գրոս-
նիր:

— Ո՛չ, այսօր հարկավոր չէ: Չեմ ուզում, որ այդ զգացումը
ցրվի: Գրողը տանի, ներսումս ինչ-որ բան է ետում: Չեմ հաս-
կանում, թե ինչ է: Ես այնպե՛ս դժբախտ եմ, այնպե՛ս չարա-
ցած, ինքս էլ չգիտեմ, թե ինչու: Թվում է, փքվում եմ, ուռչում:
Ասես չափազանց շատ բան է հավաքվել մեջս... Թե ինչ, չգի-
տեմ: Հնարավոր է, որ նույնիսկ սկսեմ գրքեր կարդալ:

— Բայց չէ՞ որ քեզ բանտ կնստեցնեն:— Կինը այնպես
նայեց, կարծես նրանց միջև ապակե պատ կար:

Մոնթազը սկսեց հագնվել՝ անհանգիստ շրջելով նեջա-
սենյակում:

— Թերևս վատ միտք չէ, հարկավոր է բանտարկել ինձ,
բանի դեռ որևէ մեկին չեմ վնասել: Դու լսեցի՞ր Բիրթին: Լսե-
ցի՞ր, թե ինչ էր ասում: Նա ամեն ինչի համար պատասխան
ունի: Եվ իրավացի է, կարևորը երջանկությունն է: Զվարճու-
թյունն ամեն ինչ է: Ես լսում էի նրան և կրկնում ինքս ինձ. ո՛չ,
ես դժբախտ եմ:

— Իսկ ես երջանիկ եմ,— Միլդրեդը շողարձակ ժպտաց:—
Եվ եպարտ եմ, որ երջանիկ եմ:

— Ես պետք է ինչ-որ բան անեմ,— ասաց Մոնթազը:—
Դեռևս չգիտեմ՝ ինչ, բայց որևէ կարևոր բան:

— Ես ձանձրացել եմ այդ հիմարությունը լսելուց,— ասաց
Միլդրեդը և կրկին շրջվեց հաղորդավարի կողմը:

Մոնթազը դիպավ ձայնի կարգավորիչին, և հաղորդավարը
լռեց:

— Մի՛լի, — սկսեց Մոնթազը ու մի պահ լռեց:— Սա ախր
ոչ միայն իմ, այլ նաև քո տունն է: Եվ որպեսզի ազնիվ լինեմ,
պետք է քեզ ասեմ: Վաղուց պետք է ասեի, բայց նույնիսկ ինքս
ինձ վախենում էի խոստովանել: Ես քեզ ցույց կտամ այն, ինչ
կլոր տարի թաքցրել եմ: Տարվա ընթացքում հավաքել եմ, մեկ
առ մեկ, գաղտագողի: Ինքս էլ չգիտեմ՝ ինչու, բայց ահա, մի
խոսքով, արել եմ, իսկ քեզ այդպես էլ չեմ ասել...

Նա վերցրեց թիկնաթոռը, անշտապ և հանգիստ տարավ
նախասենյակ, դրեց մուտքի դռան մոտ, բարձրացավ աթոռին:
Մի րոպե անշարժացավ, ինչպես արձանը պատվանդանին, իսկ
Միլդրեդը կողքին կանգնած սպասում էր: Նա ետ տարավ

պատի օդափոխիչ ցանցը, ձեռքը մտցրեց խողովակի մեջ, մի կողմ հրեց մետաղյա մի ցանց ևս ու մի գիրք հանեց: Առանց նայելու նետեց հատակին: Կրկին ձեռքը մտցրեց, հանեց ևս երկու գիրք ու նետեց հատակին: Նա իրար ետևից դուրս էր հանում և նետում էր հատակին՝ փոքրածավալ, ստվար, դեղին, կարմիր, կանաչ կազմերով գրքեր: Երբ վերջինը հանեց, Միլդրեդի ոտքերի առաջ ընկած էր մոտ քսան գիրք:

— Ներիր ինձ,— ասաց նա:— Ես արել եմ առանց մտածելու: Իսկ հիմա պարզվում է, որ մենք երկուսով այս պատմության մեջ ենք խճճվել:

Միլդրեդը ընկրկեց, ասես իր առջև տեսել էր հատակի տակից դուրս ելած բազմաթիվ մկներ: Մոնթագը լսում էր նրա ընդհատվող շնչառությունը, տեսնում նրա գունատ դեմքը, սառած, չուված աչքերը: Միլդրեդը նորից ու նորից կրկնում էր Մոնթագի անունը, այնուհետև խղճալի հոգոց հանելով վազեց գրքերի կողմը, վերցրեց նրանցից մեկն ու նետվեց խոհանոց՝ աղբայրիչ վառարանի մոտ:

Մոնթագը բռնեց նրան: Կինը թղրտում էր և ճանկոտելով փորձում դուրս պրծնել:

— Ո՛չ, Միլլի, ո՛չ: Սպասի՛ր: Վե՛րջ տուր, խնդրում եմ: Դու ոչինչ չգիտես... Դե, վե՛րջ տուր..., — նա ապտակեց Միլդրեդին և ուսերից բռնելով՝ թափահարեց:

Կինը կրկին տվեց Մոնթագի անունը և արտասվեց:

— Միլլի, — ասաց նա:— Լսիր ինձ: Մի վայրկյան: Աղաչում եմ: Այժմ արդեն ոչինչ չենք կարող անել: Այժմ չենք կարող այրել: Ես ուզում եմ նախ նայել դրանք, հասկանո՞ւմ ես, գոնե մի անգամ նայել: Եվ, եթե հրկիզապետն իրավացի է, միասին կայրենք: Խոսք եմ տալիս, միասին կայրենք: Դու պետք է օգնես ինձ:

Նա նայեց կնոջ դեմքին: Բռնեց նրա կզակից: Ջննելով նրա դեմքը՝ Մոնթագը որոնում էր այնտեղ իրեն, որոնում էր հուզող հարցի պատասխանը՝ ինչպե՞ս վարվել:

— Ուզենք թե չուզենք, միևնույն է, արդեն խճճվել ենք: Ես քեզնից ոչինչ չեմ խնդրել այս բոլոր տարիներին, բայց այժմ խնդրում եմ, աղաչում եմ: Մենք պետք է վերջապես ըմբռնենք՝ ինչպես առաջացավ այս թնջուկը՝ դու, այդ քնաբեր դեղահաբերը և գիշերային խելահեղ ուղևորությունները մեքե-

Նայով, ես և իմ աշխատանքը: Մենք սրընթաց անդունդն ենք գլորվում, Մի'լլի: Բայց ես չեմ ուզում, գրո'ղը տանի: Մեզ համար հեշտ չի լինի: Մենք նույնիսկ չգիտենք ինչից սկսել, բայց փորձենք ինչ-որ կերպ գլուխ հանել, կշռադատել, օգնել միմյանց: Նույնիսկ չեմ կարող ասել, թե հենց հիմա որքա՞ն է ինձ անհրաժեշտ քո օգնությունը: Եթե դու դուզն իսկ սիրում ես ինձ, ապա կսպասես մեկ-երկու օր: Ահա իմ խնդրանքը, և ամեն ինչ կավարտվի: Խոստանում եմ, երդվում եմ: Եթե ինչ-որ խելացի բան կա այս գրքերում, թեկուզ մտքի նշույլ համընդհանուր քառսի մեջ, գուցե և կարողանանք փոխանցել ուրիշներին:

Միլդրեդն այլևս չէր դիմադրում, և Մոնթագը բաց թողեց նրան: Կինը ճոճվելով հեռացավ, ուժասպառ հենվեց պատին, ապա ծանրորեն սահեց հատակին: Նա լուռ նստել էր հատակին՝ նայելով ցիրուցան գրքերին: Ոտքը կպավ մի գրքի, և նա դանդաղ ետ քաշեց:

— Երեկ այն կինը... Դու այնտեղ չէիր, Մի'լլի, դու չես տեսել նրա դեմքը: Քլարիսը նույնպես... Դու երբեք չես խոսել նրա հետ: Իսկ ես խոսել եմ: Բիթիի նման մարդիկ վախենում են նրանից: Չեմ հասկանում՝ ինչո՞ւ են նրանք վախենում Քլարիսից և Քլարիսի նմաններից: Բայց երեկ հերթապահության ժամանակ ես սկսեցի համեմատել Քլարիսին հրակայանի հրկիզողների հետ և հանկարժ հասկացա, որ ատում եմ նրանց, ատում եմ ինքս ինձ: Ես մտածեցի՝ գուցե ամենի լավ կլինե՞ր, եթե հրկիզողներն իրենք իրենց այրեին:

— Գա՛լ:

Շքամուտքի խոսափողը ցածրաձայն կանչեց. «Միսիս Մոնթագ, միսիս Մոնթագ, ձեզ են հարցնում, ձեզ են հարցնում»:

Լռություն:

Նրանք վախեցած նայում էին շքամուտքի դռանը, հատակին թափված գրքերի կույտին:

— Բիթին է, — արտասանեց Միլդրեդը:

— Չի կարող պատահել: Նա չէ:

— Վերադարձել է, — շշնջաց կինը:

Եվ նորից խոսափողի խուլ ձայնը. «Չեզ են հարցնում»:

— Պետք չէ դուր քաշել:

Մոնթազը հենվեց պատին, ապա դանդաղ կբելով պագեց և սկսեց շփոթահար ջոկջկել գրքերը՝ վերցնելով մերթ մեկը, մերթ մյուսը: Նա ողջ մարմնով դողում էր և սաստիկ ցանկանում էր կրկին գրքերը թաքցնել օդափոխիչի մեջ: Բայց գիտեր, որ ուժ չունի մի անգամ ևս հանդիպելու հրկիզապետ Բիթին: Նա պագել էր, հետո պարզապես նստեց հատակին: Ավելի համառորեն հնչեց խոսափողի ծայնը: Մոնթազը հատակից վերցրեց հատորիկը:

— Ինչի՞ց սկսենք:— Նա գիրքը կեսից բացեց և ուշադիր նայեց:— Կարծում եմ, պետք է սկսել սկզբից...

— Նա ներս կմտնի, — ասաց Միլդրեդը, — և գրքերի հետ միասին մեզ էլ կալրի:

Խոսափողը վերջապես լռեց: Լուռություն: Մոնթազը դուրս ետևում զգաց ինչ-որ մեկի ներկայությունը, որ կանգնել, սպասում էր, թերևս ականջ դնում: Ապա քայլերի ծայներ լսվեցին: Քայլերը հեռանում էին ճանապարհով: Հետո անցան մարզագետնի միջով...

— Տեսնելք, թե ինչ է գրված, — ասաց Մոնթազը: Այդ բաները նա արտասանեց կմկմալով, ասես կաշկանդվում էր սաստիկ ամոթից: Արագ թերթելով՝ Մոնթազը աչքի անցկացրեց տասնյակ էջեր, մինչև վերջապես կանգ առավ հետնյալ տողերին.

«Հաշվված է, որ տասնմեկ հազար մարդ, զանազան ժամանակ, գերադասել են մահը, միայն թե չհնազանդվեն և չկոտրեն ձուն սուր թայրից»¹:

Միլդրեդը նստել էր նրա դիմաց:

— Դա ի՞նչ է նշանակում: Ախր, ոչ մի իմաստ չկա: Հրկիզապետը իրավացի էր:

— Սպասի՛ր, — պատասխանեց Մոնթազը:— Նորից սկսենք: Հե՛նց սկզբից:

¹ Ջոնաթան Սվիֆտ, «Գուպիվերի ճանապարհորդությունները», էջ 58:

Երկրորդ մաս

ՄԱՂԸ ԵՎ ԱՎԱԶԸ

Ամբողջ օրը նրանք կարդում էին, իսկ երկնքից նույնիսկ Երևանի սառն անձրևը թափվում էր խաղաղված տան վրա: Նրանք կարդում էին նախասենյակում: Հյուրասենյակը ամալի ու գորշ էր թվում: Նրա համրացած պատերին չէր խաղում գույների ծիածանը, չէին առկայծում հրավառության ցուրքերը, չկային ոսկեկար ցանցկեն զգեստներ հագած կանայք, և սև թափշյա կոստյումներով տղամարդիկ 100 ֆունտանոց ճագարներ չէին հանում արծաթավուն լալնեզր գլխարկներից: Հյուրասենյակը մեռյալ էր: Միլդրեդը սառած, անարտահայտիչ հայացքով շարունակ նայում էր լոին պատերին, իսկ Մոնթագը մերթ անհանգիստ չափչփում էր սենյակը, մերթ նորից պալզում և մի քանի անգամ բարձրաձայն կարդում որևէ էջ:

«Ռժվար է ասել, թե հատկապես որ պահին է ծնվում բարեկամությունը: Ջուրը կաթիլ-կաթիլ լցնելիս, լինում է մի վերջին կաթիլ, որից հանկարծ բերնեբերան լցվում է անոթը և թափվում եզրից. ճիշտ նույնն է, երբ բարի արարքներից մեկը հանկարծ լիքը լցնում է սիրտդ»:

Մոնթագը նստեց՝ ականջ դնելով անձրևի խշշոցին:

— Գուցե և հենց այդ էր, որ կար մեր հարևան աղջկա մեջ: Ես այնպես եմ ուզում հասկանալ նրան:

— Բայց նա մեռել է: Ի սեր աստծո, խոսենք որևէ ապրողի մասին:

Չնայելով կնոջը՝ Մոնթագը, ողջ մարմնով դողալով, կտրեց-անցավ նախասենյակը և մտավ խոհանոց: Երկար կանգնեց պատուհանի մոտ՝ հայացքը ապակիները թմբկահարող անձրեվին: Երբ անձրևը դադարեց, նա վերադարձավ արդեն աղջամուղջով պատված նախասենյակ և վերցրեց նոր գիրք:

— Մեր նախասիրած թեման է. «Իմ մասին»:

Նա խեթ-խեթ նայեց պատին:

— Մեր նախասիրած թեման է. «Իմ մասին»:

— Այ դա հասկանում եմ, — ասաց Միլդրեդը:

— Իսկ Քլարիսի համար բնավ էլ նախասիրած թեմա չէր: Նա սիրում էր խոսել ուրիշների մասին, իմ մասին: Նա առաջինն էր իմ կյանքում, որ ինձ իսկապես դուր եկավ: Ծանոթներիս մեջ միակն էր, որ նայում էր ուղիղ աչքերիս, այնպես, ասես ինչ-որ բան արժեմ:

Նա հատակից վերցրեց երկու գրքերը, որ քիչ առաջ կարդում էր:

— Այս մարդիկ մեռել են շատ տարիներ առաջ, բայց ես գիտեմ, որ նրանց բոլոր գրածներն այսպես թե այնպես կապված են Քլարիսի հետ:

Դրսից թույլ ճանկոտոց լսվեց:

Մոնթագը քարացավ: Միլդրեդը, ծանր շնչելով, սեղմվեց պատին:

— Դուան ետևում ինչ-որ մեկը կա... Ինչո՞ւ է խոսափողը լուում:

— Անջատել եմ:

Դուան ետևից լսվում էր թույլ ֆսֆսոց, էլեկտրաջեռուցման թեթև թշշոց:

Միլդրեդը ծիծաղեց:

— Ախր դա պարզապես շուն է... Վոնդե՞մ:

— Չհամարձակվես: Տե՛ղդ նստիր:

Լուռություն: Դրսում սառն անձրև էր մաղում: Իսկ փակ դուան տակից փչում էր էլեկտրական կապույտ պարպումների նուրբ հոտը:

— Ծարունակենք,— հանգիստ ասաց Մոնթագը:

Միլդրեդը ոտքով հարվածեց գրքին:

— Գրքերը մարդիկ չեն: Դու կարդում ես, ես նայում եմ շուրջս, բայց ոչ ոք չկա:

Մոնթագը նայում էր հյուրասենյակի պատերին. մեռած ու գորշ, ինչպես օվկիանոս, որ պատրաստ է ավելոծվելու, եռալու կյանքով, եթե միայն միացվի էլեկտրական արևը:

— Իսկ «ազգականները» կենդանի մարդիկ են: Նրանք ինչ-որ բան են ասում ինձ. ես ծիծաղում եմ, նրանք ծիծաղում են: Հապա գույնե՛րը...

— Այո՛, գիտեմ:

— Բացի այդ, եթե հրկիզապետ Բիթին իմանա այս գրքերի

մասին... — Միլդրեդը մտածմունքի մեջ ընկավ: Ռեմքի գարմանքը փոխվեց սարսափի:

— Նա կարող է գալ այստեղ, այրել տունը, «ազգականներին», ամեն ինչ: Սոսկալի՛ է: Հապա մտածի՛ր, թե որքան փող ենք ներդրել այս տան վրա: Ինչո՞ւ ես պետք է կարդամ այս գրքերը, հանուն ինչի՞:

— Ինչո՞ւ, հանուն ինչի՞, — գոչեց Մոնթագը: — Անցած գիշեր ես օձ տեսա: Աշխարհում ավելի արգահատելի բան չկա: Նա կարծես սատկած էր, բայց միաժամանակ կենդանի: Նա կարող էր տեսնել, բայց չէր տեսնում: Ուզո՞ւմ ես տեսնել այդ օձին: Նա անհետաձգելի օգնության հիվանդանոցում է, այնտեղ մանրամասն գրված է, թե ինչպիսի աղտեղություն դուրս բաշեց քեզնից: Գուցե գնա՛ս այնտեղ, ընթերցե՛ս քարտարանում պահվող գրառումը: Միայն թե չգիտեմ՝ ի՞նչ խորագրի տակ փնտրել՝ «Գալ Մոնթագ», թե՞ «Սարսափ» կամ «Պատերազմ»: Իսկ գուցե գնաս տեսնես այն տունը, որ անցած գիշեր այրվե՛ց: Մոխրի մեջ պեղես այն կնոջ ոսկորները, որը ողջակիզվեց իր տան հետ միասին: Իսկ Քլարիս Մըքլե՛լընը: Որտե՞ղ փնտրել հիմա նրան: Դիարանո՞ւմ: Ահա լսի՛ր:

Տան վերևում իրար ետևից սրընթաց անցան ոմբակոծիչները, անցան հոնդյունով, դղրդյունով, սուլոցով, ասես անտեսանելի վիթխարի օդափոխիչ էր պտտվում երկնքի դատարկ խոռոչում:

— Տե՛ր աստված, — բացականչեց Մոնթագը, — ամեն ժամ նրանք ոռնում են մեր գլխավերևում: Մեր կյանքի ամեն վայրկյանը հագեցված է այդ դժոխային ոմբակոծիչներով: Ինչո՞ւ ոչ ոք չի խոսում այդ մասին: 1960 թվականից հետո մենք սկըսել ենք և հաղթել երկու ատոմային պատերազմում: Մի՞թե պատճառն այն չէ, որ զվարճանալով տանը, լիովին մոռացել ենք մնացյալ աշխարհը: Արդյոք այն պատճառով չե՞նք այսպես հարուստ, որ աշխարհն այնքան աղքատ է, իսկ մեր հոգըն էլ չէ: Ես լսել եմ, որ ամենուր մարդիկ կիսաքաղց են, իսկ մենք կուշտ ենք: Արդյոք ծի՞շտ է, որ ողջ աշխարհը տաժանակիր աշխատում է, իսկ մենք զվարճանում ենք: Դրա համար չե՞, որ սաստիկ ատում են մեզ: Ես վաղուց եմ լսել, որ բոլորն ատում են մեզ: Իսկ գիտե՞ս, թե ինչու: Ես չգիտեմ: Գուցե այս գրքե՞րը բացեն մեր աչքերը: Գուցե դրա՞նք նախազգուշացնեն

մեզ՝ չկրկնել նույն անուղղելի սխալները: Ես չեմ հիշում, թե քո հյուրասենյակի այդ ապուշները երբևէ այդ մասին խոսած լինեն: Աստված իմ, Միլլի, այսր, ինչպե՞ս չես հասկանում: Եթե օրական մի քիչ կարդանք, ասենք, օրը մի ժամ, երկու ժամ, գուցե թե...

Հեռախոսը զնգաց: Միլլրեդը ճանկեց լսափողը:

— Ա՛ննա:— Նա ուրախացած ծիծաղեց:— Այո՛, Սպիտակ ծաղրածուն է երեկոյան ծրագրով:

Մոնթագը գնաց դեպի խոհանոց և գիրքը նետեց սեղանին:

«Մո՛նթագ, — դիմեց ինքն իրեն, — դու իսկապես հիմար ես: Սակայն ինչպե՞ս վարվել: Գրքերի մասին հայտնել կայա՞ն: Մոռացությա՞ն տալ»:— Նա կրկին բացեց գիրքը, ջանալով չլսել Միլլրեդի ծիծաղը:

«Խե՛ղճ Միլլի, — մտածեց նա:— Խե՛ղճ Մոնթագ: Չե՞ որ դու նույնպես գլուխ չես հանում: Որտեղի՞ց օգնություն խնդրել, որտե՞ղ ուսուցիչ գտնել, երբ արդեն այդքան ժամանակ կորսված է»:

Չպետք է հանձնվել: Նա փակեց աչքերը: Ղե, իհարկե, նա կրկին զգաց, որ մտածում է քաղաքային զբոսայգու մասին, ուր մի տարի առաջ անցողակի մտել էր: Վերջերս հաճախ էր եիշում այդ մասին: Եվ այժմ էլ հիշողության մեջ պարզորոշ գծագրվեց այն ամենը, ինչ կատարվեց այդ օրը՝ զբոսայգում. սաղարթախիտ անկյունը, նստարանին նստած սև կոստյումով ծերուկը, որ, Մոնթագին տեսնելով, արագորեն ինչ-որ բան խոթեց վերարկուի գրպանը:

... Ծերուկը տեղից վեր ցատկեց, ասես ուզում էր վազել: Իսկ Մոնթագն ասաց.

— Սպասե՛ք:

— Ես ոչ մի մեղք չունեմ, — դողահար բացականչեց նա:

— Իսկ ո՞վ ասաց, թե դուք մեղավոր եք:

Որոշ ժամանակ նրանք լուռ նստել էին կանաչ սաղարթների աղոտ ցույքերի մեջ: Հետո Մոնթագը խոսք բացեց եղանակի մասին, և ծերուկը պատասխանեց ցածր, թույլ ձայնով: Ղա տարօրինակ, խաղաղ հանդիպում էր: Ծերուկը խոստովանեց, որ ինքը անգլերեն լեզվի պաշտոնանկ պրոֆեսոր է, աշխատանքից զրկվել է քառասուն տարի առաջ, երբ ուսա-

նողների և նյութական աջակցության բացակայության պատճառով փակվեց հումանիտար գիտությունների վերջին քուլեջը: Անունը Ֆաբեր էր, և երբ նա այլևս չէր վախենում Մոնթագից, դարձավ շատախոս: Սկսեց խոսել ցածր, համաչափ ձայնով, նայելով երկնքին, ծառերին, զբոսայգու կանաչ բացատներին: Նրանք գրուցեցին շուրջ մեկ ժամ: Հանկարծ թերուկը ինչ-որ բան արտասանեց, և Մոնթագը հասկացավ, որ անհանգ բանաստեղծություն է: Հետո, սիրտ առնելով, կրկին ինչ-որ բան արտասանեց՝ նույնպես բանաստեղծություն: Ձեռքը սեղմելով վերարկուի ձախ գրպանին՝ Ֆաբերը քնքշորեն արտաբերում էր բառերը: Մոնթագն զգաց, որ եթե ձեռքը մեկնի, թերուկի գրպանից բանաստեղծությունների հատորյակ կհանի: Բայց նա չմեկնեց: Նրա ձեռքերն անզգա ընկած էին ծնկներին:

— Ձե՛ որ ես խոսում եմ ոչ թե բուն իրերի մասին, սը՛ր, — ասաց Ֆաբերը: — Ես խոսում եմ իրերի էության մասին: Նստած եմ այստեղ և գիտեմ, որ ապրում եմ:

Ահա այն ամենը, ինչ տեղի ունեցավ այն ժամանակ: Մեկ ժամ տևած մենախոսություն, բանաստեղծություններ ու մեկնաբանություններ, իսկ հետո թերուկը դողացող մատներով թղթի կտորի վրա գրեց իր հասցեն: Մինչ այդ պահը երկուսն էլ խուսափում էին հիշատակել, որ Մոնթագը հրկիզող է:

— Ձեր քարտարանի համար է, — ասաց թերուկը, — եթե ձեր մտքով անցնի բարկանալ ինձ վրա:

— Ես չեմ բարկանում, — զարմացած ասաց Մոնթագը:

Նախասենյակից լսվեց Միլդրեդի անզուսպ քրքիջը:

Բացելով ննջարանի պատի պահարանը՝ Մոնթագը թերթեց «Ենթակա են հետաքննության» (*) մակագրությամբ արկղի քարտերը: Դրանց մեջ էր Ֆաբերի քարտը: Այն ժամանակ Մոնթագը չէր մատնել նրան, բայց և հասցեն չէր ոչնչացրել:

Նա հավաքեց հեռախոսի համարը: Հեռախոսալարի մյուս ծայրին ազդանշանը մի բանի անզամ կրկնեց Ֆաբերի անունը, և, վերջապես, ընկալուչում լսվեց պրոֆեսորի թույլ ձայնը: Մոնթագը ներկայացավ: Տիրեց երկարատև լռություն: Եվ ապա՝

— Այո՛, միստր Մոնթագ:

— Պրոֆեսո՛ր Ֆաբեր, ես ուզում եմ ձեզ ոչ այնքան սովո-

րական մի հարց տալ: Մեր երկրում քանի՞ «Աստվածաշունչ» է մնացել:

— Ձեմ հասկանում՝ ինչի՞ մասին եք խոսում:

— Ես ուզում եմ իմանալ՝ գեթ մի օրինակ «Աստվածաշունչ» մնացե՞լ է:

— Ուզում եք ծուղա՞կը գցել ինձ: Ես չեմ կարող սլատահական մարդկանց հետ խոսել հեռախոսով:

— Քանի՞ օրինակ է մնացել Շեքսպիրի, Պլատոնի ստեղծագործություններից:

— Ոչ մի, դուք ինձնից լավ գիտեք: Ո՛չ մի:

Ֆաբերը նետեց ընկալուչը:

Մոնթազը նույնպես ցած դրեց ընկալուչը: Ո՛չ մի: Հրակայանի ցուցակից Մոնթազն ինքն էլ գիտեր: Սակայն, չգիտես ինչու, նա ցանկանում էր լսել հենց Ֆաբերից:

Նախասենյակում հանդիպեց Միլդրեդին, նրա դեմոզ հուզմունքից շառագունել էր:

— Այսօր մեզ հյուր են գալու տիկիները:

Մոնթազը նրան ցույց տվեց մի գիրք:

— Սա Հին և Նոր կտակարանն է, և գիտե՛ս, Միլդրեդ...

— Խնդրում եմ, մի՛ սկսիր...

— Սա, հնարավոր է, միակ փրկված օրինակն է՝ մեր աշխարհամասում:

— Բայց դու պետք է այսօր ևեթ վերադարձնես: Ձե՛ որ հրկիզապես Բիթին գիտի այդ գրքի մասին:

— Հազիվ թե իմանա՛ հատկապես ի՞նչ գիրք եմ բերել: Կարելի է մեկ ուրիշը հանձնել: Բայց ո՞րը: Ջեֆերսոնը¹: Գուցե Թո՛րոն²: Ո՞րն է պակաս արժեքավոր: Եվ հետո, եթե ես փոխեմ, և Բիթին իմանա, թե հատկապես ո՞ր գիրքն եմ գողացել, նա գլխի կընկնի, որ մեզ մոտ մի ամբողջ գրադարան կա:

Միլդրեդի շրթունքները ջղաձգվեցին:

— Հապա մտածիր, թե ինչ ես անում: Ու մեզ կկործանես: Քեզ համար ո՞վ է կարևոր՝ ե՛ս, թե «Աստվածաշունչը»:

¹ Թոմաս Ջեֆերսոն (1743—1826) — ամերիկյան լուսավորիչ, ԱՄՆ-ի անկախության դեկլարացիայի նախագծի հեղինակը:

² Հենրի Դեյվիդ Թորո (1817—1862) — ամերիկյան փիլիսոփա և հրապարակախոս:

Նա արդեն նորից ջղալին ծչում էր՝ սեփական տաքությունից հալվող մոմե տիկնիկի նման:

Բայց Մոնթազը չէր լսում նրան, նա լսում էր Բիթիի ձայնը:

«Նստեցեք, Մոնթազ: Նայեցեք: Վերցնում ենք առաջին էջը: Զգուշությամբ, ինչպես ծաղկաթերթ, այրում ենք: Հետո՝ երկրորդը: Կրակը դրանք վեր է ածում սև թիթեռների: Գեղեցիկ է, չէ՞: Այժմ երկրորդ էջից կայցրեք երրորդը և այդպես շղթայաբար, էջ առ էջ, գլուխ առ գլուխ. բոլորը հիմարություններ են՝ ամփոփված բառերում, բոլորը՝ սուտ խոստումներ, հնամաշ մտքեր, իր դարն ապրած փիլիսոփայություն»:

Բիթին նստել էր քրտնաթոր ճակատով, իսկ նրա շուրջը հատակը ծածկված էր սև թիթեռների դիակներով, որոնք զոհվել էին բոցեղեն մրրիկի մեջ:

Միլդրեդը լռեց նույնքան անսպասելի, ինչպես սկսել էր ծչալ: Մոնթազը նրա վրա ուշադրություն չէր դարձնում:

— Մի ելք է մնում, — ասաց նա: — Մինչև երեկո, երբ ես ստիպված կլինեմ գիրքը հանձնել Բիթին, պետք է պատճենահանեմ:

— Դու տանը կլինե՞ս, երբ Սպիտակ ծաղրածուի ծրագիրն սկսվի և տիկիները հյուր գան, — բղավեց Միլդրեդը նրա ետևից:

Զրոջվելով՝ Մոնթազը կանգ առավ դռների մեջ:

— Մի՛լի:

Լռություն:

— Ի՞նչ:

— Մի՛լի, Սպիտակ ծաղրածուն սիրո՞ւմ է քեզ:

Ոչ մի պատասխան:

— Մի՛լի, — նա լիզեց չոր շրթունքները, — արդյոք քո «ազգականները» սիրո՞ւմ են քեզ: Սիրում են ամբողջ սրտով ու հոգո՞վ: Հա՛, Մի՛լի:

Մոնթազն զգաց, որ կինը աչքերը շփոթահար թարթելով նայում է իր ծոծրակին:

— Ինչո՞ւ ես այդպիսի հիմար հարցեր տալիս:

Մոնթազն ուզում էր լաց լինել, բայց շրթունքներն ամուր սեղմված էին, և աչքերում արցունք չկար:

— Եթե դուան ետևում շուն տեսնես, իմ փոխարեն ոտքով կխփես,— ասաց Միլդրեդը:

Նա անվճռական կանգնել էր դուան առաջ, ականջ դնելով: Ապա բացեց և դուրս ելավ:

Անձրևը դադարել էր, անամպ երկնքում արևը թեքվում էր դեպի մայրամուտ: Տան շրջակայքում ոչ ոք չկար, փողոցն ու մարգագետինն ամայի էին:

Մոնթագը թեթև հոգոց հանեց, ապա ետևից շրխկացրեց դուռը:

Մոնթագը մետրո գնաց:

«Ասես ամբողջովին քարացել եմ,— մտածեց նա:— Այդ երբվանի՛ց սկսվեց: Ե՛րբ կարծրացան դեմքս, մարմինս. արդյո՞ք այն գիշեր, երբ խավարում ոտքով բախվեցի դեղահաբի սրբակին, որն ասես թաքցրած ական լիներ:

Կանցնի, մտածեց նա: Գուցե ոչ միանգամից, թերևս՝ մի առժամանակ հետո: Բայց ես ամեն ինչ կանեմ, որ անցնի, և Ֆաբերն էլ կօգնի ինձ: Ինչ--որ մեկը կվերադարձնի իմ նախկին դեմքը, իմ ձեռքերը, նրանք կրկին կդառնան այնպիսին, ինչպիսին եղել են: Հիմա նույնիսկ ժպիտը՝ հրկիզողի սովորական ժպիտը, լքել է ինձ: Առանց նրա ես կորած եմ»:

Լուսամուտներում առկայծում էին թունելի պատերը՝ բաց դեղնավուն հախճասալիկներ և թանձր խավար, թվեր և նորից խավար, ամեն ինչ սլանում էր կողքով, գումարվում ընդհանուրին:

Մի անգամ, երբ ինքը դեռ երեխա էր, ամառվա մի շոգ օր նստել էր ծովափի դեղին ավազաթմբին և փորձում էր ավազը լցնել մաղը, որովհետև իր չարասիրտ զարմիկն ասել էր. «Եթե մաղն ավազով լցնես, տասը սենթ կտամ»: Բայց որքան ավելի արագ էր նա լցնում մաղը, նույնքան արագ էր ավազը չոր խըշշոցով թափվում: Նրա ձեռքերը հոգնել էին, ավազն այրում էր կրակի նման, իսկ մաղը դատարկ էր: Հուլիսյան այդ տոթ օրը նա լուռ նստել էր ծովափին, և արցունքները հոսում էին այտերով:

Այժմ, երբ օդամուղ գնացքը թոցնում էր նրան, ցնցելով ու ծոճելով ստորերկրյա դատարկ միջանցքներում, նա հիշեց մաղի անողոք տրամաբանությունը և հայացքը ցած հառելով,

հանկարծ տեսավ, որ ձեռքին պահել է բաց «Աստվածաշունչը»: Վագոնում մարդիկ կային, բայց նա, չթաքցնելով, գիրքը պահում էր ձեռքում, և հանկարծ գլխով անցավ անհետք մի միտք. եթե արագ ու անընդհատ կարդա, ապա գուցե և մաղում մի քիչ ավագ մնա: Նա սկսեց կարդալ, բայց բառերը շաղվում էին, իսկ չէ՛ որ մի քանի ժամ հետո նա կտեսնի Բիթիին և նրան կհանձնի գիրքը, ուստի ոչ մի արտահայտություն չպետք է սպրդի, հարկավոր է հիշել յուրաքանչյուր տողը: «Ես պե՛տք է այդ անեմ, ես կստիպեմ ինձ այդ անել»:

Նա չղաձգորեն սեղմեց գիրքը:

Վագոնում ոռնում էին բարձրախոսները.

— «Դենըմ» ատամի մաժուկ:

— Լոիր, — մտածեց Մոնթագը: — «Նայեցեք վայրի շուշանին, ինչպե՛ս է աճում»¹:

— «Դենըմ» ատամի մաժուկ:

«Ո՛չ ջանք է թափում...»:

— «Դենըմ»...

«Նայեցեք վայրի շուշանին...»: Լոիր, վերջապես, լոիր...

— Ատամի մաժո՛ւկ...

Նա նորից բացեց գիրքը, սկսեց տենդագին թերթել էջերը, որոնք նա շոշափում էր կույրի պես, անթարթ նայում ամեն մի տողի, ամեն մի տառի:

— «Դենըմ»: Տառ առ տառ՝ դ-ե-ն...

«Ո՛չ ջանք է թափում ու ոչ հյուսում է»:

Մաղից թափվող չոր ավազի խշշոց:

— «Դենըմը» թարմացնում է...

«Նայեցեք վայրի շուշանին, շուշանին, շուշանին»:

— Ատամները մաքրող «Դենըմ»:

— Լոեցե՛ք, լոեցե՛ք, լոեցե՛ք..., — այս աղերսանքը, օգնության կանչը այնպիսի ուժով դուրս պոկվեց Մոնթագի կրծքից, որ ինքն էլ չնկատեց՝ ինչպես ոտքի թռավ: Աղմկոտ վագոնի շփոթված ուղևորները վախեցած մի կողմ թեքվեցին խելացրնոր, աղաղակից կարմրատակած դեմքով, բորբոքված ջրթունքներով մարդուց, որ ձեռքին սեղմել էր բաց գիրքը: Բո-

¹ Ավետարան ըստ Մատթեոսի (Չ, 28): Արտահայտությունը հետևյալն է. «Նայեցեք վայրի շուշանին, ինչպե՛ս է աճում: Ո՛չ ջանք է թափում և ոչ հյուսում է»:

լորը երկյուղով էին նայում նրան, բոլորը, ովքեր մի րոպե առաջ հանգիստ, ոտքերով չափ էին տալիս գովազդերին՝ «Դենըմ», «Դենըմ» ատամի մաժուկ, «Դենըմ», «Դենըմ» ատամի մաժուկ՝ մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու-երեք, մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու-երեք... Բոլորը, ովքեր մեքենաբար քթի տակ դնորնում էին. «Մաժուկ, մաժուկ, ատամի մաժուկ, մաժուկ, մաժուկ, ատամի մաժուկ...»:

Եվ ասես ի հատուցումն, ուղիղն Մոնթագի վրա մի տոննա երաժշտություն թափեց՝ մետաղի շոինդի, թիթեղի, պղնձի, արծաթի, արույրի գնագոցների տարափ: Մարդիկ ստիպված էին խաղաղվել, քանի որ փախչելու տեղ չունեին. հսկա օդամուղ գնացքը սլանում էր ստորգետնյա խոր թունելով:

— Վայրի շուշան...

— «Դենըմ»:

— Ասացի՛ շուշան...

Մարդիկ զարմանքով նայեցին նրան.

— Ուղեկցորդին կանչեք:

— Խելքը թոցրել է...

— Նոյ Վյու կայարան:

Գնացքը սուլոցով օդ բաց թողեց և կանգ առավ:

— Նոյ Վյու, — բարձր:

— «Դենըմ», — շշուկով:

Մոնթագի շուրթերը հագիվ էին շարժվում:

— Շուշան...

Ֆշշալով վագոնի դուռը բացվեց, Մոնթագը դեռևս կանգնած էր: Հնոց արձակելով՝ դուռն սկսեց փակվել: Եվ միայն այդ ժամանակ Մոնթագը շարժվեց առաջ՝ հրմշտելով մյուս ուղևորներին և շարունակելով անձայն գոռալ՝ փակվող դուռն նեղ ձեղքից ժամանակին դուրս նետվեց կառամատուց: Նա վազեց թունելի սպիտակ հախճասալիկների վրայով՝ ուշադրություն չդարձնելով շարժասանդուղքներին, որովհետև ցանկանում էր զգալ՝ ինչպես են շարժվում իր ոտքերը, ձեռքերը, ինչպես են կծկվում ու թուլանում թոքերը, ամեն մի ներշնչման և արտաշնչման ժամանակ՝ ինչպես է օդը քերժում կոկորդը: Նրան հետապնդում էր նույն ձայնը՝ «Դենըմ», «Դենըմ», «Դենըմ»:

Օձի նման ֆշշալով՝ գնացքն անհետացավ մութ թունելում:

- Ո՞վ է:
- Ես եմ, Մոնթազը:
- Ի՞նչ եք ուզում:
- Ներս թողեք ինձ:
- Ես ոչինչ չեմ արել:
- Ես մենակ եմ: Հասկանո՞ւմ եք, մենակ եմ:
- Երդվեցեք:
- Երդվում եմ:

Դուռը դանդաղ բացվեց, Ֆաբերը դուրս նայեց: Ցերեկվա պայծառ լույսի տակ նա շատ ծեր էր թվում, թուլակազմ, վախեցած: Ծերուկն այնպիսի տեսք ուներ, ասես երկար տարիներ տնից դուրս չէր եկել: Նրա դեմքը և սենյակի սպիտակ սվաղած պատերը նույն գույնի էին: Ծերմակ էին թվում նրա և՛ շուրթերը, և՛ այտերի մաշկը, և՛ մազերը, և՛ խամրած գորշակապույտ աչքերը: Բայց հանկարծ նրա հայացքն ընկավ այն գրքին, որ Մոնթազը պահել էր թևի տակ, և ծերուկը միանգամից փոխվեց. այժմ նա ոչ այդքան ծեր էր թվում, ոչ էլ թույլ: Նրա վախը կամաց-կամաց անցնում էր:

- Ներեցեք, ստիպված եմք զգուշավոր լինել:
- Ֆաբերի աչքերը գամված էին գրքին:
- Ուրեմն՝ ձի՞շտ է:

Մոնթազը ներս մտավ: Դուռը փակեց:

— Նստեցեք, — Ֆաբերը ետ քաշվեց, աչքը չկտրելով գրքից, ասես վախենում էր, թե կանհետանա, եթե գեթ մի վայրկյան հայացքը թեքի: Նրա ետևում ննջարանի բաց դուռն էր, ներսում՝ սեղանը, որի վրա խառնիխուռն թափված էին ինչ-որ մեխանիզմների մասեր և աշխատանքային գործիքներ: Մոնթազն այդ ամենը նշմարեց սոսկ անցողակի, որովհետև Ֆաբերը, նկատելով, թե ինչ ուղղությամբ է նայում նա, արագ շրջվելով՝ ծածկեց դուռը: Նա կանգնել էր, դողացող ձեռքով սեղմելով բռնակը: Ապա անվճռական հայացքը հառեց Մոնթազին:

Այժմ Մոնթազը նստել էր՝ ծնկների վրա այսպիսով գիրքը:

- Այդ գիրքը... Որտե՞ղ եք դուք...
- Գողացել եմ:

Ֆաբերն առաջին անգամ նայեց ուղիղ Մոնթազի աչքերին:

- Դուք խիզախ մարդ եք:

— Ոչ,— ասաց Մոնթագը:— Բայց իմ կինը մեռնում է: Աղջիկը, որ իմ բարեկամն էր, մեռել է արդեն: Մի կին, որ կարող էր դառնալ իմ բարեկամը, ողջ-ողջ այրվեց մի օր առաջ: Դուք միակն եք, որ կարող եք օգնել ինձ: Ես ուզում եմ տեսնել: Տեսնե՛լ...

Ֆաբերի ձեռքերը, որ դողում էին անհամբերությունից, պարզվեցին դեպի գիրքը:

— Կարելի՞ է:

— Այո՛, իհարկե: Ներեցեք:— Մոնթագը նրան տվեց գիրքը:

— Որքա՞ն ժամանակ է անցել... Ես երբեք կրոնասեր չեմ եղել... Բայց որքան ժամանակ է անցել այն օրերից...,— Ֆաբերը թերթում էր գիրքը, որոշ հատվածներ կարդալով:— Ճիշտ նույնն է, այնպիսին, ինչպիսին ես հիշում եմ: Աստվա՛ծ իմ, իսկ ինչպես են հիմա աղճատում մեր հեռուստատեսային հյուրասենյակներում. Զրիստոսը դարձել է «ազգականներից» մեկը: Ես հաճախ եմ մտածում՝ կճանաչե՞ր տեր աստվածը իր որդուն: Մենք այնպես ենք նրան պճնազարդել: Կամ, ավելի լավ է ասել, մերկացրել ենք: Այժմ նա իսկական անանուխի ծամոն է դարձել, քաղցրավենիք, հյուր, սառնաշաքար, եթե իհարկե, չի զբաղվում որևէ ապրանքի քողարկված ռեկլամով, առանց որի, իբր, չի կարող լուր գնալ հավատացյալը:

— Գիտե՞ք, գրքերից մշկընկույզի կամ էլ անդրծովյան հեռավոր երկրներից բերված համեմունքի հոտ է գալիս: Մանկուց ես սիրում էի հոտոտել գրքերը: Աստվա՛ծ իմ, որքա՞ն հիանալի գրքեր կային, երբ դեռևս մենք մեզ թույլ չէինք տալիս ոչնչացնել դրանք:

Նա թերթում էր էջերը:

— Միստր Մոնթագ, դուք ձեր առջև տեսնում եք վախկոտ մի մարդու: Ես դեռ այն ժամանակ գիտեի, տեսնում էի, թե ուր ենք գլորվում, սակայն լուր էի: Ես անմեղներից մեկն էի, նրանցից, ովքեր կարող էին ձայն բարձրացնել, երբ ոչ ոք արդեն չէր ուզում լսել «մեղապարտներին»: Բայց ես լռեցի և, այդպիսով, հանցակից դարձա: Եվ երբ, վերջապես, նրանք համակվեցին գրքերն այրելու գաղափարով, այդ գործում ներքաշելով հրկիզողներին, ես փոքր-ինչ փնթփնթացի ու հաշտվեցի, որովհետև ոչ ոք չսատարեց ինձ: Իսկ հիմա չափազանց ուշ է:

Ֆաբերը փակեց «Աստվածաշունչը»:

— Այժմ ասացեք՝ ինչո՞ւ եք եկել ինձ մոտ:

— Ես գրուցելու կարիք ունեմ, բայց ոչ ոք չի լսում: Ես չեմ կարող խոսել պատերի հետ, նրանք գոռում են ինձ վրա: Չեմ կարող խոսել կնոջս հետ, նա լսում է միայն պատերին: Ուզում եմ, որ մեկը լսի ինձ: Եթե երկար խոսեմ, ապա հնարավոր է, ինչ-որ խելամիտ բան ասեմ: Եվ հետո ուզում եմ, որ դուք ինձ սովորեցնեք հասկանալ կարդացածս:

Ֆաբերը ակնապիշ նայեց Մոնթագի նիհար, սափրված, կապտաթեթերով դեմքին:

— Ի՞նչն է ձեզ այդպես ցնցել: Ի՞նչն է ձեր ձեռքից ցած գցել հրկիզողի ջահը:

— Չգիտեմ: Մենք ամեն ինչ ունենք երջանիկ լինելու համար, բայց դժբախտ ենք: Ինչ-որ բանում վրիպել ենք: Ես ամենուրեք փնտրել եմ: Իմացածս միակ բանը, որ նախկինում եղել է, իսկ այժմ չկա, գրքերն են, որոնք ես ինքս այրում եմ ահա արդեն տասը-տասներկու տարի: Եվ ես մտածեցի՝ թերևս գրքերն էլ օգնեն ինձ:

— Դուք անհուսալի երազող եք,— ասաց Ֆաբերը:— Այդ ամենը չափազանց թիժաղելի կլիներ, եթե այդքան լուրջ չլիներ: Չեզ ոչ թե գրքեր են հարկավոր, այլ այն, ինչ երբևէ եղել է դրանցում, ինչը կարող էր այժմ էլ լինել մեր հյուրասենյակների ծրագրերում: Մանրամասների նկատմամբ նույնպիսի ուշադրություն և իրազեկություն կարող էր ցուցաբերվել և մեր ռադիո ու հեռուստատեսային հաղորդումներում: Բայց, ավա՛ղ, նրանք այդ չեն անում: Ո՛չ, ո՛չ, գրքերը միանգամից չեն տա ձեր փնտրածը: Պետք է ինքներդ փնտրեք ամենուրեք, հին կինոնկարներում, վաղեմի ընկերների շրջանում: Փնտրեք որտեղ հնարավոր է՝ հին գրամաֆոնային ձայնապնակներում, ձեր շրջակա բնության մեջ, հենց ձեր մեջ: Գրքերը սոսկ մեկն են այն շտեմարաններից, որտեղ կուտակում ենք այն, ինչ վախենում ենք մոռանալ: Նրանց մեջ չկա ոչ մի գաղտնիք, ոչ մի կախարդանք: Կախարդանքը սոսկ այն է, ինչ ասում են գրքերը, այն, թե ինչպես են նրանք հավաքում, մի ամբողջական միասնության մեջ միացնում տիեզերքի տարբեր ծվենները: Իհարկե, դուք չեիք կարող այդ իմանալ: Դուք հավանաբար հիմա էլ լիովին չեք հասկանում, թե ինչի մասին եմ խոսում: Դուք

բնագոյաբար ճիշտ եզրակացության եք հանգել. մեզ պակասում է երեք բան: Առաջինը. գիտե՞ք, արդյոք, ինչո՞ւ են մեզ համար այդքան կարևոր այսպիսի գրքերը: Որովհետև որակ ունեն: Իսկ ի՞նչ է նշանակում որակ: Ինձ համար դա նախ գրքի հյուսվածքն է: Այս գիրքը ծակոտիներ ունի, շնչում է: Դիմագիծ ունի: Կարելի է ուսումնասիրել մանրադիտակով: Եվ դուք նրա մեջ կգտնեք կյանք, եռուն կյանք, որ հորդում է ձեր առջև իր անսպառ բազմազանությամբ: Որքան շատ են ծակոտիները, որքան թղթի քառակուսի դյույմի վրա մեծ է կյանքի տարբեր կողմերի ճշմարտացի արտացոլումը, այնքան ավելի գեղարվեստական է երկը: Ահա որակի իմ սահմանումը: Պատկերել մանրամասները, նոր մանրամասներ: Լավ գրողները սերտ շփման մեջ են կյանքի հետ: Միջակները սոսկ հպանցիկ սահում են մակերեսով: Իսկ վատերը բռնաբարում են այն և թողնում ճանձերին կեր:

— Այժմ հասկանո՞ւմ եք, — շարունակեց Ֆաբերը, — թե ինչու են գրքերն այդպիսի ատելություն հարուցում, ինչու են դրանցից այդպես վախենում: Նրանք մեզ ցույց են տալիս կյանքի դեմքի ծակոտիները: Հարմարավետ կյանք փնտրողները կուզենային իրենց առջև տեսնել մեղրամոմե դալուկ դեմքեր՝ առանց ծակոտիների, մազաթափ ու անարտահայտիչ: Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակում, երբ ծաղիկները ծաղիկներով են ցանկանում սնվել, փոխանակ ներթօն են անձրևի խոնավությունն ու արգավանդ հողի կենսահյութերը: Բայց չէ՛ որ նույնիսկ հրավառությունը, նույնիսկ նրա գույների պերճությունն ու ճոխությունն ստեղծված է երկրի քիմիայով: Իսկ մենք երևակայում էինք՝ իբր կարող ենք ապրել ու աճել, սնվել ծաղիկներով և հրավառություններով, չավարտելով մեզ իրականությանը վերադարձնող բնական շրջափուլը: Ժանո՞թ եք Անթելի առասպելին: Նա հսկա էր, անպարտելի ուժի տեր, քանի դեռ ամուր կանգնած էր հողին: Բայց երբ Հերկուլեսը կտրեց նրան հողից և օդ հանեց, Անթելը հեշտությամբ պարտվեց: Ճիշտ նույնն է և մեզ՝ այժմ քաղաքում ապրողներին համար, եթե ոչ, ապա ես արդեն կատարյալ խելագար եմ: Այսպես, առաջինը, ինչ մեզ պակասում է, որակն է, մեր գիտելիքների հյուսվածքը:

— Իսկ ո՞րն է երկրորդը:

— Ազատ ժամանակը:

— Բայց մենք բավականաչափ ազատ ժամանակ ունենք...

— Ազատ ժամանակ՝ այո՛: Իսկ մտածելու ժամանակ ունենք արդյոք: Ինչի՞ վրա եք վատնում ձեր ազատ ժամանակը: Կա՛մ սլանում եք մեքենայով՝ ժամում հարյուր մղոն արագությամբ, այնպես, որ ուրիշ բանի մասին չի կարելի մտածել, բացի ձեզ սպառնացող վտանգից, կա՛մ ժամանակ եք սպանում՝ ինչ-որ խաղ խաղալով, կա՛մ նստում եք չորսպատանի հեռուստացույց ունեցող սենյակում, իսկ նրանց հետ, արդեն, հո չեք կարող վիճել: Ինչո՞ւ. որովհետև պատերի վրայի պատկերները «իրական» են: Ահա նրանք ձեր առջև են, տեսանելի, ծավալ ունեն, և նրանք ձեզ ասում , ձեր գլուխն են մոցնում, թե ինչ պետք է մտածեք: Դե, ձեզ էլ սկսում է թվալ, որ այն, ինչ նրանք ասում են, ճշմարիտ է: Դուք սկսում եք հավատալ, որ ճշմարիտ է: Այնպես հայձեպ են ձեզ պատրաստի եզրակացություններ հրամցնում, որ ձեր բանականությունը չի հասցնում առարկել. «Ախր այդ ամենը համակ բարբաջանք է»:

— Միայն «ազգականներն» են կենդանի մարդիկ:

— Ներեցեք, ի՞նչ ասացիք:

— Կինս ասում է, որ հեռուստացույցն իրական է, իսկ գրքերը՝ ոչ:

— Եվ փա՛ռք աստծո, որ այդպես է: Դուք կարող եք փակել գիրքը և նրան ասել՝ սպասիր: Դուք նրա տիրակալն եք: Իսկ ո՞վ կարող է կորզել ձեզ կառչուն մագիլներից, որոնք գերի են վերցնում, հենց որ միացնում եք հեռուստատեսային հյուրասենյակը: Նրանք կավի պես կհունցեն ձեզ և իրենց ուզած ձևը կտան: Դա նույնպես «միջավայր» է, նույնքան իրական, որքան աշխարհը: Այն դառնում է իսկություն, այն հենց ճշմարտությունն է: Գրքերին կարելի է հաղթել բանականության ուժով: Բայց իմ ողջ գիտելիքներով ու կասկածամտությամբ հանդերձ, ես երբեք իմ մեջ ուժ չեմ գտել՝ վեճի մեջ մտնելու հարյուր գործիքներից բաղկացած սիմֆոնիկ նվագախմբի հետ, որը ոռնում է ինձ վրա մեր իրեշավոր հյուրասենյակների գունավոր և տարածական էկրաններից: Տեսնո՞ւմ եք, իմ հյուրասենյակը՝ չորս սովորական սվաղած պատեր են: Իսկ սրանք, — Ֆաբերը ցույց տվեց երկու փոքրիկ ռետինե կոճակ-

ներ,— սրանք էլ նրա համար են, որ ականջներս խցանեմ մետրոլով երթնեկեկիս:

— «Ռենըմ» ատամի մաժուկ... «Ո՛չ ջանք է թափում և ոչ հլուսում է»,— շշնջաց Մոնթագը՝ աչքերը փակելով:— Այո: Բայց ի՞նչ կպատահի հետո: Գրքերը կօգնե՞ն մեզ:

— Միայն այն դեպքում, եթե ապահովվի երրորդ անհրաժեշտ պայմանը: Առաջինը, ինչպես արդեն ասացի, մեր գիտելիքների որակն է: Երկրորդը՝ ազատ ժամանակը, որպեսզի կարողանանք խորհրդածել, յուրացնել այդ գիտելիքները: Իսկ երրորդն այն է, որ իրավունք ունենանք գործել այն ամենի հիման վրա, ինչ մենք քաղել ենք առաջին երկու պայմանների փոխազդեցությունից: Բայց կասկածելի է, որ մի զառամյալ ծերուկ ու մի հիասթափված հրկիզող կարողանան ինչ-որ բան փոխել այժմ, երբ գործն այսքան բարդացել է...

— Ես կարող եմ գրքեր ձեռք բերել:

— Ղուբ ձեզ վտանգի եք ենթարկում:

— Գիտե՞ք, մահապարտն էլ իր առավելություններն ունի: Երբ այլևս կորցնելու ոչինչ չկա, վտանգից չես վախենում:

— Հիմա դուք շատ հետաքրքիր միտք հայտնեցիք,— ծիծաղեց Ֆաբերը,— որը ոչ մի տեղ չեք կարդացել:

— Իսկ մի՞թե գրքերում գրում են այդ մասին: Ղա այնպես, հանկարծ, չգիտեմ ինչու, գլուխս եկավ:

— Ավելի լավ: Ուրեմն՝ դուք դա չմոգոնեցիք ո՛չ ինձ համար, ո՛չ մեկ ուրիշի, առավել ևս՝ ոչ էլ ձեզ համար:

Մոնթագը թեքվեց Ֆաբերի կողմը:

— Այսօր ահա թե ինչ մտածեցի: Եթե գրքերն իրոք այդպես արժեքավոր են, արդյոք չի՞ կարելի ճարել տպագրական հաստոց և տպել մի քանի օրինակ... Մենք կարող էինք...

— Մե՞նք:

— Այո, դուք և ես:

— Այդ արդեն չեղա՛վ,— Ֆաբերը կտրուկ շտկվեց:

— Գոնե թույլ տվեք՝ շարադրեմ իմ ծրագիրը...

— Եթե շարունակեք պնդել, ես կխնդրեմ, որ հեռանաք իմ տնից:

— Մի՞թե ձեզ չի հետաքրքրում:

— Ո՛չ, ինձ չեն հետաքրքրում այնպիսի խոսակցությունները, որոնց պատճառով կարող են այրել: Այլ խնդիր է, եթե

հնարավոր լինել ոչնչացնել հրկիզողների բուն համակարգը: Այ, եթե դուք առաջարկեիք տպել մի քանի գիրք և երկրով մեկ թաքցնել հրկիզողների տներում, այնպես որ կասկածի սերմերը ցանեիք իրենց՝ հրկիզողների շրջանում, ես կասեի՝ կեցցե՛ք:

— Գաղտնաբար ներս գցել գրքերը, ահազանգել և նայել, թե ինչպես են հրո ճարակ դառնում հրկիզողների տները: Ա՛յո էիք ուզում ասել:

Ճաբերը հոնքերը կիտեց և նայեց Մոնթագին, ասես առաջին անգամ էր տեսնում:

— Ես կատակում էի:

— Կարծում եք՝ խելացի՞ ծրագիր է: Արժե՞ փորձել: Սակայն ես պետք է հաստատ իմանամ, որ դա ինչ-որ բան տեղից կշարժի:

— Ոչ ոք չի կարող երաշխավորել: Ձե՛ որ մի ժամանակ գրքեր մեզ մոտ որքան ուզեք կային, իսկ մենք համառորեն գրադված էինք մի բանով՝ փնտրում էինք ամենագահավեժ ժայռը, որպեսզի այնտեղից ցած թռչենք: Ստույգ է միայն մի բան՝ այո՛, մեզ անհրաժեշտ է լիաթոք ջնջել: Այո՛, մեզ գիտելիքներ են պետք: Եվ, թերևս, շուրջ հազար տարի հետո, մենք կսովորենք թռիչքների համար ընտրել ավելի փոքր ժայռեր: Ձե՞ որ գրքերը գոյություն ունեն, որպեսզի հիշեցնեն մեզ, թե ինչպիսի՛ բթամիտ ու համառ ավանակներ ենք մենք: Ռբանք նման են Կեսարի վարձու պահախմբին, որը նրա հաղթարշավի ժամանակ շնջաց. «Հիշի՛ր, Կեսա՛ր, դու ևս մահկանացու ես»: Մեզնից շատերը չեն կարող ամեն տեղ լինել, բոլորի հետ խոսել, այցելել աշխարհի բոլոր քաղաքները: Մենք չունենք ո՛չ ժամանակ, ո՛չ դրամ, ո՛չ էլ այդքան շատ ընկերներ: Այն ամենը, ինչ դուք փնտրում եք, Մոնթագ, գոյություն ունի աշխարհում, բայց հասարակ մարդը թերևս սեփական աչքերով կարողանա տեսնել միայն մեկ հարյուրերորդը, իսկ մնացած իննսունինը տոկոսը նա ճանաչում է գրքերի միջոցով: Երաշխիք մի՛ պահանջեք: Եվ մի՛ սպասեք փրկություն ինչ-որ մեկից՝ լինի մարդուց, մեքենայից թե գրադարանից: Ինքնե՛րդ ստեղծեք այն, ինչը կարող է փրկել աշխարհը, և եթե խեղդվեք ճանապարհին, ապա գոնե կիմանաք, որ լողում էիք դեպի ափը:

Ճաբերը ոտքի ելավ և սկսեց քայլել սենյակում:

— Ինչպե՞ս վարվենք, — հարցրեց Մոնթագը:

— Ղուբ լո՞ւրջ էիք ասում հրկիզողների մասին:

— Բացարձակապես:

— Նենգ ծրագիր է, խոսք չկա, — Ֆաբերը ջղային խեթեց դեպի ննջարանի դուռը: — Տեսնել, թե ողջ երկրում ինչպես են բռցավառվում հրկիզողների տները, կործանվում դավաճանության այդ օջախները: Սալամանդրը լափում է սեփական պոչը: Օ՛հ, հիանալի՛ է:

— Ես գիտեմ բոլոր հրկիզողների հասցեները: Սրե՛ մենք ունենայինք որևէ ընդհատակյա...

— Մարդկանց չի կարելի վստահել, այդ է սարսափելին: Ղուբ, մեկ էլ ես, ուրիշ էլ ո՞վ կնետվի կրակը:

— Մի՞թե չեն մնացել այնպիսի պրոֆեսորներ, ինչպիսին դուք եք: Նախկին գրողներ, պատմաբաններ, լեզվաբաններ...

— Մեռել են կամ արդեն շատ ծեր են:

— Որքան ծեր, այնքան լավ: Ավելի քիչ կասկած կհարուցեն: Ղուբ հո ճանաչում եք այդպիսիներին և, հավանաբար, տասնյակներով: Խոստովանեք:

— Այո, թերևս: Կան, օրինակ, բազմաթիվ դերասաններ, որոնք արդեն երկար տարիներ առիթ չեն ունեցել խաղալու Պիրանդելոյի, Շոուի կամ Շեքսպիրի գործերը, քանի որ նրանց պիեսները չափազանց հավաստի են արտացոլում կյանքը: Մենք կարող ենք օգտագործել նրանց զայրույթը: Եվ ազնիվ վրդովմունքը այն պատմաբանների, ովքեր վերջին քառասուն տարում ոչ մի տող չեն գրել: Ծժմարիտ է, մենք կարող էինք դըպրոց հիմնել և նորից սովորեցնել կարդալ ու մտածել:

— Այո՛:

— Բայց այդ ամենը կաթիլ է ծովի մեջ: Մեր ողջ մշակույթը մեռած է: Նրա բուն հենքը պետք է հալել և նոր կաղապար ձուլել: Իսկ դա այնքան էլ դյուրին չէ: Ձե՛ որ բանը սոսկ այն չէ, որ կրկին ձեռքդ վերցնես կես դար առաջ մի կողմ դրածո գիրքը: Հիշեցե՞ք, որ հրկիզողների կարիքը հազվադեպ է զգացվում: Մարդիկ ինքնակամ այլևս գիրք չեն կարդում: Այժմ դուք՝ հրկիզողներդ, մեզ համար կրկեսային ներկայացումներ եք կազմակերպում. տներ եք վառում, զվարճացնում ամբոխին: Բայց դա այնպես՝ միջանկյալ համար է, և ոչ թե հիմնականը: Մեր օրերում շատ քիչ են խոռվության սիրահարները: Իսկ այդ քչերի մեծ մասին հեշտ է ահաբեկել: Ինչ-

պես, օրինակ, ինձ: Դուք կարո՞ղ եք ավելի արագ պարել, քան Սպիտակ ծաղրածուն, կամ գոռալ ավելի բարձր, քան ինքը՝ Գլխավոր հեռուստաաճյարարը և բոլոր «ազգականները»: Եթե կարող եք, ապա, թերևս, կհարթեք ձեր ճանապարհը: Իսկ ընդհանրապես, Մոնթագ, իհարկե, դուք հիմար եք: Չէ՛ որ մարդիկ իրոք զվարճանում են:

— Վերջացնելով կյանքը ինքնասպանությամբ: Միմյանց սպանելով:

Մինչ նրանք խոսում էին, տան վրայով դեպի արևելք էին սլանում ոմբակոծիչները: Միայն հիմա նրանք նկատեցին այդ ու լոեցին՝ ականջ դնելով հրթիռային շարժիչների հզոր աղմուկին, զգալով, թե ինչպես է ամեն ինչ իրենց հոգում տակնուվրա լինում:

— Համբերեք, Մոնթագ: Ա՛յ, պատերազմ կսկսվի, և մեր հյուրասենյակներն իրենք իրենց կլռեն: Մեր քաղաքակրթությունը միտում է կործանման: Մի կողմ քաշվեք, որպեսզի անիվը չձգմի ձեզ:

— Բայց չէ՛ որ մեկը պետք է պատրաստ լինի կառուցելու, երբ ամեն ինչ փլվի:

— Իսկ ո՞վ: Նրա՞նք, ովքեր ընդունակ են բերանացի մեքերել Միլթընին: Ովքեր կարող են ասել. «Իսկ ես դեռ հիշում եմ Սոֆոկլեսին»: Եվ ի՞նչ պետք է անեն նրանք: Հիշեցնեն փրկվածներին, որ մարդը ունի նաև լա՞վ կողմեր: Այդ փրկվածները սոսկ այն մասին կմտածեն, թե ինչպես քարեր հավաքեն ու շարտեն իրար վրա: Գնացեք տուն, Մոնթագ: Պառկեք քնելու: Ինչո՞ւ վատնեք ձեր վերջին ժամերը, որպեսզի անպտուղ դոփեք տեղում և համոզեք ձեզ, թե իբր շարժվո՞ւմ եք:

— Ուրեմն, ձեզ համար այլևս միևնու՞յն է:

— Ո՛չ, միևնույն չէ: Այնքան միևնույն չէ, որ կարելի է ասել՝ այդ մտքից հիվանդ եմ:

— Եվ դուք չե՞ք ուզում օգնել ինձ:

— Բարի գիշեր: Բարի գիշեր:

Մոնթագի ձեռքերը պարզվեցին դեպի «Աստվածաշունչը»: Նա ինքը զարմացավ, թե հանկարծ ինչ արեցին իր ձեռքերը:

— Կուզենայի՞ք ձեր սեփականը լինեք:

— Աջ ձեռքս կտալի դրա համար, — ասաց Ֆաբերը:

Մոնթագը կանգնել և սպասում էր, թե հետո ինչ են անելու

իր ձեռքերը: Եվ նրանք, անկախ իր կամքից ու ցանկությունից, ասես նույն ձգտումով համակված երկու կենդանի էակներ, սկսեցին պոկոտել էջերը: Պոկեցին անվանաթերթը, առաջին էջը, երկրորդը:

— Խելագար: Այդ ի՞նչ եք անում,— Ֆաբերը վեր ցատկեց, ասես մեկը հարվածեց նրան: Նետվեց Մոնթագի վրա, բայց նա մի կողմ հրեց: Մոնթագի ձեռքերը շարունակում էին պատռել գիրքը: Վեց էջ ևս ընկան հատակին: Մոնթագը վերցրեց դրանք և Ֆաբերի աչքի առաջ ծմրեց ձեռքի մեջ:

— Պետք չէ, խնդրում եմ, պետք չէ,— բացականչեց թերուկը:

— Իսկ ո՞վ է խանգարում ինձ: Ես հրկիզող եմ: Կարող եմ այրել ձեզ:

Թերուկը նայեց նրան:

— Դուք այդ չեք անի:

— Կարող եմ, եթե կամենամ:

— Այդ գիրքը... մի՛ պատռեք:

Ֆաբերը փլվեց աթոռին: Նրա դեմքը ճերմակել էր կտավի նման, շրթունքները դողում էին:

— Հոգնեցի: Մի՛ տանջեք ինձ: Ի՞նչ եք ուզում:

— Ուզում եմ, որ դուք սովորեցնեք ինձ:

— Շատ լավ: Շատ լավ:

Մոնթագը ցած դրեց գիրքը: Նա սկսեց հարթել ճմրթված էջերը: Թերուկը ուժասպառ հետևում էր նրան:

Գլուխը թափ տալով, ասես իրենից վանելով թմրությունը, Ֆաբերը հարցրեց.

— Դուք փո՞ղ ունե՞ք, Մոնթագ:

— Ունեմ: Մի քիչ: Չորս կամ հինգ հարյուր դոլար: Ինչո՞ւ եք հարցնում:

— Կբերեք ինձ: Ես ծանաչում եմ մի մարդու, որը կես դար առաջ տպագրում էր մեր քուլտչի թերթը: Դա հենց այն տարին էր, երբ նոր կիսամյակի սկզբում մտա լսարան, և պարզվեց, որ դրամայի պատմության դասընթացի դասախոսություններին, որն ընդգրկում էր էսքիլեսից մինչև Յուլիան Օ՛Նիլ, ցուցակագրվել էր ընդամենը մեկ ուսանող: Հասկանո՞ւմ եք, կարծես թե սառցե գեղեցիկ արձանը հալվում էր արևի ճառագայթների տակ: Հիշում եմ՝ մեկը մյուսի ետևից մեռնում էին լրա-

գրերը, ինչպես կրակի մեջ ընկած թիթեռներ: Ոչ ոք չէր փորձում հարություն տալ: Ոչ ոք չէր ափսոսում: Եվ այդ ժամանակ, հասկանալով, թե որքան ձեռնառու կլինի, եթե մարդիկ սկսեն կարդալ միայն կրթոտ համբույրների և դաժան, թեթևաբան մասին, կառավարությունը ամփոփեց արդյունքները, կանչելով ձեզ՝ կրակ կու տվողներիդ: Այնպես որ, Մոնթագ, մենք ունենք գործազուրկ տպագրիչ: Կարող ենք տպագրել մի քանի գիրք և սպասել մինչև սկսվի կոիվը, որը կկործանի իրերի ներկա կարգը և մեզ անհրաժեշտ լիցք կտա: Մի քանի ռումբ, և այդ բոլոր «ազգականները», որոնք բնակություն են հաստատել հյուրասենյակների պատերին, խեղկատակային այդ ոհմակը կլռի մշտապես: Եվ հաստատված լռության մեջ գուցե լսելի լինի մեր շշուկը:

Երկուսն էլ կանգնած սնեռուն նայում էին սեղանի վրայի գրքին:

— Ես փորձել եմ հիշել, — ասաց Մոնթագը: — Բայց, գրողը տանի, հերիք է՝ աչքս թեքեմ և ամեն ինչ իսկույն մոռանում եմ: Աստված իմ, որքան եմ ցանկանում խոսել հրկիզապետ Բիթիի հետ: Նա շատ է կարդացել, նա ամեն ինչին պատասխան ունի կամ էլ, ծայրահեղ դեպքում, այդպես է թվում: Նրա խոսքը հալած լուրի տեղ ես ընդունում: Վախենում եմ՝ նա ինձ համոզի, և ես կրկին դառնամ առաջվանը: Չէ՛ որ ընդամենը մեկ շաբաթ առաջ էր, որ փողոակը նավթով լցնելիս մտածում էի, թե ի՞նչ հիանալի աշխատանք է:

Թերուկը գլխով արեց.

— Ով չի կառուցում, նա պետք է ավերի: Սա հին է, ինչպես աշխարհը: Անչափահաս հանցագործների հոգեբանություն:

— Ահա թե, ուրեմն, ով եմ ես:

— Մեզնից ամեն մեկի մեջ դա կա:

Մոնթագը մի քանի քայլ արեց դեպի ելքը:

— Ռուք չե՞ք կարող որևէ կերպ օգնել ինձ, երբ այսօր երեկոյան խոսելու լինեմ հրկիզապետ Բիթիի հետ: Ինձ հովանոց է հարկավոր, որ չխեղդվեմ, եթե նա կրկին ինձ վրա թափի իր ծառերի հեղեղը:

Թերուկը ոչինչ չասաց և նորից անհանգիստ հայացք նետեց ննջարանի դռանը: Մոնթագը որսաց նրա հայացքը:

— Ղե, ինչպե՞ս:

Ծերուկը խոր շունչ քաշեց: Փակեց աչքերը և ամուր սեղմելով շրթունքները՝ մի անգամ էլ դժվարությամբ շունչ արավ: Նրա շուրթերից պոկվեց Մոնթազի անունը:

Շրջվելով Մոնթազի կողմը՝ վերջապես ասաց.

— Գնանք: Քիչ էր մնում թողնեի, որ հեռանաք: Իրոք որ ես վախկոտ, ծեր հիմար եմ:

Ֆաբերը բացեց ննջարանի դուռը: Նրա ետևից Մոնթազը մտավ մի փոքրիկ սենյակ, ուր դրված էր սեղան, որի վրա խառնիխուռն թափված էին գործիքներ, մազի պես բարակ մետաղալարի կծիկներ, պատլիկ զսպանակներ, կոճեր, բյուրեղիկներ:

— Սա ի՞նչ է, — հարցրեց Մոնթազը:

— Իմ ահավոր վախկոտության վկայությունը: Երկար տարիներ ես միայնակ եմ ապրել այս պատերի մեջ, մեն-մենակ՝ իմ մտքերի հետ: Էլեկտրական սարքերի և ռադիոընդունիչների վրա բզբզալը դարձել է իմ կիրքը: Հենց իմ երկչոտությունը և միաժամանակ մեջս նիրհող խոռվարար ոգին մղեցին ինձ՝ նախագծելու ահա այս սարքը:

Նա սեղանից վերցրեց 22 մմ տրամաչափի գնդակ հիշեցնող մի կանաչավուն մետաղե առարկա:

— Որտեղի՞ց եմ միջոցներ հայթայթել սրա համար: Հասկանալի է՝ խաղում էի բորսայում: Չէ՛ որ դա վտանգավոր մտածողության տեր գործազուրկ մտավորականների վերջին ապաստանն է: Խաղում էի բորսայում, աշխատում այս գյուտի վրա և սպասում: Կյանքիս կեսը սպանեցի վախից դողալով, միջտ սպասում էի, որ ինչ-որ մեկը խոսքի կբռնվի ինձ հետ: Ինքս չէի համարձակվում որևէ մեկի հետ խոսակցություն սկսել: Երբ մենք միասին նստել էինք զբոսայգում և զրուցում էինք, — հիշո՞ւմ եք, — արդեն գիտեի, որ մի օր դուք կգաք ինձ մոտ, բայց հրկիզողի ջահո՞վ արդյոք, թե՞ բարեկամական ձեռք մեկնելու համար՝ նախապես չէի կարող ասել: Իսկ այս փոքրիկ գործիքը դրանից մի քանի ամիս առաջ արդեն պատրաստ էր: Համենայն դեպս, քիչ էր մնում թողնեի ձեզ, որ գնաք: Ահա թե ինչ վախկոտն եմ ես:

— Ծատ նման է խեցի ռադիոընդունիչին:

— Բայց սա ավելին է, քան ընդունիչը: Իմ սարքը լսում

Է: Եթե դուք այս փոքրիկ գնդիկը դնեք ձեր ականջի մեջ, Մոնթագ, ես կարող եմ հանգիստ նստել տանը, տաքացնել իմ վախվորած ծեր ոսկորները, և միաժամանակ լսել ու վերլուծել հրկիզողների աշխարհը, երևան հանել նրա թույլ կողմերը, դուզն իսկ չվտանգելով ինձ: Ես կլինեմ իր փեթակում ապահով նստած մայր մեղվի պես: Իսկ դուք կլինեք աշխատավոր մեղուն՝ իմ ճամփորդող ականջով: Ես կարող եմ ականջներ ունենալ քաղաքի բոլոր ծայրերում, ամենատարբեր մարդկանց շրջանում: Ես կարող եմ լսել ու եզրակացություններ անել: Եթե մեղուները կործանվեն, դա ինձ չի վերաբերի, առաջվա պես ես կլինեմ իմ տանը, անվտանգ, կվերապրեմ իմ վախը առավելագույն հարմարավետությամբ և նվազագույն վտանգով: Այժմ տեսնո՞ւմ եք, թե որքա՞ն զգուշավոր եմ այս խաղում և որքա՞ն արհամարհելի:

Մոնթագը կանաչ գնդիկը մտցրեց ականջը: Ծերուկը ևս իր ականջը մտցրեց նույնպիսի փոքրիկ մետաղյա առարկա և շրթունքները շարժեց.

— Մո՛նթագ:

Զայնը հնչեց Մոնթագի ուղեղի խորքում:

— Ես ձեզ լսում եմ:

Ծերուկը ծիծաղեց:

— Ես էլ ձեզ եմ լավ լսում, — Ֆաբերը խոսում էր շշուկով, բայց նրա ձայնը հստակորեն հնչում էր Մոնթագի գլխում:

— Ժամանակին գնացեք հրակայան: Ես ձեզ հետ կլինեմ: Մենք միասին կլսենք ձեր հրկիզապետին: Թերևս նա մեզնից մեկն է, աստված գիտե: Ես ձեզ կհուշեմ՝ ինչ ասեք: Մենք նրան լավ դաս կտանք: Ասացե՛ք, դուք ատո՞ւմ եք ինձ այս էլեկտրոնային սարքի համար, չէ՞: Ես վոնդում եմ ձեզ փողոց, խավարի մեջ, իսկ ինքս մնում եմ ճակատի գծից հեռու, իմ ականջները պետք է լսեն, իսկ գուցե դրա համար ձեր գլուխը թոցնեն:

— Ամեն մեկս անում է այն, ինչ կարող է, — պատասխանեց Մոնթագը: Նա «Աստվածաշունչը» դրեց ծերուկի ձեռքերի մեջ: — Վերցրեք: Կփորձեմ փոխարենը ուրիշ բան հանձնել:

— Վաղը ևեթ ես կհանդիպեմ գործազուրկ տպագրիչին: Գոնե այդ կարող եմ անել:

— Բարի գիշեր, պրոֆեսո՛ր:

— Ո՛չ, այս գիշերը բարի չի լինի: Բայց ես ամբողջ ժամանակ ձեզ հետ կլինեմ: Աներես մոծակի պես պետք է բզզամ ձեր ականջին, հենց որ իմ կարիքն զգաք: Եվ համենայն դեպքս, աստված տա, բարի լինի այս գիշերը ձեզ համար, Մոնթազ: Հաջողություն եմ մաղթում:

Դուռը բացվեց և իսկույն էլ փակվեց: Մոնթազը հայտնվեց խավար փողոցում, կրկին մեն-մենակ աշխարհի դեմ:

Այդ գիշեր նույնիսկ երկինքն էր պատրաստվում պատերազմի: Նրա վրայով քուլա-քուլա ամպեր էին շարժվում, որոնց արանքներից, ինչպես թշնամական դետքեր, միլիոնավոր աստղեր էին փայլում: Երկինքն ասես պատրաստվում էր փլվել քաղաքի վրա և այն վերածել ձերմակ կավձափոշու: Արևաներկ հրացուլքով ծագում էր լուսինը: Ահա այդպիսի գիշեր էր:

Մոնթազը քայլեց մինչև մետրոյի կայարանը. գումարը գջրպանում էր (նա արդեն եղել էր դրամատանը, որը բաց է ողջ գիշերը. սպասարկում են մեխանիկական ոտքոտները), նա քայլում էր, և երբ ռադիոխեցին դրեց ականջին, լսեց.

— Զորակոչվել է մեկ միլիոն մարդ: Եթե պատերազմ սկսվի, արագ հաղթանակն ապահովված է...— Հանկարծակի խուժած երաժշտությունը խլացրեց հաղորդավարի ձայնը, և նա լռեց:

— Զորակոչվել է տասը միլիոն,— շշնջաց Ֆաբերի ձայնը նրա մյուս ականջին:— Բայց ասում են՝ մեկ միլիոն: Այդպես ավելի հանգիստ է:

— Ֆա՛բեր:

— Այո՛:

— Ես չեմ մտածում, միայն կատարում եմ այն, ինչ հրամայված է: Ինչպես վարվել եմ միշտ: Դուք ասացիք՝ հարկսովոր է փող ձեռք բերել, ես հայթայթել եմ: Բայց իրականում այդ մասին ինքս չմտածեցի: Ուրեմն ե՛րբ եմ սկսելու մտածել և գործել ինքնուրույն:

— Դուք արդեն սկսել էիք, երբ այդ ասացիք: Բայց սկսում ստիպված եք ապավինել ինձ:

— Ես նրանց էլ էի վստահում:

— Այո՛, և տեսնում եք՝ ուր հասաք: Մի առժամանակ դուք

սէտք է կոյրի պես խարխափեք: Ահա ձեզ իմ ձեռքը, հեն-
վեցեք:

— Անցնել մյուս կողմը և կրկին գործել թելադրանքով:
Ո՛չ, ես այդպես չեմ ուզում: Էլ ի՞նչ միտք ունի ձեզ ապավի-
նելը:

— Ձեր աչքերն արդեն բացվում են, Մոնթազ:

Մոնթազն զգաց, թե ինչպես ոտքերը ծանոթ մայթով շարժ-
վում են իր տան կողմը:

— Ծարունակեք, պրոֆեսոր:

— Ուզո՞ւմ եք ձեզ համար կարդամ: Կջանամ կարդալ այն-
պես, որ դուք բոլորը հիշեք: Օրական քնում եմ ընդամենը
հինգ ժամ: Ազատ ժամանակ շատ ունեմ: Եթե ուզում եք, ամեն
երեկո կկարդամ, մինչև կքնեք: Ասում են, թե քնած մարդու
ուղեղը ամեն ինչ մտապահում է, եթե ցածրաձայն շշնջաս նշա
ականջին:

— Այո՛:

— Դե, ուրեմն, լսեք:— Հեռվում, քաղաքի մյուս ծայրում,
մեղմ շրջացին թերթվող էջերը:— Հոբի գիրքը:

Լուսինը դուրս եկավ: Անձայն շարժելով շուրթերը՝ Մոն-
թազը քայլում էր մայթով:

Երեկոյան իննին, երբ նա վերջացնում էր իր թեթև ընթ-
րիքը, շքամուտքի խոսափողը ազդարարեց հյուրերի գալուս-
տը: Միլորեդը նետվեց նախասենյակ՝ այն մարդու աճապա-
րանքով, որը փրկվել էր հրաբխի ժայթքումից: Ներս մտան
միսիս Ֆելիսը և միսիս Բաուզը, և հյուրասենյակը կուլ տվեց
Նրանց, ինչպես կրակե խառնարան: Տիկիների ձեռքերին
մարտինիի շշեր կային: Մոնթազն ընդհատեց ուտելը: Այդ կա-
նաք նման էին բյուրեղապակե հազարավոր զնգզնգացող կա-
խազարդերով անձոռնի ջահերի: Նույնիսկ պատի միջով նա
տեսնում էր Նրանց սառած անմիտ ժպիտները: Նրանք ճիչ
ու աղմուկով ողջունեցին իրար՝ ջանալով խլացնել հյուրա-
սենյակի ժխորը:

Կուլ տալով պատառը՝ Մոնթազը կանգ առավ դռների մեջ:

— Դուք հիանալի տեսք ունեք:

— Հիանալի՛:

— Զո տեսքը շատ շքեղ է, Մի՛լի:

— Ծքե՛ղ:

— Բոլորը հոյակապ տեսք ունեն:

— Հոյակա՛պ:

Մոնթազը լռելյայն հետևում էր նրանց:

— Հանգիստ, Մոնթազ, — նրա ականջին շշնջաց Ֆաբերը:

— Անտեղի ուշացա, — գրեթե ինքն իրեն ասաց Մոնթազը: — Վաղուց արդեն պետք է գալի ձեզ մոտ, դրամը բերեի:

— Վաղն էլ ուշ չի լինի: Զգույշ եղեք, Մոնթազ:

— Հրաշալի ներկայացում է, չէ՞, — բացականչեց Միլդրեդը:

— Հրաշալի՛ է:

Հեռուստատեսային երեք պատերից մեկի վրա ինչ-որ կին նարնջի հյուր էր խմում և միաժամանակ շլացուցիչ ժպտում:

«Այդ ինչպե՛ս է նա համատեղում երկուսն էլ», — մտածեց Մոնթազը՝ ատելություն զգալով ժպտացող տիկնոջ նկատմամբ:

Մյուս պատին ունտգենյան ծառագայթների միջոցով ցուցադրվում էր, թե նարնջի հյուրը ի՞նչ ճանապարհ է անցնում այդ տիկնոջ կերակրափողով՝ մինչև նրա հիացմունքից թրթռուացող ստամոքսը: Հանկարծ տեղից պոկվեց և ամպերի մեջ մխրձվեց հրթիռային ինքնաթիռը՝ թևերին առած հյուրասենյակը, ապա ընկղմվեց գորշականաչավուն ծովի ջրերի մեջ, որտեղ կապույտ ձկները խժոժում էին կարմիր և դեղին ձկներին: Իսկ մեկ րոպե անց երեք ձերմակ մուլտիպլիկացիոն ծաղրածուներ արդեն կտրում էին մեկմեկու ձեռքերն ու ոտքերը՝ հավանության քրքիջի պողթևումներով: Եվս երկու րոպե, և պատերը հանդիսատեսներին տեղափոխեցին քաղաքից դուրս, որտեղ կատաղի արագությանը սլանում էին հրթիռային ավտոմեքենաները՝ բախվելով և գլորելով իրար: Մոնթազը տեսավ, թե ինչպես օդ թռան մի քանի մարդկային մարմիններ:

— Մի՛լի, դու տեսա՞ր:

— Տեսա, տեսա՛:

Մոնթազը ձեռքը խոթեց պատի խոռոչը և պտտեց կենտրոնական անջատիչը: Պատերի վրայի պատկերները մարեցին, ասես ինչ-որ մեկը անակնկալ բաց թողեց ապակե վիթխարի ակվարիումի ջուրը, որտեղ դետուդեն էին նետվում խենթացած ձկները:

Երեք կանայք էլ շրջվեցին և անսքող դժգոհությամբ ու անբարյացակամությամբ նայեցին Մոնթազին:

— Ի՞նչ եք կարծում, ե՞րբ կսկսվի պատերազմը,— հարցրեց նա:— Տեսնում եմ՝ այսօր եկել եք առանց ամուսինների:

— Օ՛, նրանք մեկ գալիս են, մեկ գնում,— ասաց միսիս Ֆելիսը,— իրենց տեղը չեն գտնում... Փիթին երեկ զորակոչեցին: Կվերադառնա եկող շաբաթ: Այդպես էին ասել: Կարձատև պատերազմ: Զառասունութ ժամից բոլորը տանը կլինեն: Այդպես էին ասել բանակում: Կարձատև պատերազմ: Փիթին երեկ զորակոչեցին և ասացին, որ մեկ շաբաթ հետո տանը կլինի: Կարձատև...

Երեք կանայք անհանգիստ շարժվում էին աթոռների վրա՝ նյարդայնացած նայելով դատարկ, սևագորշ պատերին:

— Ես չեմ անհանգստանում,— ասաց միսիս Ֆելիսը:— Թող Փիթն անհանգստանա,— քրքջաց նա:— Ես չեմ էլ մտածում: Բոլորովին էլ չեմ հուզվում:

— Այո, այո՛,— ծայրակցեց Միլլին,— թող Փիթն ինքը անհանգստանա:

— Միշտ ուրիշների ամուսիններին են սպանում: Այդպես են ասում:

— Այո՛, ես էլ եմ լսել: Չգիտեմ որևէ մեկին, որ կոչվում զոհված լինի: Զոհվում են ուրիշ կերպ: Օրինակ՝ ցած են նետվում բարձրահարկ շենքերից: Ինչպես՝ անցած շաբաթ Գլորիայի ամուսինը: Այդպես պատահում է: Բայց պատերազմում՝ երբեք:

— Այո՛, պատերազմում՝ երբեք,— համաձայնեց միսիս Ֆելիսը:— Ամեն դեպքում Փիթը և ես միշտ խոսում ենք առանց արցունքի ու այլ ավելորդ զգայնությունների: Սա իմ երրորդ ամուսնությունն է, Փիթն էլ երրորդ անգամ է ամուսնացել, և մենք միանգամայն անկախ ենք: Պետք է անկախ լինել, միշտ էլ այդպես ենք կարծել: Փիթն ասաց, որ եթե իրեն սպանեն, ես լաց չլինեմ, կրկին շուտափոյթ ամուսնանամ և չմտածեմ իր մասին:

— Ի դեպ, հիշեցի,— բացականչեց Միլլրեդը:— Երեկ ձեր պատերին դուք նայեցի՞ք Կլարա Ռոուլի հինգրոպեանոց սիրավեպը: Ռա մի կնոջ մասին էր, որը...

Սոնթազը լուռ գնում էր կանանց դեմքերը, ինչպես մի անգամ երեխա ժամանակ գննել էր սրբապատկերները ինչ-որ

փոքրիկ այլադավան եկեղեցում, որտեղ պատահմամբ ընկել էր: Այդ տարօրինակ եակների արժնափայլ դիմապատկերները մնացին նրան խորթ ու անըմբռնելի, թեպետև աղոթք ուղղեց նրանց, երբ երկար կանգնած եկեղեցում, ջանում էր համակվել օտար հավատով՝ շնչելով խնկի ու ինչ-որ առանձնահատուկ, միայն այդ տեղին բնորոշ փոշու հոտը: Նա մտածում էր, որ եթե այդ բույրերը լցվեն իր թոքերը, թափանցեն իր արյան մեջ, ապա, գուցե և, հասկանալի դառնան այդ սրտաշարժ, գունագեղ կերպարանքները՝ ճենապակյա աչքերով և վառ սուտակագույն շուրթերով: Բայց ոչինչ չէր ստացվում, ոչինչ: Դա նույնն էր, ինչպես եթե նա մտներ մի կրպակ, որտեղ շրջանառության մեջ այլ դրամ էր, և ինքը ոչինչ չկարողանար գնել իր ունեցածով: Նա անհաղորդ մնաց նույնիսկ սրբերին հպվելուց հետո. պարզապես փայտ էր, ծեփ, կավ: Ծիշտ այդպես էր զգում իրեն և այժմ, իր սեփական հյուրասենյակում՝ նայելով աթոռների վրա անհանգիստ շարժվող երեք կանանց: Նրանք ծխում էին, ծխի քուլաներ էին բաց թողնում, հարդարում իրենց վառ մազերը, զննում վառ կարմիր եղունգները, որոնք ասես բոցավառվել էին Մոնթազի սևեռուն հայացքից: Լուսությունը ծնշում էր կանանց, նրանց դեմքերին ձանձրույթ կար: Երբ Մոնթազը վերջապես կուլ տվեց վերջին պատառը, կանայք ակամայից մի փոքր առաջ թեքվեցին: Նրանք սպասողաբար ականջ էին դնում նրա տենդագին շնչառությանը: Հյուրասենյակի երեք դատարկ պատերն այժմ նման էին ծանր, աներազ քնի մեջ ընկղմված հսկաների գունատ ճակատների: Մոնթազին թվաց, որ եթե ձեռք տա, մատներին կմնա աղահամ քրտինքը: Հետըզհետե ավելի պարզորոշ էր երևում քրտինքը այդ մեռյալ ճակատներին, ավելի լարված էր դառնում լուսությունը, ավելի շոշափելի՝ դողը օդում և անհամբերությունից այրվող կանանց Ֆարմիններում: Թվում էր՝ ևս մեկ րոպե, և նրանք բարձրաձայն թշալով կպայթեն:

Մոնթազի շուրթերը շարժվեցին:

— Եկեք գրուցենք:

Կանայք ցնցվեցին և աչքերը հառեցին նրան:

— Ինչպե՞ս են ձեր երեխաները, միսիս Ֆելիս, — հարցրեց

Մոնթազը:

— Դուք հիանալի գիտեք, որ ես երեխաներ չունեմ: Հետո

Էլ մեր օրերում խելքը գլխին ո՞ր մարդը կուզենա երեխա ունենալ, — բացականչեց միսիս Ֆելիսը՝ չհասկանալով, թե ինչու է իրեն այդպես զայրացնում այդ մարդը:

— Ո՛չ, այդ հարցում ձեզ հետ համաձայն չեմ, — ասաց միսիս Բաուլզը: — Ես երկուսն ունեմ: Երկու անգամ էլ ինձ կեսարյան հատում արեցին: Հո չէի՞ տառապելու երկունքի ցավերից, ինչ է թե երեխա պիտի ծնվեր: Բայց, դե, մարդիկ պետք է բազմանան: Մենք պարտավոր ենք շարունակել մարդկային ցեղը: Բացի դրանից, երեխաները երբեմն նման են լինում ծնողներին, իսկ դա շատ զվարճալի է: Ինչ կա որ, երկու կեսարյան հատում, և խնդիրը լուծված է: Այո՛, սրբ: Իմ բժիշկը ասում էր՝ կեսարյանը պարտադիր չէ, դուք նորմալ կազմվածք ունեք, կարող եք ծննդաբերել, բայց ես պնդեցի:

— Համենայն դեպս, երեխաները սարսափելի ծանր բեռ են: Դուք պարզապես խելագար եք, որ մտածել եք երեխա ունենալ, — բացականչեց միսիս Ֆելիսը:

— Ո՛չ, ինչու, այնքան էլ վատ չէ: Տասից ինն օրը նրանք անց են կացնում դպրոցում: Ես նրանց հետ շփվում եմ ամիսը երեք օր, երբ տանն են լինում: Բայց դա էլ ոչինչ: Զջում եմ հյուրասենյակ, միացնում եմ պատերը և վերջ: Ինչպես սպիտակեղենը լվանալիս. դարսում ես մեքենայի մեջ և շրխկոցով փակում կափարիչը: — Միսիս Բաուլզը քմծիծաղ տվեց: — Իսկ քնքշություններ ոչ մի դեպքում չի կարելի: Նրանց մտքովն իսկ չի անցնում ինձ համբուրել: Ծուտով երևի ինձ աբացի էլ կտան, և, փա՛ռք աստծո, որ ես դեռ կարող եմ նույն ձևով պատասխանել:

Կանալք փառ-փառ ծիծաղեցին:

Միլդրեդը մի րոպե լուռ նստեց, բայց, տեսնելով, որ Մոնթագը չի հեռանում շենքից, ծափ տվեց ու բացականչեց.

— Եկեք Գային բավականություն պատճառեք և խոսենք քաղաքականությունից:

— Հիանալի՛ է, — ասաց միսիս Բաուլզը: — Անցած ընտրություններին ես քվեարկեցի բոլորի նման: Իհարկե, Նոբլի օգտին: Կարծում եմ՝ երբևէ պրեզիդենտ ընտրված ամենահաճելի տղամարդկանցից մեկն է նա:

— Օ՛, այո՛: Իսկ հիշո՞ւմ եք մյուսին, որին առաջադրել էին Նոբլի դեմ:

— Շատ լավն էր, խոսք չկա: Փոքր-մոքր, անբարետես, անխնամ սափրված, սանրվածքն էլ բանի նման չէր:

— Եվ ոնց էլ օպոզիցիայի գլուխն էր մտել՝ նրա թեկնածությունն առաջադրել: Մի՞թե կարելի է բարձրահասակ տղամարդու դեմ այդպիսի գաճաճին առաջադրել: Ղեռ հետն էլ ծամծմելով էր խոսում: Ես գրեթե ոչինչ չլսեցի նրա ասածից: Լսածիցս էլ բան չհասկացա:

— Բացի այդ, հաստիկ էր և նույնիսկ ջանք չէր թափել հագուստով քողարկել իր գիրությունը: Զարմանալու ի՞նչ կար: Իհարկե, մեծամասնությունը քվեարկեց Վինսթոն Նոբլի օգտին: Նույնիսկ նրանց անունները դեր խաղացին: Համեմատեք Վինսթոն Նոբլու Հյուբերտ Հոուզ, և պատասխանը միանգամից պարզ կդառնա:

— Գրո՞ղը տանի, — բացականչեց Մոնթագը: — Սխալ դուք նրանց մասին ոչինչ չգիտեք՝ ոչ մեկի, ոչ էլ մյուսի:

— Ինչպե՞ս թե չգիտենք: Մենք երկուսին էլ տեսել ենք այս նույն հյուրասենյակի պատերին: Ընդամենը կես տարի առաջ: Մեկն անընդհատ քիթն էր քչփորում: Սոսկալի էր: Նայելն իսկ՝ զզվելի:

— Եվ ձեր կարծիքով, միստր Մոնթագ, մենք պարտավո՞ր էինք քվեարկել այդպիսի մարդու օգտին, — բացականչեց միսիս Ֆելիսը:

Միլդրեդը երջանիկ ժպտում էր:

— Գա՛յ, խնդրում եմ, մի՛ բարկացրու մեզ, հեռացիր դռնից:

Բայց Մոնթագն արդեն անհետացել էր. մի րոպե անց նա վերադարձավ՝ ձեռքին մի գիրք բռնած:

— Գա՛յ:

— Գրողի ծոցը ամեն ինչ, գրողի ծոցը:

— Սա ի՞նչ է: Մի՞թե գիրք: Իսկ ինձ թվում էր, թե մասնագիտական ուսուցումը այժմ տարվում է կինոնկարների միջոցով: — Միսիս Ֆելիսը զարմացած թարթեց աչքերը: — Դուք ուսումնասիրում եք հրկիզողների գործի տեսությունը:

— Ի՞նչ գրողի տարած տեսություն, — պատասխանեց Մոնթագը: — Բանաստեղծություններ են:

— Մոնթագ, — նրա ականջում հնչեց Ֆաբերի նախազգուշացնող ձայնը:

— Ինձ հանգիստ թողեք: — Մոնթագը զգում էր, որ իրեն

ասես ներքաշում են ինչ-որ սրընթաց աղմկոտ ջրապտուկտի մեջ:

— Մո'նթագ, մի' կորցրեք ձեզ: Չհամարձակվեք...

— Դուք նրանց լսեցի՞ք: Լսեցի՞ք՝ ինչ էին բլբլացնում այս ծիվաղներն իրենց նման այլ ծիվաղների մասին: Տե՛ր աստված: Ինչե՛ր ասես, որ չեն խոսում մարդկանց, սեփական երեխաների մասին, իրենց մասին, ամուսինների, պատերազմի մասին... Թող անիծվե՛ն: Ես լսում ու չեի հավատում ականջներիս:

— Ներեցեք: Պատերազմի մասին ես ոչ մի բառ չեմ ասել, — բացականչեց միսիս Ֆելիսը:

— Տանել չեմ կարող բանաստեղծությունները, — ասաց միսիս Բաուլզը:

— Իսկ դուք երբևէ կարդացե՞լ եք:

— Մո'նթագ, — Ֆաբերի ձայնը քերեց Մոնթագի ականջը: — Դուք ամեն ինչ կկործանեք: Խելագար: Լռեցեք:

Կանայք վեր թռան տեղներից:

— Նստեցեք, — գոռաց Մոնթագը:

Նրանք հնազանդորեն նստեցին:

— Ես տուն եմ գնում, — դողացող ձայնով ասաց միսիս Բաուլզը:

— Մո'նթագ, Մո'նթագ, խնդրում եմ, աստժո սիրուն: Չեր մտքինն ի՞նչ է, — աղերսում էր Ֆաբերը:

— Իսկ ինչո՞ւ որևէ ոտանավոր չեք կարդում մեզ համար ձեր գրքուկից, — միսիս Ֆելիսը գլխով արեց: — Կարծում եմ, շատ հետաքրքիր կլինի:

— Արգելված է, — ողբաձայն աղաղակեց միսիս Բաուլզը: — Չի կարելի:

— Բայց նայեցեք միստր Մոնթագին: Նա շատ է ցանկանում կարդալ, ես հո տեսնում եմ: Եվ եթե մի րոպե հանգիստ նստենք ու լսենք, միստր Մոնթագը գոհ կլինի, և մենք կարող ենք զբաղվել ուրիշ բանով: — Միսիս Ֆելիսը ջղային խեթեց դատարկ պատերին:

— Մո'նթագ, եթե կարդաք, ես ձեզ հետ կխզեմ իմ հարաբերությունները, կլքեմ ձեզ, — ականջում ծակող ու սուր տզտզաց բզեզը: — Ի՞նչ կտա դա ձեզ: Ինչի՞ կհասնեք:

— Մահու չափ կվախեցնեմ, ահա թե ինչ: Այնպես վախեցնեմ, որ աչքները մթնեն:

Միլդրեդը շրջվեց.

— Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Գալ:

Արժաթե ասեղը շամփրեց նրա ուղեղը:

— Մոնթագ, լսեցեք, միայն մի ելք կա: Կատակի տվեք, ծիծաղեք, ուրախ տեսք ընդունեք: Իսկ հետո գիրքն այրեք վառարանում:

Բայց Միլդրեդը կանխեց նրան: Դժբախտություն կանխագգալով՝ նա արդեն կերկերուն ձայնով բացատրում էր.

— Թանկագի՛ն տիկնայք, տարին մեկ անգամ յուրաքանչյուր հրկիզողի թույլատրվում է գիրք տանել տուն, որպեսզի ընտանիքին ցույց տա, թե նախկինում ինչպես էր ամեն բան հիմար ու անհեթեթ, ինչպես էին գրքերը խելքահան անում մարկանց ու գրկում անդորրից: Ահա այսօր Գալը որոշել է այդպիսի անակնկալ մատուցել: Նա կկարդա մեզ համար, և մենք ինքներս կհամոզվենք, թե ինչ հիմարություն է այդ ամենը, և այլևս երբեք մեր խեղճ գլուխները չենք կոտրի նման անհեթեթությունների վրա: Այդպես է, չէ՞, թանկագինս:

Մոնթագը գիրքը ջղաձգորեն ծմլում էր ձեռքի մեջ:

— Ասացեք՝ այո՛, Մոնթագ, — հրամայեց Ֆաբերը:

Մոնթագի շուրթերը հնազանդորեն կատարեցին Ֆաբերի հրամանը:

— Այո:

Միլդրեդը ծիծաղելով խլեց գիրքը:

— Ահա, կարդա այս բանաստեղծությունը: Ո՛չ, ավելի լավ է՝ այս մեկը, ծիծաղաշարժ է, դու արդեն այսօր ինձ համար բարձրաձայն կարդացել ես: Սիրելիներս, դուք ոչինչ չեք հասկանա, ոչինչ: Դա պարզապես անհիմաստ բառակույտ է: Գա՛լ, թանկագի՛նս, կարդա ահա այս էջը:

Նա հայացք գցեց բաց էջին: Ականջում բզզաց բզզալ:

— Կարդացե՛ք, Մոնթագ:

— Ի՞նչ է կոչվում բանաստեղծությունը, սիրելիս:

— «Դուվրի ափը»¹:

¹ Անգլիացի բանաստեղծ Մաթյու Առնոլդի (1822—1888) բանաստեղծությունը:

Մոնթազի կոկորդը չորացավ:

— Բարձր կարդա և մի՛ շտապիր:

Սենյակում շնչելու օդ չկար: Մոնթազը մերթ շոգում էր, մերթ պաղում: Թվում էր, թե հյուրասենյակը մի անապատ է. երեք աթոռ սենյակի կենտրոնում, և ինքը, ոտքերի վրա հագիվ կանգնած, սպասում է, թե միսիս Ֆելիսը երբ պիտի դադարի զգեստը ուղղել, կամ միսիս Բաուզը երբ պիտի ձեռքը հեռացնի սանրվածքից: Նա սկսեց կարդալ, սկզբում՝ ցածր, կակազելով, ապա ավելի ու ավելի վստահ և բարձր: Նրա ծայնը տարածվում էր անապատի վրա, բախվում ճերմակ ամալությանը և զրնգում շիկացած օդում նստած կանանց գլխավերևում.

Լիքն է եղել մի օր

Օվկիանոսը վստահության և, գրկելով ասիերը երկրի,

Որպես գոտի ծիածանի, հանգել է անդորրությամբ:

Բայց այժմ լսում եմ ես

Լոկ հառաչը նրա երկար, քրթմնջյունը այեբախումների,

Որ թշվում է մառախուղի միջով

Պոռթկումով փոթորկավուն ու փշրվում ցցունքներին

Առօրյաի մերկ խութերի:

Աթոռները ճոճոացին: Մոնթազը շարունակեց կարդալ.

Օ՛, սեր, արտոնիր մեզ

Արդար լինել իրար հանդեպ: Չէ՛ որ աշխարհը այսօր հառել է

Մեր դեմ, որպես երանելի անուրջների երկիր,

Այնքա՛ն բազմադեմ է, նոր ու հրաշագեղ,

Որ չգիտե, իրոք, ոչ խինդ, ոչ լուս, ոչ կիրք,

Ոչ ջերմություն, ոչ էլ տառապանք ու անդորր,

Եվ մենք ահա դեգերում ենք այնտեղ, ինչպես մարտադաշտում,

Որ հետքերն են իրարանցման, փախուստների, մահի,

Որ գումակները կույրերի իրենց պայքարն սկսեցին:

Միսիս Ֆելիսը հեծկլտում էր:

Ընկերուհիները նայում էին արցունքից աղձատված նրա դեմքին: Զգացմունքների այդպիսի բուռն պոռթկումից շվարած նրանք նստել էին՝ չհամարձակվելով կայչել նրան: Միսիս Ֆելիսը անզուսպ հեկեկում էր: Մոնթազը ինքն էլ շփոթահար էր և ցնցված:

— Կամա՛ց, կամա՛ց, Կլարա՛, — ասաց Միլդրեդը: — Հանգըստացի՛ր: Ռե վերջացրու, Կլարա, ի՛նչ պատահեց քեզ:

— Ես... ես..., — հեծկլտում էր Ֆելիսը: — Չգիտեմ, չգիտեմ: Ոչինչ չգիտեմ: Օ՛...

Միսիս Բաուլզը վեր կացավ և սպառնալի նայեց Մոնթագին:

— Հը՛, հիմա տեսնո՞ւմ եք: Ես գիտեի, որ այսպես կլինի: Ահա հենց այս էի ուզում ապացուցել: Ես միշտ եմ ասել՝ պոեզիան արցունք է, պոեզիան ինքնասպանություն է, ջղազարություն և զգվելի ինքնազգացողություն, պոեզիան ախտ է: Գարշանք է, ուրիշ ոչինչ: Այժմ վերջնականապես համոզվեցի: Ռուք չար մարդ եք, միստր Մոնթագ, անտանելի, չարսիրտ մարդ:

— Ռե, իսկ այժմ..., — ականջին շնչաց Ֆաբերը:

Մոնթագը հլու հնազանդ շրջվեց, մոտեցավ բուխարիին և պղնձե ճաղերի արանքից գիրքը ներս խցկեց՝ ազահ բոցին ընդառաջ:

— Հիմար բառեր են, հիմար, հոգին խոցող սոսկալի բառեր, — շարունակեց միսիս Ֆելիսը: — Ինչո՞ւ են մարդիկ ձրգտում միմյանց ցավ պատճառել: Մի՞թե առանց այդ էլ քիչ է տառապանքն աշխարհում, որ դեռ մարդուն պետք է տանջել այդպիսի բարբաջանքներով:

— Հանգստացիր, Կլարա, — հեծկլտացող միսիս Ֆելիսի ձեռքը տրորելով՝ հորդորում էր Միլդրեդը: — Խնդրում եմ, վերջ տուր: Հիմա մենք կմիացնենք «ազգականներին», կնայենք և կուրախանանք: Ռե, բավական է լաց լինես: Ուզում ես՝ խնջույք սարքենք:

— Ոչ, — ասաց միսիս Բաուլզը: — Ես տուն եմ շտապում: Եթե կցանկանաք այցելել ինձ և իմ «ազգականներին», շնորհ արեք ուզած ժամանակ: Բայց այս խելագար հրկիզողի տունը ես այլևս ոտք չեմ դնի:

— Հեռացե՛ք, — ասաց Մոնթագը ցածրաձայն, աչքերը նրան սևեռելով, — գնացեք տուն և մտածեք ձեր առաջին ամուսնու մասին, որից բաժանվել եք, ձեր երկրորդ ամուսնու մասին, որը գոհվել է հրթիռային մեքենայում, ձեր երրորդ ամուսնու մասին, որը նույնպես շուտով կջնջի իր գլուխը: Գնացեք տուն և մտածեք այն տասնյակ արհեստական վիժումների մասին, որին դիմել եք դուք, կեսարյան հատումների մասին նույնպես,

ձեր երեխաների մասին, որոնք ողջ էութեամբ ատում են ձեզ: Գնացեք տուն և մտածեք, թե ինչպե՛ս կարող էր այդ ամենը տեղի ունենալ, վերջապես ի՞նչ էք արել այդ ամենը կանխելու համար: Հեռացե՛ք, — արդեն գոռում էր նա: — Հեռացե՛ք, քանի դեռ չեմ խփել կամ դուրս շարտել:

Պուռը շրխկաց, տունը դատարկվեց:

Մոնթագը մենակ կանգնել էր հյուրասենյակի ցուրտ ամառայան մեջ, որտեղ պատերը աղտոտ ձյուն էին հիշեցնում:

Լողասենյակից հասնում էր ջրի ձողփյունը: Նա լսեց՝ ինչպես է Միլդրեդը ապակե սրվակից ափի մեջ լցնում քնաբեր հաբերը:

— Պուք հիմար եք, Մոնթագ, հիմար եք, հիմար: Աստված իմ, ի՞նչ ապուշն եք...

— Լռեցե՛ք, — Մոնթագը ականջից քաշեց պոկեց կանաչ գնդիկը և խոթեց գրպանը, բայց այն շարունակում էր բզզալ...

— Հիմար, հիմար...

Մոնթագը արպտեց ողջ տունը և վերջապես գրքերը գտավ սառնարանի ետևում. Միլդրեդն էր թաքցրել: Մի քանիսը պակասում էին, և Մոնթագը հասկացավ, որ կինն արդեն ինքն է սկսել քիչ-քիչ պայթուցիկը հանել իր տնից: Բայց նրա զայրույթն արդեն անցել էր: Միայն հոգնություն էր զգում և տարակուսանք: Ինչո՞ւ արեց այդ ամենը:

Նա գրքերը տեղափոխեց բակ և թաքցրեց ցանկապատի մոտ, թփերի մեջ: Միայն մի գիշերով, մտածեց նա, որպեսզի Միլդրեդի մտքով չանցնի այրել դրանք:

Տուն վերադառնալով՝ մտավ դատարկ սենյակները:

— Միլդրեդ, — կանչեց նա մութ ննջարանի դռների մոտ: Ոչ ոք չպատասխանեց:

Մետրո տանող ճանապարհին հատելով մարգագետինը, Մոնթագը ջանում էր չնկատել, թե որքան մոայլ ու ամալի էր այժմ Քլարիս Մըքլեյլնի տունը...

Այդ ժամին աշխատանքի գնալիս, նա հանկարծ այնպես սուր զգաց իր միայնությունն ու իր գործած սխալի ողջ ծանրությունը, որ չդիմացավ և կրկին սկսեց խոսել Ֆաբերի հետ: Նա սաստիկ տենչում էր գիշերալին անդորրի մեջ լսել զարմանալի ջերմ ու սրտահույզ այդ թույլ ձայնը: Ֆաբերի հետ ծա-

նորթացել էր մի քանի ժամ առաջ, բայց թվում էր, թե ճանաչել է ողջ կյանքի ընթացքում: Նա այժմ զգում էր, որ իր մեջ երկու մարդ է նստած. առաջինը ինքն է՝ Մոնթագը, որը ոչինչ չի հասկանում, չի ըմբռնում նույնիսկ իր տգիտության ողջ խորությունը, սոսկ աղոտ կռահում է, և երկրորդը՝ այդ թերուկը, որը խոսում էր իր հետ, խոսում այնքան ժամանակ, քանի դեռ օդամուղ գնացքը խելահեղ արագությամբ թռցնում էր նրան քնած քաղաքի մի թալից մյուսը: Բոլոր այն օրերին, որ դեռևս կլինեն իր կյանքում, ու բոլոր գիշերներին, — և խավարչտին, և լուսնկա, — թեր պրոֆեսորը անվերջ պետք է խոսի նրա հետ՝ կաթիլ առ կաթիլ, փշուր առ փշուր, կայծ առ կայծ բառեր լըցնելով նրա հոգին: Երբևէ, արդյո՞ք, նրա ուղեղը լիքը կլցվի, և նա այլևս Մոնթագը չի լինի: Այդպես ասաց, հավաստիացրեց, խոստացավ թերուկը: Նրանք կլինեն միասին՝ Մոնթագը և Ֆաբերը, կրակը և ջուրը, իսկ հետո, մի գեղեցիկ օր, երբ ամեն ինչ կխառնվի իրար, երբ ինքն իր մեջ կեռա ու կհանդարտվի, արդեն չեն լինի՝ ոչ կրակ, ոչ ջուր, այլ գինի կլինի: Իրարից անչափ տարբեր երկու նյութերից կստեղծվի նորը՝ երրորդը: Եվ կգա օրը, երբ նա, ետ նայելով, կհասկանա, թե ինչ էիմարն է եղել նախկինում: Հիմա էլ նա կարող է զգալ, որ այդ երկար ճանապարհն սկսվել է, որ ինքը հրաժեշտ է տալիս իր նախկին եսին և հեռանում նրանից:

Ինչ հաճելի էր լսել ականջի մեջ բզեզի բզզոցը, այդ քրնկոտ մոծակային տզզյունը և թերունական նրբահունչ ձայնը: Սկզբում նա կշտամբեց Մոնթագին, ապա սփոփեց գիշերային ուշ ժամին, երբ Մոնթագը, դուրս գալով մետրոյի հեղձուցիչ թունելից, կրկին հայտնվեց հրկիզողների աշխարհում:

— Հանդուրժող եղեք, Մոնթագ, ներողամիտ: Մի՛ թաղրեք նրանց: Մինչև վերջերս դուք էլ այդպիսին էիք: Նրանք անվերապահ հավատում են, որ միշտ այդպես է լինելու: Բայց միշտ այդպես չի լինելու: Նրանք չգիտեն, որ իրենց կյանքը նման է տիեզերական տարածության մեջ բոցավառվող վիթխարի ասուպի: Քանի դեռ թռչում է, գեղեցիկ է, բայց երբևէ անխուսափելիորեն պետք է ցած ընկնի: Մինչդեռ նրանք այդ շքեղ, ուրախ փայլից բացի, ուրիշ ոչինչ չեն տեսնում: Մոնթագ, թերուկը, որ թաքնվում է տանը, պահպանելով իր թեր ոսկորները, քննադատելու իրավունք չունի: Համենայն դեպս, ես կասեմ. քիչ էր

մնացել ամեն ինչ կործանեիք սկզբում: Ջգույշ եղեք: Հիշեցեք, որ միշտ ձեզ հետ եմ: Ես հասկանում եմ, թե այդ ինչպես պատահեց: Պետք է խոստովանեմ, որ ձեր կույր ցասումը ինձ արիություն ներշնչեց: Աստված իմ, հանկարծ ինձ այնպես՝ ջահել զգացի: Բայց այժմ ուզում եմ, որ դուք ձեզ ծեր զգաք, ուզում եմ այսօր ձեր մեջ մի կաթիլ լինի իմ երկչոտությունից: Հրկիզապես Բիթիի հետ այդ մի քանի ժամվա ընթացքում զգույշ եղեք, ոտնաթաթերի վրա քայլեցեք նրա շուրջը, թույլ տվեք լսեմ նրան, հնարավորություն ընձեռեք գնահատելու իրավիճակը: Ողջ մնալ. ահա մեր նշանաբանը: Մոռացեք այդ թըշվառ, հիմար կանանց...

— Ես նրանց այնքան վշտացրի, որքան հավանաբար ողջ կյանքում չեին վշտացել,— ասաց Մոնթագը:— Ինքս էլ ցնցվեցի՝ տեսնելով միսիս Ֆելիսի արցունքները: Թերևս նրանք իրավացի են: Գուցե ավելի լավ է չտեսնել կյանքը ինչպես որ է, աչք փակել ամեն ինչի հանդեպ և զվարճանալ: Չգիտեմ: Ես ինձ մեղավոր եմ զգում...

— Ո՛չ, պետք չէ: Եթե պատերազմ չսկսվեր, եթե խաղաղություն լիներ, ես ձեզ խորհուրդ կտայի՝ զվարճանալ: Բայց, ո՛չ, Մոնթագ, դուք իրավունք չունեք լոկ հրկիզող մնալու: Այս աշխարհում ամեն բան չէ, որ բարեհաջող է:

Մոնթագի ծակատը ծածկվեց քրտինքով:

— Մոնթագ, դուք լսո՞ւմ եք ինձ:

— Ուրբերս...— փնթփնթաց Մոնթագը:— Ես չեմ կարողանում շարժվել: Ի՞նչ հիմար զգացողություն է: Ուրբերս չեն ուզում շարժվել:

— Լսեցե՛ք, Մոնթագ: Հանգստացեք,— մեղմորեն հորդորում էր ծերուկը:— Ես հասկանում եմ, թե ինչ է կատարվում ձեզ հետ: Դուք վախենում եք կրկին սխալներ թույլ տալ: Բայց մի՛ վախեցեք: Սխալները երբեմն օգտակար են: Եթե միայն իմանայի՛ք: Երբ ես երիտասարդ էի, իմ տգիտությունը բոլորի աչքն էի խորթում: Դրա համար ինձ ծեծում էին: Քառասունի շեմին վերջապես իմ գիտելիքների գենքը ամուր էր: Եվ եթե սկսեք թաքցնել ձեր տգիտությունը, ձեզ չեն ծեծի, և դուք երբեք չեք խելոքանա: Ռե՛, իսկ այժմ քայլեցեք: Ավելի՛ համարձակ: Միասին գնանք հրակայան: Այժմ երկուսով ենք: Դուք այլևս մենակ չեք, մենք արդեն ամեն մեկս առանձին-առան-

ձին նստած չենք խուլ պատերով մեկուսացված մեր հյուրասենյակում: Եթե դուք օգնության կարիք զգաք, երբ Բիթին սկսի նեղել ձեզ, ես կլինեմ ձեր կողքին, ձեր թմբկաթաղանթներում, ես նույնպես կլսեմ ձեզ և ամեն ինչ կհսկեմ:

Մոնթագը զգաց, որ իր ոտքերը, սկզբում՝ ւաջը, հետո՝ ձախը, վերագտան շարժվելու կարողությունը:

— Ինձ մի՛ լքեք, իմ ծեր բարեկամ, — ասաց նա:

Մեխանիկական շունը բնում չէր: Հրակայանի սայխտակ շենքը ընկղմված էր լոռության մեջ: Նարնջագույն Սալամանդրը նիրհում էր՝ լցնելով որովայնը նավթով, նրա կողքերին խաչաձև ամրացված հանգստանում էին հրցիբները: Մոնթագն անցավ լոռության միջով և, կառչելով բրոնզե ձողից, մագլցեց խավարի մեջ՝ աչքը չկտրելով մեխանիկական գազանի դատարկված որջից: Նրա սիրտը մերթ նվաղում էր, մերթ կրկին կատաղի բաբախում: Ֆաբերը, գիշերային գորշ թիթեռի նման, որոշ ժամանակ լռեց նրա ականջում:

Բիթին կանգնած էր վերևի հարթակին: Նա մեջքով շրջված էր դեպի անցքն այնպես, ասես ոչ մեկին չէր սպասում:

— Ահա, — ասաց նա, դիմելով թղթախաղով տարված հըրկիզողներին, — ահա գալիս է մի հետաքրքրագույն նմուշ, որն աշխարհի բոլոր լեզուներով կոչվում է հիմար:

Նա չըրջվեց, բայց անխոս պարզեց ձեռքը ու պստհանջեց տուրքը: Մոնթագը գիրքը տվեց նրան: Կազմի վրա ուշադրություն չդարձնելով՝ Բիթին գիրքը շարտեց աղբարկղը և սիգարետ վառեց:

— «Մեծագույն հիմարը նա է, ով գեթ մի կաթիլ խելք ունի»¹: Բարի գալուստ, Մոնթագ: Հուսով եմ, որ այժմ կմնաք մեզ հետ հերթապահելու, քանի որ ձեր տենդն անցել է, և դուք կրկին առողջ եք: Պոկեր չխաղա՞նք:

Նրանք նստեցին սեղանի մոտ: Խաղաթղթերը բաժանեցին: Բիթիի ներկայությունը Մոնթագին սաստիկ գգալ էր տալիս իր ձեռքերի մեղավորությունը: Նրա մատները ոչ մի րոպե հանգիստ չմնալով, չարաճճի կզաքիսների նման անընդհատ շարժման մեջ էին. մերթ նյարդայնորեն խաղում էին, մերթ տրորում ինչ-որ բան, մերթ թաքնվում գրպաններում՝ Բիթիի՝ այր-

¹ Զաղված է անգլիացի բանաստեղծ Ջոն Դոնից (1572—1631):

վող սպիրտի բոցի պես դժգույն հայացքի տակ: Մոնթագին թվում էր, որ եթե հրկիզապետը փչի նրանց վրա՝ կչորանան, կկծկվեն, այլևս երբեք չի հաջողվի կենդանացնել և մշտապես թաղված կմնան իր բաձկոնի թևքերի խորքերում, քանի որ դրանք հանկարծ ցանկացել են ապրել ու գործել իրենց կամքով: Մոնթագից անկախ՝ դրանց մեջ առաջին անգամ ի հայտ էր եկել իր գիտակցությունը, իրականացել էր իր գաղտնի ծարավը՝ գիրք հափշտակել և փախչել՝ իր հետ տանելով Հոբին, Հոուլթին կամ Շեքսպիրին: Այստեղ, հրակայանում, դրանք հանցագործի՝ արյունով ներկված ձեռքեր էին հիշեցնում:

Կես ժամվա ընթացքում Մոնթագը երկու անգամ գնաց զուգարան՝ ձեռքերը լվանալու: Կերադառնալով՝ նա ձեռքերը պահեց սեղանի տակ:

Բիթին ծիծաղեց.

— Ձեռքերդ մի՛ թաքցրեք, անշուշտ, մենք ձեզ վստահում ենք, բայց, ինչևէ...

Բոլորը հռհռացին:

— Դե բավական է, — ասաց Բիթին: — Ճգնաժամն անցել է, և նորից ամեն ինչ լավ է: Մոլորված ոչխարը հոտ է վերադառնում: Մենք բոլորս ժամանակին մոլորվել ենք: «Ճշմարտությունը միշտ ծժմարտություն կլինի»¹, գոռում էինք մենք: Կգա հատուցման ժամը: Միայնակ չեն նրանք, ովքեր իրենց մեջ կրում են վեհանձն մտքեր, հավատացնում էինք ինքներս մեզ «Օ՛ իմաստնություն՝ թաքնված կենդանի համահնչունություններում», — ինչպես ասել է սրբ ֆիլիպ Սիդնեյը²: Բայց մյուս կողմից՝ «Խոսքը նման է սաղարթի, և որտեղ խիտ է՝ հազիվ թե պտուղ թաքնված լինի սաղարթի ստվերի տակ», — ասել է Ալեքսանդր Փոուփը³: Ի՞նչ եք մտածում այս մասին, Մոնթագ:

— Չգիտեմ:

— Ջգո՛ւյշ, — շշնջաց Ֆաբերը մի այլ, հեռավոր աշխարհից:

— Կամ ահա մեկը ևս. «Վտանգավոր է քիչ իմանալ, միշտ հիշելով այս՝ փրփրուն գինով բաժակդ լցրու պոնկեպոունկի:

¹ Շեքսպիր, «Չափի տեղ չափ»:

² Ֆիլիպ Սիդնեյ (1554—1586) — անգլիացի բանաստեղծ և հասարակական գործիչ:

³ Ալեքսանդր Փոուփ (1688—1744) — անգլիացի բանաստեղծ:

Մի կումից կհարբես իսկույն, բայց խմիր ցմրոտ և նորից ձերք կբերես պայծառ բանականությունը»: Փոռուի, նույն «Ակնարկներում»¹: Ռա թերևս նաև ձեզ կարեք է վերագրել, չէ՞, Մոնթազ: Ի՞նչ էք կարծում:

Մոնթազը շրթունքը կծեց:

— Հիմա կբացատրեմ,— ասաց Բիթին, ժպտալով և նայելով խաղաթղթերին:— Չէ՛ որ դուք հարբել էք հենց մի կումից: Կարդացել էք մի քանի տող, և ձեր գլուխը պտտվել է: Թրը՛խկ-շրը՛խկ: Դուք արդեն պատրաստ էք պայթեցնելու տիեզերքը, գլուխներ կտրելու, կոխկրտելու կանանց ու երեխաների, հեղինակություններ պսակազերծելու: Ես գիտեմ, ինքս անցել եմ այդ ճանապարհը:

— Ո՛չ, ես այդպիսին չեմ,— պատասխանեց Մոնթազը խուճապահար:

— Մի՛ կարմրեք, Մոնթազ: Իսկապես, ես չեմ ծիծաղում ձեզ վրա: Գիտե՞ք, մի ժամ առաջ երազ տեսա: Պառկեցի մի փոքր հանգստանալու և երազ տեսա. իբր մենք երկուսով, Մոնթազ, բուռն վիճաբանում ենք գրքերի մասին: Ծանթ ու կայծակ էիք արձակում դուք, մեջբերումներ տեղում, իսկ ես անվրդով ետ էի մղում ձեր ամեն մի հարձակումը: «Իշխանություն»,— ասում էի ես: Մինչդեռ մեջբերելով դոկտոր Ջոնսոնին², դուք պատասխանում էիք. «Գիտելիքները ուժեղ են իշխանությունից»: Ը դեպ, նույն այդ Ջոնսոնը, թանկագին՝ն տղաս, ասել է նաև. «Խելագար է նա, ով ուզում է որոշակիությունը փոխել անորոշությամբ»: Ջանացեք լինել հրկիզողների կողմը, Մոնթազ: Մնացյալ ամեն ինչ մոայլ քառս է:

— Մի՛ լսեք նրան,— շնչաց Ֆաբերը:— Նա ուզում է ձեզ շփոթեցնել: Օձաձկան նման լարծուն է: Ջգո՛ւյշ եղեք:

Բիթին քրքջաց:

— Դուք էլ ինձ պատասխանեցիք քաղվածքով. «Ճշմարտությունը միշտ դուրս կգա. մարդասպանությունը չի կարող

¹ Նկատի ունի Փոռուի «Ակնարկներ քննադատության մասին» տրակտատը:

² Սեմուել Ջոնսոն (1709—1784) — անգլիացի գրող:

երկար ծածուկ մնալ»¹: Իսկ ես բարեհոգի բացականչեցի. «Օ՛, տեր աստված, նա անընդհատ իր էջն է քշում»: Ու նաև ասացի. «Սատանան Սուրբ գիրքն իր օգուտի համար վկա է կանչում»²: Ի պատասխան՝ դուք գոռացիք. «Մեզ մոտ ավելի շատ մեծարում են կերպաս հագած տխմարին, քան աղքատի հագուստով իմաստունին»⁴: Այդ ժամանակ ես մեղմ շշնջացի. «Ճշմարտությունը կարիք ունի՞ աղքատ կատաղի պաշտպանության»⁵: Դուք նորից գոռացիք. «Մարդասպանն այստեղ է, և մեռյալների վերքերը բացվել են նորից, և արյան վտակներ են հորդում»⁶: Պատասխանեցի՝ թփթփացնելով ձեր ձեռքը. «Մի՞թե այդպիսի ազահություն եմ արթնացրել ես ձեր մեջ»: Դուք նորից ծչացիք. «Գիտելիքը ո՛ւժ է: Եվ հսկայի ուսերին բարձրացած թզուկը նրանից հեռուն է տեսնում»: Մեծագույն հանգըստությամբ մեր վեճը ես ավարտեցի հետևյալ խոսքերով. «Բոլորիս բնորոշ մոլորությունն է մետաֆորը ապացույց համարել, պարապ բառերի հոսքը՝ ճշմարտության ակունք, իսկ մեզ՝ պատգամախոս», ինչպես մի առիթով ասել է միստր Պոլ Վալերին:

Մոնթագի գլուխը պտտվեց: Նրան թվում էր, թե անխնա հարվածում են իր հոնքերին, աչքերին, կզակին, քթին, շորթունքներին, ուսերին, անօգնական պարզած ձեռքերին: Նա ցանկանում էր ծչալ. «Ո՛չ, լսեցե՛ք: Դուք ձգտում եք խճճել ամեն ինչ: Բավակա՛ն է»:

Բիթիի նրբագեղ, ջղային մատները բռնեցին Մոնթագի դաստակը:

— Աստված իմ, ինչպես է տրոփում զարկերակը: Երևում է՝ ես ձեզ կարգին թափ տվի, հա՛, Մոնթագ: Ձեր զարկերակն այնպես է տրոփում, ասես պատերազմի հաջորդ օրն է: Պակասում են միայն շեփորներն ու զանգերի դողանջները: Մի քիչ էլ խոսե՛նք: Ինձ դուր է գալիս ձեր խոովահույզ տեսքը: Ի՞նչ լեզվով ճառախոսեմ՝ սուահի՛լի, հինդի՞, գրական անգլե-

¹ Ճեքսպիր, «Վենետիկի վաճառականը», արարված 1, տեսարան 2:

² Նույն տեղը, արարված 1, տեսարան 3:

⁴⁻⁶ Զաղված են համապատասխանաբար անգլիացի գրողներ Թոմաս Դեբորից (1572—1632), Բենջամին Ջոնսոնից (1572—1637) և Ռոբերտ Բրոքսնից (1577—1640):

րե՞ն. բոլորով էլ խոսում եմ: Բայց դա նման է համրի հետ զրուցելուն, այդպես չէ՞, միստր Վիլի Յեքսպիր:

— Զգուշացե՛ք, Մոնթագ, — նրա ականջում խշխշաց գիշերաթիթեռը: — Նա ջուր է պղտորում:

— Օ՛, դուք մահու չափ վախեցաք, — շարունակեց Բիթին: — Իրոք որ, ես դաժան վարվեցի. ձեր դեմ հանեցի նույն այն գորքերը, որոնց դուք այնպես կառչել եք, գործադրեցի, որ հերքեմ ձեզ ամեն քայլափոխի: Ա՛խ, գրքերը այնպիսի՛ դավաճաններ են: Դուք կարծում եք՝ նրանք ձեզ կսատարեն, բայց շուտ են գալիս հենց ձեր դեմ: Ո՛չ միայն դուք, մի ուրիշն էլ կարող է գործի դնել գիրքը, և , ահա, դուք արդեն խճճվել եք ծահճուտի մեջ, գոյականների, բայերի, ածականների հրեշավոր խառնաշփոթի մեջ: Եվ ավարտվեց իմ երազը նրանով, որ ես Մալամանդրով մոտեցա ձեզ և հարցրի. «Մենք ուղեկիցներ չե՞նք»: Դուք նստեցիք մեքենան, և մենք ետ սլացանք հրակայան՝ պահպանելով երանելի լուռություն. կրքերը հանդարտվեցին, և մեր միջև կրկին հաշտություն տիլեց:

Բիթին բաց թողեց Մոնթագի ձեռքը, որն անկենդան ընկավ սեղանին:

— Ամեն ինչ լավ է, երբ լավ է վերջանում:

Լուռություն: Մոնթագը նստել էր, ասես քարե ձերմակ արծան:

Իրեն հասցված վերջին հարվածների արձագանքները դանդաղ մարում էին ինչ-որ տեղ, ուղեղի մթին անձավներում: Ֆաբերն սպասում էր մինչև որ դրանք լիովին մարեն: Եվ երբ, վերջապես, Մոնթագի գիտակցության մեջ բարձրացած փոշեմրրիկը հանդարտվեց, Ֆաբերն սկսեց ցածր ձայնով.

— Լա՛վ, նա ասաց այն, ինչ ուզում էր: Դուք մինչև վերջ լսեցիք: Հիմա կխոսեմ ես: Ստիպված կլինեք այդ էլ լսել: Իսկ հետո փորձեք գլուխ հանել և վճռել՝ ով է արդարացի: Բայց ուզում եմ, որ ինքներդ որոշեք, որ այդ որոշումը լինի ձեր սեփականը, ոչ թե իմը կամ հրկիզապետ Բիթինը: Չմոռանաք միայն մի բան՝ հրկիզապետը ճշմարտության և ազատության թշնամիներից է, մեծամասնության բթամիտ և անտարբեր հոտի երդվյալ անդամը: Օ՛, մեծամասնության սարսափելի բըռ-

նակալությունը... Ես և Բիթին տարբեր երգեր ենք երգում: Անձամբ ձեզնից է կախված, թե ում կլսեք:

Մոնթազը բերանը բացեց՝ պատասխանելու Ֆաբերին, բայց հրակայանի զանգի ղողանջը ժամանակին կանխեց նրան թույլ տալու այդ աններելի սխալը: Տագնապի ազդանշանը շաշում էր առաստաղի տակ: Սենյակի մյուս ծայրում տկտկաց հեռախոսային սարքը, որը հասցեն էր գրանցում: Հրկիզապետ Բիթին, խաղաթղթերը վարդագույն ձեռքերի մեջ, միտումնավոր դանդաղ մոտեցավ գրանցող սարքին և պոկեց թղթե ժապավենը: Անփույթ հայացք նետելով հասցեին՝ խոթեց գրպանը և, վերադառնալով սեղանի մոտ, կրկին նստեց: Բոլորը նայեցին նրան:

— Կարելի է սպասել ուղիղ քառասուն վայրկյան, ճիշտ այնքան, որքան ինձ հարկավոր է, որպեսզի հաղթեմ, — ուրախ ասաց Բիթին:

Մոնթազը խաղաթղթերը դրեց սեղանին:

— Հոգնեցի՞ք, Մոնթազ: Ուզում եք խաղից դուրս գալ:

— Այո՛:

— Մի՛ ընկճվեք: Ասենք, կարելի է խաղը հետաձգել: Խաղաթղթերը շրջված դրեք սեղանին, կվերադառնանք՝ կվերջացնենք: Իսկ այժմ շարժվեք: Արա՛գ: — Բիթին վեր կացավ: — Մոնթազ, ձեր տեսքն ինձ դուր չի գալիս: Մտադիր եք նորի՞ց հիվանդանալ:

— Չէ՛, ես միանգամայն առողջ եմ:

— Այո՛, դուք պե՛տք է հիանալի զգաք: Սա առանձնահատուկ դեպք է: Դե, առա՛ջ...

Նրանք ցատկեցին դեպի փողանցքը և ամուր կառչեցին բրոնզե ձողից, ասես նրանում էր միակ փրկությունը ներքևից վեր հորդացող ալիքների հորձանքից: Բայց ձողը նրանց անդունդը նետեց, որտեղ արդեն արթնանալով փնջացնում, գրոմբում ու հազում էր վիշապը:

— Էհե՛յ:

Նրանք դղրդյունով ու աղմուկով թեքվեցին անկյունից, արգելակները ծոնչացին, անվաղողերը ջջացին, նավթը ճռփաց Սալամանդի պղնձե փալլուն բաքում, ինչպես սնունդը

հսկայի որովայնում: Մոնթազի մատները դողդողում էին փայլփղլուն բռնակների վրա, անվերջ պլստում ցուրտ դատարկության մեջ, քամին քաշքշում էր մազերը, սուլում ատամների արանքից, իսկ Մոնթազը մտածում, անընդհատ մտածում էր հյուրասենյակի դատարկամիտ այն կանանց մասին, որոնց գլխից նեոնային քամին վաղուց արդեն թշել տարել էր բանականության վերջին նշույլը: Հիշում էր նաև իր անհեթեթ, հիմար մտահղացումը՝ գիրք կարդալ նրանց համար: Ռա հավասարագոր էր հրդեհը ջրի ատրճանակով հանգցնելուն: Ջառանգանք, խելացնորություն: Պարզապես կատաղության մոլուցք: Եվ գայրույթի բռնկում, որ ինքը պարտավոր էր զսպել:

Ե՞րբ է հաղթահարելու այդ խելացնորությունը և դառնալու հանգիստ, իսկապես հանգիստ:

— Ծուտով կհասնենք:

Մոնթազը հայացքը կտրեց բռնակներից: Սովորաբար Բիթին երբեք չէր նստում ղեկի առաջ, բայց այսօր մեքենան վարում էր նա, կտրուկ թեքելով շրջադարձերում, առաջ հակվելով վարորդական գահի բարձունքից: Նրա ծանր, սև անջրանցիկ վերարկուի թևերը կախվում ու ծածանվում էին, ինչպես մեքենայի վերևով թռչող վիթխարի չղջիկ՝ կուրծքը քամուն դեմ արած:

— Սուրա, սուրա, որպեսզի ժամ առաջ աշխարհը երջանկացնենք: Այդպե՞ս է, Մոնթազ:

Բիթիի վարդագույն, ասես ֆոսֆորափայլ այտերն առկայծում էին խավարում, նա ժպտում էր ինչ-որ մոլեգնությամբ:

— Ահա և հասանք:

Սալամանդը կտրուկ կանգ առավ: Մարդիկ խառնիճաղանջ դուրս թափվեցին: Մոնթազը կանգնել էր՝ աչքերը սևեռած պաղ, փայլուն բռնակներին, որոնցից ջղաձգորեն կառչել էին իր մատները:

«Ես չեմ կարող այդ անել, — մտածեց նա: — Ինչպե՞ս կարող եմ կատարել առաջադրանքը, ինչպե՞ս կարող եմ նորից այրել: Ես չեմ կարող մտնել այս տունը»:

Կողքին հայտնվեց Բիթին. նրանցից դեռ քամու հոտ էր փչում, որի միջով նրանք քիչ առաջ սլանում էին:

— Ղե՛, Մո՛նթագ:

Հրկիզողները, որոնք իրենց տգեղ երկարաձիտ կոշիկներով հիշեցնում էին հաշմանդամների, սարդերի պես անաղմուկ սկսեցին վազվզել:

Վերջապես, աչքը կտրելով բռնակներից, Մոնթագը շրջվեց:

Բիթին հետևում էր նրա դեմքին:

— Ի՞նչ պատահեց ձեզ, Մո՛նթագ:

— Այս ի՞նչ է, — դանդաղ արտասանեց Մոնթագը, — իմ տան մո՞տ ենք կանգ առել:

Երրորդ մաս

ԱՅՐՈՂ ԿՐԱԿ

Փողոցի բոլոր տներում վառվեցին լույսերը, լայն բացվեցին դռները: Մարդիկ դուրս վազեցին՝ դիտելու կրակի տոնը: Բիթին և Մոնթազը՝ մեկը գուսպ բավականությամբ, մյուսը չհավատալով աչքերին, նայում էին այն տանը, որին վիճակված էր դառնալ ներկայացման գլխավոր ասպարեզը. այստեղ պետք է ջահերով ձեռնաթություն անեն և բոց կուլ տան:

— Դե ահա՛, — ասաց Բիթին, — կեցցե՛ք, հասաք ձեր ուզածին: Ծերուկ Մոնթազը ցունկացավ թռչել դեպի արևը, բայց այժմ, երբ թևերն այրվեցին, զարմանում է, թե ինչպե՛ս պատահեց: Մի՞թե բավականաչափ հասկանալի չնախագգուշացրի ձեզ, երբ մեխանիկական շանը գաղտնի ուղարկեցի ձեր դռների մոտ:

Մոնթազի սառած դեմքը ոչինչ չէր արտահայտում. նա զգաց, թե ինչպես քարի պես ծանր իր գլուխը դանդաղ շրջվեց հարևան տան կողմը, որը մոայլ կանգնած էր շրջակա գուճազեղ ծաղկաթմբերի մեջ:

Բիթին արհամարհանքով փնջացրեց.

— Է՛, բավակա՛ն է: Մի՞թե այդ փոքրիկ ցնդածը իր տափակ խաղացանկով հիմարացրել է ձեզ: Ծաղիկներ, թիթեռնիկներ, տերևներ, մայրամուտ: Գիտե՛նք, գիտե՛նք: Ամեն ինչ գրանցված է նրա քարտում: Երևում է՝ ես խփել եմ նշանակետին: Բավական է նայել ձեր տառապած դեմքին: Մի քանի ցողուն և լուսնեղջյուրը: Ի՛նչ հիմարություն: Եվ ի՛նչ լավ բան կա այդ ամենի մեջ:

Մոնթազը նստեց Սալամանդրի սառը կողին: Նա մի քանի անգամ շարժեց իր ընդարմացած գլուխը՝ աջ-ձախ, աջ-ձախ...

— Նա ամեն ինչ տեսնում էր: Ոչ մեկին ոչինչ չէր արել: Ոչ մեկին չէր անհանգստացնում...

— Չէ՛ր անհանգստացնում: Ինչպե՛ս չէ: Չէր շուրջը չէ՛ր պտտվում: Ա՛յն, ինչպես են ինձ ձանձրացրել բարեգործության

այս սիրահարները՝ իրենց դեմքի բարեպաշտ արտահայտությամբ, կեղծավոր լուությամբ և եզակի տաղանդով՝ հարկադրել մարդուն, որ մեղավոր զգա իրեն: Գրո՛ղը տանի նրանց բուրիս: Նրանք ծագում են, ինչպես արևը՝ կեսգիշերին, որպեսզի անկողնում էլ հանգիստ չունենաս:

Տան դուռը բացվեց. աստիճաններով ցած վազեց Միլդրեդը՝ ճամպրուկը փայտացած ձեռքում սեղմած: Մայթեզրին սուլոցով արգելակեց տաքսին:

— Միլդրեդ:

Կինը վազեց անցավ կողքով, անբնականորեն ձգված, դեմքը դիմափոշուց ճերմակած, բերանը չի երևում. մոռացել է շրթունքները ներկել:

— Միլդրեդ, մի՞թե դու ես ահազանգել:

Նա ճամպրուկը խցկեց մեքենայի մեջ և ինքն էլ նստեց՝ քթի տակ մրմնջալով.

— Իմ խեղճ «ազգականներ», խեղճե՛ր, խեղճե՛ր: Ամեն ինչ կործանվեց, ամեն ինչ կործանվեց...

Բիթին բռնեց Մոնթագի ուսից: Մեքենան թափով շարժվեց և, ժամում յոթանասուն մղոն արագություն զարգացնելով, անհետացավ փողոցի ծայրին:

Չնգոց լսվեց, ասես թե ջարդուփշուր եղավ հղկված ապակուց, հայելուց և բլուրեղապակուց ստեղծված երազանքը: Մոնթագը մեքենաբար շրջվեց, կարծես քշված լիներ՝ չգիտես որտեղից անակնկալ վրա հասած պտտահողմից: Նա տեսավ, որ Ստոնմընն ու Բլաքը, կացիները ծոծելով, ջարդում են պատուհանների շրջանակները, որպեսզի անարգել փչի միջանցիկ քամին: Սառը, սև պատնեշին խփվող գիշերաթիթեռի թևերի շրշյուն:

— Մոնթագ, ես եմ՝ Ֆաբերը: Լսո՛ւմ եք ինձ: Ի՞նչ է պատահել:

— Այժմ դա ինձ է պատահել, — պատասխանեց Մոնթագը:

— Ա՛խ, ի՞նչ զարհուրելի անակնկալ, — բացականչեց Բիթին: — Մեր օրերում ամեն ոք կարծում է, չգիտես ինչու ամեն ոք հաստատ համոզված է, որ իրեն ոչինչ չի կարող պատահել: Ուրիշները մեռնում են, բայց ես ապրում եմ: Ինձ համար, գիտե՞ք, չկան հետևանքներ, չկա պատասխանատվություն:

Բայց նրանք գոյություն ունեն, ա՛յ թե որն է դժբախտությունը: Սակայն ինչ խոսենք այդ մասին: Երբ բանը հասել է հետևանքների, ապա ուշ է խոսելը, ծիշտ չէ՞, Մոնթագ:

— Մոնթագ, դուք կարո՞ղ եք փրկվել, փախչել, — հարցրեց Ֆաբերը:

Մոնթագը դանդաղ քայլում էր դեպի տուն, բայց չէր զգում՝ ինչպես են ոտքերը կաշում շավղի ցեմենտին ու գրշերային թաց խոտերին: Բիթին չխկացրեց վառիչը, և Մոնթագը հմայվածի պես հայացքը հառեց նարնջագույն բոցին:

— Ինչո՞ւ կրակը մեզ համար այդպիսի անբացատրելի հմայք ունի: Ի՞նչն է նրա մեջ ձգում ահելին ու ջահելին: — Բիթին հանգցրեց բոցը ու կրկին վառեց: — Կրակը հավերժական շարժում է. այն, ինչ մարդը մշտապես ձգտել է գտնել, բայց այդպես էլ չի գտել: Կամ՝ գրեթե հավերժական շարժում, եթե չխանգարեն, այն թերևս վառվի մեր ողջ կյանքի ընթացքում: Այնուամենայնիվ, ի՞նչ բան է կրակը: Գաղտնիք: Ատեղծված: Գիտնականներն ինչ-որ բան են շաղակրատում շփման և մոլեկուլների մասին, բայց նրանք ըստ էության ոչինչ չգիտեն: Իսկ կրակի հիմնական հմայքն այն է, որ ոչնչացնում է պատասխանատվությունը և հետևանքները: Եթե պրոբլեմը չափազանց մեծ հոգս է պատճառում, պետք է վառարան նետել: Այ, դուք էլ, Մոնթագ, այժմ նույնպիսի ծանր բեռ եք: Կրակը կհեռացնի ձեզ իմ ուտերից՝ արագ, մաքուր և հաստատապես: Նույնիսկ նեխելու բան չի լինի: Հարմար է, հիգիենիկ, ակնահաճո:

Մոնթագը նայում էր իր տանը, որ այժմ այնպես օտարոտի ու տարօրինակ էր թվում. գիշերվա ուշ ժամ, հարևանների քչփչոց, ջարդված ապակու կտորտանք, հատակին կազմերը պոկոտված գրքեր ու կարապի փետուրների պես ցաքուցրիվ էջեր, անհասկանալի, անհեթեթ տեսքով գրքեր. իսկապես, արժե՞ դրանց պատճառով այդքան հուզվել...

Իհարկե, այդ ամենը Միլդրեդի ձեռքի գործն է: Նա երևի տեսել է, թե ինչպես է ինքը գրքերը թաքցնում այգում և նորից տուն է բերել: Ախ, Միլդրեդ, Միլդրեդ:

— Ես ուզում եմ, որ դուք մենակ կատարեք ողջ աշխատանքը, Մոնթագ: Բայց ոչ թե նավթով և լուցկիով, այլ մասմաս, հրցիրով: Դուք ինքներդ պետք է մաքրեք ձեր տունը:

— Մոնթագ, մի՞թե դուք չեք կարող թաքնվել, փախչել:

— Ո՛չ, — բացականչեց Մոնթագը հուսահատված: — Սեխանիկական շունը: Նա չի թողնի, անկարելի է:

Ֆրքերը լսեց, բայց լսեց և հրկիզապես Բիթին՝ մտածելով, որ այդ բառերը իրեն են ուղղված:

— Այո՛, շունը մոտերքում է, — պատասխանեց նա, — այնպես որ, ձեր մտքով չանցնի՝ որևէ հնարք գործադրել: Պատրաստ եք:

— Այո՛: — Մոնթագը շիկացրեց հրցիրի պահպանակը:

— Կրահ՛կ:

Բոցի հսկա լեզուն դուրս ժայթքեց հրցիրից, հարվածեց գրքերին, շարտեց դեպի պատը: Մոնթագը մտավ ննջարան և երկու անգամ կրակեց լայնշի անկողինների վրա: Դրանք բռնըկվեցին սուլոցով, ճարձատյունով և այնպես կատաղի բոցավառվեցին, որ Մոնթագը նույնիսկ զարմացավ. ո՞վ կնտածեր, որ դրանցում այդքա՛ն ջերմություն և կիրք կար ամփոփված: Նա վառեց ննջասենյակի պատերը և կնոջ զարդասեղանը, որովհետև ծարավի էր այդ ամենը փոխելու: Նա վառեց աթոռները, սեղանները, իսկ ճաշասենյակում՝ դանակները, պատառաքաղները և պլաստմասսայե սպասքը, այն ամենը, ինչ հիշեցնում էր, թե ինչպես է ինքն ապրել այդտեղ, այդ դատարկ տանը, տարօրինակ կնոջ հետ, որը հեռացել ու արդեն մոռացել է իրեն և հիմա մենակ սլանում է քաղաքում՝ ունկնդիր ուղիղ-խեցու շշնջյունին:

Եվ ինչպես նախկինում՝ հաճելի էր այրելը, հաճելի էր ազատություն տալ ցասմանը, հրո ճարակ դարձնել, պատառոտել, ջարդել, բզիկ-բզիկ անել, վերացնել անհմաստ պրոբլեմը: Լուծում չկա՞: Ահա, ուրեմն, այժմ պրոբլեմն էլ չի լինի: Կրակը ամեն ինչ լուծում է:

— Մոնթագ, գրքե՛րը:

Գրքերը ոստոստում էին ու պատեպատ խփվում՝ ինչպես խանձված թռչուններ, որոնց թևերը հուրհրատին էին տալիս կարմիր ու դեղին փետուրներով:

Ապա նա մտավ հյուրասենյակ, որի պատերին քնի մեջ խորասուզվել էին վիթխարի խելագուրկ ճիվաղները՝ իրենց սպիտակ ու սին խոհերով և սառը ծյունեղեն երազներով: Նա կրակեց երեք լերկ պատերից յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին: Վակուումային փորձանոթները պայթեցին սուր թշնոցով:

ամայութիւնը Մոնթագին արձագանքեց կատաղի սուլոցով, անհմաստ ծիչով: Նա ձգտում էր պատկերացնել դատարկութիւնը, որ ծնում է նույնպիսի դատարկ և անհմաստ կերպարներ, և չէր կարողանում: Նա միայն շունչը պահեց, որպէսզի այն չթափանցի թոքերի մէջ: Ասես դանակով նա կտրատեց այդ սոսկալի դատարկութիւնը և նահանջելով՝ սենյակին նվիրեց բոցի մի հսկա վառ-դեղին ծաղիկ ևս: Պատերը ծածկող հրակայուն շերտը ծաքեց, և տունը ցնցվեց բոցերի մէջ:

— Երբ այրեք վերջացնեք, — թիկունքից լսվեց Բիթիի ձայնը, — նկատի առեք, որ ձերբակալված եք:

Տունը փլվելով վերածվում էր կարմիր ածխի ու սև մոխրի շեղջերի: Նա փռվել էր գետնին, որ ծածկված էր գորշավարդագույն մոխրով լեցուն քնաբեր փետրաներքնակով: Ծխի բարձր սյունը, մեղմորեն տարուբերվելով երկնքում, ծածանվում էր փլատակների վրա: Առավոտյան երեքն անց կես էր: Մարդիկ ցրվեցին տները. մոխրի և խճի կույտ էր մնացել կրկեսային զավեշտախաղից: Ներկայացումն ավարտված էր:

Մոնթագը կանգնել էր՝ ուժասպառ ձեռքերում պահած հրըցիրը. քրտինքի մուգ բծերը տարածվում էին թևատակերին, դեմքը մրաթաթախ էր: Նրա ետևում, մթութայն մեջ լուռ կանգնել էին մյուս հրկիզողները: Նրանց դեմքերը լուսավորում էր մարմրող կրակի թույլ ցոլքը:

Մոնթագը երկու անգամ փորձեց խոսել: Մտքերը ժողովելով, վերջապես հարցրեց.

— Կի՞նս էր ահագանգել:

Բիթին գլխով արեց:

— Իսկ ավելի վաղ՝ նրա բարեկամուհիները, միայն թե ես չէի ուզում շտապել: Այսպես թե այնպես, միննույն է կբռնվեիք, Մոնթագ: Մեծ հիմարություն էր աջ ու ձախ բանաստեղծություններ արտասանելը: Միանգամայն անհեթեթ ամբարտավանություն: Թույլատրեք մարդուն մի քանի հանգավոր տող կարդա, և նա իրեն տիեզերքի տիրակալ կկարծի: Ռուք մտածում էիք, թե կարող եք հրաշքներ գործել ձեր գրքերով: Բայց պարզվեց, որ աշխարհը հիանալի յուլա է գնում առանց դրանց: Տեսեք, թե ուր հասցրին ձեզ գրքերը. մինչև կոկորդը խրվել եք տիղմի մէջ, և բավական է ձկույթս շարժեմ՝ ձեզ կույ կտա:

Մոնթազը չէր կարողանում շարժվել: Երկրաշարժը և կրակե հողմը քիչ առաջ նրա տունը գետնին հավասարեցրին: Բեկորների տակ թաղված էր Աիլդրեդը, նաև իր ողջ կլանքը, և ինքն ուժ չունեւր տեղից շարժվելու: Ներսում, հանդարտվելով, դեռևս զգալ էին տալիս անցած փոթորկի արձագանքները: Մոնթազի ծնկները ծալվում էին հոգևության, շփոթմունքի, անարգանքի սարսափելի բեռից: Նա անտրտունջ թույլ էր տալիս, որ Բիթին հարված հարվածի ետևից հասցնի:

— Մոնթա՛գ, դուք ապուշ եք: Անուղղելի հիմար: Ձեր ինչի՞ն էր պետք այս ամենը:

Մոնթազը չէր լսում: Ստովի նա հեռվում էր և փախչում էր՝ թողնելով այդ զառանցող մոլագարին իր անշնչացած, մրտաված մարմինը:

— Փախե՛ք, Մո՛նթազ, — համառում էր Ֆաբերը:

Մոնթազը ականջ դրեց:

Գլխին իջած ուժեղ հարվածը ետ շարտեց նրան: Կանաչ գնդիկը, որի մեջ փսփսում կամ բղավում էր Ֆաբերը, ընկավ շավղի վրա: Գոհունակ ժպիտը դեմքին՝ Բիթին ձանկեց և մոտեցրեց ականջին:

Մոնթազը լսեց հեռվից եկող ձայնը.

— Ի՞նչ պատահեց ձեզ, Մոնթազ: Դուք ո՞ղջ եք:

Բիթին գնդիկը ականջից հեռացրեց և գրպանը խորեց:

— Ահա, ուրեմն, այստեղ ավելի շատ բան կա թաքնված, բան կարծում էի: Ես տեսնում էի՝ ինչպես էիք ձեր գլուխը հակում և ականջ դնում ինչ-որ բանի: Ակզբում մտածեցի, թե ձեր ականջում խեցի է, բայց հետո, երբ հանկարծ այդպես խելոքացաք, ես զարմացա: Մենք կգտնենք պոչերը, ձեր ընկերը չի ազատվի:

— Ո՛չ, — ճչաց Մոնթազը:

Նա ձգեց հրցիրի պահպանակը: Բիթին հայացքն ականա հառեց Մոնթազի մատներին, աչքերը չոպեցին: Մոնթազը նրանց մեջ զարմանք կարդաց: Ինքն էլ ականա նայեց իր ձեռքերին՝ տեսնելու, թե էլի ի՞նչ են մոգոնել: Հետագայում, հիշելով կատարվածը, նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչը, ի վերջո, մղեց սպանության: Ձեռքերն իրենք իրենց, թե՛ Բիթիի վերաբերմունքը իր ձեռքերի շարժմանը: Ամպրոպի

վերջին որոտը մարեց՝ հավելով Մոնթազի սոսկ խողութանը, բայց ոչ գիտակցությանը:

Հեգնախառն ժպիտը ծամածոեց Բիթիի դեմքը:

— Այո՛, դա բավական լավ միջոց է՝ քեզ լսել տալու համար: Պահեք հրացանի փողը գրուցակցի վրա, և կամա-ակամա նա կլսի ձեզ: Կարող եք խոսել, որքան ուզենաք: Ի՞նչ կասեք այս անգամ: Ինչո՞ւ ինձ Շեքսպիր չեք հրամցնում, թշվառ պճնամուլ: «Սպառնալիքդ ամենևին էլ սարսափելի չէ, Կասիո, ես պարկեշտությամբ այնքան ամուր եմ գրահապատված, որ դրանք բոլորը կողքովս են թռչում թեթև քամու պես»¹: Այդպես է, չէ՞: Է՛հ, դուք, գրչա՛կ: Հապա գործե՛ք, գրողի տարած: Սեղմե՛ք ձգանը.

Եվ Բիթին մի քայլ առաջ շարժվեց:

— Մենք միշտ այրում էինք ոչ այն, ինչ հարկավոր էր... — կարողացավ միայն ասել Մոնթազը:

— Հրցիրը մի կողմ պահեք, Գա՛լ, — ասաց Բիթին սառած ժպիտով:

Բայց հաջորդ ակնթարթին նա արդեն կրակի շեղք էր, թռչկոտող, սողացող տիկնիկ, որի մեջ մարդկային ոչինչ չէր մնացել, գետնին թավալվող հրե գունդ: Մոնթազը հրցիրից նրա վրա բաց էր թողել հեղուկ բոցի երկար շիթը: Լսվեց ֆշշոց, ասես թանձր թուրք ընկավ շիկացած սալօջախին, ինչ-որ բան քլթքլթաց, խլթխլթաց, և նա տարհոսեց՝ եռալով դեղին փրփուրով: Մոնթազը կկոցեց աչքերը, ձչաց, նա փորձում էր ձեռքերով փակել ականջները, որպեսզի չլսի այդ սարսափելի ձայները: Եվս մի քանի ջղաձիգ շարժում, և Բիթին ծմլվեց, ինչպես մոմե տիկնիկը կրակի վրա, ու սսկվեց:

Մյուս երկու հրկիզողները արձանի պես ցցված էին: Մի կերպ զսպելով սրտխառնուքը՝ Մոնթազը նրանց վրա ուղղեց հրցիրը:

— Շրջվե՛ք, — հրամայեց նա:

Նրանք հնազանդորեն շրջվեցին: Զրտիները գլուկ-գլուկ թափվում էր նրանց դժգույն երեսներից: Մոնթազը ուժգին հարվածեց գլխներին, սաղավարտները ցած նետեց, գցեց նրանց իրար վրա: Նրանք ընկան և անշարժացան:

¹ Շեքսպիր, «Հուլիոս Կեսար», արարված 4, տեսարան 3:

Թեթև խշրտյուն, ասես ճյուղից աշնանային չոր տերև պոկվեց:

Մոնթագը շուտ եկավ ու տեսավ մեխանիկական շանը:

Հայտնվելով ինչ-որ տեղից, նա արդեն կտրել անցել էր մարգագետինը, այնպես թեթև ու անաղմուկ էր գալիս, ասես քամուց բշված գորշասևավուն ծխի թանձր ամպիկ լիներ:

Շունը ցատկեց օդ, վեր խոյացավ Մոնթագի գլխից մի երեք ոտնաչափ, չոեց սարդանման թաթերն ու փայլեցրեց միակատամը՝ ծայրին պրոկահինե անզգայացնող ասեղ: Մոնթագը նրան դիմավորեց բոցի շիթով՝ կրակե հրաշալի մի ծաղիկ: Գազանի մետաղյա մարմնի շուրջը պտտվեցին դեղին, կապույտ ու նարնջագույն բյուրավոր ծաղկաթերթեր՝ պատելով նրան նոր երփներանգ թաղանթով: Շունը շրխկոցով փլվեց Մոնթագի վրա և մի կողմ շարտվեց հրցիրի հետ միասին: Մոնթագն ընկավ տասը ոտնաչափ հեռու, ծառի բնի մոտ: Մի պահ զգաց, որ շունը ճանկեց իր ոտքն ու խրեց ասեղը, բայց նույն ակնթարթին էլ բոցը օդ շարտեց գազանին, հողերից պլոկեց մետաղյա ոսկորները, ճեղքեց որովայնը՝ պայթող հրթիռի պես կարմիր կրակ արձակելով չորս կողմը, դուրս թափվեց նաև փորոտիքը: Մոնթագը պառկած դիտում էր, թե ինչպես օդում պտույտ գործեց, գետին տապալվեց ու խաղաղվեց այդ մեռած և միաժամանակ կենդանի մարմինը: Թվում էր՝ շունը դեռ պատրաստ էր նետվելու նրա վրա, ավարտելու մահացու ներարկումը, որի ներգործությունը Մոնթագն արդեն զգում էր ոտքի մկաններում: Նրան համակեց թեթևության և սարսափի զգացումը, նման այն մարդուն, որը հասցնում է մի կողմ ցատկել կատաղի արագությամբ սլացող և միայն կողով ծնկին խփած մեքենայից: Նա վախենում էր ոտքի կանգնել, վախենում էր, որ չի կարողանա հենվել պրոկահինից ընդարմացած ոտքին:

Ողջ մարմինն սկսել էր անզգայանալ:

Ի՞նչ անել...

Փողոցն ամալի է, տունը այրված՝ թատերական հին դեկորի նման, շրջակա շենքերն ընկղմված են խավարի մեջ, կողքին մեխանիկական գազանի մնացորդներն են, քիչ այն կողմ՝ Բիթին, ավելի հեռվում՝ երկու հրկիզողները և Սալամանդրը... Նա նայեց հսկա մեքենային: Պետք է ոչնչացնել...

«Ռե՛, — մտածեց նա, — տեսնենք շա՛տ ես վնասվել: Փորձիր կանգնել: Ջգո՛ւյշ, զգո՛ւյշ... ա՛յ, այդպե՛ս»:

Նա ոտքի ելավ, բայց ուներ միայն մեկ ոտք: Սյուսը թեև մեռած էր, ածխացած կոճղ, բայց ստիպված էր քարշ տալ, իբրև գործած հանցանքի հատուցում: Հենվելիս հազարավոր արծաթյա ասեղների շամփրեցին ոտքը՝ ազդրից մինչև ծունկը: Նա լաց եղավ: «Ո՛չ, գնա՛, շարժվիր: Ռու չես կարող մնալ այստեղ», — քաջալերեց ինքն իրեն:

Մի քանի տներում կրկին լույսեր վառվեցին: Մարդիկ չէին կարողանում քնել կատարվածից հետո, թե՛ նրանց անհանգրստացնում էր անսովոր լուսությունը, Մոնթագը չգիտեր: Կաղալով, ցատկոտելով նա դժվարությամբ անցնում էր ավերակների միջով՝ ձեռքերով բռնած քարշ եկող հիվանդ ոտքը: Նա գրուցում էր նրա հետ, տնքտնքում, աղաղակում էր, հայիոյում, աղերսում. «Գնա՛, գնա՛, դե շարժվիր, չէ՛ որ հիմա քեզանից է կախված իմ կյանքը»: Մթության մեջ նա լսեց գոռոցներ և ծիչեր: Վերջապես հասավ ետևաբակ, որը դուրս էր գալիս մի խով նրբանցք:

«Բիթի՛, — մտածեց նա, — այժմ այլևս դուք պրորբեմ չեք, դուք միջտ ասում էիք. «Հարկ չկա լուծել պրորբեմը, ավելի լավ է այրել այն»: Ահա այդպես էլ ես վարվեցի: Մնաք բարով, հրկիզապես»:

Գայթելով ու կաղեկաղ նա գնում էր խավար նրբանցքով:

Ամեն անգամ, երբ հենվում էր՝ սուր ցավը շամփրում էր ոտքը, և Մոնթագը մտածում էր. «Հիմար, անիծյալ հիմար, հիմարի գլուխ, ապուշ, տխմար, անիծյալ հիմար... Տես, թե ինչ արեցիր, և այժմ ինչպե՛ս ես լուծելու այս խառնաշփոթը»: Հպարտությունը թող նզովվի, ցասումը նույնպես. չկարողացավ զսպել իրեն և ամեն ինչ փչացրեց, ամեն ինչ կործանեց հենց սկզբում: Ծիչտ է, իրար ետևից շատ բան բարդվեց՝ Բիթին, հյուրասենյակի կանայք, Միլդրեդը, Զլարիսը, բայց դու արդարացում չունես, ոչ մի արդարացում: Ռու հիմար ես, անիծյալ հիմար: Այդպես անխոհեմ կերպով անձնատուր լինել...»:

Բայց մենք դեռ կփրկենք այն, ինչ մնացել է, կանենք ինչ հնարավոր է: Իսկ թե հարկ լինի այրվել, մի քանիսին էլ կտանենք մեզ հետ:

Այո՛: Նա հիշեց գրքերի մասին և ետ դարձավ: Համենայն դեպս, պետք է վերցնել:

Գրքերը պարտեզի ցանկապատի մոտ էին: Միլորեդը երեւի բոլորը չէր նկատել: Չորս գիրք դեռևս ընկած էր այնտեղ, որտեղ թաքցրել էր: Մթան մեջ լսվում էին ծայներ, լուսեր էին վառվում: Հեռվում արդեն ոռնում էին ուրիշ Սալամանդրներ, նրանց ազդանշանների դղրդույունը խառնվում էր գիշերային փողոցներով սլացող ոստիկանական մեքենաների աղմուկին:

Մոնթագը վերցրեց մնացած չորս գիրքը և կրկին ցատկոտելով ու կաղեկաղ քայլեց նրբանցքով: Հանկարծ նա ընկավ, կարծես մի հարվածով գլուխը կտրեցին՝ թողնելով սոսկ գլխատված մարմինը: Գլխում անակնկալ առկայծած միտքը հարկադրեց կանգ առնել, շարտեց գետին: Ուղքերը կծկած, նա պառկել էր մանրախճի մեջ և հեկեկում էր:

Բիթին ուզում էր մեռնել:

Այժմ Մոնթագը չէր կասկածում, որ Բիթին ուզում էր մեռնել: Չէ՛ որ նա կանգնել էր իր դիմաց և չէր փորձում պաշտպանվել, ավելին՝ ծաղրում էր, գրգռում: Այդ մտքից Մոնթագի շունչը կտրվեց: Ի՞նչ տարօրինակ է, ի՞նչ տարօրինակ է մահ տենչալ այնքան, որ թույլ տաս մարդասպանը զենքը ձեռքին քայլի բո շուրջը, ու լռելու և գոնե այդ կերպ կյանքդ պահպանելու փոխարեն, գոռաս, ծաղրես, բարկացնես, մինչև որ հակառակորդդ դուրս գա հավասարակշռությունից և...

Հեռվից վազքի դոփյուն էր լսվում:

Մոնթագը նստեց: Պետք է հեռանալ: Վե՛ր կաց, չի կարելի հապաղել: Բայց հեծկլտոցը դեռևս ցնցում էր նրա մարմինը: Հարկավոր էր հանգստանալ: Ինքը ոչ մեկին չէր ուզում սպանել, նույնիսկ Բիթին: Նրա մարմինը ջղաձգորեն կծկվում էր, ասես թթվուտով վառված լիներ: Չեղքով փակեց բերանը: Աչքերի առաջ Բիթին էր՝ անշարժ, ինչպես խոտերին նետված բոցավառ ջահ: Մոնթագը մատները կծեց, որ չգոռա. «Ես չեի ցանկանում: Աստված իմ, ես չեի ցանկանում, չեի ցանկանում, չեի ցանկանում»:

Նա փորձեց ամեն ինչ մտաբերել, վերականգնել դեպքերի

կապը, հիշողության մեջ վեր հառնել իր նախկին կյանքը, ինչպիսին որ էր մի քանի օր առաջ, մինչև այն պահը, երբ այնտեղ ներխուժեցին մաղը և ավազը, «Ռենըմ» ատամի մաժուկը, գիշերաթիթեռի շրջունը՝ ականջին, հրդեհի կրակե լուսատուիկները, տազնապի ազդանշանները և այս վերջին գիշերային ուղևորությունը. չափազանց շատ բան երկու-երեք կարճ օրվա ընթացքում, բավական շատ՝ նույնիսկ ողջ կյանքի ընթացքում:

Ռոփյունը լսվում էր արդեն նրբանցքի ծայրից:

— Վե՛ր կաց, — ասաց ինքն իրեն: — Վե՛ր կաց, գրողի՛ տարած, — հրամայեց հիվանդ ոտքին ու կանգնեց: Ցավը սուր փշերով մեխվեց ծնկոսկրի մեջ, ծակեց հազարավոր ասեղներով, հետո դարձավ բութ քորոցի ծակժկոց և, վերջապես, երբ նա ձեռքերը ճանկոելով ու երերալով՝ ոտքը քարշ տվեց փայտյա ցանկապատի երկայնքով, դաղոց զգաց, ասես սրունքին եռման ջուր լցրին: Բայց ոտքն արդեն հնազանդվում էր: Համենայն դեպս նա վախենում էր վազել, որ խախտված ոտքը հանկարծ դուրս չընկնի: Բերանը լայն բացած, ազահորեն ներծծելով գիշերային օդը, նա զգում էր, թե ինչպես է մթությունը ծանրորեն կուտակվում իր մեջ, և անհավասար քայլքով, կաղալով, բայց վճռականորեն շարժվում էր առաջ: Գրքերը պահում էր ձեռքերի մեջ:

Նա մտածում էր Ֆաբերի մասին:

Ֆաբերը մնաց այնտեղ, կուպրի չսառած թանձրուկը մեջ, որն այժմ ոչ անուն ունի, ոչ անվանում: Չէ՛ որ ինքը այրել էր և Ֆաբերին: Այդ միտքը այնպես շանթահարեց Սոնթագին, որ նրան թվաց, թե իբր Ֆաբերը իրականում մեռել է, տապակվել, եփվել, ինչպես ձկնիկ՝ պստիկ կանաչ պատիճի մեջ, թաքցված և ընդմիջտ կորած մի մարդու գրպանում, որից այժմ լոկ խանձված ջլերով կապկապված ռսկորների կոկտ է մնացել:

Հիշի՛ր՝ պետք է այրել նրանց, թե չէ նրանք կայրեն քեզ, մտածեց նա: Այժմ հենց այդպես է:

Նա պրպտեց գրպանները. փողը տեղում էր: Մյուս գրպանում դիպավ սովորական ռադիոխեցու, որի միջոցով այդ ցուրտ, մռայլ առավոտ քաղաքը զրուցում էր ինքն իր հետ:

— Ուշադրություն: Ուշադրություն: Ուստիկանությունը

Ինտրում է փախստականի: Սպանություն է գործել և կատարել մի շարք հանցագործություններ պետության դեմ: Անուն-ազգանունը՝ Գալ Մոնթագ: Մասնագիտությունը՝ հրկիզող: Վերջին անգամ նրան տեսել են...

Վեց թաղամաս վազեց առանց դադարի: Հետո նրբանցքը նրան դուրս բերեց սովորական փողոցից մի տասն անգամ լայն ամայի ավտոմայրուղի: Լապտերների վառ լույսով ողողված, այն հիշեցնում էր սառած անապատային գետ: Մոնթագը հասկանում էր, թե որքան վտանգավոր է այժմ կտրել-անցնել մայրուղին. չափազանց լայն էր, չափազանց ամայի, նման էր մերկ, առանց դեկորների բեմի, և հրապուրում, ծագում էր այդ դատարկ տարածությունը, որտեղ լապտերների վառ լույսի ներքո այնպես հեշտ էր նկատել փախստականին, այնպես հեշտ էր բռնել, այնպես հեշտ էր նշան բռնել ու սպանել:

Խեցին բզզում էր նրա ականջում.

— ... Հետևեք փախչող մարդուն... Հետևեք փախչող մարդուն... Նա մենակ է, հետիոտն... հետևեք...

Մոնթագը ետ-ետ գնաց դեպի ստվերը: Ծիշտ նրա առաջ լցակայանն էր՝ ճենապակու պես փայլփլող, սպիտակ ու վիթխարի: Երկու արծաթավուն բզեզ-ավտոմեքենա կանգնած էր այնտեղ. վառելիք էին լցնում...

«Ո՛չ, եթե դու ուզում ես առանց քեզ վտանգելու կտրել-անցնել այս լայն բուլվարը, ուրեմն՝ չպետք է վազես, հարկավոր է գնալ հանգիստ, անշտապ, իբր զբոսնում ես: Բայց դրա համար պետք է կոկիկ ու վայելուչ տեսք ունենալ: Փրկության ավելի շատ երաշխիքներ կլինեն, եթե ճանապարհդ շարունակելուց առաջ լվացվես և մազերդ սանրես: Բայց ո՛ր է տանում ճանապարհը:

Այո՛, մտածեց նա, ո՛ր էմ ես վազում»:

Ոչ մի տեղ: Նա վազելու տեղ չուներ: Տաբերից բացի ընկերներ չուներ, որոնց կարողանար դիմել: Եվ այդ ժամանակ հասկացավ, որ այդ ամբողջ ընթացքում բնագոյաբար վազել է Տաբերի տան ուղղությամբ: Բայց չէ՛ որ Տաբերը չի կարող թաքցնել իրեն. նման փորձն իսկ համազոր է ինքնասպանության: Միևնույն է, ինքը պետք է տեսնի Տաբերին՝ թեկուզ մի քանի րոպեով: Նա կամրապնդի ողջ մնալու, փրկվելու հնարավորության արագորեն սպառվող իր հավատը: Միայն թե

տեսնի, համոզվի, որ Ֆաբերը ողջ է, չի այրվել այնտեղ, մյուս ածխացած մարմնի հետ: Բացի այդ, պետք է նրան թողնել փողի մի մասը, որպեսզի նա կարողանա օգտագործել հետագայում, երբ Մոնթազը կշարունակի իր ճանապարհը: Գուցե հաջողվի՞ դուրս պրծնել քաղաքից. կթաքնվի արվարձաններում, կապրի գետափին, մեծ ճանապարհներին մոտիկ, դաշտերի և բլուրների միջև...

Օդում լսվող տագնապալի աղմուկն ստիպեց նրան՝ երկնքին նայել:

Մեկը մյուսի ետևից վեր խոյացան ուստիկանական ուղղաթիռները: Նրանք այնքան շատ էին, որ թվում էր, թե ինչ-որ մեկը փչել է խատուտիկի չոր գլխին: Մոտ երկու տասնյակ ուղղաթիռներ խառնաշփոթ սավառնում էին օդում, Մոնթազից երեք մղոնի վրա, անորոշ երեքալուծ, աշնան ցրտից թորջումած թիթեռների նման: Հետո սկսեցին իջնել մեկն այստեղ, մեկն այնտեղ, նրանք իջնում էին փողոցում և, դառնալով բզեզ-ավտոմոբիլներ, դղրդյունով սուրում բուլվարով՝ նույնքան անակնկալ կրկին օդ բարձրանալու և որոնումները շարունակելու համար:

Նրա առջև լցակայանն էր: Ժառայողները զբաղված էին հաճախորդներով: Շրջանցելով շենքը՝ Մոնթազը մտավ տղամարդկանց զուգարան: Ալյումինե միջնորմի միջով նրան էր հասնում հաղորդավարի ձայնը. «Պատերազմը հայտարարված է»: Դրսում վառելանյութի բաքերից պոմպով բենզին էին լըցնում: Բացօթյա ավտոմեքենաներում նստածները խոսքեր էին փոխանակում լցակայանի աշխատողների հետ՝ շարժիչների և բենզինի մասին, հարցնում էին, թե որքան պետք է վճարեն: Մոնթազը կանգնել էր՝ փորձելով ընկալել ռադիոյով հենց նոր լսած համառոտ հաղորդագրության իմաստը, բայց չէր կարողանում: Լավ, թող պատերազմն սպասի իր հերթին: Նրա համար այն կսկսվի ավելի ուշ, մեկ կամ երկու ժամ հետո:

Նա լվացվեց, սրբվեց, անաղմուկ դուրս եկավ՝ խնամքով փակելով զուգարանի դուռն ու քայլեց խավարի միջով: Մի րոպե անց նա արդեն ամալի մայրուղու եզրին էր:

Ահա այն խաղը, որ պետք է շահի: Գնդախաղի ընդարձակ հրապարակում փչում էր վաղորդյան զոլասուն քամին: Ճե-

մուղին մաքուր էր, ինչպես գլադիատորական հրապարակը՝ անհայտ զոհերի և անանուն մարդասպանների ասպարեզ էլ-նելուց առաջ: Ասֆալտե ընդարձակ գետի վրա օղբ դողում և թրթռում էր Մոնթագի մարմնից արձակվող ջերմությունից: Անհավատալի էր, որ իր մարմնի ջերմությունը շրջակա աշխարհին կարող էր ստիպել՝ տարուբերվելու: Ինքը՝ Մոնթագը, լուսատու թիրախ էր, նա գիտեր, նա զգում էր այդ: Իսկ այժմ դեռ պետք է անցնե՞ր այդ կարճ ճանապարհը:

Մի քանի թաղամաս այն կողմ փայլատակեցին ավտոմեքենայի լուսարձակները:

Մոնթագը խոր շունչ քաշեց: Ասես տաք խոզանակով քերժեցին թոքերը: Կոկորդը չորացել էր վազելուց, բերանի մեջ մետաղի տհաճ համ էր զգում, ոտքերը կապարի պես ծանրացել էին:

Ավտոմեքենայի լույսերը... Եթե այժմ սկսի անցնել փողոցը, ապա պետք է հաշվել, թե մեքենան երբ կհասնի այստեղ: Որքա՞ն է հեռու հանդիպակաց մայրը: Հավանաբար մոտ հարյուր յարդ: Ո՛չ, ավելի քիչ, բայց մինևույն է, թող լինի հարյուր: Եթե դանդաղ քայլի՝ տարածությունը կտրելու համար անհրաժեշտ կլինի երեսուն-քառասուն վայրկյան: Իսկ սուրացող ավտոմեքենա՞ն: Արագություն հավաքելով՝ այդ երեք թաղամասը նա կթռչի տասնհինգ վայրկյանում: Իսկ եթե ճանապարհի կենտրոնից սկսի վազե՞լ...

Նա քայլ արեց աջ ոտքով, ապա ձախով, հետո՝ նորից աջով: Նա անցնում էր ամալի փողոցը:

Երբ նույնիսկ փողոցը լիովին ամալի է, երբեք չի կարելի համոզված լինել, թե բարեհաջող կանցնես: Մեքենան կարող է հանկարծակի հայտնվել զառիվերում, այստեղից մի չորս թաղամաս հեռու և աչքդ չթարթած՝ կխփի ու կշարունակի սլանալ...

Նա որոշեց քայլերը չհաշվել: Ծուրջը չէր նայում՝ ո՛չ աջ, ո՛չ ձախ: Լապտերների դավադիր լույսերը նույնքան պայծառ էին շողում, որքան արևի ճառագայթները կեսօրին:

Նա ականջ դրեց սուրացող մեքենայի աղմուկին, որ լսվում էր աջից, երկու թաղամաս հեռվից: Լուսարձակների շարժում լույսերը մերթ պայծառանում էին, մերթ խամրում, ի վերջո լուսավորեցին Մոնթագին:

Գնա, գնա, մի՛ կանգնիր:

Մոնթազը մի ակնթարթ հապաղեց, ձեռքերի մեջ ամուր սեղմեց գրքերը և մեծ ծիգով առաջ շարժվեց: Նրա ոտքերը բնագոյաբար շտապում էին, վազում, բայց նա բարձրաձայն նախատեց իրեն և կրկին անցավ հանգիստ քայլքին: Նա արդեն փողոցի մեջտեղում էր, շարժիչի աղմուկը հետզհետե ավելի էր մեծանում. մեքենան արագացնում էր ընթացքը:

Իհարկե, ոստիկանությունն է: Ինձ նկատել են: Բայց՝ ոչինչ, հանգի՛ստ, հանգի՛ստ, մի՛ շրջվիր, շուրջդ մի՛ նայիր, մի՛ զգացրու, թե դու անհանգստանում ես: Քայլի՛ր, միայն քայլի՛ր, և վերջ:

Մեքենան սլանում էր, մեքենան դղրդում էր, մեքենան մեծացնում էր արագությունը: Ունում և վնգում էր, թռչում էր՝ հազիվ հպվելով գետնին, սուրում էր հրացանից արձակած անտեսանելի գնդակի պես: Ժամում հարյուր քսան մղոն, ժամում հարյուր երեսուն մղոն: Մոնթազը սեղմեց ատամները: Թվաց՝ լուսարձակների լույսն այրեց նրա դեմքը, կոպերը ցնցվեցին, մարմինը պատվեց լարժուն քրտինքով:

Մոնթազի ոտքերը անճոռնի կերպով քարշ էին գալիս, նա սկսեց ինքն իրեն խոսել, ապա հանկարծ չդիմացավ ու վազեց: Նա ձգտում էր հնարավորին չափ հեռու գցել ոտքերը, առաջ, առաջ, ահա այդպե՛ս, այդպես: Տե՛ր աստված: Տե՛ր աստված: Ձեռքից մի գիրք ընկավ, կանգ առավ, քիչ մնաց՝ ետ դառնար, սակայն միտքը փոխեց և կրկին նետվեց առաջ՝ գոռալով քարե ամայության մեջ, իսկ բզեզ-ավտոմեքենան սլանում էր իր որսի ետևից, նրանց բաժանում էր երկու հարյուր ոտնաչափ, ապա՝ հարյուր, իննսուն, ութսուն, յոթանասուն... Մոնթազը շնչահեղձ էր լինում, անշնորհք կերպով ծոճում էր ձեռքերը, ոտքերը վեր ու վար նետում: Մեքենան ավելի ու ավելի էր մոտենում, շչում էր, ազդանշան տալիս: Մոնթազը հանկարծ շրջեց գլուխը, լուսարձակների սպիտակ լույսն այրեց նրա աչքերը, մեքենան չկար, միայն լույսի կուրացուցիչ խուրձ, բոցկլլտուն ջահ, որ սոսկալի թափով նետվում էր Մոնթազի վրա,՝ դղրդուն, բոց-հիմա, հիմա կբախվի...

Մոնթազը սայթաքեց և ընկավ:

«Ես կործանվեցի: Ամեն ինչ վերջացած է»:

Բայց ընկնելը փրկեց նրան: Մոնթազին բախվելուց ակուն-

թարթ առաջ արագընթաց մեքենան հանկարծ կտրուկ թեքվեց, շրջանցեց նրան և անհետացավ: Մոնթազը պառկած էր բերանքսիվայր, երեսը դեպի սալարկուղին: Արտանետված գագերի կապույտ ծխի հետ նրան հասան ծիծաղի պատառիկներ: Նա բարձրացրեց աջ ձեռքը, որ շատ առաջ էր ձգված: Միջնամատի ծայրին սևին էր տալիս մի նեղ շերտ՝ սլացող մեքենայի անվահետքը: Չհավատալով աչքերին, նա նայեց սև շերտին և դանդաղ ոտքի ելավ:

«Մի՞թե ոստիկանությունը չէր», մտածեց նա:

Մոնթազը նայեց մայրուղու երկարությամբ: Ամայի էր: Ընչ, ոստիկանությունը չէր, պարզապես պատանիներով լցված մեքենա էր: Քանի՞ տարեկան կլինեին: Տասներկու, տասնվեց... Աղմկոտ, ճղճղան խումբը զբոսանքի է դուրս եկել, տեսել են քայլող մարդու, — հազվադեպ տեսարան, զարմանք բան մեր օրերում, — և որոշել են. «Հապա խփենք գցենք»՝ նույնիսկ չկասկածելով, որ նա հենց միստր Մոնթազն է, փախստական, որին քաղաքով մեկ փնտրում է ոստիկանությունը: Այո՛, ընդամենը պատանիների աղմկոտ ընկերախումբ, որ զբոսնում է լուսնկա գիշերով, սլանալով հինգ-վեց հարյուր մղոն արագությամբ, որի դեպքում դեմքը ընդարմանում է քամուց: Լուսացաքին նրանք կամ կվերադառնան տուն, կամ չեն վերադառնա, կամ ողջ կլինեն, կամ ոչ. չէ՛ որ հենց դա էր այդպիսի արկածների այրող հաճույքը:

«Նրանք ցանկանում էին սպանել ինձ», — մտածեց Մոնթազը: Նա երերում էր: Տարտղնված օդում կամաց-կամաց նըստում էր փոշին: Նա շոշափեց այտի կապտուկը: «Այո՛, նրանք ցանկանում էին սպանել ինձ, հենց այնպես, առանց որևէ պատճառի, չմտածելով անգամ, թե ինչ են անում»:

Մոնթազը ուղղվեց դեպի դեռևս հեռու մայրը՝ հորդորելով ոտքերին՝ շարժվե՛լ: Մի կերպ հավաքել էր ցրված գրքերը, քայց չէր հասկանում, թե ինչպես էր կռացել ու վերցրել դրանք: Այժմ նա գրքերը ձեռքից ձեռք էր տեղափոխում, ինչպես խաղամուլը բարդ քայլ անելուց առաջ:

Գուցե նրա՞նք սպանեցին Զլարիսին:

Նա կանգ առավ ու մտովի կրկնեց մի անգամ ևս.

— Գուցե նրա՞նք սպանեցին Զլարիսին:

Եվ նա ցանկացավ ճշալով վազել նրանց ետևից:

Նրա աչքերը արցունքոտվեցին:

Այո՛, նրան փրկեց սայթաքելը: Վարորդը, տեսնելով ընկած Մոնթագին, բնագոյաբար հասկացավ, որ լրիվ ընթացքով սլացող մեքենան, դիպչելով պառկած մարմնին, անխուսափելիորեն կշրջվի և բոլորին դուրս կշարտի: Իսկ եթե ինքը վայր չընկնե՞ր...

Մոնթագը հանկարծ շունչը պահեց:

Չորս թաղամաս հեռու բզեզ-մեքենան դանդաղեցրեց ընթացքը: Կտրուկ շրջադարձ կատարեց, հենվելով ետևի անիվներին, իսկ այժմ ետ էր սլանում փողոցի նույն կողմով՝ խախտելով երթևեկության բոլոր կանոնները:

Բայց Մոնթագն արդեն վտանգից դուրս էր. նա թաքնվել էր խավար նրբանցքում՝ իր ճանապարհորդության նպատակակետում: Այստեղ էր նա ձգտում մեկ ժամ, գուցե և ընդամենը մեկ րոպե առաջ: Սարսուելով գիշերային ցրտից՝ նա ետ նայեց: Բզեզը սլացավ կողքով, դուրս եկավ մայրուղու կենտրոն և անհետացավ. ծիծաղի պոռթկումը կրկին խաթարեց գիշերային լուսությունը:

Քայլելով խավար նրբանցքով՝ Մոնթագը տեսնում էր, ինչպես երկնքից իջնում էին ուղղաթիռները՝ նման ապագա երկարատև ձմռան ձյան առաջին փաթիլների...

Տունն ընկղմված էր լուսության մեջ:

Մոնթագը մոտեցավ այգու կողմից, շնչելով նարգիզների, վարդերի և ցողաշաղախ խոտերի գիշերային արբեցնող բուրմունքը: Նա հրեց ետնամուտքի ապակեպատ դուռը, ականջ դրեց և անաղմուկ մտավ նախասենյակ:

«Միսիս Բլաք, դուք քնա՞ծ եք», — մտածեց նա: — Ես գիտեմ, լավ բան չէ իմ արածը, բայց ձեր ամուսինը նույն կերպ է վարվում ուրիշների հետ և երբեք իրեն հարց չի տալիս՝ լա՞վ է դա, թե՞ վատ, երբեք չի մտահոգվում և չի տանջվում: Այժմ էլ, քանի որ դուք հրկիզողի կին եք, եկել է ձեր հերթը, այժմ կրակը կոչնչացնի ձեր տունը բոլոր այն տների փոխարեն, որ այրել է ձեր ամուսինը, այն բոլոր դժբախտությունների դիմաց, որ առանց իրեն հաշիվ տալու, նա պատճառել է մարդկանց»:

Տունը լուռ էր:

Մոնթազը գրքերը թաքցրեց խոհանոցում և վերադարձավ նրբանցք: Նա շրջվեց. խավարի ու լուռության մեջ թաղված տունը քնած էր:

Նա նորից քայլում էր գիշերային փողոցներով: Քամուց քշված թղթի կտորների նման ուղղաթիռները պտտվում էին քաղաքի վրա: Ծանապարհին նա մտավ փակ խանութի մոտ տեղադրված մենավոր հեռախոսախցիկը և գանգահարեց: Նա երկար կանգնեց՝ ցրտից սրսփալով սպասեց այնքան, մինչև որ հեռվում սկսեցին ոռնալ հրակալանի ազդականչերը. Սալամանդրները դղրդյունով սլացան՝ այրելու միստր Բլաքի տունը: Միստր Բլաքն աշխատանքի մեջ է, բայց նրա կինը, դողդողալով առավոտյան ցրտից, կկանգնի և կնայի՝ ինչպես է վառվում ու փլվում իր տան տանիքը: Իսկ այժմ նա դեռ խոր քնած է:

Բարի գիշեր, միսիս Բլաք:

— Ֆաբեր:

Դուան թակոց: Մի անգամ ևս: Ծշուկով ասված անուն: Սպասում: Վերջապես, մի րոպե անց, Ֆաբերի տնակում աղոտ լույս նշմարվեց: Սպասումի մեկ րոպե ևս, և ետնադուռը բացվեց:

Նրանք՝ Մոնթազը և Ֆաբերը, լուռ նայում էին իրար կիսախավարում, ասես չհավատալով իրենց աչքերին: Հետո Ֆաբերը, սթափվելով, ծանկեց նրա ձեռքը, ներս քաշեց, նստեցրեց և կրկին վերադարձավ դռների մոտ, ականջ դրեց: Լուսադեմի լուռության մեջ ոռնում էին ազդականչերը: Ֆաբերը ներս մտավ և ծածկեց դուռը:

— Ես ինձ կատարյալ ապուշի պես պահեցի, սկզբից մինչև վերջ հիմարություններ արեցի: Չեմ կարող երկար մնալ ալստեղ: Ես գնում եմ, աստված գիտե, թե ուր, — ասաց Մոնթազը:

— Համենայն դեպս, դուք հիմարություններ արեցիք արժանավոր գործի համար, — պատասխանեց Ֆաբերը: — Ես կարծում էի՝ դուք այլևս ողջ չեք: Սարքը, որ տվեցի ձեզ...

— Այրվեց:

— Ես լսեցի, թե հրկիզապետն ինչպես էր խոսում ձեզ հետ, իսկ հետո հանկարծ ամեն ինչ լռեց: Ստադիր էի դուրս գալ ձեզ որոնելու:

— Հրկիզապետը մեռավ: Նա հայտնաբերեց պարկուճը և լսեց ձեր ձայնը. ուզում էր հետամտել, գտնել ձեզ: Ես հրցիրով այրեցի նրան:

Ֆաբերը նստեց աթոռին: Նրանք երկար ժամանակ լուռ էին:

— Աստվա՛ծ իմ, ինչպե՛ս պատահեց, — կրկին խոսեց Մոնթազը: — Դեռ երեկ ամեն ինչ կարգին էր, իսկ այսօր զգում եմ, որ շնչահեղձ եմ լինում: Մարդը քանի՞ անգամ կարող է կործանվել և, այնուամենայնիվ, ողջ մնալ: Ես դժվարությամբ եմ շնչում: Բիրթին մեռած է, բայց մի ժամանակ նա իմ ընկերն էր: Միլլին հեռացավ, ես կարծում էի, նա իմ կինն է, իսկ հիմա՞... այլևս ոչ տուն ունեմ, ոչ աշխատանք և ստիպված պիտի թաքնվեմ: Այստեղ գալու ճանապարհին ես ծածուկ գիրք դրի մի հրկիզողի տանը: Աստվա՛ծ իմ, որքան բան արեցի մեկ շաբաթվա ընթացքում:

— Դուք արել եք լուկ այն, ինչ չէիք կարող չանել: Այդպես էլ պետք է լիներ:

— Հավատում եմ: Գոնե դրան հավատում եմ: Գիտեի, որ այդպես կլինի: Վաղուց էի զգում, որ մեջս ինչ-որ բան է կուտակվում: Ես մի բան էի անում, բայց բոլորովին այլ բան էի մտածում: Զարմանում եմ՝ ինչպես արտաքուստ չէր երևում: Եվ ահա այժմ եկել եմ ձեզ մոտ, որպեսզի ձեր կյանքն էլ խորտակեմ: Չէ՛ որ նրանք կարող են այստեղ գալ:

— Երկար տարիների ընթացքում առաջին անգամ ես կրկին ապրում եմ, — պատասխանեց Ֆաբերը: — Ես զգում եմ, որ անում եմ այն, ինչ վաղուց պետք է անեի: Առայժմ չեմ վախենում: Հավանաբար պատճառն այն է, որ վերջապես անում եմ այն, ինչ անհրաժեշտ է: Կամ՝ թերևս այն, որ մի անգամ համարձակ արարք գործելով, արդեն չեմ ուզում ձեր առջև վախկոտ երևալ: Հնարավոր է, որ հետագայում ևս գործեմ ավելի խիզախ արարքներ, ավելի մեծ վտանգի ենթարկեմ ինձ, որ դեպի ետ այլևս ճանապարհ չունենամ, որ չվախենամ, թույլ չտամ, որ սարսափը կրկին կաշկանդի ինձ: Ի՞նչ եք այժմ մտադիր անել:

— Փախչել: Թաքնվել:

— Դուք գիտե՞ք, որ պատերազմ է հայտարարված:

— Այո, լսեցի:

— Աստվա՛ծ իմ, ի՞նչ տարօրինակ է, — բացականչեց ծե-

րուկը:— Պատերազմը թվում է հեռավոր մի բան, որպիսեւս մենք մեր հոգսերն ունենք:

— Ես այդ մասին մտածելու ժամանակ չունեի:— Սոնթագը գրպանից հանեց հարյուր դոլարանոց թղթադրամը:— Վերցրեք: Թող ձեզ մոտ լինի: Երբ ես գնամ, տնօրինեք, ինչպես հարմար կգտնեք:

— Սակայն...

— Գուցե կեսօրին այլևս ողջ չլինեմ: Ժախսեք գործի համար: Ֆաբերը գլխով արեց:

— Փորձեք դուրս գալ գետի մոտ, ապա գնացեք ափի երկայնքով, այնտեղ հին երկաթգիծ կա, որ քաղաքից ձգվում է դեպի երկրի խորքը: Գտեք ու շարժվեք նրա ուղղությամբ: Հաղորդակցությունը այժմ տարվում է օդով, երկաթգծերի մեծ մասը վաղուց ի վեր լքված է, բայց այդ մեկը դեռ պահպանվում է: Ես լսել եմ, որ երկրի որոշ անկյուններում թափառաշրջիկների ճամբարներ են մնացել: Նրանց քայլող թափառախումբ են կոչում: Հարկավոր է միայն շատ հեռանալ քաղաքից, մեկ էլ սրատես աչք ունենալ: Ասում են, որ Լոս-Անջելեսի երկաթգծի շրջանում կարելի է հանդիպել Հարվարդի համալսարանի նախկին դասախոսներից շատերին: Նրանք ոստիկանությունից թաքնվող փախստականներ են, որոնց համենայն դեպս հաջողվել է փրկվել: Նրանք շատ չեն, և, ինչպես երևում է, կառավարությունն այնքան վտանգավոր չի համարում, որ շարունակի որոնումները: Որոշ ժամանակ կարող եք թաքնվել նրանց մոտ, իսկ հետո ջանացեք փնտրել-գտնել ինձ Սենթ-Լուիսում: Ես այնտեղ կմեկնեմ այսօր առավոտյան, ժամը հինգի ավտոբուսով, ուզում եմ հանդիպել Ձեր տպագրիչին: Տեսնո՞ւմ եք, ես էլ վերջապես գործի եմ անցնում: Ձեր փողերը բարի գործի կծառայեն: Ընտրե՛րե՛ք ինձ Սոնթագ, և աստված ձեզ պահպան: Գուցե կուզենալի՞ք մի քանի բոպե պառկել:

— Ո՛չ,— ավելի լավ է շտապեմ:

— Հիմա տեսնենք, թե ինչպես են զարգանում իրադարձությունները:

Ֆաբերը Սոնթագին տարավ ննջարան և մի կողմ քաշեց պատից կախված նկարը: Նրա տակ փոստային բացիկի մեծության հեռուստատեկրան կար:

— Ես միշտ ցանկանում էի փոքրիկ մի էկրան ունենալ, որ հարկ եղած դեպքում հնարավոր լիներ ձեռքի ափով ծածկել, թե չէ ո՞ւմ են պետք գոռում-գոչյունով ականջ խլացնող վիթխարի պատերը: Ահա՛, նայե՛ք:

Նա միացրեց էկրանը:

— Մո՛նթագ,— արտասանեց հեռուստացույցը, և էկրանը լուսավորվեց: — Մ-Ո-Ն-Թ-Ա-Գ. տառ առ տառ կարդաց հաղորդավարը:— Գալ Մոնթագ: Դեռևս փնտրվում է: Որոնումները կատարում են ոստիկանական ուղղաթիռները: Հարևան շրջանից բերվել է նոր մեխանիկական շուն:

Մոնթագը և Ֆաբերը անխոս իրար նայեցին:

— Մեխանիկական շունը երբեք չի վրիպում: Դա հրաշալի գյուտ է և օգտագործվելու առաջին իսկ օրից մինչև հիմա ոչ մի անգամ չի սխալվել: Մեր հեռուստատեսային ընկերությունը հպարտ է, որ իրեն է հնարավորություն ընձեռված՝ ուղղաթիռի վրա տեղակայված հեռուստախցիկով ամենուրեք հետևելու մեխանիկական շանը՝ հանցագործի հետքերով գնալիս:

Ֆաբերը վիսկի լցրեց բաժակները:

— Մեզ չէր խանգարի:

Նրանք խմեցին:

— ... Մեխանիկական շան հոտառությունն այնքան կատարյալ է, որ կարող է տասը հազար անհատական հոտ տարբերել և, առանց նորից լարվելու, գտնել այդ տասը հազար մարդուց ցանկացածի հետքը:

Ֆաբերի մարմնով թեթև դող անցավ: Նա հայացք գցեց սենյակին, պատերին, դռանը, բռնակին, աթոռին, որի վրա նստած էր Մոնթագը: Մոնթագը նկատեց այդ հայացքը: Այժմ նրանք երկուսով արագ զննեցին սենյակը: Մոնթագը հանկարծ զգաց, թե ինչպես դողդողացին իր ունեզերը, ասես ինքը մեկնել է իր հետքով, ասես իր հոտառությունն այնքան է սրվել, որ ի վիճակի է օդի մեջ տարածված հոտով գտնելու հետքը, ասես հանկարծ տեսանելի դարձան քրտինքի շատ մանր կաթիլները դռան բռնակի վրա, այնտեղ, որտեղից նա ձեռքով բռնել էր, դրանք բազմաթիվ էին և փայլվում էին, ինչպես պստիկն ջահի բյուրեղապակյա կախազարդեր: Ամեն ինչի վրա մնացել էին նրա էության մասնիկները: Ինքը՝ Մոնթագը, ամենուր էր՝ և՛ տանը, և՛ դրսում, նա լուսատու ամպ էր, օդի մեջ տարրա-

լուծված ուրվական: Եվ դրանից դժվարանում էր շնչելը: Նա տեսավ, թե ինչպես էր Ֆաբերը շունչը պահել, ասես վախենում էր օդի հետ ներշնչել փախստականի ստվերը:

— Այժմ մեխանիկական շունը ուղղաթիռից կիջեցվի հրդեհի վայրը:

Փոքրիկ Էկրանին հայտնվեց այրված տունը, ամբոխը, սավանով ծածկված ինչ-որ բան և երկնքից իջնող ուղղաթիռը, որը նման էր անձոռնի ծաղկի:

«Այսպես, ուրեմն, նրանք որոշել են խաղը մինչև վերջ հասցնել», — մտածեց Մոնթագրը: Ներկայացումը կկայանա, չնայած որ ընդամենը մեկ ժամ հետո կարող է պատերազմ սկսվել...

Կախարդվածի նման, վախենալով շարժվել, Մոնթագրը հետևում էր անցուդարձին: Այդ ամենը թվում էր այնքան հեռավոր, իր հետ որևէ կապ չունեցող, կարծես թե ինքը նստած է թատրոնում և դրամա է դիտում, ինչ-որ ուրիշ մեկի դրաման, նայում է ոչ առանց հետաքրքրության, նույնիսկ ինչ-որ առանձնահատուկ հաճույքով: «Բայց չէ՛ որ այս ամենը ի՛մ մասին է»:

Եթե նա ցանկանար, կարող էր մնալ այստեղ, հարմարավետ սենյակում և մինչև վերջ հետևել ողջ հետապնդմանը՝ քայլ առ քայլ, նրբանցքներով ու փողոցներով, ընդարձակ, ամալի բուլվարով, մարգագետիններով և խաղահրապարակներով, հաղորդավարի հետ մերթ այստեղ, մերթ այնտեղ՝ անհրաժեշտ բացատրությունների համար դադար տալով, հետո կրկին անցնել նրբանցքներով, հասնել միստր ու միսիս Բլաքների այրվող տանը և վերջապես դուրս գալ այստեղ, այս տնակի մոտ, որտեղ նրանք Ֆաբերի հետ նստել ու վիսկի են խմում, իսկ Էլեկտրական հրեշը, ինչպես մահն ինքը, այդ ընթացքում արդեն հոտոտում է իր թարմ հետքը: Ահա, նա արդեն պատուհանի տակ է: Այժմ, եթե Մոնթագրը ցանկանա, կարող է ուղքի կանգնել և աչքը չկտրելով հեռուստացույցից, մոտենալ լուսամուտին, բացել ու դուրս կախվել մեխանիկական գազանին ընդառաջ: Եվ այդ ժամանակ վառ լուսավորված փոքրիկ Էկրանին նա կարող է զննել իրեն, ինչպես դրամայի գլխավոր հերոսի, հոչակավոր մարդու, որի մասին բոլորը խոսում են, որին գամված են բոլոր հայացքները. ուրիշ հյուրասենյակներում այդ թույլին բոլորը կտեսնեն իրեն բնական մեծությամբ, գունավոր:

Եվ եթե նա ուշադիր եղավ այդ վերջին պահին, նա դեռ կարող է անեություն մեկնելուց մի վայրկյան առաջ տեսնել, թե ինչպես է իրեն խոցում պրոկաինե ասեղը՝ ի խաղաղումն անհամար մարդկանց, որոնք մի քանի րոպե առաջ ազդանշանների աղեկտուր վայնասունից արթնացել են քնից և շտապել հյուրասենյակները, որպեսզի հուզմունքով հետևեն այդ հազվագյուտ տեսարանին՝ գազանորսին, հանցագործի հետապնդմանը, մի գործող անձով դրամային:

Կհասցնի՞ արդյոք ասել իր վերջին խոսքը: Եթե միլիոնավոր հեռուստադիտողների առաջ շունը բռնի իրեն, չպե՞տք է արդյոք ինքը՝ Մոնթազը, մեն մի արտահայտությամբ կամ գոնե մի խոսքով ամփոփի այս վերջին շաբաթվա իր կյանքի հանրագումարը, այնպես, որ իր ասածը դեռ երկար գոյատևի իրենից հետո, երբ շունը, բացուխուփ անելով իր մետաղյա ծնոտները, ետ կցատկի ու կվազի հեռուն, դեպի խավարը: Հեռուստախցիկները, տեղում քարացած, կհետևեն հեռացող և հետըզհետե փոքրացող գազանին. տպավորիչ ավարտ: Որտե՞ղ նա գտնի այնպիսի խոսք, այնպիսի մի բառ, որով այրի մարդկանց դեմքերը, արթնացնի քնից:

— Նայեցեք, — շշնջաց Ֆաբերը:

Ուղղաթիռից սահուն կերպով ինչ-որ բան իջավ, որը նման չէր ոչ մեքենայի, ոչ գազանի, ոչ մեռած էր, ոչ կենդանի, աղոտ կանաչ լույս էր արձակում: Մի ակնթարթ հետո այդ հրեշն արդեն կանգնած էր Մոնթազի տան ծխացող փլատակների մոտ: Ոստիկանները վերցրին նրա շարտած հրցիրը և մոտեցրին մեխանիկական շան դնչին: Լսվեց դզզոց, չխկչխկոց, գվվոց:

Սթափվելով՝ Մոնթազը գլուխն օրորեց և վեր կացավ: Խմեց վիսկիի մնացորդը:

— Ժամանակն է: Ծատ եմ ցավում, որ այսպես եղավ:

— Ցավո՞ւմ: Ինչի՞: Որ վտա՞նգ է սպառնում ինձ, իմ տանը: Ես պատրաստ եմ դիմագրավել: Գնացե՛ք, ի սեր աստծո, գնացե՛ք: Թերևս ինձ հաջողվի նրանց ուշացնել...

— Սպասեք: Ի՞նչ օգուտ, եթե դուք ևս բռնվեք: Երբ ես գնամ, այրեք անկողնու ծածկոցը. ես կպել եմ նրան: Վառարան նետեք հյուրասենյակի արևոը, որին նստած էի: Սպիրտով մաքրեք կահույքը, բոլոր դռների բռնակները: Այրեք ուղեգորգը, բոլոր սենյակներում ողջ հզորությամբ միացրեք օդափոխիչ-

ները, ամենուր նավթալին ցանք, եթե ունեք: Ապա մինչև վերջ բացեք ձեր այգու ոռոգման ցանցը, լվացեք մայրերը: Գուցե ձեզ հաջողվի կորցնել հետքը...

Ֆաբերը սեղմեց նրա ձեռքը:

— Ես կհոգամ այդ մասին: Բարի ճանապարհ: Եթե երկուսը էլ ողջ մնանք, հաջորդ շաբաթ կամ մի քանի շաբաթ հետո ձեր մասին լուր հաղորդեք: Գրեք ինձ Սենթ-Լուիս, գլխավոր փոստատուն, ցայահանջ: Ափսոս, չեմ կարող ամբողջ ժամանակ ձեզ հետ կապ պահպանել. դա շատ լավ կլիներ և՛ ձեզ, և՛ ինձ համար, բայց ես չունեմ երկրորդ լսող սարքը: Հասկանում եք, երբեք չեմ մտածել, որ պետք կգա: Ա՛խ, ի՞նչ թեր հիմարն եմ եղել: Չեմ կանխատեսել, չեմ մտածել... Հիմար եմ, ապուշի մեկը: Եվ ահա, այժմ, երբ սարքն անհրաժեշտ է, չունեմ, որ դնեք ձեր ականջին: Ի՞նչ արած: Գնացե՛ք:

— Եվս մի խնդրանք: Շտապ ինձ մի ճամպրուկ տվեք, նրա մեջ դրեք ձեր հնամաշ հագուստներից՝ հին կոստյում, որքան մաշված, այնքան լավ, վերնաշապիկ, հին չստեր ու գուլպաներ...

Ֆաբերը դուրս եկավ և անմիջապես վերադարձավ: Նրանք ստվարաթղթե ճամպրուկը սոսնձեցին կաշուն ժապավենով:

— Որպեսզի չցնդի միստեր Ֆաբերի հին հոտը, — ասաց քրտինքի մեջ կորած Ֆաբերը:

Մոնթագը վիսկի շաղ տվեց ճամպրուկի վրա:

— Ամենևին պետք չէ, որ շունը միանգամից երկու հոտն էլ առնի: Կարելի՞ է՝ հետս վերցնեմ վիսկիի մնացորդը: Ինձ դեռ պետք կգա: Օ՛, տեր աստված, հույս ունեմ, որ մեր ջանքերն ապարդյուն չեն...

Նրանք կրկին միմյանց ձեռք սեղմեցին և, արդեն դժպի դուռն ուղղվելով, մի անգամ էլ նայեցին հեռուստացույցին: Շունը հետքով շարժվում էր դանդաղ, անաղմուկ, հոտոտելով գիշերային քամին: Հեռուստախցիկներով ուղղաթիռները պտըտվում էին նրա վերևում: Շունը մտավ առաջին նրբանցքը:

— Մնաց բարով:

Մոնթագը դուրս սահեց տնից ու վազեց՝ ձեռքի մեջ սեղմած կիսադատարկ ճամպրուկը: Նա լսեց, թե ինչպես իր ետևից սկսեցին բանել ջրող սարքերը, լուսաբացի օդը լցնելով թափ-

վող անձրևի աղմուկով, սկզբում մեղմ, ապա ավելի ուժգին ու համաչափ: Ջուրը լվանում էր մարգագետնի շափիղները և առվակներով ցած հոսում փողոց: Մի քանի կաթիլ ընկավ Սոնթագի դեմքին: Ծերուկը հրաժեշտի խոսքեր գոռաց կամ գուցե Նրան թվա՞ց միայն:

Նա արագ հեռանում էր տնից՝ շարժվելով դեպի գետը:

Սոնթագը վազում էր:

Նա զգում էր, թե ինչպես է մոտենում մեխանիկական շունը, աշնան շնչառության պես պաղ, թեթև ու չոր, թույլ քամու պես, որից նույնիսկ խոտը չի շարժվում, չեն շրխկում պատուհանների փեղկերը, մայրի սպիտակ սալաքարերի վրա չի օրորվում ձյուղերի ստվերը: Իր վազքով շունը չէր խաթարել շրջակա աշխարհի անշարժությունը: Իր հետ նա բերել էր լուրջություն, և Սոնթագը, անընդհատ զգալով այդ լուրջության ճնշումը, որը դառնում էր անտանելի, վազում էր:

Նա վազում էր դեպի գետը: Ծունչ առնելու համար մերթընդ մերթ կանգնելով՝ նայում էր արթնացող տների թույլ լուսավորված պատուհաններին, տեսնում էր մարդկանց ուրվապատկերները, որոնք իրենց հյուրասենյակներում նայում էին հեռուստապատերին, որոնց վրա նեոնային գույրշու ամպիկի պես իր փափուկ սարդանման թաթերի վրա ծոճվելով, մերթերևում, մերթ անհետանում էր մեխանիկական շունը: Ահա նա էլ մտերասում է, Լինկոլնի փողոցում, Կաղնիների զբոսայգու ծառուղիներում, Ֆաբերի տուն տանող նրբանցքում:

«Փախիր, — ինքն իրեն հորդորում էր Սոնթագը, — մի՛ կանգնիր, մի՛ հապաղիր»:

Էկրանն արդեն ցույց էր տալիս Ֆաբերի տունը. ջրող սարքերը ողջ թափով բանում էին՝ անձրևի ջիթեր մաղելով գիշերային օդի մեջ:

Ծունը կանգ առավ, ցնցվեց:

Ո՛չ: Սոնթագը ջղաձգորեն կառչեց լուսամուտագոգից: Միայն թե ոչ այնտեղ:

Պրոկաինե ասեղը դուրս եկավ և ետ քաշվեց, կրկին դուրս եկավ ու ետ քաշվեց: Նրա ծայրից պոկվեց-ընկավ թմբադեղի թափանցիկ կաթիլը. այն քուն է բերում, որից արթնացում չկա: Ասեղն անհետացավ շան մոուրթի մեջ:

Մոնթազի կուրծքը սեղմվեց, ասես նրա մեջ բռունցք խոթեցին:

Սեխանիկական շունը շրջվեց ու նետվեց դեպի նրբանցքը՝ հեռանալով Ֆաբերի տնից:

Մոնթազը հայացքը կտրեց Էկրանից և նայեց երկնքին. ուղղաթիռները մոտերքում էին, թռչում և վերադառնում էին նույն կետը, ինչպես լույսի շուրջը պտտվող մծեղներ:

Մոնթազը ծիգով ստիպեց իրեն հիշել, որ դա ինչ-որ մտացածին տեսարան չէ, որը դիպվածաբար գրավել է իր ուշադրությունը գետ տանող ճանապարհին, այլ այդ ինքն է հետեվում, թե ինչպես քայլ առ քայլ խաղարկվում է սեփական շախմատային պարտիան:

Նա բռավեց, որպեսզի դուրս գա թմբիրից, որպեսզի կտրվի այդ փողոցի վերջին տան պատուհանից և այն ամենից, ինչ ինքը տեսնում էր այնտեղ: Գրողի ծո՛ցը: Գրողի ծո՛ցը: Կարծես թե օգնեց: Նա նորից վազեց: Նրբանցք, փողոց, նրբանցք, փողոց և գետից փչող յուրահատուկ հոտը: Աջ, ձախ, աջ, ձախ: Նա վազում էր: Եթե հեռուստախցիկներն իրենց օբյեկտիվների մեջ առնեն նրան, ապա մեկ րոպե անց հեռուստադիտողներն Էկրաններին կտեսնեն քսան միլիոն վազող մոնթազների, ինչպես հազար անգամ իր տեսած հին անհամ կինոկատակերգությունում՝ ոստիկանների ու հանցագործների, հետապնդվողների ու հետապնդողների, որսորդների ու որսի մասին: Այժմ նրա ետևից են ընկել քսան միլիոն սովերի պես համր շներ, որոնք հյուրասենյակներում անդրադարձ թռիչքով պատեպատ են զարկվում, որպեսզի անհետանան և ապա հայտնըվեն աջ պատին, անցնեն միջնապատին, ապա ձախ պատին, և այդպես անվերջ:

Մոնթազը խեցին մոցրեց ականջը:

— Ոստիկանությունն առաջարկում է Էլմտերասի բնակիչներից յուրաքանչյուրին բացել իր տան դուռը կամ դուրս նայել պատուհանից: Դա պետք է բոլորը կատարեն միաժամանակ: Փախստականին չի հաջողվի թաքնվել, եթե բոլորը միասին դուրս նայեն իրենց տներից: Եվ այսպես, պատրաստվե՛ք:

Իհարկե: Ինչո՞ւ այդ բանը նրանք շուտ չեն հասկացել, ինչո՞ւ մինչև այժմ երբեք այդպես չեն վարվել: Թող բոլորը պատրաստվեն, բոլորը միանգամից դուրս նայեն: Փախստականը

չի կարող թաքնվել: Նա միակ մարդն է, որ այդ պահին վազում է փողոցով, միակը, որ համարձակվել է հանկարծ ստուգել իր ոտքերի շարժվելու, վազելու կարողությունը:

— Ղուրս նայել տասը հաշվին: Սկսում ենք: Մե՛կ: Երկո՛ւ: Նա զգաց, թե ինչպես ամբողջ քաղաքը ոտքի ելավ:

— Երե՛ք:

Արագ: Չախ, աջ:

Ամբողջ քաղաքը շրջվեց հազարավոր դռների կողմը:

— Չո՛րս:

Բոլորը լուսնոտների նման շարժվեցին դեպի ելքը:

— Հի՛նգ:

Նրանց ձեռքերը կպան դռների բռնակներին: Գետի կողմից զով էր փչում, ինչպես տեղատարափից հետո: Մոնթագի կոկորդը չորացել էր: Աչքերը բորբոքվել էին վազքից, հանկարծ նա բղավեց, ասես այդ բղավոցը կարող էր նրան առաջ հրել, օգնել հաղթահարելու վերջին հարյուր լարդը:

— Վեց, յոթ, ո՛ւթ:

Հազարավոր դռների վրա պտտվեցին դռան բռնակները:

— Ի՛նք:

Նա վազեց անցավ տների վերջին շարքի մոտով, ապա լանջըն ի վար, դեպի ջրի շարժվող մուգ գանգվածը:

— Տա՛սը:

Ղռները լայնորեն բացվեցին:

Նա պատկերացրեց հազարավոր դեմքեր, որոնք ակնդետ նայում էին փողոցների, բակերի, գիշերային երկնքի խավարի մեջ. գունատ, ահաբեկված դեմքեր, որոնք թաքնվում էին վարագույրների ետևում, ինչպես գորշ գազանիկներ: Նրանք ղուրս են նայում իրենց էլեկտրական բներից գորշ, անգույն աչքերով, գորշ շրթունքներով ու դեմքերով, գորշ մտքերով:

Բայց Մոնթագն արդեն գետափին էր:

Նա ձեռքը մտցրեց ջրի մեջ՝ համոզվելու համար, որ պատրանք չէ: Մտավ գետը, խավարում մերկացավ, ջուր ցալեց մարմնին, ձեռքերը և գլուխը մտցրեց գինու պես արբեցնող գովուրթյան մեջ, խմեց այն, շնչեց նրա բույրը:

Հազնելով Ֆաբերի հին զգեստներն ու շատերը՝ նա գետը նետեց իր հագուստը և նայեց, թե ջուրն ինչպես է տանում:

Իսկ հետո, ձեռքում պահած ճամպրուկը, գետի միջով ոտքերը քարշ տալով, հեռացավ ասից, մինչև որ ոտքերը կտրվեցին հատակից, և հոսանքը խլեց, քշեց նրան խավարի մեջ:

Նա արդեն հասցրել էր հոսանքի ուղղությամբ լողալով անցնել երեք հարյուր լարդ, երբ շունը հասավ գետին: Գլխավերելում գվվում էին սավառնող ուղղաթիռների պրոպելլերները: Լույսի խրճերը թափվեցին գետի վրա, և Սոնթագը սուզվեց, փրկվելով այդ հրավառությունից, որը նման էր ամպերը ձեռքող արևին: Նա զգաց, թե ինչպես է գետը մեղմորեն քաշում-տանում իրեն խավարի մեջ: Հանկարծ լուսարձակների ճառագայթներն ուղղվեցին դեպի ասի, ուղղաթիռները կրկին շրջվեցին դեպի քաղաք, ասես նոր հետքի վրա ընկան: Մի ակնթարթ ևս, ու նրանք անհետացան: Անհետացավ և շունը: Մնացին սոսկ սառը գետը և Սոնթագը, որ լողում էր անսպասելի իջած լուռության մեջ, ավելի ու ավելի հեռանալով քաղաքից, հետապնդումից, ամեն ինչից:

Նրան թվաց, թե ինքը հենց նոր է իջել թատրոնի բեմահարթակից, որտեղ աղմկում էր դերասանների խումբը կամ թե դուրս է եկել ոգեկոչության վիթխարի սեանսից, որին մասնակցում էր շաղակրատող ուրվականների մի հոծ բազմություն: Անհրական, սարսափելի աշխարհից Սոնթագը հայտնվել էր իրական աշխարհում, բայց չէր կարողանում դեռևս լիովին զգալ նրա որոշակիությունը, քանի որ այն չափազանց նոր էր նրա համար:

Մթին ասիերը սահեցին կողքով, գետը այժմ նրան տանում էր բլուրների միջով: Բազում տարիների ընթացքում առաջին անգամ իր գլխավերելում նա աստղեր տեսավ, իրենց կանխագծված պտույտը կատարող լուսատուների երթը: Աստղային վիթխարի կառքը սահում էր երկնքով՝ սպառնալով ցած գլորվել ու ձգմել նրան:

Երբ ճամպրուկը լցվեց ջրով և ընկղմվեց, Սոնթագը շորջվեց մեջքի վրա: Գետի ալիքները մեղմ ու հանդարտ ծփում էին՝ ավելի ու ավելի հեռանալով մարդկանցից, որոնք նախաճաշին ստվեր են ուտում, ճաշին՝ ծուխ, ընթրիքին՝ մառախուղ: Իրոք որ, գետն իրական էր. նա իր գրկում հոգատարությամբ պա-

հում էր Մոնթազին, չէր շտապեցնում, ժամանակ էր տալիս հանդարտ մտորելու այդ ամսվա, այդ տարվա, ողջ կյանքի ընթացքում իր հետ կատարվածի մասին: Նա ականջ դրեց իր սրտի զարկերին. այն բաբախում էր հանգիստ ու համաչափ: Եվ մտքերն էլ արդեն չէին եռում կատաղի շրջապտույտի մեջ, նրանք նույնքան հանգիստ էին, որքան արյան հոսքը իր երակներում:

Լուսինը կախված էր երկնքում: Լուսին և Լուսնի լույս: Որտեղի՞ց է այն: Հասկանալի է՝ արևից: Իսկ արևը որտեղի՞ց է վերցնում իր լույսը: Օր-օրի, անընդմեջ այրվում է նա սեփական կրակով: Արեգակ և ժամանակ: Արեգակ, ժամանակ և կրակ: Այրող կրակ: Գետը մեղմ օրորում էր Մոնթազին իր ալիքների վրա: Այրող կրակ: Երկնքում արևն է, երկրի վրա՝ ժամանակ չափող ժամացույցները: Հանկարծ այդ ամենը միաձուլվեց Մոնթազի գիտակցության մեջ և դարձավ միասնական: Եվ երկրի վրա ապրած շատ տարիներից ու այդ գետի վրա անցկացրած մի քանի րոպեներից հետո նա վերջապես հասկացավ, թե ինչու ինքն այլևս երբեք չպետք է այրի:

Արևն այրում է ամեն օր: Նա այրում է ժամանակը: Տիեզերքը շարժվում է շրջագծով և պտտվում է իր առանցքի շուրջը: Ժամանակն այրում է տարիները և մարդկանց, այրում է ինքը, առանց Մոնթազի օգնության: Իսկ եթե ինքը՝ Մոնթազը, մյուս հրկիզողների հետ այրի մարդկանց ստեղծածը, իսկ արևն այրի ժամանակը, ապա ոչինչ չի մնա: Ամեն ինչ կայրվի:

Նրանցից մեկը պետք է թողնի այրելը: Անշուշտ, ոչ արևը: Նշանակում է՝ պարտավոր է թողնել ինքը՝ Մոնթազը, և նրանք, ում հետ կողք-կողքի աշխատում էր ընդամենը մի քանի ժամ առաջ: Ինչ-որ տեղ վերստին պետք է սկսվի արժեքների պահպանման ընթացքը, ինչ-որ մեկը պետք է կրկին հավաքի ու պահպանի այն, ինչ ստեղծել է մարդը, պահպանի գրքերում, գրամաֆոնային ձայնապնակներում, մարդկանց գլուխների մեջ, ամեն գնով փրկի ցեցից, բորբոսից, ժանգից, նեխումից և լուցկի ունեցող մարդկանցից: Աշխարհը լի է մեծ ու փոքր հրդեհներով: Շուտով նոր արհեստ կթնվի՝ կբացվեն հրակայուն զգեստների արհեստանոցներ:

Նա զգաց, որ կրունկները դիպան պինդ գետնին, կոշիկ-

Ների ներբաններն սկսեցին ճոճուալ գետաքարերի և ավազի վրա: Գետը նրան քշել հանել էր ափ:

Նա նայեց շուրջը: Նրա առջև, ինչպես վիթխարի անաչք, անդեմ ու տճև էակ, հազարավոր մղոններով փոված էր մթին հարթավայրը՝ սոսկ որպես տարածություն, ավելի հեռվում անսահման կանաչ բլուրներ ու անտառներ էին, որոնք Մոնթագին կանչում էին իրենց գիրկը:

Նա չէր ցանկանում հեռանալ գետի խաղաղ ջրերից: Նա վախենում էր, որ այնտեղ կրկին կհանդիպի մեխանիկական շանը, որ ծառերի սաղարթները հանկարծ կխշշան ուղղաթիւների հանած քամուց:

Բայց հարթավայրով սահում էր սոսկ աշնանային սովորական քամին, նույնքան խաղաղ ու հանգիստ, ինչպես կողքով հոսող գետը: Ինչո՞ւ շունն այլևս չի հետապնդում իրեն: Ինչո՞ւ հետապնդումը տեղափոխվեց ետ, քաղաք: Մոնթագը ականջ դրեց: Լռություն: Ոչ ոք: Ոչինչ:

«Մի՛լի, — մտածեց նա: — Հապա շուրջդ նայիր: Ականջ դիր: Ոչ մի ձայն: Լռություն: Որքա՞ն խաղաղ է, Մի՛լի: Չգիտեմ, դրան ինչպես կվերաբերվեիր: Թերևս ճչայիր. «Լոհ՛ր: Լոհ՛ր»: Մի՛լի, Մի՛լի»: Նա տխրեց:

Միլին չկար, չկար և մեխանիկական շունը: Հեռավոր դաշտերից փչող չոր խոտի բուրմունքը հանկարծ Մոնթագի հիշողության մեջ վերակենդանացրեց վաղուց մոռացված մի պատկեր: Մի անգամ, երբ դեռ փոքր երեխա էր, նրան ազարակ տարան: Հազվագյուտ օր էր իր կյանքում, երջանիկ օր, երբ վիճակվեց սեփական աչքերով տեսնել, որ անիրականության յոթ շղարշի ետևում, հյուրասենյակների հեռուստապատերից և քաղաքի թիթեղյա պարսպից այն կողմ, կա ուրիշ աշխարհ ևս, որտեղ կովերն արածում են կանաչ մարգագետնում, խոզերը կեսօրին չփչփում են լճակի տաք տիղմի մեջ, իսկ բլուրների վրա շները հաչոցով վազվզում են ճերմակ ոչխարների ետևից:

Այժմ չոր խոտի բուրմունքն ու ջրի ճողփյունը հիշեցրին նրան, թե ինչ հաճույքով էր քնել թարմ խոտի վրա մենավոր ազարակի դատարկ մարագում, հեռու աղմկուտ ճանապարհներից, հինավուրց հողմաղացի ստվերում, որի թևերը մեղմորեն ճոռում էին գլխավերևում, ասես հաշվելով անցնող տարիները: Եթե հնար լիներ, ինչպես այն ժամանակ, ողջ գիշերը պառ-

կել հարդանոցում՝ ականջ դնելով գազանիկների ու միջատների խշտխշտոցին, տերևների շրջլունին, գիշերային անորսալի շշուկներին...

Ուշ երեկոյան, մտածեց նա, ինքը գուցե և քայլերի ծայն լսելով՝ ելնի տեղից և նստի: Երբ քայլերը կհեռանան, կրկին կպառկի ու դուրս կնայի մարագի լուսամուտից: Եվ կտեսնի, թե ինչպես են մեկը մյուսի ետևից մարում ֆերմերի տնակի լույսերը, ինչպես է դեռատի ու գեղեցիկ կինը նստում մութ պատուհանի մոտ և սանրում մագերը: Նա պարզորոշ չի տեսնի, բայց այդ դեմքը կհիշեցնի իրեն այն աղջկան, որին ծանաչում էր երբևէ, հեռավոր և անդառնալի անցյալում, որն ունակ էր ուրախանալ անձրևից ու չխոցվել կրակե լուսատուիկներից: Աղջիկ, որ գիտեր, թե ինչ է պատմում խատուտիկը, երբ դրանով շփում են կզակը: Կինը կհեռանա պատուհանից, հետո կրկին կհայտնվի վերևում, լուսնի լույսով ողողված իր սենյակում: Եվ ունկնդրելով մահվան ծայնին՝ երկինքը մինչև բուն հորիզոնը երկու սև մասի ձեղքող հրթիռային ինքնաթիռների դղրդյունի տակ, ինքը՝ Մոնթագը, կսպասի մարագի իր հուսալի թաքստոցում ու կնայի, թե ինչպես զարմանալի, իրեն անձանոթ աստղերը հուշիկ սահում են դեպի երկնակամարի եզրը՝ նահանջելով այգաբացի մեղմ լույսի առաջ:

Առավոտյան նա հոգնություն չի զգա, թեև աչք չի փակել, և ամբողջ գիշեր շուրթերին ժպիտ է խաղացել. խոտի տաք բույրը և գիշերային անդորրի մեջ տեսածն ու լսածը նրա համար եղել են լավագույն հանգիստը:

Իսկ ներքևում, սանդուղքի մոտ, նրան կսպասի արտակարգ մի ուրախություն ևս: Նա զգուշորեն կիջնի ցայգալույսով ողողված մարագից, երկրային կյանքի գեղեցկության զգացումով տոգորված և հանկարծ կքարանա տեղում՝ տեսնելով այդ փոքրիկ հրաշքը: Ապա կխոնարհվի և, վերջապես, ձեռքը կհայի նրան:

Նա կտեսնի մի բաժակ թարմ, սառը կաթ, մի քանի խնձոր և տանձ:

Դա այն ամենն է, ինչ հարկավոր է իրեն, երաշխիքը այն բանի, որ անձայրաժիր աշխարհը պատրաստ է ընդունել իրեն և ժամանակ տալ խորհելու:

Մի բաժակ կաթ, խնձոր, տանձ:

Նա դուրս եկավ գետից:

Ափը գրոհեց նրա վրա, ինչպես այեբախության վիթխարի ալիք: Խավարը և անձանոթ տեղանքը ու միլիոնավոր անձանոթ բույրեր, որ բերում էր թաց մարմինը սառեցնող զովասուն քամին, միանգամից թափվեցին Մոնթագի վրա: Նա ետ ցատկեց խավարից, հոտերից, ձայներից: Ականջները դժժում էին, գլուխը՝ պտտվում: Աստղերը կրակե ասուպների պես թռչում էին նրան ընդառաջ: Նա ցանկացավ կրկին նետվել գետը. թող ալիքները հանգիստ ու ապահով տանեն նրան, միևնույն է, թե ուր: Ափի մթին զանգվածը հիշեցրեց մանկական տարիների այն դեպքը, երբ լողանալիս հսկա ալիքը (ամենամեծը, որ երբևէ տեսել էր) տապալեց, շժմեցրեց ու նետեց նրան դատարկ կանաչավուն մթության մեջ, բերանը, քիթը, ներսը լցրեց այրող աղի ջրով, չափազանց շատ ջրով:

Իսկ այստեղ չափազանց շատ հող կար:

Սև պատի պես նրա առջև հառաժ խավարում խշշոց լքովեց: Ինչ-որ մեկի ստվերը, զուգ աչք: Ասես գիշերն ինքը հանկարծ նայեց նրան: Ասես անտառը նայեց նրան:

Մեխանիկական շունն է:

Այդքան վազել, շտապել, տառապել, այդքան հեռանալ, այդքան համբերել, և երբ քեզ համարում ես անվտանգության մեջ ու թեթևացած շունչ քաշելով վերջապես ափ ես ելնում, հանկարծ քո առջև...

Մեխանիկական շունը:

Մոնթագի կոկորդից տանջալի աղաղակ թռավ: Ո՛չ, այդ արդեն շատ-շատ է: Չափազանց շատ՝ մի մամրդու համար:

Ստվերը մի կողմ նետվեց: Աչքերն անհետացան: Չոր անձրևի պես ցամ թափվեցին աշնանային տերևները:

Մոնթագը մեն-մենակ էր ամայության մեջ:

Եղջերու էր: Մոնթագը զգաց մուշկի սուր բույր՝ խառնված արյան հոտին և գազանի շնչառությանը, հիլի, մամուռի և խաչխոտի բուրմունք: Խոր գիշերվա մեջ ծառերը կարծես ընդառաջ էին լողում նրան ու կրկին ետ քաշվում, լողում ու ետ քաշվում՝ քունքի զարկերակի ուղիով:

Գետինը ծածկված էր տերևների շեղջերով: Մոնթագի ոտքերը թաղվում էին դրանց մեջ, ասես նա անցնում էր չոր խշխու-

շացող գետահունով, որը բուրում էր մեխակ և տաք փոշի: Որքա՞ն տարբեր բուրմունքներ կան: Ահա կարծես հում կարտոֆիլի հոտն է. այդպես է բուրում, երբ կտրատում ես սպիտակ, ամբողջ գիշերը բաց օդում, լուսնի լույսի տակ մնացած մեծ կարտոֆիլը: Ահա և թթու դրած վարունգի հոտը, ահա խոհանոցի սեղանին դրված մաղադանոսի բուրը, կիսաբաց տուփից փչող դեղին մանանեխի թուլլ հոտը, հարևան այգուց եկող բազմաթերթ մեխակների բուրմունքը: Մոնթազը ձեռքն իջեցրեց, և խոտի բարալիկ ցողունիկը դիպավ նրա ափին, ասես թե մի երեխա մեղմորեն բռնեց նրա ձեռքը: Մոնթազը մատները մոտեցրեց դեմքին. նրանցից մատուցակի հոտ էր գալիս:

Նա կանգ առավ՝ շնչելով երկրի բույրերը: Եվ որքան ավելի խորն էր շնչում, այնքան նրա համար շոշափելի էր դառնում շրջապատող աշխարհը՝ իր ողջ բազմազանությամբ: Մոնթազն այլևս չունեի ամայության նախկին զգացումը՝ ամայությունը լցնելու շատ բան կար: Եվ այդուհետև միշտ այդպես էր լինելու:

Նա սայթաքելով քայլում էր խշխշացող խաշամի վրայով: Եվ հանկարծ այդ նոր արտասովոր աշխարհում՝ ինչ-որ ծանոթ բան:

Նրա ոտքը դիպավ խուլ զնգոց արծակող առարկայի:

Նա շոշափեց խոտերը:

Երկաթգծեր են:

Քաղաքից դուրս տանող գծեր, որոնք անցնում էին պուրակների ու անտառների միջով, լքված երկաթուղային ճանապարհ...

Ճանապարհ, որով ինքը պետք է գնա: Իր միակ ծանոթը անհայտության մեջ, կախարդական այն թալիսմանը, որին պետք է ապավինի սկզբնական շրջանում, որին կարող է հըպվել, զգալ ոտքերի տակ, քանի դեռ կգնա գետնամոռի թփուտների միջով, բույրերի և զգայությունների ծովի միջով, անտառի շրջունի և սոսափի միջով:

Նա առաջ շարժվեց փայտակոճերի վրայով:

Եվ ի գարմանս իրեն, հանկարծ զգաց, որ հաստատ գիտի մի բան, որը, սակայն, չէր կարող ապացուցել. երբևէ Քլարիսն էլ է անցել այստեղով:

Կես ժամ անց, մրսած, երկաթգծերի վրայով զգուշորեն

քալելիս, երբ սրույթամբ զգում էր՝ ինչպես է մթությունը ներ-
 ծծվում իր մարմնի մեջ, սողոսկում աչքերը, բերանը, իսկ
 ականջներում անտառային հնչյունների աղմուկն էր, և ոտքերը
 ծակոտված էին մացառներից ու դաղված եղինջից, հանկարծ
 առջևում կրակ տեսավ:

Կրակը փայլատակեց մի ակնթարթ, անհետացավ, կրկին
 հայտնվեց, ասես թարթող աչք լիներ: Մոնթագը քարացավ տե-
 դում, թվում էր՝ հենց որ փչես, կհանգչի: Բայց կրակը վառ-
 վում էր, և Մոնթագը գաղտագողի առաջ շարժվեց: Անցավ ամ-
 բողջ տասնհինգ րոպե, մինչև նրան հաջողվեց մոտենալ. նա
 կանգ առավ և, թաքնվելով ծառի ետևում, նայեց կրակին: Մեղմ
 թրթռացող, սպիտակ և վառ կարմիր բոց: Տարօրինակ թվաց
 Մոնթագին այդ կրակը, քանի որ այժմ նրա համար այլևս նախ-
 կին իմաստը չուներ:

Այդ կրակը չէր այրում, տաքացնում էր:

Մոնթագը տեսավ նրան պարզված ձեռքեր, միայն ձեռքեր.
 խարույկի շուրջը նստածների մարմինները խավարի մեջ էին:
 Ձեռքերից վերև անշարժ դեմքեր էին՝ բոցի ցուլքերից կենդա-
 նացած: Նա չէր էլ իմացել, որ կրակը կարող է այդպիսին լի-
 նել: Նա չէր էլ կասկածում, որ կրակը կարող է ոչ միայն խլել,
 այլև տալ: Նույնիսկ այդ կրակի հոտն էր բուրբուրվին այլ:

Աստված գիտե, թե նա այդպես կանգնած ինչքան մնաց՝
 անձնատուր լինելով անհեթեթ, բայց հաճելի երևակայությանը,
 ասես ինքը գազան էր, որին խարույկի լույսը դուրս էր կանչել
 անտառի թավուտից: Նա ուներ խիտ թարթիչներով խոնավ աչ-
 քեր, բուրդ, քիթ, կճղակներ, եղջուրներ, և եթե նրա արյունը
 թափվեր գետնին, աշնան հոտ կգար: Նա երկար կանգնել էր՝
 ունկնդրելով կրակի տաք ճարձատյունին:

Խարույկի շուրջը լուրջուն էր, և լուրջուն կար մարդկանց
 դեմքերին, և բավական ժամանակ կար՝ նստելու ծառերի տակ,
 լքված երկաթգծերի մոտ ու կողքից նայելու աշխարհին, ընդ-
 գրկելու հայացքով, ասես այն կենտրոնացել է այստեղ, այս
 խարույկի մոտ, ասես աշխարհը կրակի մեջ ընկած պողպատի
 կտոր է, որն այս մարդիկ պետք է վերստին կռնին: Եվ ո՛չ
 միայն կրակն էր թվում այդքան տարբեր: Լուրջությունը նույնպես
 այլ էր: Մոնթագը շարժվեց դեպի այդ առանձնահատուկ լուր-
 ժությունը, որից ասես կախված էր աշխարհի բախտը:

Այնուհետև նա լսեց ձայները. մարդիկ գրուցում էին, բայց նա դեռևս չէր կարող ըմբռնել՝ ինչի մասին: Նրանք խոսում էին հանդարտ, մերթ բարձր, մերթ ցածր, նրանց առջև բովանդակ աշխարհն էր, և նրանք անշտապ դիտում էին այն: Նրանք գիտեին հողը, գիտեին անտառը, գիտեին քաղաքը, որ փռված էր գետից այն կողմ, լքված երկաթուղու ծայրին: Նրանք խոսում էին ամեն ինչի մասին, և չկար մի բան, որի մասին նրանք չկարողանային խոսել: Մոնթազն այդ զգում էր նրանց ձայներից, հետաքրքրասիրություն ու զարմանք արտահայտող հնչերանգներից:

Իսկ հետո խոսողներից մեկը վեր նայեց ու տեսավ Մոնթազին, տեսավ առաջին, գուցե և յոթերորդ անգամ ու ձայն տվեց.

— Է՛լ, այժմ կարող եք դուրս գալ:

Մոնթազը ետ քաշվեց դեպի խավարը:

— Ռե լավ, արդեն մի՛ վախեցեք, — կրկին հնչեց նույն ձայնը: — Համեցեք մեզ մոտ, բարով եք եկել:

Մոնթազը դանդաղ մոտեցավ: Խարույկի շուրջը նստած էին հինգ ծերունիներ, որոնք հագել էին կոշտ քաթանե կտորից մուգ կապույտ շավվարներ ու բաձկոններ և նույնպիսի մուգ կապույտ վերնաշապիկներ: Նա չգիտեր՝ ինչ պատասխաներ:

— Նստեք, — ասաց մարդը, որն ըստ երևույթին այդ փոքր խմբի գլխավորն էր, — սուրճ ուզո՞ւմ եք:

Մոնթազը լուռ հետևում էր, թե ինչպես է մուգ, գույրճի արձակող հեղուկը լցվում ծալովի թիթեղյա գավաթի մեջ, հետո ինչ-որ մեկը նրան մեկնեց այդ գավաթը: Զգուշությամբ կում արեց՝ իր վրա զգալով հետաքրքրասեր հայացքներ: Տաք սուրճն այրեց շուրթերը, բայց հաճելի էր: Նրա շուրջը մորուքավոր մարդիկ էին՝ մորուքները կոկիկ ու խնամքով խուզված: Նրանց ձեռքերը նույնպես մաքուր էին ու խնամված: Երբ մոտեցավ խարույկին, թուրը վեր կացան, ողջունելով հյուրին, իսկ հիմա նորից նստել էին: Մոնթազը կում-կում վայելում էր սուրճը:

— Ծնորհակալություն, — ասաց նա: — Ծատ շնորհակալ եմ ձեզնից:

— Բարի գալուստ, Մոնթազ: Իմ անունը Գրենջըր է: — Եվ

Նրան մեկնեց անգույն հեղուկով լցված փոքրիկ սրվակը: Սա ևս խմեք, կփոխի ձեր քրտինքի քիմիական բաղադրությունը: Մի կես ժամից ձեզնից ոչ թե ձեր մարմնի հոտը կգա, այլ երկու բոլորովին ուրիշ մարդկանց: Քանի որ ձեզ հետապնդում է մեխանիկական շունը, ապա չէր խանգարի՝ այս սրվակը մինչև վերջ դատարկեիք:

Մոնթազը խմեց դառնավուն հեղուկը:

— Ձեզնից այժի հոտ կփչի, բայց դա կարևոր չէ, — ասաց Գրենշըրը:

— Դուք գիտե՞ք իմ անունը, — գարմացած հարցրեց Մոնթազը:

Գրենշըրը գլխի շարժումով ցույց տվեց խարույկի մոտ դրված շարժական հեռուստացույցը:

— Մենք հետևում էինք հետապնդմանը: Մենք այդպես էլ ենթադրեցինք, որ դուք գետի ընթացքով հարավ կիջնեք, և երբ հետո լսեցինք՝ ինչպես եք խրտնած որմզդեղնի պես մխըրձվում անտառի թավուտը, չթաքնվեցինք, ինչպես սովորաբար անում ենք: Երբ հանկարծ ուղղաթիռները շրջվեցին դեպի քաղաք, հասկացանք, որ դուք սուզվել եք գետը: Իսկ քաղաքում ինչ-որ տարօրինակ բան է կատարվում: Հետապնդումը շարունակվում է, բայց այլ ուղղությամբ:

— Ա՛յլ ուղղությամբ:

— Եկեք ստուգենք:

Գրենշըրը միացրեց դյուրակիր հեռուստացույցը: Փոքրիկ Էկրանին առկայթեցին գույները, դզզոցով ցատկոտեցին ստվերները, ասես այդ փոքրիկ արկղիկում փակված էր ինչ-որ մըղձավանջային երազ, և տարօրինակ էր, որ այստեղ, անտառում կարելի էր այն ձեռքն առնել, փոխանցել ուրիշի: Հաղորդավարը բղավում էր.

— Հետապնդումը շարունակվում է քաղաքի հյուսիսային մասում: Ոստիկանական ուղղաթիռները կենտրոնացվում են ութսունյոթերորդ փողոցի և Էլմ Գրոուվ գրոսայգու շրջանում:

Գրենշըրը գլխով արեց.

— Դե, ահա, այժմ պարզապես հետապնդում են ներկայացնում: Ձեզ հաջողվեց նրանց մոլորեցնել դեռևս գետի մոտ, սակայն չեն ուզում հաջտվել: Նրանք գիտեն, որ չի կարելի չափազանց երկար լարված պահել հեռուստադիտողին: Հարկա-

վոր է շտապ հանգուցալուծել: Եթե սկսեն խուզարկել գետը, թեկուզ մինչև առավոտ, էլի չեն ավարտի: Ահա թե ինչու նրանք գոհ են փնտրում, որ ցուցադրական շուքով վերջացնեն այս կատակերգությունը: Հինգ րոպե էլ չի անցնի, և նրանք կբռնեն «Մոնթագին»:

— Բայց ինչպե՞ս...

— Հիմա կտեսնենք:

Ուղղաթիռի որովայնում թաքնված հեռուստախցիկն այժմ ուղղված էր ամալի փողոցին:

— Տեսնո՞ւմ եք, — շշնջաց Գրենջըրը: — Այժմ կհայտնվեք «դուք», ա՛յ այնտեղ, փողոցի ծայրում: Բայց դա կլինի կանխորոշված գոհը: Տեսեք, թե ինչպես է խցիկը վարում նկարահանումը: Տպավորիչ տեսարան է: Տազնապալի սպասում: Հեռանկարում փողոցն է: Այժմ մի խեղճ մարդ դուրս կգա զբոսայգի: Որևէ տարօրինակ, հազվագյուտ մարդ: Չկարծեք, թե ոստիկանությունը չգիտի այդպիսիների սովորությունները, որոնք սիրում են զբոսնել լուսաբացին, հենց այնպես, առանց պատճառի կամ էլ՝ տառապում են անքնությանը: Ոստիկանությունը ամիսներ, տարիներ շարունակ հետևում է նրանց: Երբեք չես իմանա՝ երբ և ինչպես կարող են պետք գալ: Իսկ այսօր, պարզվում է, շատ տեղին է: Այսօր պարզապես փրկում է վիճակը: Օ՛, տեր աստված: Նայեցեք:

Խարույկի մոտ նստած մարդիկ քիչ առաջ թեքվեցին:

Էկրանին հայտնվեց փողոցի անկյունից շրջվող մի մարդ: Հանկարծ օբյեկտիվի մեջ ներխուժեց մեխանիկական շունը: Ուղղաթիռներից փողոցը լուսավորեցին տասնյակ լուսարձակներով ու մարդուն առան լույսի պայծառ սյուներից կազմված վանդակի մեջ:

Հաղորդավարն ազդարարեց.

— Ահա դուք տեսնում եք Մոնթագին: Հետապնդումն ավարտված է:

Ամենդ անցորդը կանգնել էր շվարած, ձեռքում՝ ծխացող սիգարետ: Նա նայեց շանը՝ չհասկանալով, թե ինչ է: Հավանաբար մինչև վերջ էլ չհասկացավ: Նա նայեց երկնքին՝ ականջ դնելով շչակների ոռնոցին: Այժմ հեռուստախցիկները նկարահանում էին ներքևից: Ծունը ոստնեց. նրա շարժումների ուժը ու ձգքրտությունն իրոք հոյակապ էին: Ասեղը փայլատակեց:

Մի ակնթարթ ամեն ինչ քարացավ Էկրանին, որպեսզի դիտողները կարողանան ավելի լավ տեսնել ողջ տեսարանը՝ զոհի շվար տեսքը, ամալի փողոցը, պողպատե հրեշը՝ թիրախի վրա թռչելու պահին, վիրիսարի փամփուշտը:

— Մո՛նթագ, չջարժվե՛ք, — հնչեց երկնքից:

Նույն պահին շունը և հեռուստախցիկի օբյեկտիվը փլվեցին մարդու վրա: Ե՛վ խցիկը, և՛ շունը միաժամանակ ծանկեցին նրան: Ջոհը ծչաց: Նա ծչում էր, ծղրտում, աղաղակում...

Մթնեցված պատկեր:

Լուսություն:

Խավար:

Մոնթագը ծչաց ու շրջվեց:

Լուսություն:

Խարույկի շուրջը մարդիկ նստած էին լուռ, սառած դեմքերով, մինչև որ մութ-Էկրանից հնչեց հաղորդավարի ձայնը.

— Որո՛նումները ավարտվեցին: Մոնթագը մեռած է: Հասարակության դեմ գործած հանցանքը պատժված է:

Խավար:

— Այժմ ձեզ փոխադրում ենք «Լյուքս» հյուրանոցի Երկնամերձ սրահը՝ դիտելու «Լուսաբացից առաջ» կեսժամանոց հաղորդումը: Մեր ծրագրում...

Գրենջըրն անջատեց հեռուստացույցը:

— Իսկ նկատեցի՞ք, որ զոհի դեմքը մնաց ֆոկուսից դուրս: Նույնիսկ ձեր մտերիմ ընկերները չէին կարող վստահությամբ ասել՝ դո՛ւք էիք, թե ոչ: Մոսկ ակնարկ. մնացյալը կլրացնի հանդիսատեսի երևակայությունը: Գրո՛ղը տանի, — շշնջաց նա:

Մոնթագը լուռ էր, շրջվելով հեռուստացույցի կողմը՝ ողջ մարմնով դողալով, հայացքը չէր կտրում դատարկ Էկրանից:

Գրենջըրը թեթևակի կպավ նրա ուսին:

— Ողջունում ենք մեռյալներից հարություն առածին:

Մոնթագը գլխով արեց:

— Այժմ վատ չէր լինի ծանոթանալ մեզ հետ, — շարունակեց Գրենջըրը: Սա Ֆրեդ Զլեմենտն է, որը մի ժամանակ ղեկավարում էր Քեմբրիջի համալսարանի Թոմաս Հարդիի անվան ամբիոնը. դրանք այն տարիներն էին, երբ Քեմբրիջը դեռևս չէր վերանվանվել ատոմահիմեներային ուսումնարան: Իսկ սա դոկտոր Սիմընզն է՝ Կալիֆոռնիայի համալսարանից, Օրտեգա-ի-

Գասետի՛ ստեղծագործության գիտակ: Ահա պրոֆեսոր Ուեսթը՝ Կոլումբիայի համալսարանից, որը նշանակալի ավանդ է ներդրել այժմ արդեն մոռացության տրված էթիկայի տեսության բնագավառում: Սուրբ հայր Փաղովըրը, որը երեսուն տարի առաջ մի քանի քարոզ կարդաց և աշխարհայացքի պատճառով մեկ շաբաթվա ընթացքում կորցրեց հոտը: Վաղուց նա թափառում է մեզ մոտ: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես գիրք եմ գրել՝ «Մատները ձեռնոցի մեջ: Անհատի և հասարակության միջև ծիջտ հարաբերությունները» վերնագրով: Եվ ահա այստեղ եմ: Բարի գալուստ, Մո՛նթագ:

— Ո՛չ, ես տեղ չունեմ ձեր մեջ, — վերջապես դժվարությամբ խոսեց Մոնթագը: — Ողջ կլանքում ես միայն հիմարություններ եմ արել:

— Մեզ համար նորություն չէ դա: Մենք բոլորս էլ սխալներ ենք գործել, այլապես այստեղ չէինք լինի: Քանի դեռ գործում էինք անջատ-անջատ, մեր միակ զենքը ցատումն էր: Ես խիեցի հրկիզողին, երբ տարիներ առաջ նա եկավ իմ գրադարանն այրելու: Այդ օրվանից ստիպված եմ թաքնվել: Ուզո՞ւմ եք միանալ մեզ, Մո՛նթագ:

— Այո՛:

— Ի՞նչ կարող եք առաջարկել մեզ:

— Ոչինչ: Կարծում էի, թե ինձ մոտ է Գիրք Ժողովողի մի մասը և մեկ էլ մի հատված Հովհաննես Առաքյալի Հայտնությունից, բայց այժմ նույնիսկ այդ չունեմ:

— Գիրք Ժողովողին հիանալի կլիներ: Որտե՞ղ եք թաքցրել:

— Այստեղ, — Մոնթագը ձեռքով ցույց տվեց ճակատը:

— Ա՛, — ժպտաց Գրենջըրը և գլխով արեց:

— Ի՞նչ է, մի՞թե վատ է, — գոչեց Մոնթագը:

— Ո՛չ, շատ լավ է: Հրաշալի՛ է: — Գրենջըրը շրջվեց քահանայի կողմը: — Մենք Գիրք Ժողովողի ունե՞նք:

— Այո՛: Հարրիս անունով մարդը, որ ապրում է Յանգսթաունում:

— Մո՛նթագ, — Գրենջըրը ամուր բռնեց նրա ուսից: —

¹ Խոսե Օրտեգա-ի-Գասետ (1883—1955) — իսպանացի փիլիսոփա և հրապարակախոս:

Զգո՛ւյջ եղեք: Պահպանեցեք ձեզ: Եթե Հարրիսի հետ որևէ բան պատահի, դո՛ւք կլինեք ժողովողի Գիրքը: Տեսնո՛ւմ եք, վերջին պահին ինչպիսի կարևոր մարդ հասցրիք դառնալ:

— Բայց ես լրիվ մոռացել եմ:

— Ոչինչ անհետ չի կորչում: Մենք ձեր հիշողությունը թափ տալու միջոց ունենք:

— Բայց ես արդեն փորձել եմ հիշել:

— Մի՛ փորձեք: Դա ինքնաբերաբար կլինի, երբ կարիքն զգաք: Մարդկային հիշողությունը նման է լուսանկարչական զգայուն ժապավենի, և ողջ կլանքում մեր արածը լոկ այն է, որ ջանում ենք ջնջել նրա վրայի դրոշմը: Սիմընզը մշակել է մի մեթոդ, որը հնարավորություն է ընձեռում հիշողության մեջ վերակենդանացնելու երբևէ կարդացած ամեն ինչ: Դրա համար նա տքնել է քսան տարի: Մո՛նթագ, կուզենայի՞ք կարդալ Պլատոնի «Հանրապետությունը»:

— Այո՛, իհարկե՛:

— Դե, ահա ես Պլատոնի «Հանրապետությունն» եմ: Իսկ Մարկ Ավրելիոս ուզո՞ւմ եք կարդալ: Միստր Սիմընզը Մարկ Ավրելիոսն է:

— Ողջո՛ւյն, — ասաց միստր Սիմընզը:

— Ողջո՛ւյն, — պատասխանեց Մոնթագը:

— Թույլ տվեք ինձ ծանոթացնել Ջոնաթան Սվիֆտի՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները» քաղաքական սուր սատիրայի հեղինակի հետ: Ահա և Չարլզ Դարվինը, ահա Շոպենհաուերը, Էյնշտեյնը, իսկ իմ կողքինը միստր Ալբերտ Շվեյցերն է՝ բարի փիլիսոփան: Ահա մենք բոլորս քո առջև ենք, Մո՛նթագ, Արիստոֆանը և Մահաթմա Գանդին, Գաութամա Բուդդան և Կոնֆուցիոսը, Թոմաս Լավ Փիքոքը¹, Թոմաս Ջեֆերսոնը և Լինկոլնը՝ ձեր խոնարհ ծառան: Մենք նաև Մատթեոսն ենք, Մարկոսը, Ղուկասը և Հովհաննեսը:

Նրանք ցածրաձայն ծիծաղեցին:

— Չի՛ կարող պատահել, — գոչեց Մոնթագը:

— Ո՛չ, այդպես է, — ժպտալով պատասխանեց Գրենջըրը: — Մենք ևս գրքեր ենք հրկիզում: Գիրքը կարդում ենք, հետո այրում, որ մեզ մոտ չգտնեն: Սիկրոֆիլներն իրենց չարդարաց-

¹ Թոմաս Լավ Փիքոք (1785—1866) — անգլիացի գրող:

րին: Մենք մշտապես թափառում ենք, տեղափոխվում, հարկադրված կլինենք ինչ-որ տեղ թաղել ժապավենը, հետո վերադառնալ դրա ետևից, իսկ դա վտանգավոր է: Ավելի լավ է ամեն ինչ պահել գլխի մեջ, որտեղ ոչ ոք ոչինչ չի տեսնի, ոչինչ չի կասկածի: Մենք բոլորս պատմության, գրականության, միջազգային իրավունքի հատվածներ և պատատիկներ ենք: Բայրոն, Թոմաս Փեյն², Մաքիավելի, Զրիստոս, բոլորն այստեղ են՝ մեր գլխում: Բայց արդեն ուշ է: Եվ պատերազմ է հայտարարված: Մենք այստեղ ենք, իսկ քաղաքն այնտեղ է, հեռվում, իր գունագեղ հանդերձանքի մեջ: Ի՞նչ եք մտածում, Մո՛նթագ:

— Ես մտածում եմ, թե ի՞նչ հիմարն էի, երբ փորձում էի պայքարել սեփական ուժերով: Հրկիզողների տները ծածուկ գրքեր էի նետում և ահազանգում:

— Դուք արել եք այն, ինչ կարողացել եք: Ողջ երկրի մասշտաբով դա հիանալի արդյունք կտար: Բայց մեր պայքարի ուղին ավելի հասարակ է և, ինչպես մեզ է թվում, գերադասելի: Մեր խնդիրն է՝ պահպանել գիտելիքները, որոնք դեռ մեզ պետք են գալու, պահպանել անխաթար վիճակում: Առայժմ մենք չենք ցանկանում որևէ մեկին գրգռել կամ զայրացնել: Չէ՛ որ եթե մեզ ոչնչացնեն, կկործանվեն և մեր պահպանած գիտելիքները, կկործանվեն գուցե և ընդմիջտ: Որոշ իմաստով մենք ամենախաղաղ քաղաքացիներն ենք. թափառում ենք լքված երկաթգծերով, գիշերում ենք լեռներում: Եվ քաղաքի բնակիչները մեզ հանգիստ են թողել: Երբեմն մեզ կանգնեցնում են ու խուզարկում, բայց երբեք որևէ բան չեն գրտնում, որ առիթ տա ձերբակալելու: Մենք ունենք շատ ծկուն, անորսալի, երկրի բոլոր անկյուններում ցրված կազմակերպություն: Մեզնից ոմանք ենթարկվել են պլաստիկ վիրահատության, փոխել են իրենց արտաքինը և մատնահետքերը: Այժմ մեր վիճակը սոսկալի դժվար է. սպասում ենք, որ հնարավորին չափ շուտ սկսվի և ավարտվի պատերազմը: Սարսափելի է, բայց ոչինչ չենք կարող անել: Մե՛նք չէ, որ ղեկավարում ենք երկիրը, մենք սոսկ չնչին փոքրամասնություն ենք, ձայն բարբառո

² Թոմաս Փեյն (1737—1809) — ամերիկյան անկախության շատագույներից:

հանապատի: Երբ պատերազմն ավարտվի, այդ ժամանակ, թերևս, մեր կարիքն զգացվի:

— Կարծում եք՝ ձեզ կլսե՞ն:

— Եթե ոչ, ստիպված կլինենք էլի սպասել: Մեր գրքերը կփոխանցենք մեր երեխաներին, նրանք էլ իրենց հերթին՝ ուրիշներին: Շատ բան, իհարկե, կկորչի, բայց չի կարելի մարդկանց բռնությամբ ստիպել, որ լսեն: Նրանք պետք է իրենք հասկանան և իրենք մտորեն, թե ինչո՞ւ այսպես եղավ, ինչո՞ւ պայթեց աշխարհը իրենց ոտքերի տակ: Այսպես չի կարող հավերժ շարունակվել:

— Եվ շա՞տ եք դուք:

— Յանապարհներին, լքված երկաթգծերի մատույցներում մենք հազարներ ենք: Արտաքուստ թափառաշրջիկ ենք, ներքուստ՝ գրապահոց: Սկզբում ամեն ինչ տարերային էր: Ամեն մեկն ուներ որևէ գիրք, որն ուզում էր մտապահել, բայց մենք հանդիպեցինք միմյանց, ու այս քսան կամ ավելի տարիների ընթացքում ստեղծեցինք կազմակերպության նման մի բան, ուրվագծեցինք գործողության ծրագիր: Ամենագլխավորը, որ պետք է ըմբռնեինք, այն էր, որ ինքներս մեն-մենակ ոչինչ ենք, որ չպետք է լինենք մանրախնդիր և զգանք մեր գերազանցությունը մյուս մարդկանց հանդեպ: Մենք ընդամենը սոսկ գրքերի շապիկներ ենք, որ թերթերը պահպանում են վնասվելուց ու փոշուց, ո՛չ ավելին: Մեզնից ոմանք ապրում են փոքր քաղաքներում: Թորոյի «Ուոլդեն» գրքի առաջին գլուխն ապրում է Գրին Ռիվերում, երկրորդը՝ Մեն նահանգի Ուիլլոու ագարակում: Մերիլենդ նահանգում փոքրիկ մի քաղաք կա՝ ընդամենը քսանյոթ հազար բնակչությամբ, այնպես որ, հազիվ թե այնտեղ ունեքեր նետեն, այդ քաղաքում է պահպանվում Բերտրան Ռասելի Երկերի լիակատար ժողովածուն: Այդ քաղաքը գրքի պես կարելի է ձեռքն առնել, թերթել էջերը. ամեն բնակչի գլխում որոշակի էջեր կան: Երբ պատերազմն ավարտվի, մի գեղեցիկ օր, մի գեղեցիկ տարի գրքերը կրկին կարելի կլինի գրել. կիրավիրենք բոլոր այդ մարդկանց, նրանք անգիր կասեն ինչ գիտեն, իսկ մենք կտպենք թղթի վրա: Հետո, հավանաբար կբացվի խավարի նոր դարաշրջան, և ստիպված կլինենք ամեն ինչ սկսել սկզբից: Բայց մարդն ունի մի հրաշալի հատկություն. եթե հարկ է լինում ամեն ինչ սկզբից սկսել, նա

չի հուսալքվում և չի կորցնում արիությունը, քանզի գիտի, որ դա կարևոր է, որ դրա համար ջանք չպիտի խնայել:

— Իսկ հիմա մենք ի՞նչ պետք է անենք, — հարցրեց Սոնթազը:

— Սպասենք, — պատասխանեց Գրենջըրը: — Եվ, համենայն դեպս, գետի հոսանքով ցած իջնենք:

Նա սկսեց խարույկի վրա հող լցնել:

Սյուսներն օգնում էին նրան, օգնում էր և Սոնթազը: Կուսական անտառում մարդիկ լուռ հանգցնում էին կրակը:

Աստղալույսի տակ նրանք կանգնել էին գետափին:

Սոնթազը նայեց իր ժամացույցի լուսավորվող թվացույցին: Առավոտյան ժամը հինգն էր: Ընդամենը մեկ ժամ էր անցել, բայց տարուց երկար էր թվում: Հանդիպակաց հեռավոր ափի կողմից բացվում էր այգը:

— Ի՞նչո՞ւ եք վստահում ինձ, — հարցրեց նա:

Մարդը շարժվեց մթության մեջ:

— Բավական է հայացք ձգել ձեզ վրա: Վաղուց ի վեր դուք ձեզ չեք նայել հայելու մեջ, Սոնթազ: Բացի այդ, քաղաքը երբեք մեզ չի արժանացրել նման պատվի և մեր ետևից չի կազմակերպել այդպիսի խնամքով մշակված հետապնդում: Գլուխները պոեզիայով լի մի տասնյակ տարօրինակ մարդիկ նրանց համար վտանգավոր չեն: Նրանք այդ գիտեն, գիտենք և մենք, բոլորը գիտեն: Քանի դեռ ժողովրդական լայն զանգվածները չեն վկայակոչում Ազատությունների խարտիան և սահմանադրությունը,¹ անհանգստանալու հիմք չկա: Բավական է, որ հրկիզողները ժամանակ առ ժամանակ հետևեն կարգ ու կանոնին: Ո՛չ, քաղաքաբնակները մեզ չեն նեղում: Իսկ ձեզ, Սոնթազ, լավ դաս տվին:

Նրանք գնում էին գետի երկայնքով՝ դեպի հարավ: Սոնթազը փորձում էր գննել իր ուղեկիցների դեմքերը: Ժեր, կնճապատ, հոգնատանջ դեմքեր, որոնք նա տեսել էր խարույկի լույսի տակ: Նա փնտրում էր նրանց վրա ուրախության, վճռակալության, ապագայի հանդեպ հաղթանակի արտահայտություն: Հավանաբար նա սպասում էր, որ գիտելիքները նրանց դեմքերը

¹ Նկատի ունի Ազատությունների մեծ խարտիան (1215 թ.) և ՄՄՆ-ի՝ 1787 թ. սահմանադրությունը:

պետք է լուսավորեին, ինչպես լապտերն է վառվում գիշերա-
յին խավարում: Բայց ոչ մի նման բան նա չտեսավ: Այնտեղ,
խարույկի մոտ, նրանց լուսավորում էին խարույկի ցուլքերը,
իսկ հիմա ոչնչով չէին տարբերվում ուրիշ այդպիսի մարդկան-
ցից, որոնք թափառում են ճանապարհներին, իրենց կյանքն
անցկացնում որոնումների մեջ, որոնք տեսել են, թե ինչպես է
կործանվում գեղեցիկը, և ահա, վերջապես, արդեն Յերացած,
հավաքվել են մեկտեղ, որպեսզի նայեն, թե ինչպես է իջնում
վարագույրը և մարում լույսերը: Նրանք ամենևին համոզված
չէին, որ այն ամենը, ինչ պահպանվում է իրենց հիշողության
մեջ, կստիպի գալիքի այգաբացին շառագունելու ավելի ան-
բիժ, նրանք ոչնչում համոզված չէին, բացի մի բանից: Նրանք
տեսել էին գրադարակներում շարված՝ դեռևս չթղթատված էջե-
րով գրքեր, ընթերցողներին սպասող գրքեր: Մի օր կգան ու
կվերցնեն գրքերը, որը՝ մաքուր, որը՝ կեղտոտ ձեռքերով:

Մոնթազը գաղտագողի գննում էր իր ուղեկիցների դեմքերը:

— Գրքերի մասին մի՛ դատեք կազմերով, — ասաց նրանցից
մեկը: Բոլորը կամացույց ժիծադեցին՝ շարունակելով խորանալ
գետի հոսանքն ի վար:

Լսվեց խլացուցիչ հոնդյուն, և քաղաքից հրթիռային ինք-
նաթիռները սլացան երկինք: Նրանք անհետացան ավելի շուտ,
քան ճամփորդները կհասցնեին վեր նայել: Մոնթազը շրջվեց
ու նայեց գետի հանդիպակաց ափին փոված քաղաքին, որտեղ
երևում էր միայն արշալույսի աղոտ հրացուլքը:

— Այնտեղ մնացել է իմ կինը:

— Ցավում եմ: Առաջիկա մի քանի օրում քաղաքներին ոչ
մի լավ բան չի սպասվում, — ասաց Գրենշըրը:

— Տարօրինակ է, որ չեմ կարոտում նրան: Տարօրինակ է,
բայց կարծես որևէ բան զգալու անընդունակ եմ, — ասաց Մոն-
թազը: — Քիչ առաջ նույնիսկ մտածեցի, որ եթե նա մեռնի, ես
չեմ վշտանա: Վատ է: Ինչ-որ արտաոռոց բան է կատարվում ինձ
հետ:

— Լսեք, թե ինչ կասեմ, — պատասխանեց Գրենշըրը, բռո-
նելով նրա թևից. այժմ նա քայլում էր նրա կողքով, օգնելով,
որ Մոնթազն անցնի թփուտների միջով: — Փոքր տղա էի, երբ

պապս մահացավ. նա քանդակագործ էր: Նա չափազանց բարի էր, շատ էր սիրում մարդկանց: Նրա օգնությամբ են մեր քաղաքը մաքրել ետնախորշերից: Խաղալիքներ էր պատրաստում մեզ՝ երեխաներիս համար, իր ողջ կյանքի ընթացքում հավանաբար միլիոնավոր իրեր է պատրաստել: Նրա ձեռքերը միշտ ինչ-որ բանով զբաղված էին: Եվ ահա, երբ նա մահացավ, հանկարծ հասկացա, որ լաց եմ լինում ոչ թե պապիս, այլ այն իրերի համար, որ նա դեռ պետք է ստեղծեր: Ես արտասովոր եմ, որովհետև գիտեի, որ նա այլևս իրեր չէր պատրաստելու, այլևս երբեք չէր կարողանա փախտից քանդակներ անել, և կամ էլ մեզ հետ ետնաբակում աղավնիներ չէր թոցնի, ջութակ չէր նվագի, զվարճալի պատմություններ չէր անի, իսկ պապիս նման ոչ ոք չէր կարող պատմել: Նա մեր մի մասնիկն էր, և երբ մահացավ, շատ բան վերացավ մեր կյանքից: Չկար մեկը, որ փոխարիներ նրան: Պապս անհատականություն էր, պիտանի մարդ: Ես այդպես էլ չհաշտվեցի նրա մահվան հետ: Այժմ էլ հաճախ եմ մտածում, թե ինչ հիանալի զարդաքանդակներ լույս աշխարհի կգալին, եթե չմեռներ: Որքա՞ն զվարճալի պատմություններ չիմացանք և որքա՞ն աղավնիներ տուն վերադառնալով՝ այլևս չզգացին նրա ձեռքերի քնքուշ հպումը: Նա վերափոխում էր աշխարհը, նորություն էր պարգևում աշխարհին: Նրա մահվան գիշերը աշխարհն աղքատացավ տասը միլիոն հիասքանչ գործերով:

Մոնթագը լուռ քայլում էր:

— Միլի, Միլի, — շշնջաց նա, — Միլի:

— Ի՞նչ ասացիք:

— Կինս, Միլին... Խե՛ղճ, խե՛ղճ Միլի: Ես ոչինչ չեմ կարողանում հիշել: Ես մտածում եմ նրա ձեռքերի մասին, բայց չեմ տեսնում, որ դրանք ինչ-որ բան անեն: Նրա ձեռքերը պարզապես կախված են կողքերից կամ էլ ընկած են ծնկներին և կամ էլ ծխախոտ են բռնել: Ահա այն ամենը, ինչ կարող էին անել:

Մոնթագը շրջվեց և ետ նայեց:

Իսկ դու ի՞նչ ես տվել քաղաքին, Մոնթագ:

Մոխիր:

Իսկ ուրիշներն ի՞նչ են տվել միմյանց:

Ոչինչ:

Գրենքը կանգնել էր Մոնթազի կողքին և նայում էր քաղաքի կողմը:

— Պապս ասում էր, որ ամեն ոք իրենից հետո պետք է ինչ-որ բան թողնի: Ջավակ կամ գիրք, նկար կամ տուն, կամ թեկուզ աղյուսաշեն մի պատ, իր կարած մի գույգ կոշիկ, իր ձեռքով տնկած այգի: Ինչ-որ բան, որին երբևէ դիպել է ձեռքը և որտեղ հոգիդ ապաստան կգտնի քո մահից հետո: Երբ մարդիկ կնայեն քո աճեցրած ծառին կամ ծաղկին, այդ պահին դու ողջ կլինես նրանց մեջ: Պապս ասում էր՝ կարևոր չէ ինչ ես անում, կարևոր է, որ այն ամենը, ինչին ձեռք ես զարնում՝ ձևափոխվի, նախկինից տարբեր ձև ստանա, որ նրա մեջ քեզանից մի մասնիկ մնա: Գործի հանդեպ վերաբերմունքն է տարբերում սիգամարգեր հարդարողին իսկական պարտիզայանից: Առաջինը կանցնի, կարծես չի էլ եղել, բայց պարտիզայանը կապրի սերնդեսերունդ:

Գրենքը սեղմեց Մոնթազի թևը:

— Մի անգամ, հիսուն տարի առաջ էր, պապս ինձ կինոնկարներ ցույց տվեց հրթիռային արկերի մասին: Պուք երբևէ առիթ ունեցե՞լ եք երկու հարյուր մղոն հեռավորությունից տեսնել ատոմային ռումբի պայթյունից առաջացած սնկաձև ամպը: Ռա ոչինչ է, դատարկ բան: Նրան շրջապատող վայրի անապատի համար դա նույնն է, ինչ գնդասեղի ծակոցը: Պապս այդ ժապավենը ցույց տվեց տասնյակ անգամներ և ասաց, որ ինքը հույս ունի, թե կգա մի օր, երբ մեր քաղաքները կընդարձակվեն և իրենց մեջ կառնեն անտառները, դաշտերը և վայրի բնությունը: Մարդիկ չպետք է մոռանան, ասաց նա, որ հողագնդի վրա նրանց տրված է շատ փոքր տարածություն, որ նրանք ապրում են բնության գրկում, որը կարող է իր պարզևածը հեշտությամբ ետ վերցնել: Նրա համար իր շնչառությամբ մեզ երկրի երեսից ջնջելը կամ օվկիանոսի ջրերում խեղդելը խաղուպար է, կանի թեկուզև, որ մի անգամ էլ հիշենք ու չմոռանանք՝ այնքան զորեղ չենք, որքան կարծում ենք: Պապս ասում էր նաև, որ եթե մենք մշտապես նրան գիշերվա պահին մեր կողքին չզգանք՝ կմոռանանք, թե որքան ահեղ ու հզոր կարող է լինել: Եվ այդ ժամանակ մի գեղեցիկ օր նա կգա և կու կտա մեզ: Հասկանո՞ւմ եք:

Գրենքը շրջվեց Մոնթազի կողմը:

— Պապս մահացել է շատ տարիներ առաջ: Բայց եթե բացեք գանգս և նայեք ուղեղիս ծալքերին, այնտեղ կգտնեք նրա մատների հետքերը: Նա հպվել է ինձ: Ինչպես արդեն ասացի, նա քանդակագործ էր:— «Ատում եմ Ստատուս Քլո անունով հոռմեացուն,— մի անգամ նա ինձ ասաց,— աչքերդ լայն բաց արա, ապրիր այնպես անհագորեն, ասես տասը վայրկյանից պետք է մահանաս: Չգտիր ընկալել աշխարհը: Այն հրաշալի է ուզածդ երազանքից, որը ստեղծվում է գործարանում և հատուցվում դրամով: Երբեք երաշխիք մի՛ խնդրիր, անդորր մի՛ փնտրիր, այն գոյություն չունի: Իսկ եթե կա, ուրեմն նման է օրնիրուն ծառից գլխիվայր կախված և իր ողջ կյանքը քնած անցկացնող ծուլ կապիկի: Գրողի ծոցը,— ասում էր նա,— ուժեղ թափահարիր ծառը, թող այդ ծուլ անասունը հետույքի վրա գետնին շրխկա»:

— Նայեցե՛ք,— հանկարծ գոռաց Մոնթագը:

Այդ ակնթարթում սկսվեց և ավարտվեց պատերազմը:

Հետագայում Մոնթագի կողքին կանգնած մարդկանցից ոչ մեկը չէր կարող ասել, թե ինքն ինչ է տեսել և արդյո՞ք որևէ բան տեսել է: Լույսի վայրկենական բռնկում սև երկնքում, հագիվ նկատելի շարժում: Այդ կարճատև ակնթարթում այնտեղ վերևում՝ տասը, հինգ, երեք մղոն բարձրության վրա, սուրացին-անցան հավանաբար հրթիռային ինքնաթիռներ, ինչպես սերմնացանի վիթխարի ձեռքով նետված մի բուռ ցորեն, և անմիջապես էլ ահավոր արագությամբ ու միաժամանակ այնքան դանդաղ ուումբերն սկսեցին թափվել քնից արթնացող քաղաքի վրա: Ըստ էության ոմբակոծությունն ավարտվեց՝ հենց որ ժամում հինգ հազար մղոն թռչող ինքնաթիռները մոտեցան նպատակակետին, և սարքերը նախազգուշացրին այդ մասին: Նույնքան արագ, ինչպես զարկում է գերանդին՝ պատերազմն ավարտվեց: Ծիշտ այն պահին, երբ օդաչուները սեղմեցին ոմբանետիչների կոճակները: Իսկ հաջորդ երեք վայրկյանին, քանի դեռ ուումբերը չէին հասել նպատակին, թշնամու ինքնաթիռները անցան ողջ տեսանելի տարածքը և անհետացան հորիզոնի ետևում, ինչպես շաչող գնդակ: Հրազենին անժանոթ վայրենին չի հավատա դրան, որովհետև չի տեսնում, բայց սիրտը խոցված, մարմինը թուլացած կընկնի հողին, արյունը կհորդի երակներից, ուղեղը համառությամբ կձգտի պահել հա-

րագատ հիշողությունների վերջին պատահիկները և չհասկանալով ինչ է կատարվել՝ կմեռնի:

Այո՛, դժվար էր հավատալ: Դա ձեռքի մեն-միակ ակնթարթային շարժում էր: Բայց Մոնթագը տեսավ մետաղե բուռնցքի այդ թեթև շարժումը, որն իջավ հեռվում երևացող քաղաքի վրա: Նա գիտեր, որ այժմ կհաջորդի ինքնաթիռների հոնդյունը, որը, երբ արդեն ամեն ինչ ավարտվել է, կգուժի՝ ավերի, քարը քարին մի թող, կործանվիր, մեռիր:

Մի ակնթարթ Մոնթագը ումբերը մտովի պահեց օդում, պահեց իր բանականության բողոքով, ձեռքերն անօգնական վեր պարզած:

«Փախե՛ք», — ձչաց նա Ֆաբերին:

«Փախե՛ք», — գոռաց նա Բլարիսին:

«Փախի՛ր, փախի՛ր», — աղերսեց Միլդրեդին:

Եվ անմիջապես հիշեց, որ Բլարիսը մեռած է: Իսկ Ֆաբերը հեռացել է քաղաքից. ինչ-որ տեղ հովտում, սարերի միջով. մի ամալի վայրից մյուսն է սլանում ժամը հինգի ավտոբուսը: Չնայած ավերածությունը դեռ չի սկսվել, բայց կախված է օդում և անխուսափելի է: Մինչև ավտոբուսը հիսուն յարդ ճանապարհ կտրի՝ վերջնակետն այլևս չի լինի: Եվ մեկնակետը՝ հսկա մայրաքաղաքը, կդառնա վիթխարի աղբակույտ:

Իսկ Միլդրեդը...

Փախի՛ր փախի՛ր:

Ակնթարթի ընթացքում, քանի դեռ ումբերը օդում էին. հյուրանոցի տանիքից մի յարդ, ոտնաչափ, մատնաչափ տարածության վրա, սենյակներից մեկում տեսավ Միլդրեդին: Կինը փոքր-ինչ առաջ հակված՝ ուշադիր զննում էր առկայծող պատերը, որտեղից դադար չտալով խոսում էին «ազգականները»: Նրանք բլբլացնում էին, շատախոսում, նրա անունն էին տալիս, ժպտում էին, բայց ոչինչ չէին ասում ումբի մասին, որ կախված էր նրա գլխավերևում, ընդամենը մի ոտնաչափ հեռու... կես ոտնաչափ հեռու... ահա արդեն քառորդ ոտնաչափ է բաժանում մահաբեր արկը հյուրանոցի տանիքից: Միլդրեդը հայացքը սևեռել էր պատերին, ասես այնտեղ էր իր անքուն տագնապալի գիշերների առեղծվածի լուծումը:

Նա ողջ էությանը ձգտում էր նրանց մոտ, ասես ուզում էր

Նետվել գույների ու շարժումների այդ ջրապտույտը, սուզվել, մխրձվել նրա խաբուսիկ զվարճության մեջ:

Պայթեց առաջին ուումբը:

«Միլդրեդ»:

Գուցե թե, — բայց արդյո՞ք որևէ մեկը կիմանա այդ մասին, — գուցե թե վիթխարի ոադիո-հեռուստատեսային կայաններն իրենց գույների, լույսերի ու շաղակրատանքի հեղեղով առաջինն անհետացան երկրի երեսից:

Բերանքսիվայր ընկնելով, Մոնթագը տեսավ, զգաց կամ նրան թվաց, թե տեսնում կամ զգում է՝ ինչպես Միլդրեդի սենյակում հանկարծ մարեցին պատերը, ինչպես նրանք՝ կախարհական ոսպնյակից վերածվեցին հասարակ հայելիների: Նա լսեց Միլդրեդի ճիչը, բայց վայրկյանի միլիոներորդ մասում, որ մնացել էր ապրելու, կինը պատերին տեսավ իր դեմքը: Դեմք, որ սարսուեցնող էր իր դատարկությամբ և որը մենակ մնալով դատարկ սենյակում՝ աչքերով լափում-ուտում էր ինքն իրեն: Միլդրեդը վերջապես հասկացավ, որ դա իր սեփական դեմքն է, որ դա ինքն է և արագ հայացք նետեց առաստաղին: Նույն ակնթարթում հյուրանոցի ամբողջ շենքը փլվեց նրա վրա ու հարյուրավոր տոննա աղյուսի, մետաղի, թեփի, փայտի հետ նրան ձգմեց ուրիշ մարդկանց գլխներին և հետո ավելի ու ավելի ցած՝ հարկերով մինչև նկուղ, որտեղ անիմաստ ու անհեթեթ հզոր պայթյունը կնքեց նրանց մահկանացուն:

— Հիշեցի, — Մոնթագը կառչեց հողին: — Հիշեցի: Չիկագոյում էր, շատ տարիներ առաջ: Միլլին և ես: Ահա թե որտեղ ենք հանդիպել: Ես այժմ հիշում եմ: Չիկագոյում: Ծատ տարիներ առաջ:

Ուժեղ պայթյունը ցնցեց օդը: Նրա ալիքը դոմինոյի քարերի պես վայր զցեց մարդկանց, թաթառի նման անցավ գետով, փոշու սև սյուն նետեց ու հեծեծելով՝ ծառերի միջով սուրաց դեպի հարավ: Մոնթագն ամուր սեղմվեց հողին, ասես ուզում էր աչքերը պինդ փակած՝ մտնել նրա մեջ: Միայն մի պահ աչքերը կիսաբաց արեց ու իսկույն էլ տեսավ, որ քաղաքը օդ էր բարձրացել: Թվում էր՝ ուումբերն ու քաղաքը փոխել էին իրենց տեղերը: Եվս մի անհավանական ակնթարթ՝ անձանաչելի նոր, խելացնոր բարձր շենքերով, որպիսիք չէր երագել ոչ մի ճարտարապետ, խառնիճաղանջ, փշրված ցեմենտի և բզկտված մե-

տաղի բեկորներով, դուռ ու պատուհան, տանիք ու հիմնապատ տեղաշարժված, ներքև գլորվելու փոխարեն վեր նետված փայլփրլուն ձնահյուսի երանգներով, ինչպես Ֆանտաստիկ որմնանկար՝ քաղաքը քարացել էր օդում: Հետո թափվեց ու անհետացավ:

Մի քանի վայրկյան հետո հեռավոր պայթյունի դղրոցը Մոնթազին հասցրեց քաղաքի կործանման լուրը:

Մոնթազը պառկած էր գետնին, մանր ավազափոշին լցվել էր աչքերը, սեղմած շրթունքների միջով՝ նաև բերանը: Նա շընչասպառ էր լինում, արտասվում... Հանկարծ հիշեց... այո, հիշեց ինչ-որ բան: Բայց ի՞նչ: Այո, մի գլուխ «Ժողովողից» և «Հայտնությունից»: Արագ, արագ, քանի դեռ չի մոռացել, քանի դեռ չի անցել ցնցումը, քանի դեռ չի հանդարտվել քամին: «Ժողովողը». ահավասիկ: Ծեփված դեռևս պայթյունից դողացող գետնին, նա մտովի բառերը կրկնում էր, կրկնում էր նորից ու նորից. դրանք հիանալի էին և կատարյալ: Եվ այժմ «Ռենըմ» ատամի մաժուկը չէր խանգարում: Ինքը՝ Քարոզիչը, կանգնած էր նրա առջև ու նայում էր նրան:

— Վերջացավ, — ասաց ինչ-որ մեկը:

Մարդիկ պառկել և ափ նետված ձկների նման ջրածփորեն կուլ էին տալիս օդը: Նրանք կառչել էին հողից, ինչպես երեսխան է բնագոյաբար կառչում ծանոթ իրերից: Հոգ չէ, թե որքան սառը և մեռած էր այն, հոգ չէ, թե ինչ էր պատահել կամ ինչ էր լինելու հետո: Մատները մխրճած հողի մեջ, լայն բացված բերաններով՝ մարդիկ գոռում էին, որպեսզի պայթյունների դղրոցներից պաշտպանեն թմբկաթաղանթները, որպեսզի չթողնեն մթագնվի բանականությունը: Մոնթազը նույնպես գոռում էր նրանց հետ, ողջ ուժով դիմադրում դեմքին խփող քամուն, որ ծվատում էր նրանց շրթունքները և արյուն հանում քթերից:

Մոնթազը պառկած տեսնում էր, թե ինչպես կամաց-կամաց նստում էր փոշու թանձր ամպը, միաժամանակ մեծ լուրջություն էր իջնում երկրին: Եվ նրան թվում էր, թե ինքը տեսնում է փոշու ամեն մի հատիկը, խոտի ամեն մի ցողունը, լսում է ամեն մի շրշյունը, ծիչ ու շշունջ, որը ծնվում էին այդ նոր աշխարհում: Փոշու հետ լուրջություն էր իջնում հողին, նաև հանդարտություն՝ այնքան հարկավոր նրանց, որպեսզի իրենց շուրջը նայեին, ուշադիր լսեին, խորհեին, մտքով ու զգացմունքով

ըմբռնեին նոր օրվա իրականությունը: Մոնթազը նայեց գետին: Գուցե մենք շարժվենք ափի՞ երկայնքով: Նայեց հին երկաթգծին: Կամ այս ճանապարհով: Իսկ եթե գնանք մայրուղիներով, թերևս ժամանակ ունենանք գննելու մեր շրջապատն ու մտապահելու, հիշելու: Եվ երբևէ, ավելի ուշ, երբ մեր տեսածը կմնա մեր մեջ, այն նորից կերևա մեր խոսքերում և գործերում: Շատ բան խեղաթուրված կլինի, բայց զգալի մասը կլինի այնպիսին, ինչպես իրականում: Իսկ հիմա մենք սկսում ենք մեր ճանապարհը: Կքայլենք և կդիտենք աշխարհը: Կտեսնենք՝ ինչպես է ապրում, խոսում, գործում, ինչ տեսք ունի: Եվ թեպետ ինչ որ տեսնում եմ, չի լինի իմը, բայց երբևէ կձուլվի ինձ և կդառնա իմ եսը: Նայիր շուրջդ, նայիր աշխարհին, որ փոփանց է քո առջև: Միայն այն ժամանակ կարող ես դիպչել նրան, երբ նա կթափանցի քո ներսը, կմտնի արյանդ մեջ և օրվա ընթացքում հազար անգամ շրջանառություն կկատարի քո երակներում: Ես այնքան ամուր կբռնեմ նրան, որ այլևս չի փախչի ինձանից: Երբևէ ամբողջովին կլինի իմ ձեռքերում: Առայժմ մի կերպ հպվել եմ նրան մատով: Եվ դա լուկ սկիզբն է: Զամին հանդարտվեց:

Որոշ ժամանակ Մոնթազը և մյուսները պառկել էին անզգայացած՝ դեռևս ուժ չունենալով ընդառաջ գնալ օրվան՝ չի հազար ու մի հոգսերով ու պարտականություններով. խարոզկ վառել, սնունդ հայթայթել, շարժվել, քայլել, ապրել: Նրանք թարթում էին աչքերը և արտևանունքներից թափ տալիս փոշին: Լսվում էր նրանց շնչառությունը, որ սկզբում անկասկած էր, բայց հետզհետե դառնում էր համաչափ ու հանգիստ:

Մոնթազը տեղից վեր կացավ ու նստեց:

Սակայն ոտքի կանգնելու փորձ չարեց: Նրա ուղեկիցները նույնպես տեղաշարժվեցին: Մութ հորիզոնի վրա կարմրին էր տալիս այգաբացի աղոտ շերտը: Սառը քամի էր փչում, որ նշան էր մոտալուտ անձրևի:

Քթի տակ անեծք մութմութալով, Գրենջըրը վեր կացավ, շոշափեց իր ձեռքերն ու ոտքերը, արցունքները հոսում էին այտերով: Դժվարությամբ քարշ տալով ոտքերը, հասավ գետափ և նայեց հոսանքն ի վեր:

— Քաղաքը չի երևում, — ասաց նա երկար լռությունից հետո: — Ոչինչ չի երևում: Ընդամենը մի բուռ մոխիր: Քաղաքը

չքացել է: — Նա նորից լուց և ապա ավելացրեց, — հետաքրքիր է, շատե՛րն էին հասկանում, որ այսպես է լինելու: Արդյո՞ք, շատերն անակնկալի եկան:

Մոնթագը մտածում էր. որքա՞ն քաղաքներ են կործանվել աշխարհի տարբեր մասերում: Իսկ այստեղ, մեր երկրում քանի՞սն են կործանվել: Հարյո՞ւրը, հազա՞րը:

Ինչ-որ մեկը գրպանից թղթի կտոր հանեց, վառեց լուցկին, կրակի վրա դրեցին մի փունջ խոտ և մի բուռ չոր տերև: Ապա սկսեցին ճյուղեր ավելացնել: Խոնավ ճյուղերը թշշում էին ու ծրթծրթում: Վերջապես կրակը բռնկվեց, ապա կամաց-կամաց թեժացավ: Արևը ծագեց: Մարդիկ լուռ ու դանդաղ հեռացան գետից, մոտեցան խարույկին և խոնարհվեցին կրակին: Արևի ճառագայթները դիպան նրանց ծոծրակներին:

Գրենջըրը բացեց յուղաթերթը և մի կտոր խոզապուխտ հանեց.

— Այժմ կնախաճաշենք, ապա ետ կդառնանք և կշարժվենք գետի հոսանքն ի վեր: Մենք այնտեղ հարկավոր կլինենք:

Ինչ-որ մեկը փոքրիկ թավա տվեց, դրեցին կրակին: Մի րոպե հետո թավալի մեջ տոժոժում էին մսի կտորները՝ առավոտյան օդի մեջ ախորժալի բուրմունք տարածելով: Մարդիկ լուռ նստած հետևում էին այդ արարողությանը:

Գրենջըրը նայում էր կրակին:

— Փյունիկ, — հանկարծ ասաց նա:

— Ի՞նչ:

— Հնում, ինչ-որ ժամանակ ապրում էր փյունիկ կոչվող հիմար թռչունը: Ամեն հինգ հարյուր տարին մեկ նա իրեն այրում էր խարույկի վրա: Գուցե նա մարդու ամենամոտ ցեղակի՞ցն էր: Սակայն ամեն անգամ այրվելով, նորից հառնում էր մոխրից: Մենք՝ մարդիկս, նման ենք այդ թռչունին, բայց մի առավելություն ունենք նրա նկատմամբ: Մենք գիտենք, թե ինչ հիմարություն ենք արել, մենք գիտենք հազարավոր տարիների ընթացքում կատարած մեր բոլոր հիմարությունները: Ու քանի որ գիտենք այդ ամենը, քանի որ գրաված են այդ բոլորը, ուստի կարող ենք ետ նայել, տեսնել մեր անցած ճանապարհը և հուսալ, որ երբևէ վերջ կտանք թաղման հիմար խարույկներ:

րին ու ինքնակիզվելուն: Ամեն մի սերնդի հետ ծնվում են անհատներ, ովքեր հիշում և հիշեցնում են մարդկության սխալների մասին:

Նա վերցրեց թավան, թողեց, որ մի քիչ պաղի, հետո նրանք լուռ, ամեն մեկն իր մտքերով տարված, սկսեցին ուտել:

— Այժմ կգնանք հոսանք ի վեր,— ասաց Գրենջըրը:— Հիշեցեք մի բան. մենք մեզնից ոչինչ չենք ներկայացնում, ոչ թե մենք ենք կարևոր, այլ այն ամենը, ինչ կրում ենք մեր մեջ: Երբևէ դրանք անպայման պետք կգան մարդկանց: Հիշեցեք, նույնիսկ այն հեռավոր ժամանակներում, երբ ազատորեն կարողում էինք գրքերը, չէինք օգտվում նրանց տվածից: Մենք շարունակում էինք անարգել մեռածների հիշատակը, թքում էինք այն անձանց գերեզմանների վրա, ովքեր ապրել էին մեզնից առաջ: Գայիք շաբաթվա, ամսվա, տարվա ընթացքում ամենուր հանդիպելու ենք բազմաթիվ միայնակ մարդկանց: Եվ երբ նրանք հարցնեն՝ ինչո՞վ ենք զբաղված, կպատասխանենք՝ մենք հիշում ենք: Այո, մենք մարդկության հիշողությունն ենք և այդ պատճառով էլ ի վերջո անպայման կհաղթենք: Երևի այնքան բան կհիշենք, որ կկառուցենք պատմության մեջ ամենամեծ հողաթափ մեքենան, կփորենք երբևէ եղած ամենախոր գերեզմանը և այնտեղ մեկընդմիջտ կթաղենք պատերազմը: Իսկ այժմ գնանք: Ամենից առաջ հայելու գործարան պետք է կառուցենք և առաջիկայում հայելիներ արտադրենք, միմիայն հայելիներ, որ նրանց մեջ մարդկությունը կարողանա մի լավ զըննել իրեն:

Վերջացնելով նախաճաշը՝ նրանք հանգցրին կրակը: Օրը հետզհետե պայծառանում էր: Ասես ինչ-որ մեկը բարձրացնում էր վիթխարի, վարդագույն լուսամփոփի խոշոր պատրույզը: Չվելու պատրաստվող թռչունները նորից վերադարձել և թվրլում էին ծառերի ճյուղերին:

Մոնթագը ճանապարհ ընկավ: Նա գնում էր դեպի հյուսիս: Ետ շրջվելով տեսավ, որ բոլորը հետևում են իրեն: Ջարմացած մի կողմ քաշվեց, որ Գրենջըրը առաջ անցնի: Բայց սա նայեց նրան և լուռ գլխով արեց: Մոնթագը շարունակեց ուղին: Նա նայեց գետին, երկնքին, ամալի երկաթգծին, որ իջնում էր դեպի ագարակներն ու խոտով լի մարագները, ուր գիշերը հան-

գըրվանում էին քաղաքը լքած մարդիկ: Հետո երբևէ, մեկ ամիս կամ տարի անց, բայց մեկ տարուց ոչ ուշ, արդեն մենակ նա նորից կանցնի այս վայրերով և կգնա այնքան ժամանակ, մինչև կհասնի նրանց, ովքեր անցել են իրենից առաջ:

Իսկ այժմ նրանք երկար ծանապարհ են կտրելու: Նրանք քայլելու են առավոտից մինչև կեսօր և եթե առայժմ լուռ էին, ապա լոկ այն պատճառով, որ յուրաքանչյուրն իր մտքերի հետ էր: Երբ արևը կծագի ու կջերմացնի, նրանք կսկսեն զրուցել կամ գուցե թե ամեն մեկը պարզապես կպատմի իր հիշածը, որպեսզի համոզվի, որպեսզի իսկապես վստահ լինի, որ այդ ամենը մնացել է իր հիշողության մեջ: Մոնթազը զգում էր, որ իր մեջ ևս արթնանում և հետզհետե կենդանանում են բառերը: Ի՞նչ է ասելու ինքը, երբ իր հերթը գա: Ի՞նչ կարող է ասել այդպիսի մի օր, որպեսզի ինչ-որ չափով թեթևացնի, կարճի նրանց ծանր ու երկար ծանապարհը: Ամեն բան իր ժամանակն ունի՝ ավերելու ժամանակը և կառուցելու ժամանակը: Լռելու ժամանակը և խոսելու ժամանակը¹: Այո, այդպես է, բայց ուրիշ էլ ի՞նչ: Կա ինչ-որ բան, ինչ-որ բան, որ պետք է ասել...

«Գետի եզերքին, մեկ և մյուս կողմում, կար կենաց ծառ, որ տալիս էր տասներկու տեսակ պտուղ. ամեն ամիս՝ իր պտուղը. և ծառի տերևը հեթանոսների բուժման համար էր»²:

Այո, մտածեց Մոնթազը, ահա ինչ կասեմ նրանց կեսօրին: Կեսօրին... երբ կմոտենանք քաղաքին:

¹ «Գիրք ժողովողի», 3-րդ գլուխ, 1—8:

² Հովհաննես Առաքյալի Հայտնությունը, ԻԲ, 2:

Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր

1999, օգոստոս

ԵՐԿՐԱՏԻՆԵՐԸ

Ա լ թե պոկ չի գալիս, բախում է ու բախում:
Ա Տիկին Թթթ-ն բարկացած բացեց դուռը:

— Դե՞, ի՞նչ կա:

— Դուք անգլերե՞ն եք խոսում, — մուտքի մոտ կանգնածը անակնկալից սառեց:

— Խոսում եմ, ինչպես կարողանում եմ:

— Մաքուր անգլերեն է:

Մարդը ինչ-որ համազգեստ էր հագել: Նրա ետևում կանգնած էին էլի երեք հոգի: Բոլորն էլ նկատելիորեն հուզված էին, դեմքները փայլում էին:

— Ի՞նչ եք ուզում, — կտրուկ հարցրեց միսիս Թթթ-ն:

— Դուք մարսեցի եք, — մարդը ժպտաց: — Այդ բառը ձեզ իհարկե անծանոթ է, այդպես են ասում մեզ մոտ, Երկրում:

Նա ցույց տվեց ուղեկիցներին:

— Մենք Երկրից ենք: Ես նավապետ Ռիլյամսն եմ: Ընդամենը մի ժամ առաջ ենք վայրէջք կատարել Մարսի վրա: Երկրորդ արշավախումբն ենք: Սեզնից առաջ առաջինն է ժամանել, բայց նրանց ճակատագիրը մեզ անհայտ է: Համենայն դեպս մենք եկել ենք: Եվ դուք առաջին մարսեցին եք, որին տեսնում ենք:

— Մարսեցի՞, — նրա հոնքերը վեր թռան:

— Ուզում եմ ասել, որ դուք ապրում եք Արեգակից հաշված չորրորդ մոլորակի վրա: Այդպե՞ս է...

— Տարրական ծջմարտություն է, — փնջացրեց կինը, ոտքից գլուխ նրանց չափելով:

— Իսկ մենք,— նա ձեռքով խփեց կրծքին,— Երկրից ենք՝
ձի՛ջտ է, տղաներ:

— Այդպես է, հրամանատար,— ձայնեց խումբը:

— Սա Թիր մոլորակն է,— ասաց կինը,— եթե ուզում եք
ստույգ անունն իմանալ:

— Թիր, Թիր,— հրամանատարը հոգնած թիծաղեց,—
հիանալի անուն է: Բայց ասացեք, ով բարի կին, ինչպե՛ս է,
որ դուք այդպես հրաշալի անգլերեն եք խոսում:

— Ես չեմ խոսում,— ասաց կինը,— ես մտածում եմ, հե-
ռագագացություն է: Ձեզ ամենայն բարիք եմ մաղթում:

Եվ նա շրխկացրեց դուռը:

Մի վայրկյան անց այդ սարսափելի մարդը նորից թե՛ծեց
դուռը: Կինը սրտնեղած բացեց:

— Ուրիշ ի՞նչ եք կամենում,— հարցրեց նա:

Տղամարդը կանգնած էր նույն տեղում, ժպտում էր, բայց
շփոթահար էր, դեմքին չկար առաջվա վստահությունը: **Նա**
ձեռքը պարզեց կնոջը:

— Ինձ թվում է դուք ամեն ինչ չէ,որ հասկացաք...

— Ի՞նչ,— ընդհատեց նա:

Տղամարդու աչքերը զարմանքից կլորացան:

— Մենք թռել եկել ենք Երկրից:

— Ես ժամանակ չունեմ,— ասաց նա,— հազար ու մի գործ
կա՛ եփ ու թափ, մաքրել, կար ու էլի չգիտեմ ինչ: Ձեզ երե-
վի հարկավոր է միսոր Թթթ-ն: Նա վերևում է, իր աշխատա-
սենյակում:

— Այո, այո,— ասաց երկրացին՝ աչքերը թարթելով:— Աստ-
ծո սիրուն, կանչեք միսոր Թթթ-ին:

— Նա զբաղված է,— կինը նորից շրխկացրեց դուռը:

Այս անգամ թակոցն արդեն բոլորովին անհարկի էր:

— Գիտե՞ք ինչ,— դուռը բացվելուն պես գոռաց մարդը: Նա
իսկույն միջանցք խցկվեց, կարծես ուզում էր նպատակին հաս-
նել հանկարծակիի բերելով,— հյուրերին այդպես չեն ընդու-
նում:

— Իմ մաքուր հատակը,— ճչաց կինը:— Այս ի՞նչ կեղտ է:
Դո՛ւրս կորեք, շուտ: Իսկ եթե ուզում եք ներս մտնել, բարի
եղեք նախ մաքրել ձեր ոտքերը:

Մարդը շփոթված նայեց իր կեղտոտ կոշիկներին:

— Հիմա մանրուքների ետևից ընկնելու ժամանակը չէ,—
ասաց նա,— այսպիսի իրադարձությունը հարկավոր է նշել:

Նա սևեռուն նայեց կնոջը, կարծես հայացքով ստիպելու էր
նրան ըմբռնել, թե ինչ են ուզում:

— Եթե իմ բյուրեղապակե կարկանդակները չորացել են
ջեռոցում, ես ձեզ փայտով կքշեմ:

Եվ նա շտապեց փոքրիկ, տաքությունից ճարձատող վառա-
րանի մոտ: Վերադարձավ կարմրած ու քրտնաթոր: Վառ դե-
ղին աչքեր, թուխ մաշկ, նիհարիկ ու արագաշարժ՝ միջատի
պես... կտրուկ, մետաղահնչյուն ծայն:

— Սպասեք այստեղ: Գնամ տեսնեմ, գուցե և թույլ տամ
մի րոպեով անցնեք միսոր Թթթ-ի մոտ: Դուք ի՞նչ գործով եք
եկել:

Մարդը գունատվեց ու հայիոյեց, ասես մուրճով հարվածել
էին մատներին:

— Ասեք, որ Երկրից ենք եկել, որ առաջին անգամ...

— Ի՞նչը՝ առաջին անգամ,— նա վեր պարզեց թուխ ձեռ-
քը:— Լավ, դա կարևոր չէ: Ես հիմա կգամ:

Նրա հեռացող քայլերի ծայնը լսվեց քարե տան միջանցք-
ներում:

Իսկ դրսում անհավանական կապույտ ու տոթակեզ մարսյան
անշարժ երկինքն էր փռված, ինչպես երկնագույն տաք ծով:
Մարսյան անապատի վրա, որ ասես հսկայական եռացող կաթ-
սա լիներ, ալիքվում էր տաք մշուշը: Փոքր-ինչ հեռու, բլրի գա-
գաթին, թեք կանգնած էր մի փոքրիկ տիեզերանավ: Նրանից
մինչև քարե տան դուռը ոտնահետքեր էին ձգվում:

Երկրորդ հարկից բորբոքված ծայներ էին լսվում: Դռան
մոտ մարդիկ նայում էին միմյանց, մի ոտքից մյուսին էին հեն-
վում, ուղղում էին գոտիները: Վերևում տղամարդը ինչ-որ բան
էր փնթփնթում: Կանացի ծայնը պատասխանում էր: Քառորդ
ժամ անց երկրացիները անգործությունից սկսեցին խոհանոցում
ես ու առաջ անել:

— Ժխե՛նք,— առաջարկեց նրանցից մեկը:

Մյուսը ծխախոտ հանեց, սկսեցին ծխել: Նրանք ներս էին
քաշում ծխի ձերմակավուն քուլաները, կարգի էին բերում հա-
մազգեստները, շտկում օձիքները: Վերևում ծայները շարունա-

կում էին աղմկել: Հրամանատարը նայեց ժամացույցին:

— Քսանհինգ րոպե անցավ,— ասաց նա,— ի՞նչ են անում այնտեղ:

Նա մոտեցավ պատուհանին ու դուրս նայեց:

— Շոգ օր է,— ասաց տիեզերագնացներից մեկը:

— Այո,— ետմիջօրեի տապից թուլացած՝ ծուլորեն նկատեց մյուսը:

Վերևում ծայների աղմուկին հաջորդեց խուլ քրթմնջոց, հետո լուռություն տիրեց: Ամբողջ տանը՝ ոչ մի շշուկ: Ամեն մարդ լսում էր սեփական շնչառությունը:

Մի ամբողջ ժամ լուռ մնացին:

— Մեր պատճառով որևէ դժբախտություն պատահած չլինի՞,— ասաց հրամանատարը, մոտեցավ հյուրասենյակի դռանը և ներս նայեց:

Սենյակի կենտրոնում կանգնած՝ միսիս Թթթ-ն ծաղիկներն էր ջրում:

— Ես էլ մտածում էի՝ ի՞նչ եմ մոռացել,— ասաց նա նկատելով հրամանատարին:

Կինը մտավ խոհանոց:

— Ներեցեք,— մի թղթի կտոր մեկնեց,— միստր Թթթ-ն չափազանց զբաղված է:— Նա նորից անցավ իր ամանեղենին:— Բացի այդ, ձեզ ոչ թե նա է հարկավոր, այլ միստր Աաա-ն: Վերցրեք այս երկտողը և գնացեք հարևան դաստակերտը. կապույտ ջրանցքի ամին է: Այնտեղ միստր Աաա-ն կպատասխանի ձեզ հետաքրքրող հարցերին:

— Մենք ոչինչ էլ չենք ուզում հարցնել,— առարկեց հրամանատարը, շուրթերը կախ գցելով,— մենք գիտենք՝ ինչ պետք է:

— Երկտողը տվեցի, էլ ի՞նչ եք ուզում,— զայրացած բացականչեց նա:

Այլևս ոչնչի հույս չկար:

— Լավ,— ասաց հրամանատարը: Սակայն նա չէր ուզում գնալ, կանգնել այնպես էր նայում կնոջը, ինչպես երեխան մերկ տոնածառին:— Լավ,— կրկնեց նա,— գնացինք, տղերք:

Չորս տղամարդն էլ դուրս եկան ու քայլեցին տոթ, անշշուկ ամառային օրվա միջով:

Կես ժամ անց միստր Աաա-ն, որը նստած էր իր գրադարանում և մետաղյա բաժակից էլեկտրական բոց էր խմում, սալարկված շավղից ոտնաձայներ լսեց: Նա գլուխը հանեց պատուհանից և հայացքը սևեռեց չորս միանման համազգեստով մարդկանց, որոնք աչքերը կկոցած նրան էին նայում:

— Ղուբ միստր Աաա-ն եք,— հարցրին նրանք:

— Ես եմ:

— Սեզ ձեզ մոտ է ուղարկել միստր Թթթ-ն,— գոչեց հրամանատարը:

— Ինչո՞ւ,— հետաքրքրվեց միստր Աաա-ն:

— Ինքն զբաղված էր:

— Ղե գիտե՞ք ինչ, խայտառակություն է,— արհամարհանքով ասաց նա,— հո չեք կարծում, թե ես բան ու գործս թողած պիտի զվարճացնեմ այն մարդկանց, որոնցով զբաղվելու ժամանակ չունի նա:

— Հիմա դա չէ եականը, սըր,— գոչեց հրամանատարը:

— Ինձ համար եականը դա է: Կարդալու այնքան գրիք է կուտակվել: Միստր Թթթ-ն ոչ ոքի հետ հաշվի չի նստում: Առաջին անգամ չէ, որ նա այդպիսի անպատասխանատվություն է ցուցաբերում իմ հանդեպ: Խնդրում եմ ձեր ձեռքերը չթափահարեք, սըր, թույլ տվեք խոսքս ավարտեմ: Ղուբ պետք է առավել ուշադիր լինեք: Ես սովոր եմ, որ մարդիկ լսեն, թե ինչ եմ ասում: Եվ նեղություն կրեք հարգանքով լսելու, թե չէ ընդհանրապես չեմ խոսի ձեզ հետ:

Չորսով շփոթված, բերանները բաց դոփդոփում էին ներքեվում: Հրամանատարի ծակատի երակները ուռել էին, աչքերում արցունքներ երևացին:

— Ուրեմն, ի՞նչ եք կարծում,— բարբառեց միստր Աաա-ն,— միստր Թթթ-ն ճի՞շտ է վարվել:

Քառյակը գարմանքով նրան էր նայում տոթակեզ օրվա միջով: Հրամանատարը չդիմացավ:

— Սենք Երկրից ենք եկել:

— Իմ կարծիքով նա իրեն ջենտլմենի նման չի սյահել,— փնթփնթաց միստր Աաա-ն:

— Սենք ա՛լ, այն տիեզերանավով ենք եկել:

— Եվ առաջին անգամ չէ, որ նա այդպիսի անխոհեմություն է թույլ տալիս:

— Հասկանո՞ւմ եք՝ Երկրից ենք:

— Նա դեռ կտեսնի, ես կզանգահարեմ ու կհայտնեմ վըր-դովմունքս, այո, այո:

— Մենք՝ բոլորս, ես և այս երեքը իմ նավի՝ անձնակազմն ենք:

— Ես հենց հիմա կզանգեմ:

— Երկիր: Տիեզերանավ: Մարդիկ: Թռիչք: Տիեզերք:

— Կզանգեմ ու մի լավ կշշպոեմ,— գոչեց միստր Աաա-ն ու անհետացավ պատուհանի առջևից, ինչպես տիկնիկային թատրոնի տիկնիկ:

Լսվում էր, թե ինչպես ինչ-որ անտեսանելի ապարատով թունդ վիժում էին: Հրամանատարն ու անձնակազմը բակում կանգնած տխուր նայում էին հեռու սարալանջին կանգնած տիեզերանավին՝ նուրբ, սլացիկ ու հարազատ:

Միստր Աաա-ն պատուհանից գլուխը հաղթականորեն դուրս հանեց:

— Ես նրան մենամարտի կանչեցի, պատվովս եմ երդվում, լսո՞ւմ եք, մենամարտի:

— Միստր Աաա,— համբերատար սկսեց հրամանատարը:

— Կկրակեմ, կսպանեմ, իմացեք:

— Միստր Աաա, խնդրում եմ, լսեք ինձ, մենք կտրել անցել ենք վաթսուն միլիոն մղոն:

Միստր Աաա-ն առաջին անգամ նրա վրա ուշադրություն դարձրեց:

— Ի՞նչ ասացիք, դուք որտեղի՞ց եք:

— Վերջապես, ամեն ինչ կարգի ընկավ,— շշնջաց նա յուրայիններին և բարձրաձայն դարձավ միստր Աաա-ին,— վաթսուն միլիոն մղոն հեռավորությունից, Երկիր մոլորակից:

Միստր Աաա-ն հորանջեց:

— Տարվա այս եղանակին հազիվ հիսուն միլիոն, ոչ ավելի:— Նա ձեռքն առավ սարսափազդու ինչ-որ զենք,— դե, իմ գնալու ժամանակն է: Վերցրեք ձեր հիմար երկտողը, թեև չեմ հասկանում, թե դա ձեզ ինչ օգուտ կարող է տալ, և գնացեք քաղաք, բլրի մյուս կողմը, կոչվում է Իոփր, այնտեղ ամեն ինչ կպատմեք միստր Իիի-ին: Նա հենց այն մարդն է, որը հարկավոր է ձեզ. ոչ այդ հիմար միստր Թթթ-ն է ձեզ պետք,

որին սպանելն իմ պարտքն է, ոչ էլ ես. դա իմ ոլորտը չէ:

— Ոլորտը, ոլորտը, — պողթկաց հրամանատարը, — ինչ կապ ունի ում ոլորտն է, երբ հարկավոր է ընդունել Երկրից եկած մարդկանց:

— Հիմարություններ դուրս մի տվեք, դա բոլորին է հայտնի, — միստր Ասա-ն արագ-արագ իջավ սանդուղքով, — ցտեսություն: — Եվ վազեց ճանապարհով:

Տիեզերագնացները մնացին ափի բերան: Վերջապես հրամանատարն ասաց.

— Ոչ, ինչ էլ լինի, մենք կգտնենք մեկին, որ մեզ կլսի:

— Ինչ կլինի, եթե գնանք ու նորից վերադառնանք, — հոգնատանջ ասաց ընկերներից մեկը, — թուչենք ու նորից վայրէջք կատարենք, որպեսզի ժամանակ տանք նրանց ուշքի գալու և հանդիպում կազմակերպելու:

— Թերևս այդպես էլ անենք, — հոգոց հանելով պատասխանեց տանջահար հրամանատարը:

Փոքրիկ քաղաքը ետում էր, մարտեցիները էլ ու մուտ էին անում, ողջունում միմյանց: Նրանք դիմակներ էին կրում՝ ոսկեգույն, երկնագույն, մուգ կարմիր, հաճելի բազմազանություն համար կային արժաթավուն շուրթերով և բրոնզագույն հոնքերով դիմակներ, ժպտացող ու խոժոռ դիմակներ՝ կրողի բնավորությանը համապատասխան:

Երկար ճանապարհից ոտքերը հագիվ քարշ տալով, չորս երկրացիները կանգ առան ու փոքրիկ մի աղջկա հարցրին, թե որտեղ է ապրում միստր Իիի-ն:

— Այնտեղ, — գլխով ցույց տվեց աղջիկը:

Հրամանատարը ծնկի իջավ և նայեց նրա նուրբ մանկական դեմքին:

— Լսիր, աղջիկս, ուզում եմ քեզ մի բան պատմել:

Նրան նստեցրեց ծնկին և բնքշորեն իր լայն ափի մեջ առավ աղջկա թուխ թաթիկները, կարծես մտազիր էր իրիկնային հեքիաթ պատմել՝ անշտապ ծավալվող, հանգամանալից ու երջանիկ վերջաբանով:

— Հասկանո՞ւմ ես, փոքրիկս, կես տարի առաջ Մարս եկավ մի ուրիշ տիեզերանավ՝ Յորթ անունով մի մարդ, իր օգնականի հետ: Մենք չգիտենք, թե նրանց ի՞նչ է պատահել:

Գուցե վթարվել են: Նրանք տիեզերանավով են եկել, ինչպես
և մենք: Այ՛ թե տեսնեիր: Մեծ, շատ մեծ տիեզերանավ է: Այն-
պես որ մենք երկրորդ արշավախումբն ենք, մեզնից առաջ
եղել է առաջինը: Մենք երկար ենք թռել, երկրից ենք:

Սուանց մտածելու աղջնակը ետ քաշեց ձեռքը և դեմքը ծած-
կեց անարտահայտիչ ոսկեգույն դիմակով, ապա քանի դեռ
հրամանատարը խոսում էր, մի ոսկյա խաղալիք սարդ հանեց
և շրխկացրեց գետնին: Խաղալիք սարդը հնազանդորեն մա-
գըլցեց աղջկա ծունկն ի վեր, իսկ նա հանգիստ ու անտար-
բեր հետևում էր՝ իր անհույզ դիմակի ձեղքի միջից: Հրամանա-
տարը մեղմորեն ցնցեց նրան և համառությամբ շարունակեց իր
պատմությունը:

— Մենք երկրացիներ ենք, — ասաց նա, — դու հավատո՞ւմ
ես:

— Այո, — աղջիկը նայում էր փոշու վրա իր հետքերի թո-
ղած նախշերին:

— Ի՞նչ խելոքն ես, — հրամանատարը բարեհոգաբար, բայց
մի քիչ չարացած կամթեց նրա ձեռքը, որ ստիպի իրեն նայել: —
Մենք տիեզերանավ ենք կառուցել, հավատո՞ւմ ես:

Աղջիկը մատը խոթեց քիթը:

— Ըհը:

— Դե՛, դե՛, մատդ քթիցդ հանիր... Ես հրամանատար եմ
և...

— Պատմության մեջ դեռ ոչ ոք այդպիսի հզոր տիեզերանա-
վով տիեզերք դուրս չի եկել, — աչքերը կկոցելով հայտարարեց
փոքրիկը:

— Հրաշալի է, ինչպե՞ս կոռահեցիր:

— Օ՛, հեռագգացություն է, — նա անփութորեն մատը քսեց
ծնկանը:

— Դե՛, մի՞թե քեզ համար հետաքրքիր չէ, — բացականչեց
հրամանատարը, — մի՞թե դու ուրախ չես:

— Դուք ավելի լավ է շուտ գնաք միստր Իիի-ի մոտ, —
աղջնակը խաղալիքը վաչր գցեց, — նա հաճույքով կխոսի ձեզ
հետ:

Եվ նա վազեց: Նրան կրնկակոխ հետևում էր խաղալիք
սարդը: Հրամանատարը պագած՝ ձեռքը պարզել էր աղջկա կող-
մը և նայում էր նրա ետնից: Նա զգաց ինչպես են արցունքները

լծանում աչքերում, նայեց դատարկ ձեռքերին ու անօգնական բացեց բերանը: Ընկերները կանգնել էին կողքին ու հայացքները հառել սեփական սովերներին: Նրանք թքեցին փողոցի սալահատակին...

Միստր Իիի-ն անձամբ բացեց դուռը: Նա շտապում էր դատախոսության, կարող էր նրանց մի րոպե միայն նվիրել, եթե արագ ներս մտնեին և ասեին, թե ինչ է իրենց հարկավոր:

— Փոքր-ինչ ուշադրություն, — հոգնատանջ ասաց հրամանատարը՝ թարթելով կարմրած աչքերը, — մենք Երկրից ենք, եկել ենք տիեզերանավով, չորս հոգի ենք՝ երեք տիեզերագնաց և հրամանատարը: Մենք հալից ընկել ենք, ուտել ենք ուզում, մեզ գիշերելու տեղ է հարկավոր: Թող մեկը քաղաքի բանալին մեզ հանձնի կամ այդ կարգի ինչ-որ բան, թող սեղմեն մեր ձեռքերը, «ուտա՛» գոչեն, շնորհավորեն: Այսքանը:

Միստր Իիի-ն բարձրահասակ, նիհար, մելամաղձոտ անձնավորություն էր, նրա դեղնավուն աչքերը թաքնվել էին ակնոցի հաստ կապույտ ոսպնյակների ետևում: Գրասեղանին հակված՝ նա մտածկոտ ինչ-որ թղթեր էր թերթում և ժամանակ առ ժամանակ իր թափանցող հայացքը հյուրերին ուղղում:

— Վախենամ թե բլանկ չունենամ:

Նա քրքրեց սեղանի դարակները:

— Ո՞ւր եմ խցկել, — նա խոժոռվեց, — այստեղ պետք է լինեին: Ահա, խնդրեմ, — նա հրամանատարին մեկնեց թղթերը, — պետք է ստորագրեք:

— Այս ամբողջ անհեթեթությունը պետք է կարդա՞մ:

Ակնոցի հարթ ապակիները ուղղված էին հրամանատարին:

— Բայց չե՞ որ դուք ասացիք՝ Երկրից եք: Ուրեմն ձեզ մնում է միայն ստորագրել:

Հրամանատարը ստորագրեց:

Անձնակազմը նույնպե՞ս պետք է ստորագրի:

Միստր Իիի-ն նայեց նրան, նայեց մյուս երեքին և քրքջաց:

— Նրանք էլ ստորագրեն: Հա՛, հա՛, հա՛, հրաշալի է: Նրանք... նրանք, — արցունքները ցած էին սահում այտերով: Նա ափով զարկեց ծնկանը, կոացավ, ծիծաղից խեղդվելով կառչեց սեղանից, — նրանք ստորագրե՛ն...

Տիեզերագնացները մոալվեցին:

— Այստեղ ի՞նչ կա ծիծաղելու:

— Նրանք՝ և ստորագրել, — ծիծաղից շնչասպառ ասաց միստր Իիի-ն, — դրանից գվարձալի ի՞նչ կա: Ես անպայման կպատմեմ միստր Ըըը-ին, — շարունակելով ծիծաղել՝ նալեց ստորագրված բլանկներին, — կարժես թե ամեն ինչ կարգին է: Նույնիսկ եվթանագիայի՝ ենթարկելու համաձայնությունը կա, եթե ի վերջո դրա կարիքն զգացվի: — Նա քրքջաց:

— Ինչի՞ համաձայնությունը:

— Ղե լավ, բավական է, ես ձեզ համար որոշ բան կասեմ, ահա ձեզ բանալին:

Հրամանատարը ոգևորվեց.

— Օ՛, սա մեծ պատիվ է:

— Սա քաղաքի բանալին չէ, հիմար, — ընդհատեց միստր Իիի-ն: Սա Տան բանալին է: Գնացեք միջանցքով, բացեք մեծ դուռը, ներս մտեք և շրխկացրեք ձեր ետևից: Կարող եք գիշերել այնտեղ: Միստր Ըըը-ին առավոտյան ձեզ մոտ կուղարկեն:

Հրամանատարը տատամսելով՝ վերցրեց բանալին: Նա գրխահակ կանգնել էր, ընկերները նույնպես տեղներից չէին շարժվում: Թվում էր՝ կլանքը սառել է նրանց երակներում, քամել հանել են տիեզերական ճամփորդության ողջ կիրքը, նրանք սպառվել էին:

— Ղե, ի՞նչ պատահեց, — հարցրեց միստր Իիի-ն, — ինչի՞ եք սպասում, էլ ի՞նչ եք ուզում: — Նա կիպ մոտեցավ հրամանատարին և զլուխը խոնարհելով՝ ուշադիր զննեց նրա դեմքը, — ասեցեք:

— Վախենում եմ դուք նույնիսկ ի վիճակի չլինեք..., — սկսեց հրամանատարը, — այսինքն ուզում եմ ասել, այդ մասին մտածել կամ փորձ անել..., — նա վարանեց, — մենք շատ ենք տքնել, այդպիսի երկար ճանապարհ ենք անցել, գուցե արժեր սեղմել մեր ձեռքը և թեկուզ ասել. «Կեցցե՛ք»:

Նա լռեց:

Միստր Իիի-ն անփութորեն մեկնեց ձեռքը:

— Ծնորհավորում եմ, — նրա շուրթերին սառած ժպիտ

¹ Անբուժելի հիվանդ մարդու մահը բժշկական միջոցներով արագացնելը:

կար,— շնորհավորում եմ,— նա շրջվեց,— իսկ հիմա իմ գնալու ժամանակն է: Բանալին չմոռանաք:

Այլևս ուշադրության չարժանացնելով նրանց, կարծես նրանք անեացել էին, միստր Իիի-ն ետ ու առաջ էր քայլում սենյակում՝ պայուսակը ինչ-որ թղթեր լցնելով: Ռա տնեց մոտ հինգ րոպե, և այդ ընթացքում նա ոչ մի անգամ չնայեց չորս խոժոռադեմ, հոգնաժողովունից հագիվ ոտքի վրա կանգնող, գլուխները կախ, խամրած աչքերով մարդկանց: Ռուրս գալիս միստր Իիի-ն կենտրոնացած զննում էր իր եղունգները:

Երեկոյանում էր, նրանք քայլեցին կիսախավար միջանցքով, հայտնվեցին մեծ, փայլուն, արծաթագույն դռան առաջ և բացեցին նույնպես արծաթագույն բանալիով: Ներս մտան, դուռը շրխկացրին ու նայեցին իրենց շուրջը:

Սենյակը ընդարձակ էր, լուսավոր: Տղամարդկանց ու կանանց մի մասը նստոտած էր սեղանների մոտ, ոմանք էլ խումբ-խումբ կանգնած անկյուններում զրուցում էին: Ռոան շրխկոցը նրանց ստիպեց շրջվել, բոլորը նայեցին համազգեստով մարդկանց: Մի մարտեցի մոտեցավ և խոնարհվեց:

— Ես միստր Ուուու-ն եմ:

— Իսկ ես նավապետ Ջոնաթան Ուիլյամսը, Երկրից, Նյու Յորքից,— պատասխանեց հրամանատարը առանց մեծ ոգևորության:

Ռահլիճը կարծես փոյ եկավ աղաղակներից և բացականչություններից: Մարտեցիները ձեռքները թափահարելով, հիացած գոռում-գոչում էին, շուտ տալիս սեղանները, նետվում դեպի երկրացիները, գրկում նրանց, հետո բոլորին էլ ձեռքների վրա բարձրացնելով, վեց անգամ պտտեցին դահլիճում, վեց անգամ վազելով պատվո շրջան կատարեցին՝ ցատկոտելով, պարելով ու երգելով:

Երկրացիները այնպես էին կարկամել, որ մոտ մի րոպե լուռ նստած էին նրանց ուսերին, հետո սկսեցին ծիծաղել ու բղավել միմյանց վրա:

— Ա՛յ սա ուրիշ բան է:

— Հրաշալի է, սկզբից էր հարկավոր այսպես: Էհե՛յ, տե՛ս է, էհե՛յ:

Նրանք հաղթանակած աչքով էին անում միմյանց, տարածում էին ծեռքները, ծափ էին զարկում:

— Էհե՛լ:

Մարտեցիները նրանց կանգնեցրին սեղանին: Աղմուկը լռեց:

— Ուոա՛, — գոռաց ամբոխը:

Հրամանատարը քիչ էր մնում հեծկտար:

— Ծնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ: Հիանալի է:

— Ձեր մասին պատմեք, — առաջարկեց միստր Ուուու-ն:

Հրամանատարը հազաց:

Լսողները հիացած հառաչում ու թառանչում էին: Հրամանատարը ներկայացրեց իր ընկերներին, յուրաքանչյուրը կարճ խոսք արտասանեց, շփոթվելով բուն ծափողջուկներից:

Միստր Ուուու-ն թփթփացրեց հրամանատարի ուսը.

— Հաճելի է այստեղ հայրենակցի տեսնելը, ախր, ես էլ Երկրից եմ:

— Ինչպե՞ս թե:

— Հապա, այստեղ շատերն են Երկրից:

— Դուք... Երկրի՞ց, — հրամանատարի աչքերը չոկեցին, — չի կարող պատահել: Դուք է՛լ եք տիեզերանավով եկել: Այդ դեպքում ե՞րբ է սկսվել տիեզերքի նվաճումը: — Նրա ձայնում հուսախաբություն կար: — Դուք որտեղի՞ց եք, ո՞ր Երկրից:

— Թուիերեով: Ես այստեղ եմ եկել ոգեղեն ուժով, շատ տարիներ առաջ:

— Թուիերեո՛ւ..., — ծոր տվեց հրամանատարը, — այդպիսի երկրի մասին չեմ լսել: Եվ այդ ինչ ոգեղեն ուժ է...

— Այ, միսս Ռոու-ն էլ Երկրից է, ճիշտ չէ՞, միսս Ռոու:

Միսս Ռոու-ն գլխով արեց և տարօրինակ ծիծաղեց:

— Միստր Յյլ-ն, միստր Բքք-ն, միստր Վվվ-ն՝ նույնպես:

— Իսկ ես Յուպիտերից եմ, — լուրջ տեսք ընդունելով, ներկայացավ մի տղամարդ:

— Ես Սատուոնից եմ, — խորամանկորեն աչքերը փայլեցնելով, ասաց մի ուրիշը:

— Յուպիտեր, Սատուոն..., — մրմնջաց հրամանատարը, աչքերը ձպձպացնելով:

Լուրջուն տիրեց: Մարտեցիները հավաքվել էին տիեզերագնացների շուրջը, նստոտել էին սեղանների մոտ, բայց սե-

ղանները դատարկ էին, խրախճանքի մասին իսկի խոսք չկար: Նրանց դեղին աչքերը փայլում էին, աչքերի տակ մութ սովերներ էին գույացել: Նոր միայն հրամանատարը նկատեց, որ դահլիճը պատուհան չունի: Լույսը կարծես թափանցում էր պատերի միջով: Միայն մի դուռ կար: Հրամանատարը ցնցվեց.

— Ի՞նչ տարօրինակ է, որտե՞ղ է այդ Թուփերեուլը, հեռո՞ւ է Ամերիկայից:

— Ամերիկան ի՞նչ բան է:

— Դուք Ամերիկայի մասին չե՞ք լսել: Երկրից եք եկել և չգիտե՞ք:

Միստր Ուուու-ն զայրացած թափահարեց գլուխը:

— Երկիրը ծովերից է բաղկացած, միայն ծովերից, ուրիշ ոչինչ չկա, ցամաք չկա: Ես այնտեղից եմ, ես հո գիտեմ:

— Սպասեք, — հրամանատարը ընկրկեց, — դուք ամենախսկական մարսեցի եք, դեղին աչքերով, թուխ մաշկով...

— Երկիրը ամբողջովին ջունգլիներով է ծածկված, — հպարտ հայտարարեց միսս Ռոու-ն, — ես Օրիից եմ, արծաթյա մշակույթի երկրից:

Հրամանատարը հայացքը մի դեմքից մյուսին էր դարձնում, միստր Ուուու-ից միստր Յիլ-ին, միստր Յիլ-ից՝ միստր Բքք-ին, միստր Բքք-ից՝ միստր Նեն-ին, հետո՝ միստր Հիհ-ին, միստր Բքք-ին: Նա տեսնում էր ինչպես են լայնանում ու նեղանում նրանց դեղին աչքերի բիբերը, ինչպես են նրանց հայացքները մեկ կենտրոնանում, մեկ՝ մշուշվում: Նա սարսուռաց վերջապես, շրջվելով իր ենթականների կողմը, մոայլ ասաց.

— Հասկացա՞ք, թե սա ինչ է:

— Ի՞նչը, հրամանատար:

— Սա ո՛չ հանդիսավոր դիմավորում է, — հոգնած ասաց նա, — ո՛չ հանպատրաստից ընդունելություն, ոչ՝ բանկետ: Ոչ էլ մենք պատվավոր հյուր ենք: Սրանք էլ մարսյան իշխանության ներկայացուցիչները չեն: Նայեք նրանց աչքերին, լսեք նրանց խոսակցությունը:

Տիեզերագնացները շունչները պահեցին: Նրանք ուշադիր աչքի անցկացրին տարօրինակ, փակ դահլիճը:

— Հիմա ես հասկանում եմ, — հրամանատարի ձայնը կարծես խոր փոսից էր հնչում, — հասկանում եմ, թե մեզ ինչու էին անընդհատ նորանոր հասցեներ տալիս և սրա-նրա մոտ ուղար-

կում, մինչև հանդիպեցինք միտոր Իիի-ին, իսկ նա տվեց ճիշտ հասցեն և նույնիսկ բանալին, որպեսզի մենք բացենք դուռը և փակենք մեր ետևից: Ահա մենք էլ ընկանք...

— Ո՞ր:

Հրամանատարի ուսերը կախ ընկան:

— Հոգեբուժարան:

Գիշեր իջավ: Թափանցիկ պատերի մեջ թաքնված լուսերը մեղմ լուսավորում էին լուռ ընդարձակ դահլիճը: Չորս երկրացիները նստել էին փայտե սեղանի մոտ և գլուխները կախ քչփչում էին: Հատակին խառնիխուռն քնած էին կանայք ու տղամարդիկ: Մութ անկյուններում ինչ-որ բան էր շարժվում, ոմանք առանձնացած՝ տարօրինակ կերպով թափահարում էին ձեռքերը: Յուրաքանչյուր կես ժամը մեկ տիեզերագնացներից մեկը մոտենում էր արժաթավուն դռանը և վերադառնում սեղանի մոտ:

— Անհնար է դուրս պրժնել, հրամանատար: Մենք ամուր ենք փակված:

— Մեզ մի՞թե գժի տեղ են դրել:

— Իհարկե: Ահա թե ինչու մեր երևալը հիացմունք չառաջացրեց: Նրանց համար մենք պարզապես հոգեկան հիվանդներ ենք, ինչպիսիք այստեղ շատ են: Սրանք բոլորն էլ խախտված են, — նա ձեռքով ցույց տվեց քնածներին, — բայց ինչպե՞ս ընդունեցին մեզ: Ինձ մի պահ թվաց, թե հանդիսավոր դիմավորում է, — նրա աչքերը կայծկլտացին և անմիջապես էլ խամրեցին, — այդ բացականչությունները, երգերը, ճառերը... Լավ էր, չէ՞...

— Մեզ ինչքա՞ն ժամանակ կպահեն այստեղ, հրամանատար:

— Մինչև ապացուցենք, որ հոգեկան հիվանդ չենք:

— Դա հեշտ է:

— Ես էլ հույս ունեմ:

— Կարժես թե այնքան էլ համոզված չեք, հրամանատար:

— Հըմ, այո... հապա այն կողմ նայեք:

Մթության մեջ, ծնկները ծալած, մեկուսի նստել էր մի տղամարդ, նրա բերանից կապույտ բոց էր դուրս գալիս, որը փոքրամարմին, մերկ կնոջ ձև էր ընդունում: Ինչ-որ բաներ շարժ-

ջալով ու հառաչելով, նա հեզանագ ճախրում էր օդում, կապույտ լուսի ալիքներում:

Հրամանատարը գլխով մյուս կողմը ցույց տվեց: Այնտեղ մի կին էր կանգնած, որը տարօրինակ կերպարանափոխության էր ենթարկվում: Սկզբում նա բյուրեղապակյա սյան մեջ էր, հետո ոսկյա արծանիկ դարձավ, ապա մայրու ողորկ ձյուղ և ի վերջո, ընդունեց սկզբնական կերպարանքը:

Դահլիճում, կեսգիշերային մթության մեջ, տղամարդիկ ու կանայք ձեռնաժողովուն էին կատարում մանուշակագույն բոցերի հետ, անընդհատ փոփոխվելով, տարբեր կերպարանքներ ընդունելով, քանի որ գիշերը տրտմության ու կերպարանափոխության ժամանակն է:

— Կախարդանք, մոգություն, — շշնջաց երկրացիներից մեկը:

— Ո՛չ, տեսապատրանքներ: Նրանք մեզ են հաղորդում իրենց զառանցանքը, այնպես որ մենք տեսնում ենք, թե նրանք ինչ տեսողական պատրանքներ են ունենում: Հեռազգացություն է, ինքնաներշնչում և հեռազգացություն:

— Ձեզ դա՞ է մտահոգում, հրամանատար:

— Այո, եթե տեսապատրանքները մեզ և, ոչ միայն մեզ, այդքան բնական են թվում, այդքան համոզիչ ու ճշմարտանման, զարմանալի չէ, որ մեզ թյուրիմացաբար հոգեկան հիվանդ համարեցին: Այդ տղամարդը կարողանում է կապույտ կրակից փոքրիկ կանայք ստեղծել, իսկ ա՛յ, այն կինը ի վիճակի է սյուն կամ արծան դառնալ: Շատ բնական է, եթե նորմալ մարսեցին մտածի, որ տիեզերանավը մեր հիվանդ երևակայության արդյունքն է:

Մթության մեջ տիեզերագնացները խուլ հառաչեցին:

Մերթ բռնկվելով, մերթ անհետանալով, շուրջը պարում էին կապույտ կրակները: Զնաժ տղամարդկանց բերաններից կարմիր ավազից օձեր էին դուրս լողում: Կանայք փոխակերպվում էին փայլուն օձերի: Գազանների ու սողունների հոտ էր գալիս:

Առավոտյան բոլորը թվում էին ուրախ, առողջ և նորմալ: Ոչ մի սատանա, ոչ մի բոց: Հրամանատարը իր անձնակազմի հետ կանգնել էր արծաթագույն դռան մոտ, հուսալով, որ կբացվի:

Միստր Ըրը-ն երևաց չորս ժամ անց: Նրանք կասկածում

Էին, որ նա երեք ժամից ոչ պակաս կանգնել է դռան ետևում, հետևել, որպեսզի հետո ներս մտնի ու կանչի իր փոքրիկ աշխատասենյակը:

Պա մի բարեհոգի, ժպտադեմ տղամարդ էր, եթե հավատ ընծայվեր նրա ոչ թե մեկ, այլ երեք տարբեր ժպիտներ պատկերող դիմակին. ի դեպ, դիմակի տակից հնչող ձայնը պատկանում էր ոչ այդքան ժպտադեմ հոգեբույժի:

— Ի՞նչն է ձեզ անհանգստացնում:

— Դուք մեզ խելագար եք համարում, բայց այդպես չէ,—
ասաց հրամանատարը:

— Ընդհակառակը, ես բոլորիդ խելագար չեմ համարում,—
հոգեբույժը հրամանատարին ուղղեց փոքրիկ ցուցափայտը,—
միայն ձեզ, հարգելիս: Մյուս բոլորը երկրորդական տեսապատրանք են:

Հրամանատարը ծնկին հարվածեց:

— Ահա թե ի՞նչ: Ահա թե ինչու միստր Իհի-ն քրքջաց, երբ
ես առաջարկեցի, որ նրանք էլ ստորագրեն բլանկները:

— Այո, նա ինձ պատմել է այդ մասին,— հոգեբույժը հըռ-
հըռաց դիմակի ալիքաձև կտրվածքի միջով:— Հիանալի կատակ:
Ի՞նչ էի ասում: Այո՛, երկրորդական տեսապատրանքներ: Ինձ
այցելում են կանայք, որոնց ականջներից օձեր են դուրս գա-
լիս: Ես բուժում եմ, և օձերն անհետանում են:

— Մենք ուրախությամբ բուժում կընդունենք, սկսեք:

Միստր Ըրը-ն խորասուզվեց մտքերի մեջ:

— Ջարմանալի է: Քչերն են համաձայնում բուժվել: Բանն
այն է, որ բուժումը խիստ արմատական բնույթի է:

— Ոչինչ, գործի անցեք, բուժեք, ինքներդ կհամոզվեք, որ
բոլորս առողջ ենք:

— Թույլ տվեք նորից նայել ձեր փաստաթղթերը, ամե՛ն
ինչ է ձևակերպված բուժման համար:— Նա թերթեց թղթա-
պանակը,— այսպես... Գիտե՞ք, այսպիսի դեպքերը հատուկ մե-
թոդներ են պահանջում: Նրանք, ում տեսել եք Տանը, ավելի
թեթև հիվանդներ են: Բայց երբ հոգեկան շեղումը շատ է խո-
րանում, ինչպես ձեր պարագայում, ուղեկցվում է առաջնային,
երկրորդային, լսողական, հոտառական և համային պատրանք-
ներով, ուրեմն գործերը վատ են: Ստիպված ենք էվթանազիա-
լի ենթարկել:

Հրամանատարը գոռոցով վեր թռավ:

— Դե, բավական է գլուխ տանք, սկսեք, քննեք մեզ, մուրձով հարվածեք ծնկին, լսեք սիրտը, ստիպեք պագել ու վեր կենալ, հարցեր տվեք:

— Խոսեք ինչքան կամենում եք:

Հրամանատարը տաքացած խոսում էր մի ամբողջ ժամ: Հոգեբույժը լսում էր:

— Անհավանական է, — մտածկոտ շշնջաց նա, — կյանքումս այսպիսի ֆանտաստիկ զառանցանք չեմ լսել:

— Գրողը տանի, մենք ձեզ ցույց կտանք մեր տիեզերանավը, — որոտաց հրամանատարը:

— Հաճույքով կնայեմ: Կարո՞ղ եք այս սենյակում ցույց տալ:

— Իհարկե, ձեր քարտարանում է, «Տ» տառի տակ:

Միստր Ըրը-ն ուշադիր նայեց քարտարանը և հիասթափված փակեց արկղը:

— Ինչո՞ւ խաբեցիք, այդտեղ ոչ մի տիեզերանավ չկա:

— Իհարկե, չկա, ապուշ, ես կատակեցի: Իսկ հիմա ասեք՝ խելագարները կատակո՞ւմ են:

— Երբեմն հումորի բավական անսովոր դրսևորումներ են պատահում: Լավ, տարեք ինձ ձեր տիեզերանավի մոտ: Ուզում եմ տեսնել:

Շոգ կեսօր էր, երբ նրանք մոտեցան տիեզերանավին:

— Այսպես, — հոգեբույժը մոտեցավ նավին և թխկթխկացրեց: Չայնը փափուկ էր, լիքը, — կարելի՞ է ներս մտնել, — հարցրեց նա խորամանկորեն:

— Ներս անցեք:

Միստր Ըրը-ն մտավ տիեզերանավ և սառեց.

— Իմ մեղավոր կյանքում ինչ ասես չեմ տեսել, բայց այսպիսի բան...

Հրամանատարը սպասում էր, ծամելով գլանակի ծայրը:

— Ամենից ավելի ուզում եմ թռչել տուն և ասել մարդկանց, որ այլևս կապ չփնտրեն այս Մարսի հետ: Ավելի բթամիտ դա՛նդալոշներ տեսած չկամ...

— Ինձ թվում է, հրամանատար, այստեղ երկուսից մեկը աննորմալ է, դրա համար էլ այդքան կասկածամիտ են:

— Միևնույն է, այս անիժյալները չափն անցան:

Կես ժամ հոգեբույժը քչփորում էր, տնտղում, թխկթխկացնում, լսում, հոտոտում, լեզվով համը փորձում: Վերջապես նավից դուրս եկավ:

— Ղե, համոզվեցի՞ք, — այնպես գոռաց հրամանատարը, ասես դիմացինը խուլ էր:

Հոգեբույժը աչքերը փակեց ու քիթը քորեց:

— Սա ինձ հանդիպած զգայական ընկալման և հիպնոսային ներշնչման ամենազարմանալի օրինակն է: Ես նայեցի ձեր այսպես կոչված «տիեզերանավը»: — Նա թխկթխկացրեց նավի իրանը, — ես լսում եմ՝ լսողական պատրանք է, — հոտոտեց, — հոտառական պատրանք, հեռագագացությամբ հաղորդվում են զգացմունքները: — Նա համբուրեց տիեզերանավի մետաղը, — ես համն եմ զգում՝ համի պատրանք:

Նա սեղմեց հրամանատարի ձեռքը:

— Թույլ տվեք շնորհավորել: Հոգեկան հիվանդության հանձար եք: Սա կատարելություն է: Ձեր խանգարված երևակայությունը ողջ սրությամբ ուրիշների գիտակցությանը հասցնելու կարողությունը անհավանական է: Մեր մյուս հիվանդները հիմնականում տեսողական պատրանքներով են տառապում, երբեմն նաև լսողական, դուք կարողանում եք ամբողջությունից գլուխ հանել: Ձեր խելագարությունը ապշեցուցիչ է:

— Իմ խելագարությունը..., — հրամանատարը գունատվեց:

— Այո, այո, սքանչելի խելագարություն է: Մետաղ, ուետին, ձգողության սարքեր, սնունդ, հագուստ, վառելիք, գենք, շարժասանդուղք, հեղույսներ, պնդողակներ, գդալներ, ես շատ առարկաներ ստուգեցի ձեր նավում: Կյանքումս այսպիսի բարդ պատկեր չեմ տեսել: Նույնիսկ բոլոր առարկաների ստվերները: Կամքի ինչպիսի՞ լարում: Եվ ամենը կարելի է շոշափել, հոտոտել, լսել, համտեսել: Թույլ տվեք գրկեմ ձեզ:

Վերջապես նա հրամանատարին բաց թողեց:

— Ես մենագրություն կգրեմ: Ղա կլինի իմ լավագույն աշխատությունը: Հաջորդ ամիս դասախոսություն կկարդամ Մարսյան գիտությունների ակադեմիայում: Հենց միայն ձեր արտաքինը ինչ ասես արժե: Ղուք կարողացել եք նույնիսկ ձեր տեսքը փոխել՝ դեղինի փոխարեն երկնագույն աչքեր, և մաշկն էլ ոչ թե թուխ է, այլ վարդագույն: Հապա այս համազգեստը, և հինգ մատը՝ վեցի փոխարեն: Ապշեցուցիչ է, հոգեկան շեղման հե-

տևանքով տեղի է ունեցել կենսաբանական փոփոխություն: Եվ դեռ ձեր երեք ընկերները...

Նա հանեց փոքրիկ ատրճառնակը:

— Դուք, իհարկե, անբուժելի եք: Դուք զարմանալի դժբախտ մարդ եք, միայն մահը կփրկի ձեզ: Ուզո՞ւմ եք մի վերջին խոսք ասել:

— Սպասե՛ք, ի սեր աստժո, մի՛ կրակեք:

— Դժբախտ արարած: Ես ձեզ կազատեմ այս տիեզերանավը և այս երեք մարդուն պատկերացնելու տանջանքից: Գրավիչ տեսարան կլինի՝ ձեզ սպանում եմ, և իսկույն անհետանում են և՛ ձեր բարեկամները, և՛ ձեր տիեզերանավը: Այ թե հողված կգրեմ իմ այսօրվա դիտարկումների մասին՝ «Ախտածին պատրանքների քայքայումը»:

— Ես երկրից եմ, իմ անունը Ջոնաթան Ուիլյամս է, իսկ սրանք...

— Գիտեմ, գիտեմ,— բարեհամբույր նկատեց միստր Ըրը-ն և կրակեց: Հրամանատարն ընկավ, գնդակը սրտին էր դիպել: Նրա ընկերները գոռացին: Միստր Ըրը-ն աչքերը չոեց:

— Դուք դեռ գոյություն ունեք: Հոյակա՛յ է: Ժամանակի և տարածության մեջ տևական տեսապատրանքներ:— Նա ատրճառնակն ուղղեց նրանց վրա,— ոչինչ, ես ձեզ կստիպեմ, որ անհետանաք:

— Ո՛չ,— գոռացին տիեզերագնացները:

— Լսողական պատրանք նույնիսկ հիվանդի մահից հետո,— գործնական տոնով ասաց միստր Ըրը-ն և մեկը մյուսի ետեվից սպանեց նրանց:

Նա ոտքով հրեց նրանց, հետո թխկացրեց տիեզերանավին:

Առանց որևէ փոփոխություն կրելու նրանք անշարժ պառկած էին ավազի վրա:

— Չի անհետացել, նրանք էլ չեն անհետացել:

Նա նորից ու նորից կրակում էր անկենդան մարմիններին, հետո ընկրկեց: Սառած ժպիտով դիմակը ընկավ ոտքերի առաջ:

Հոգեբույժի դեմքի արտահայտությունը հետզհետե փոխվում էր: Նրա ծնոտը կախվում էր: Ատրճառնակն ընկավ թուլացած ձեռքից: Նրա հայացքը դարձավ դատարկ ու բացակայող: Նա ձեռքերը տարածեց և կույրի սլես խարխափելով

շրջվեց: Նա տնտղում էր մեռած մարմինները, անընդհատ թու-
բը կուլ էր տալիս:

— Տեսապատրանքներ, — տենդագին քրթմնջում էր նա —
համ, տեսանելիք, հոտ, ծալներ, շոշափելիք:

Նա թափահարում էր ձեռքերը, չռել էր աչքերը: Ծուրթերին
փրփուր էր հայտնվել:

— Չքվե՛ք, — գոռաց միստր Ըրը-ն, դառնալով մեռածների
կողմը: — Չքվի՛ր, — գոռաց տիեզերանավի վրա:

Նա նայեց իր դողացող ձեռքերին:

— Վարակվեցի, — հուսահատ շշնջաց նա, — անցավ ինձ:
Հեռագգացություն, հիպնոս: Հիմա ես էլ խելագար եմ: Վա-
րակված եմ: Ամեն կարգի զգայական քնկալումներ, — մի պահ
անշարժացավ, հետո սկսեց չենթարկվող մատներով փնտրել
ատրճանակը: — Միայն մի միջոց կա: Միակ եղանակը ստիպե-
լու, որ անհետանան, կորչեն:

Կրակոց լսվեց: Միստր Ըրը-ն ընկավ:

Արևի շողերի տակ պառկած էին չորս մարմին: Միստր
Ըրը-ն ընկած էր նրանց կողքին:

Տիեզերանավը արևով ողողված բլրի լանջին էր, չէր ան-
հետացել:

Երբ մայրամուտին քաղաքի բնակիչները գտան տիեզերա-
նավը, սկսեցին գլուխ կոտրել, թե դա ինչ է: Ոչ ոք չկրահեց:
Տիեզերանավը վաճառեցին հնոտիք հավաքողին, որը տարավ
և թափոնատեղիում հանձնելու համար մասերի բաժանեց:

Ամբողջ գիշեր անձրևում էր: Հաջորդ օրը պարզ էր ու տաք:

2001, դեկտեմբեր

ԿԱՆԱԶ ԱՌԱՎՈՏԸ

Երբ արևը մայր մտավ, նա նստեց արահետի մոտ և պարզ
ընթրիք պատրաստեց, հետո պատառ-պատառ բերանը տա-
նելով և մտածկոտ ծամելով՝ լսում էր, թե ինչպես է ձուձոտում
կրակը: Մի օր էլ անցավ, հար և նման մյուս երեսունին՝ առա-
վոտից կոկիկ ու համաչափ փոսեր փորել, հետո սերմեր ցանել,

ջրել թափանցիկ ջրանցքների ջրով: Հիմա հոգնատանջ, կապարի պես ծանրացած մարմնով նա պառկել, նայում էր երկընթին, որտեղ մութի մի երանգին հաջորդում էր երկրորդը:

Նրա անունը Բենջըմին Դրիսքըլ էր: Նա երեսունմեկ տարեկան էր: Մի ցանկություն ուներ, որ Մարսը կանաչի, ծածկվի սաղարթախիտ բարձր ծառերով, որոնք օդ, շատ օդ կստեղծեն: Թող նրանք աճեն տարվա բոլոր եղանակներին, զովացնեն քաղաքը ամառվա տապին, պատսպարեն ձմեռային քամիներից: Ինչ ասես, որ չեն կարող անել ծառերը... Նրանք բնությանը գույներ են հաղորդում, ստվեր տալիս, հողից բերք ստանում կամ դառնում են մանկական խաղերի թագավորություն, ուր կարելի է մագլցել, խաղալ, կախվել ճյուղերից... Հրաշք, որ սնունդ և ուրախություն է պարգևում, ահա թե ինչ է ծառը: Բայց ամենից առաջ ծառը կենաց աղբյուր է և մեղմ խշշոցի աղբյուր, որը շոյում է ականջներդ, գիշերը օրոր շորշում, երբ պառկած ես լինում ձյունածերմակ անկողնում...

Նա պառկած լսում էր, թե ինչպես մութ գույնի հողը հավաքում է իր զորությունը, սպասում է անձրևի, որ չկա ու չկա... Ականջը հողին հպած՝ նա լսում էր գալիք տարիների քայլքը և տեսնում էր, թե ինչպես այսօր ցանած սերմերը կանաչ շիվեր են արձակում ու ձգվում վեր, երկինք, սաղարթ տալիս, և ողջ Մարսը դառնում է արևոտ ու պայծառ անտառ:

Վաղ առավոտյան, երբ դալուկ արևը հագիվ դուրս է գալիս բլուրների վրա, նա ոտքի է ելնում, արագ խփշտում է տաք նախաճաշը, հանգցնում ածխակոթերը, շալակում է ուսապարկը և տնկում, զգույշ հարթեցնում հողը, ջրում և քայլում առաջ, սուլելով ու նայելով պարզկա երկնքին, որը կեսօրին ավելի պայծառ է դառնում ու ավելի տաքացնում...

— Քեզ օդ է հարկավոր, — ասաց նա իր վառած օջախին: Խարույկը կենդանի, վառվոռն ընկեր է, որը կատակով խաժում է մատներդ, իսկ ցուրտ գիշերներին տաք ննջում է կողքիդ՝ քնկոտ վարդագույն աչքերը կկոցած... — Մեզ բոլորիս օդ է հարկավոր: Այստեղ, Մարսի վրա օդը նոսր է, շատ շուտ հոգնում ես, ինչպես Անդերում, Հարավային Ամերիկայում: Ծնչում ես ու չես հագեցնում, ոչ մի կերպ չես հագեցնում:

Նա շոշափեց կրծքավանդակը: Ինչպե՞ս էր լայնացել երե-

սուն օրվա ընթացքում: Այո՛, այստեղ պետք է կամ խոր շնչես, որ թոքերդ ընդարձակես, կամ ավելի շատ ծառ տնկես:

— Ահա թե ինչու եմ այստեղ, — ասաց նա:

Կրակը ճայթյուն արձակեց:

— Պարոցում մեզ պատմում էին Ջոնի Ափլսիդի¹ մասին: Թե ինչպես էր նա շրջում Ամերիկայում և խնձորենիներ տնկում: Իմ գործն ավելի կարևոր է: Ես տնկում եմ կաղնիներ, ծփիներ, թխկիներ և այլ ծառեր՝ կաղամախի, շագանակենի, մայրի: Ես ոչ թե պտուղներ եմ ստեղծում ստամոքսի համար, այլ՝ օդ թոքերի համար: Մարդու հավատը չի գալիս, թե որքան թթվածին կավելանա, երբ վերջապես աճեն այդ բոլոր ծառերը:

Նա հիշեց Մարս հասնելու առաջին օրը: Ուրիշ հազարավորների նման դիտում էր մարսյան խաղաղ առավոտը և մտածում. «Ինչպես եմ վարժվելու այստեղ: Ի՞նչ եմ անելու: Իմ սըրտով աշխատանք կգտնե՞մ»:

Եվ կորցրեց գիտակցությունը:

Ինչ-որ մեկը նրա քթին անուշադրի սպիրտով լի սրվակ մոտեցրեց, նա հազաց և ուշքի եկավ:

— Ոչինչ, կկազդուրվեք, — ասաց բժիշկը:

— Իսկ ի՞նչ կատարվեց ինձ հետ:

— Այստեղ օդը շատ նոսր է: Ոմանք դժվար են հարմարվում: Հավանաբար, դուք պետք է Երկիր վերադառնաք:

— Ոչ, — նա նստեց, բայց նույն պահին էլ աչքերը մթնեցին, և Մարսը կարծես փախավ ոտքերի տակից: Ռունգերը լայնացել էին, նա թոքերին ստիպում էր՝ ազահորեն ներս քաշել դատարկությունը: — Ես կվարժվեմ: Ես պետք է մնամ:

Նրան հանգիստ թողեցին: Նա պառկել էր, շնչում էր, ինչպես ավազին ընկած ձուկը և մտածում. «Օ՛հ, օ՛հ, օ՛հ: Նրանք ինձ ուզում են ետ ուղարկել օդի պատճառով»: Եվ շրջեց գլուխը, որպեսզի տեսնի Մարսի հովիտներն ու բլուրները: Նայեց և տեսավ, որ աչքը ինչքան կտրում է՝ ոչ մի ծառ չկա: Չորս կողմը համատարած արգավանդ սևահող էր, բայց ոչ մի կանաչ շյուղ: «Օ՛հ, — մտածում էր նա՝ աղմուկով ներս քաշելով անգույն դատարկությունը, — օ՛հ, օ՛հ»: Նույնիսկ բլուրների գագաթներին, սովերոտ լանջերին, նույնիսկ գետափին՝ ո՛չ ծառ

¹ Բառացի՝ խնձորի կորիզ:

կար, ո՛չ խոտ: Պատասխանը ծնվեց ոչ թե գլխում, այլ կոկորդում և թոքերում: Եվ այդ միտքը մի ումայ մաքուր թթվածնի պես իսկույն գորացրեց նրան: Ժառեր ու խոտ: Նա նայեց իր ձեռքերին և ափերը վերև շրջեց: Նա խոտ կցանի և ծառ կտնկի: Ահա նրա աշխատանքը՝ պայքարել այն ամենի դեմ, ինչը կարող է խանգարել իր այստեղ մնալուն: Ինքը հատուկ պատերազմ կհայտարարի Մարսի դեմ՝ կենսաբանական պատերազմ: Հնագույն մարսյան հողի բույսերը միլիոնավոր հազարամյակների ընթացքում ալլասերվել և ոչնչացել էին: Իսկ եթե տնկեր նոր տեսակներ, երկրագնդում աճող ծառեր՝ ճյուղառատ պատկառուկներ, լացող ուռիներ, մագնոլիաներ, հզոր եվկալիպտներ... Ի՞նչ կլինի: Միայն ենթադրել կարելի է, թե ինչ հանքային հարստություններ է թաքցնում այստեղի հողը, որովհետև հին պարտեզները, ծաղիկները, թփերը և ծառերը ուժասպառվելուց էին ոչնչացել:

— Ես պետք է ոտքի կանգնեմ,— բացականչեց նա,— պետք է տեսնեմ Կազմակերպչին:

Ամբողջ կես օր Կազմակերպչի հետ որոշում էին, թե որ բույսերը կարելի է աճեցնել: Ամիսներ, եթե ոչ տարիներ են հարկավոր, որպեսզի սկսեն տնկիներ գցել: Մենդամթերքը սառած վիճակում թռչող սառցալույանների մեջ բերվում է Երկրից: Միայն մի քանի սիրողներ հիդրոպոնիկ եղանակով այգիներ են աճեցրել:

— Այնպես որ առայժմ ինքնուրույն գործենք,— ասաց Կազմակերպիչը,— հնարավորին չափ սերմեր կհայթայթենք, նաև՝ որոշ գործիքներ: Հիմա հրթիռներում նեղվածք է: Քանի որ առաջին ավանները հանքերի հետ են կապված, վախ ունեմ, որ կանաչ տնկարկների ձեր ծրագիրը հաջողությամբ չպսակվի:

— Բայց դուք ինձ թույլ կտա՞ք:

Նրան թույլատրեցին, հատկացրին մի մոտոցիկլ: Նա ծանրոցատեղը լցրեց սերմերով ու տնկիներով, գնում էր ամալի հովիտները, թողնում էր մոտոցիկլը և աշխատելով, ոտքով առաջ էր շարժվում:

Այդ ամենը սկսվեց երեսուն օր առաջ, և այդ օրից սկսած՝ նա ոչ մի անգամ ետ չէր նայել: Ետ նայել կնշանակեր՝ ընկրճվել: Անսովոր չոր եղանակ էր և հազիվ թե որևէ սերմ ծլած լիներ: Չորս շաբաթվա ջանքերը ապարդյո՞ւն: Նա նայում էր

միայն առաջ, առաջ էր շարժվում ընդարձակ, արևոտ հովտով՝ ավելի ու ավելի հեռանալով Առաջին քաղաքից և սպասում, սպասում էր, թե երբ է անձրև տեղալու:

... Նա ծածկոցը քաշեց ուսերին. չոր բլուրների վրա կուտակվում էին ամպերը: Մարսը անկայուն է, ինչպես ժամանակը: Արևախանձ բլուրները պատվում էին գիշերային սառնությամբ, և նա մտածում էր հարուստ սևահողի մասին՝ այնքան սև ու փայլուն, որ քիչ էր մնում ինքն իրեն կոշտուկների վերածվեր, մտածում էր սրտուտ հողի մասին, որից կարող էին լոբու ահռելի ցողուններ աճել, պատիճներից հսկայական չտեսնված հատիկներ թափվեին ու դղրդացնեին հողը:

Կիսանիրի խարուկը մոխրանում էր: Օդը շարժվեց, հեռվում կարժես սալլ էր դղրդում՝ ամպրոպ էր: Անսպասելի խոնավության հոտ եկավ: «Այս գիշեր, — մտածեց նա և ձեռքը մեկնեց ստուգելու՝ անձրև գալի՞ս է, թե ոչ, — այս գիշեր»:

Ինչ-որ բան ընկավ հոնքին: Նա արթնացավ:

Քթի վրայից դեպի շրթունքը սահեց մի կաթիլ: Երկրորդն ընկավ աչքը և մի պահ մշուշեց այն: Երրորդը դիպավ այտին: Անձրև...

Սառը, փաղաքուշ, թեթև թափվում էր բարձր երկնքից, ինչպես կենաց հեղուկ, որ բուրում էր կախարդանքով, աստղերի, օդի բույրերով, որ իր հետ բերում էր սև փոշի, լեզվի վրա նույն համն էր թողնում, ինչ հին խերեսը:

Անձրև:

Նա նստեց: Ծածկոցը իջավ, բամբակյա երկնագույն վերնաշապիկի վրա մութ բծեր երևացին: Կաթիլները հետզհետե խոշորանում էին: Խարուկն այնպիսի տեսք ուներ, կարժես մի անտեսանելի գազան կրակը տրորելով, վրան պար էր եկել, ու մնացել էր միայն թանձր ծուխը: Անձրև տեղաց: Հսկայական սև երկնակամարը հանկարծ ձեղքվեց վեց երկնագույն մասերի և փլվեց: Նա տեսավ տասնյակ միլիարդավոր շիթեր: Ցած թափվելիս նրանք օդում մնացին ճիշտ այնքան, որքան պահանջվում էր, որպեսզի էլեկտրական լուսանկարիչը պատկերելու համար որսա պահը: Նորից մառախուղ և ջուր, ջուր...

Նա թրջվել էր մինչև ոսկորները, բայց նստել ու ծիծաղում էր դեմքը վեր պահած, և կաթիլները զարնվում էին քունքերին:

Նա ծափ զարկեց, վեր թռավ և պտտվեց իր փոքրիկ ճամբարի շուրջը: Գիշերվա ժամը մեկն էր: Անձրևը գալիս էր երկու ժամ անընդմեջ, հետո դադարեց: Երևացին մաքուր լվացված աստղերը, պայծառ, ինչպես երբեք:

Բենջըմին Դրիսքըլը ցելոֆանե պայուսակից չոր հագուստ հանեց, հագավ, պառկեց և երջանիկ քուն մտավ:

Արևը դանդաղ դուրս եկավ բլուրների արանքից: Ճառագայթները պատնեջը հաղթահարելով՝ մեղմորեն շոյեցին գետինը և արթնացրին Դրիսքըլին:

Նա մի քիչ էլ ծմկոտվեց վեր կենալուց առաջ: Մի ամբողջ ամիս, երկար ու շոգ ամիս աշխատել էր, աշխատել ու սպասել... Բայց այսօր ոտքի ելնելով, առաջին անգամ շրջվեց այն կողմը, որտեղից եկել էր:

Առավոտը կանաչ էր:

Որքան աչքը կտրում էր, դեպի երկինք էին ձգվում ծառերը: Ոչ թե մեկ-երկու, ոչ թե տասնյակ, այլ հազարավոր ծառեր, որ տնկել էր ինքը: Եվ ոչ թե մանր-մունր թփեր, բարակ շիվեր, այլ հզոր բներով, շենքերի բարձրության հսկայական ծառեր, կանաչ-կանաչ, վիթխարի, կլոր, փարթամ սաղարթով, որ արժաթավուն երանգ ուներ, քամուց շրջացող տերևներով, բլրալանջերին ածած ծառերի երկար շարքեր, կիտրոնի ծառեր ու լորենիներ, կարմրածառեր ու պատկառուկներ, կաղնիներ ու ծփիներ, թխկիներ, բարդիներ, թեղիներ, հաճարենիներ, խընձորենիներ, նարնջի ծառեր, Էվկալիպտներ՝ ածած հորդ անձրևից և սնված օտար կախարդական հողով: Նրա աչքերի առջև նոր շյուղեր էին աճում, նոր բողբոջներ էին պայթում:

— Անհավանական է, — բացականչեց Բենջըմին Դրիսքըլը:

Բայց հովիտը և առավոտը կանաչ էին:

Հապա օ՛ղը...

Ամենուր, կենարար հոսանքի նման, ինչպես լեռնային գետ, հորդում էր թարմ օդը, թթվածինը, որ ստեղծում էին կանաչ ծառերը: Ուշադիր նայելիս երևում էին դրանց վճիտ կոհակները: Թարմ, մաքուր, կանաչ, զով թթվածինը հովիտը դարձրել էր գետի ավազան:

Եվս մի վայրկյան, և քաղաքում կբացվեն դռները, մարդիկ դուրս կվազեն թթվածնի հրաշքին ընդառաջ, կուլ կտան, կշըն-

չեն լիաթոք, այտերը կվարդագունեն, քթները կսառչեն, թոքերը նորից ուժ կառնեն, սրտները կարագանան, իսկ հոգնաժ մարմինները կհանձնվեն պարի տարերքին:

Բենջըմին Ռիսքըլը խոր-խոր շնչեց խոնավ կանաչ օդը և ուշակորույս եղավ:

Մինչ նա ուշքի կգար, դեպի դեղին արևը ձգվեց էլի հինգ հազար ծառ:

2002, օգոստոս

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Կապույտ լեռներին չհասած, ճանապարհին Թոմաս Գոմեսը կանգ առավ բենզինի մենավոր լցակայանի մոտ:

— Մենակությունից չե՞ս նեղվում, հայրիկ, — հարցրեց Թոմասը:

Ծերուկը փալատով մաքրեց փոքրիկ բեռնատարի հողմնապակին:

— Առանձնապես չէ:

— Իսկ ինչպե՞ս է, Մարսը դո՞ւր է գալիս:

— Լավ է, միշտ մի նոր բան կա: Երբ անցած տարի առաջին անգամ եկա, ինքս ինձ ասացի՝ գալիքի մասին կանխագուշակումներ մի՛ արա, ոչինչ մի՛ պահանջիր, ոչնչից մի՛ զարմացիր: Երկիրը պետք է մոռանանք, այն ամենը, ինչ եղել է, պետք է մոռանանք: Հիմա հարկավոր է ուշադիր լինել, վարժվել և հասկանալ, որ այստեղ ամեն ինչ այնպես չէ, այլ է: Այո, այստեղ միայն մի եղանակ է, մարսյան եղանակ. ցերեկը դժոխային շոգ, գիշերը՝ դժոխային ցուրտ: Իսկ անսովոր ծաղիկները, անսովոր անձրևը, ամեն քայլի մի անսպասելի բան կա: Ես եկել էի հանգստանալու, մտածում էի՝ կապրեմ այնպիսի մի տեղ, ուր ամեն ինչ այլ կլինի: Ծեր մարդու համար միջավայրը փոխելը շատ կարևոր է: Զահեկները նրա հետ խոսելու հավես չունեն, ուրիշ ծերուկները նրան ձանձրացնում են: Ես էլ գլխի ընկա, որ լավագույն ելքն ինձ համար այնպիսի անսովոր տեղ գտնելն է, որ եթե չծուլանաս ու շուրջդ նայես, ամենուր զվար-

ծութիւններ տեսնես: Այ, քնտելացել եմ այս լցակայանին: Եթե գործից հոգնեմ, այստեղից դուրս կգամ և կգնամ մի որևէ հին մայրուղի, որն այսպես բանով չէ: Ինձ հարկավոր է միայն ապրուստ վաստակել, այնպես որ ժամանակ մնա շուրջդ նայելու, նաև խորհելու, որ ամեն ինչ այլ կերպ է:

— Վատ չես մտածել, ծերուկ,— ասաց Թոմասը: Նրա թուխ ձեռքերը հանգստանում էին դեկին: Նա հիանալի տրամադրության մեջ էր: Տասն օր անընդմեջ նա աշխատել էր նոր ավաններից մեկում, հիմա երկու հանգստյան օր ուներ և մեկնում էր տոնակատարությանը մասնակցելու:

— Ես այլևս ոչնչից չեմ զարմանում,— շարունակեց ծերունին,— միայն նայում եմ և վերջ: Կարելի է ասել՝ տպավորություններ եմ կուտակում: Եթե Մարսը այնպես, ինչպես որ կա, քո ծաշակով չէ, ավելի լավ է Երկիր վերադառնաս: Այստեղ ամեն ինչ գլխիվայր է՝ հողը, օդը, ջրանցքները, բնիկները (ճիշտ է, ես ոչ ոքի դեռ չեմ տեսել, բայց ասում են, որ թափառում են ինչ-որ տեղ), ժամացույցները: Նույնիսկ իմ ժամացույցը անկարգություն է անում: Այստեղ նույնիսկ ժամանակը գլխիվայր է: Երբեմն ինձ թվում է, թե ինձնից բացի ուրիշ ոչ մեկը չկա այս անիծյալ մոլորակում: Ամայի է: Երբեմն էլ թվում է՝ ութամյա տղեկ եմ, ճստիկ, իսկ շուրջս ամեն ինչ հսկայական է: Աստված վկա, մարդու համար սա ամենահարմար վայրն է: Այստեղ ես առույգ եմ, ուղղակի երջանկացել եմ: Գիտե՞ս, թե ինչ է Մարսը: Նման է այն խաղալիքին, որ ինձ նվիրեցին Թննդյան տոներին, յոթանասուն տարի առաջ՝ գեղադիտակ էր կոչվում. ներսում ապակու կտորտանքներ էին, ուլունքներ, գանազան զիզի-պիզիներ... Իսկ երբ նրա միջով նայում էիր արեվին՝ շունչդ բռնվում էր: Ի՞նչ նախշեր էին: Ա՛յ այդպիսին է Մարսը: Հիացիր և մի՛ պահանջիր, որ այլ կերպ լինի: Տե՛ր աստված, գիտե՞ս, որ այս մայրուղին մարսեցիները տասնվեց դար առաջ են կառուցել և կարգին վիճակում է: Մի դուլար ու հիսուն սենթ ես տալու: Ծնորհակալություն և բարի գիշեր:

Թոմասը սլացավ հին մայրուղով, քթի տակ խնդմնդալով:

Դա մի երկար ծանապարհ էր լեռների ու խավարի միջով. նա ձեռքից բաց չէր թողնում դեկը, միայն երբեմն զամբյուղից քառնաշաքար էր հանում: Արդեն մի ժամ գնում էր, բայց չէր

հանդիպել ոչ մի մեքենա, ոչ մի լույս, միայն ճանապարհի ժայպենն էր ձգվում, շարժիչն աղմկում էր, շուրջը խաղաղ Մարսն էր:

Միշտ խաղաղ Մարսն այս գիշեր ավելի անաղմուկ էր, քան երբևէ: Թոմասի կողքով սահում էին անապատները, չորացած ծովերը և դեպի աստղերը միտող լեռնագագաթները:

Այդ գիշեր օդում զգալի էր ժամանակի բույրը: Նա ժայտաց, մտովի գնահատելով իր ստեղծած պատկերը: Վատ միտք չէ: Իսկապես, ինչպե՞ս է բուրում ժամանակը, նրանից փոշու, ժամացույցների, մարդկանց հոտ է գալիս: Ստաժենք, թե ինչպե՞ս է հնչում ժամանակը. ջրի կաթիլքի նման, որ շիթ առ շիթ հոսում է մուխ քարանձավում: Կանչող ձայնի նման է, դատարկ արկղի կափարիչին թափվող հողի թմփոցի: Անձրևի նման է: Ծարունակենք և հարցնենք, թե ինչի նման է ժամանակը. ձյան պես է, որ անաղմուկ իջնում է մուխ ջրիորը կամ՝ հին համր կինոնկարի, որտեղ հարյուր միլիարդավոր անձինք՝ Նոր տարվա օդապարիկների պես ընկնում են ցած՝ անեություն: Ահա թե ինչպես է բուրում ժամանակը և թե ինչ տեսք ու ձայն ունի: Իսկ այս գիշեր, Թոմասը ձեռքը հանեց պատուհանից, նույնիսկ թվում է՝ կարելի է շոշափել ժամանակը:

Նա բեռնատար էր քշում ժամանակի լեռներում: Պարանոցը ծակեց, և Թոմասը ուշադիր առաջ նայելով՝ ուղղվեց: Նա մտավ փոքր, մարսյան մեռած քաղաքը, անջատեց շարժիչը և հայտնվեց շրջապատող ամալության մեջ: Ծունչը պահած, նա նայում էր լուսնի լույսով ողողված ձերմակ շենքերին, որտեղ արդեն շատ դարեր մարդիկ չէին ապրում: Հիանալի, անթերի շենքեր, թեկուզ ավերված, բայց միևնույն է՝ սքանչելի:

Ծարժիչը միացնելով, Թոմասը էլի մի մղոն անցավ, հետո նորից կանգ առավ, իջավ, վերցրեց ուտելիքի զամբյուղը և բարձրացավ թմբի վրա, որտեղից կարելի էր հայացքով ընդգրկել փոշեծածկ քաղաքը: Բացեց թերմոսը և մի գավաթ սուրճ լցրեց: Նրա կողքով մի բու թռավ: Լավ էր զգում իրեն, խաղաղ: Հինգ րոպե անց Թոմասը ինչ-որ ձայն լսեց: Վերևում, այնտեղ, ուր հին խճուղին անհետանում էր շրջադարձի ետևում, ինչ-որ շարժում նկատեց, աղոտ լույս, հետո շրջյուն լսվեց: Գավաթը ձեռքում բռնած՝ Թոմասը շրջվեց:

Լեռներից ինչ-որ տարօրինակ բան էր մոտենում:

Ռեղնականաչափուն միջատի նմանվող մեքենա էր, որ զըմ-
րուխտի պես շողալով՝ սահուն հատում էր օդը, փայլում էին
սուտակե աչքերը: Մեքենայի վեց ոտքերը հպվում էին մայրու-
ղուն նոսր անձրևի մարող խշշոցով, իսկ ետնամասից իր մեղ-
րագույն աչքերն էր թոմասին հառել մի մարսեցի. նայում էր,
ինչպես ջրհորի մեջ են նայում:

Թոմասը պարզեց ձեռքը և մտովի արդեն գոռացել էր՝ «ող-
ջո՛ւյն», բայց շուրթերը չէին շարժվել, քանի որ դիմացինը մար-
սեցի էր: Բայց Թոմասը լողացել էր Երկրի կապույտ գետերում,
որի ափերով անցնում էին անձանոթ մարդիկ, օտար մարդ-
կանց հետ սեղան էր նստել օտար տներում, և միշտ նրա լավա-
գույն գենքը եղել էր ժպիտը: Նա իր հետ ատրճանակ չէր վերց-
նում: Այժմ էլ Թոմասը դրա կարիքը չէր զգում, թեկուզ սրտի
խորքում վախ կար: Մարսեցին էլ ձեռքում ոչինչ չուներ: Սառն
օդի միջով նրանք մի պահ նայեցին միմյանց:

Առաջինը Թոմասն ուշքի եկավ.

— Ողջո՛ւյն, — գոչեց նա:

— Ողջո՛ւյն, — պատասխանեց մարսեցին իր լեզվով:

Նրանք իրար չհասկացան:

— Դուք ասացիք՝ ողջո՛ւյն, — հարցրին երկուսը միաժա-
մանակ:

— Ի՞նչ ասացիք, — շարունակեց յուրաքանչյուրը իր լեզվով:
Երկուսն էլ խոժոռվեցին:

— Դուք ո՞վ եք, — անգլերեն հարցրեց Թոմասը:

— Ի՞նչ եք անում այստեղ, — հարցրեց անձանոթը:

— Ո՞ր եք գնում, — հարցրին երկուսը մտահոգ:

— Իմ անունը Թոմաս Գոմես է:

— Ինձ անվանում են Սյու Քա:

Նրանք միմյանց չէին հասկանում, բայց յուրաքանչյուրը ներ-
կայանալիս մատով խփում էր կրծքին, և իմաստը պարզ էր:

Հանկարծ մարսեցին ծիծաղեց.

— Սպասեք:

Թոմասը այնպիսի զգացողություն ունեցավ, որ ինչ-որ բան
դիպավ գլխին:

— Այ այսպես, — անգլերեն ասաց մարսեցին: — Հիմա գործ-
ներս հաջող կընթանան:

— Դուք այդպես շո՞ւտ սովորեցիք իմ լեզուն:

— Ոչ, ի՞նչ եք ասում:

Երկուսն էլ չիմանալով ինչ անել, նայում էին Թոմասի ձեռքի տաք սուրճով լի բաժակին:

— Նորություն՞ն է, — հարցրեց մարսեցին, գննելով նրան ու գավաթը, և հավանորեն երկուսին էլ նկատի առնելով:

— Կխմե՞ք մի գավաթ, — առաջարկեց Թոմասը:

— Որքան բարի եք:

Մարսեցին դուրս սահեց իր մեքենայից: Երկրորդ բաժակը լցվեց տաք սուրճով: Թոմասը մոտեցրեց մարսեցուն: Նրանց ձեռքերը հանդիպեցին և ինչպես մառախուղի միջից, անցան մեկը մյուսի միջով:

— Տե՛ր աստված, — բացականչեց Թոմասը և վայր գցեց գավաթը:

— Օ՛, երկնային ուժեր, — ասաց մարսեցին իր լեզվով:

— Տեսա՞ք, ինչ եղավ, — շշնջացին նրանք:

Երկուսն էլ վախից քարացել էին:

Մարսեցին կոացավ, բայց ոչ մի կերպ չէր կարողանում վերցնել գավաթը:

— Աստվա՛ծ իմ, — բացականչեց Թոմասը:

— Տե՛ս է, — մարսեցին կրկին ու կրկին փորձում էր վերցնել գավաթը. ապարդյուն:

Նա ուղղվեց, մի պահ մտածեց, հետո գոտուց արձակեց դանակը:

— Հե՛յ, — գոռաց Թոմասը:

— Ղուբ չհասկացաք, բռնե՛ք, — ասաց մարսեցին և դանակը նետեց:

Թոմասն ագուցեց ձեռքերը, բայց դանակն անցավ նրանց միջով և վայր ընկավ: Նա ուզում էր վերցնել, բայց չկարողացավ ու ցնցվելով ընկրկեց:

Նա նայեց երկնքի հենքին կանգնած մարսեցուն:

— Աստղերը, — ասաց Թոմասը:

— Աստղերը, — արձագանքեց մարսեցին՝ Թոմասին նայելով:

Մարսեցու մարմնի միջով փալլում էին վառ, ձերմակ աստղերը, նրա մարմինը կարծես զարդարված էր դրանցով, ինչպես մեդուզայի նուրբ կալթկտուն թաղանթը: Աստղերը մանուշակագույն աչքերի նման շողշողում էին մարսեցու կրծքին ու

փորին, թանկարժեք քարերի պես՝ դաստակներին:

— Ես տեսնում եմ ձեր միջով, — ասաց Թոմասը:

— Ես էլ՝ ձեր միջով, — պատասխանեց մարտեցին, մի քալ ընկրկելով:

Թոմասը շոշափեց իրեն, զգաց սեփական մարմնի ջերմությունը և հանգստացավ. «Ամեն ինչ կարգին է, — մտածեց նա, — ես կամ»:

Մարտեցին ձեռքը դիպցրեց իր քթին, ապա շուրթերին:

— Ես անմարմին չեմ, — ցածրաձայն ասաց նա, — կենդանի եմ:

Թոմասը մտահոգ նայեց նրան:

— Եթե ես կենդանի եմ, ուրեմն դուք մեռած եք:

— Ոչ, դուք:

— Տեսիլք եք:

— Ուրվական եք:

Նրանք մատով մեկը մյուսին էին ցույց տալիս, և աստղերի լույսը նրանց վերջույթներում շողում էր ու երփներանգվում, ինչպես դաշույնի, սառցալուլայի կամ լուսատուիկի փայլը: Նրանք նորից ստուգեցին իրենց զգայությունները, և յուրաքանչյուրը համոզվեց, որ ողջ-առողջ է, հուզված, սրտատրոփ, շփոթված, զարմացած, իսկ մյուսը, օ, այո, անիրական է, այն տեսլական հատվածակողմը, որը որսում և ծառագայթում է հեռավոր աշխարհների լույսը...

«Ես հարբած եմ, — ինքն իրեն ասաց Թոմասը, — վաղը ոչ մեկին չեմ պատմի այս մասին, ոչ մեկին»:

Նրանք կանգնել էին հին մայրուղու վրա. երկուսն էլ անշարժ էին:

— Դուք որտեղի՞ց եք, — վերջապես հարցրեց մարտեցին:

— Երկրից:

— Դա ինչ բան է:

— Այնտեղ է, — Թոմասը գլխի շարժումով ցույց տվեց երկինքը:

— Վաղո՞ւց:

— Մի տարի առաջ ենք եկել, չե՞ք հիշում:

— Ոչ:

— Իսկ դուք, գրեթե բոլորդ, այդ ժամանակ մահացաք: Երևի քչերն են փրկվել:

— Ռա ծիշտ չէ:

— Իսկապես, բնաջնջվել եք: Ինքս եմ տեսել դիակները: Սևացած դիակներ սենյակներում, տներում, և բոլորը մեռած, հազարավոր մարմիններ:

— Ի՞նչ անհեթեթություն. մենք ապրում ենք:

— Պարոն, ձերոնց բոլորին հնձեց համաճարակը: Տարօրինակ է, որ այդ մասին չգիտեք: Ռուբ ինչ-որ ձևով փրկվել եք:

— Ես չեմ փրկվել, ինչի՞ց պետք է փրկվեի: Ինչե՞ր եք ասում: Ես գնում եմ Էնիայան լեռների մերձակա ջրանցքի տունին: Նախորդ գիշերն էլ այնտեղ էի: Մի՞թե չեք տեսնում քաղաքը, — մարսեցին պարզեց ձեռքը:

Թոմասը նայեց և ավերակներ տեսավ:

— Բայց այս քաղաքը մեռել է հազարավոր տարիներ առաջ: Մարսեցին ծիծաղեց.

— Մեռա՞ծ է: Երեկ այնտեղ եմ գիշերել:

— Իսկ ես նախորդ շաբաթ էի այնտեղ, անցած շաբաթ էլ և միայն ավերակներ էին: Տեսնո՞ւմ եք ջարդված սյուները:

— Ջարդվա՞ծ: Հրաշալի տեսնում եմ՝ ուղիղ, սլացիկ սյուներ են:

— Փողոցում փոշուց բացի ոչինչ չկա, — ասաց Թոմասը:

— Փողոցները մաքուր են:

— Ջրանցքները վաղուց չորացել են, դատարկ են:

— Ջրանցքները լի են նարդոսի գինով:

— Քաղաքը մեռած է:

— Քաղաքը ապրում է, — առարկեց մարսեցին բարձր ծիծաղելով, — դուք սխալվում եք: Տեսնո՞ւմ եք տոնակատարության լույսերը: Այնտեղ հրաշալի մակույկներ են՝ նրբագեղ, ինչպես կանայք, և հրաշալի կանայք, որ նուրբ են մակույկների պես: Ավազագույն մաշկով կանայք, ձեռքներին ալ ծաղիկներ: Ես տեսնում եմ նրանց, տեսնում եմ ինչպես են վազում փողոցներով. այստեղից շատ փոքր են երևում: Ես էլ այնտեղ եմ գնում, տոնին մասնակցելու: Ամբողջ գիշերը մենք ջրանցքում կնավարկենք, կերգենք, կխմենք, կսիրենք: Մի՞թե չեք տեսնում:

— Պարոն, այս քաղաքը մեռած է չորացած մողեսի պես: Մերոնցից ում ուզում եք հարցրեք: Ինչ վերաբերում է ինձ, ես գնում եմ Գրին-սիթի, Իլինոյսի խճուղու նոր բնակավայրը, վեր-

ջերս ենք կառուցել: Իսկ դուք ինչ-որ բան խառնում եք: Մենք միլիոն քառակուսի ոտնաչափ Օրեգոնյան լավագույն փայտի տախտակ ենք բերել, մի քանի տասնյակ տոննա պողպատյա մեխեր և երկու ավան ենք կառուցել, այնպիսիք, որ աչքդ չես ուզում կտրել: Այսօր նրանցից մեկի ավարտն ենք նշում: Երկրից երկու տիեզերանավեր են ժամանելու, մեր կանայք և հարսնացուներն են գալիս: Ժողովրդական պարեր կլինեն, վիսկի...

Մարսեցին ցնցվեց:

— Ասում եք՝ այն կողմում:

— Այո, այնտեղ, որտեղ հրթիռներն են, — Թոմասը նրան մոտեցրեց թմբի ծայրին և ներքև ցույց տվեց, — տեսնո՞ւմ եք:

— Ոչ:

— Գրողը տանի, այնտեղ են, երկար, արծաթագույն:

— Չեմ տեսնում:

Հիմա էլ Թոմասը ծիծաղեց:

— Դուք կույր եք:

— Ես հրաշալի տեսողություն ունեմ, այդ դուք չեք տեսնում:

— Լավ, իսկ նոր ավանը տեսնո՞ւմ եք:

— Ոչինչ չեմ տեսնում օվկիանոսից բացի, հիմա էլ տեղատվություն է:

— Միստր, այդ օվկիանոսը գոլորշիացել է քառասուն դար առաջ:

— Դե, այդ արդեն չափազանց է:

— Բայց ծիշտ է, հավատացնում եմ:

Մարսեցու դեմքը լրջացավ.

— Սպասեք, դուք իսկապե՞ս չեք տեսնում իմ նկարագրած քաղաքը: Ծերմակ, ճերմակ սյուներ, նրբագեղ մակույկներ, տոնական հրավառություն, ես բոլորը այնպես պարզ եմ տեսնում: Հապա լսեք: Ես նույնիսկ նրանց երգն եմ լսում: Այնքան էլ հեռու չեն:

Թոմասը ականջ դրեց և շարժեց գլուխը:

— Ո՛չ:

— Իսկ ես, — ասաց մարսեցին, — չեմ տեսնում ձեր նկարագրածը:

Նրանք նորից սրսփացին, կարծես նրանց մարմինները ծակծկեցին սառցե ասեղներով:

— Իսկ գուցե...

— Ի՞նչ:

— Դուք ասացիք՝ «երկնքից»:

— Երկրից:

— Երկիրը դատարկ հնչյուն է,— ասաց մարտեցին,— բայց մի ժամ առաջ, երբ ես անցնում էի լեռնանցքով,— նա շոշափեց պարանոցը,— ես զգացի...

— Սառնություն:

— Այո:

— Եվ հիմա՞ էլ:

— Այո, նորից ցուրտ է: Ինչ-որ տարօրինակ բան է կատարվել աշխարհի, լեռների, ճանապարհի հետ, ինչ-որ անսովոր բան: Եվ լույսը, և ճանապարհը այն չեն, և ես այնպիսի զգացում ունեցա, կարծես տիեզերքի վերջին բնակիչն եմ:

— Ինձ հետ էլ նույնը կատարվեց,— ասաց Թոմասը հուզված, նա կարծես զրուցում էր հին, լավ բարեկամի հետ, վստահելով նրան թանկ մի գաղտնիք:

Մարտեցին փակեց աչքերը և նորից բացեց:

— Այստեղ կարող է մի բացատրություն լինել: Այստեղ ժամանակի հարց է: Այո՛, այո՛, դուք Անցյալի տեսապատրանքն եք:

— Ո՛չ, այդ դուք եք Անցյալից,— ասաց երկրացին մտածելուց հետո:

— Ի՞նչ վստահ եք: Կարո՞ղ եք ապացուցել, թե ով է Անցյալից, ով՝ Ապագայից: Հիմա ո՞ր թվականն է:

— Երկու հազար երկու:

— Այսինքն՝ ես դրանից ի՞նչ հասկանամ:

Թոմասը մտածեց ու թոթվեց ուտերը:

— Ոչինչ:

— Նույնն է, որ ես ձեզ ասեմ, թե հիմա մեր տարեթվով 4462853 թվականն է: Բառերը ոչինչ են, ավելի՛ քան ոչինչը: Որտե՞ղ է ժամացույցը, ըստ որի կարող ենք որոշել աստղերի դիրքը:

— Բայց ավերակները փաստ են: Նրանք ցույց են տալիս, որ ես Ապագան եմ, ես կենդանի եմ, իսկ դուք՝ մեռած:

— Իմ ամբողջ էությունը ժխտում է նման հնարավորությունը: Իմ սիրտը զարկում է, ստամոքսս սնունդ է պահանջում, բերանս ծարավի է ջրի: Ո՛չ, մեզնից ոչ մեկն էլ ոչ կեն-

դանի է, ոչ մեռած: Ի դեպ, ավելի շատ կենդանի ենք, քան մեռած: Իսկ ավելի ճիշտ, մենք մեջտեղում ենք: Ահա երկու ճամփորդ հանդիպել են գիշերը, ճանապարհին: Երկու անծանոթ, որոնցից լուրաքանչյուրը իր ճանապարհն ունի: Դուք ասում եք՝ ավերակներ:

— Այո, դուք վախենո՞ւմ եք:

— Ո՞վ է ուզում տեսնել Ապագան և ո՞վ երբևէ կտեսնի: Մարդը կարող է միայն Անցյալին խորամուխ լինել, բայց որ... դուք ասում եք սյունները փլվել են, և ծովը ցամաքել է: Ջրանցքները դատարկ են, աղջիկները մեռել են, ծաղիկները թոռոմել, — մարսեցին լոեց, հետո նորից նայեց քաղաքին, — բայց ահա նրանք: Ես տեսնում եմ: Եվ այդ էլ բավական է: Նրանք սպասում են ինձ՝ ինչ էլ որ դուք ասեք:

Ճիշտ այդպես Թոմասին սպասում էին հրթիռները, ավանները և Երկրից եկած կանայք:

— Մենք երբեք համաճայնության չենք գա, — ասաց նա:

— Համաճայնենք համաճայնության չգալ, — առաջարկեց մարսեցին, — Անցյալ, Ապագա, մի՞թե միևնույնը չէ, միայն թե մենք երկուսս էլ կենդանի լինենք, չէ՞ որ այն, ինչ գալու է մեզնից հետո, միևնույն է՝ գալու է, վաղը լինի, թե տասը հազար տարի անց: Որտեղի՞ց գիտեք, որ այս տաճարները ձեր քաղաքակրթության ավերակները չեն հարյուր դար հետո: Չգիտեք: Ուրեմն, էլ մի հարցրեք: Սակայն գիշերը կարճ է: Ահա տոնական հրավառությունն սկսվեց, թոչունները թռան:

Թոմասը մեկնեց ձեռքը: Մարսեցին կրկնեց նրա շարժումը:

Նրանց ձեռքերը չդիպան, տարրալուծվեցին միմյանց մեջ:

— Մենք դեռ կհանդիպենք:

— Ո՞վ գիտե, գուցե, երբևէ:

— Կուզենայի ձեզ հետ մասնակցել ձեր տոնակատարությանը:

— Ես էլ կուզենայի ձեր նոր ավանում լինել, տեսնել տիեզերանավը, որի մասին պատմեցիք, տեսնել մարդկանց, լսել այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում:

— Տոտություն, — ասաց Թոմասը:

— Բարի գիշեր:

Իր կանաչ մետաղյա մեքենայով մարսեցին անաղմուկ սլա-

ցալ լեռները, իսկ երկրացին շրջեց իր բեռնատարն ու գնաց հակառակ ուղղությամբ:

— Տե՛ր աստված, այս ի՞նչ երազ էր, — հառաչեց Թոմասը, ձեռքը դեկին դրած՝ մտածելով հրթիռների, կանանց, թունդ վիսկիի, վիրջինյան պարերի, սպասվող ուրախության մասին:

— Ի՞նչ տարօրինակ տեսիլք էր, — մտաբերեց մարսեցին. ավելացնելով արագությունը և մտածելով ջրանցքների, մակուկների, ոսկեաչվի կանանց, երգերի մասին...

Մութ գիշեր էր: Լուսինները դուրս էին եկել: Միայն աստղերն էին առկայծում դատարկ մայրուղու վրա: Ո՛չ ձայն կար, ո՛չ մեքենա, ո՛չ որևէ կենդանի արարած, ոչինչ: Ալդպես էր մինչև այդ ցուրտ գիշերվա վերջը:

ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ

Նրանց աչքերը բոցկլտում էին շիկացած ածուխների նման, շուրթերը կրակ էին ժայթքում, երբ կռացած՝ կաթսայի մեջ էին մոցնում մերթ ձենձուտ փայտը, մերթ ոսկրոտ մատները:

Երբ պիտի մենք կրկին խմբվենք երեքով՝
Որոտով ու կայծակով կամ անձրևով¹:

Հարբած, օրորվելով, նրանք պարում էին ցամաքած ծովի ափին, պղծելով օդը անեծքներով և շանթահարելով չար կատվային հայացքով:

Կաթսայի շուրջ պտույտ գործենք,
Թունոտ աղիք մեջն ածենք:
Դյութվի՛ր, դյութվի՛ր, տաժա՛նք, Կյութվի՛ր,
Կաթսա՛, փրփրա՛, բո՛ց, վառվի՛ր²:

Նրանք կանգ առան, շուրջը նայեցին:

— Որտե՞ղ է հուռութքը: Ո՞ր են ասեղները:

— Ահա:

— Լավ է, ի՞նչ լավ է:

— Դեղին մոմը պնդացե՛լ է:

¹ Վ. Շեքսպիր, «Մակբեթ», արարված 1, տեսարան 1:

² Նույն տեղը, արարված 4, տեսարան 1:

— Լցրեք կաղապարը:

— Պատրաստ է:

— Եղավ, եղավ, — նրանք ափի մեջ պահում էին մոմե արձանիկը, և փափուկ մոմը մաթի պես կպչում էր նրանց գոսացած մատներին:

— Հիմա ասեղով՝ ուղիղ սրտի մեջ:

— Հուտությքը, ո՞ր է հուտությքը: Բախտ գուշակելու քարտերի մոտ է, փոշին վրայից թափ տվեք, իսկ հիմա նայեք...

Վհուկները աչքերը չոեցին մոզական հուտությքի վրա: Նրանք գունատվեցին:

— Նայեք, նայեք, նայեք:

Տիեզերանավը Երկրից թռչում էր դեպի Մարս: Նավի մեջ մեռնում էին մարդիկ:

Հրամանատարը հոգնած բարձրացրեց գլուխը:

— Ստիպված ենք մորֆի տալ:

— Բայց, հրամանատար...

— Ի՞նչ է, չե՞ք տեսնում, որքան վատ է վիճակը:

Հրամանատարը բարձրացրեց բրդյա ծածկոցը: Խոնավ սավանի տակ պառկած մարդը շարժվեց, տնքաց: Օդը հագեցած էր այրված ծծմբի հոտով:

— Ես տեսա, տեսա... — Մեռնողը բացեց աչքերը, և նրա հայացքը կանգ առավ լուսանցույցի վրա, որի ետևում տիեզերական անհուն էր, աստղաբույլերը, հեռվում մնացած Երկիր մոլորակը և բոլորովին մոտակալքում՝ Մարսի հսկայական կարմիր գունդը:

— Ես տեսա նրան... մարդու դեմքով հսկայական արնախում հրեջը... թներն էր թափահարում, թափահարում էր... թափահարում էր...

— Ջարկերա՞կը, — հարցրեց հրամանատարը:

Բուժակը շոշափեց զարկերակը:

— Հարյուր երեսուն:

— Այդպես երկար չի դիմանա, մորֆի տվեք: Գնացինք,

Սմիթ:

Նրանք առաջ անցան: Թվում էր՝ հատակի նախշերը կազմրված են լուռ ձգացող մարդկային ոսկորներից ու գանգերից: Հրամանատարը քայլում էր, ջանալով չնալել ոտքերի տակ:

— Փըրսն այստե՞ղ է,— հարցրեց Նա, բացելով հաջորդ խցիկի դուռը:

Սպիտակ վերնոցով վիրաբույժը հեռացավ սեղանին մեկնրված մարմնից:

— Ոչինչ չեմ հասկանում:

— Ինչի՞ց է մեռել:

— Չգիտենք, հրամանատար: Սրտից չէ, ուղեղից չէ, գիտակցության կորստի հետևանք էլ չէ: Ուղղակի դադարեց շնչել:

Հրամանատարը բռնեց բժշկի դաստակը, փնտրեց զարկերակը: Տենդագին զարկերը խայթի պես ծակեցին մատները: Հրամանատարի դեմքն անկիրք էր:

— Խնայեք ձեզ, ձեր սրտի զարկերն էլ արագացած են:

Բժիշկը գլխով արեց:

— Փըրսը գանգատվում էր ոտքերի ու դաստակների ցավից, ասում էր՝ կարծես ասեղներով ծակծկում են, և որ ինքը մոմի պես հալչում է: Հետո ընկավ: Օգնեցի, որ ոտքի ելնի: Երեխայի պես լալիս էր: Ասում էր՝ իբր սրտի մեջ արծաթե ասեղ կա: Նա մեռավ: Ահա նրա մարմինը: Եթե ուզում եք, կարող ենք կըրկնակի դիակերծում կատարել: Լրիվ առողջ է:

— Անհավանական է, պետք է, չէ՞, մի պատճառ լինի:

Հրամանատարը մոտեցավ լուսանցույցին: Նա զգում էր, որ մենթոլի, յոդի և բժշկական օձառի հոտ են արձակում իր խնամված ձեռքերը: Ճերմակ ատամները ողողված էին թանկարժեք էլիքսիրով, մաքուր լվացված ականջներն ու այտերը վարդագույն էին, համազգեստը հիշեցնում էր պսպղուն աղակտոր, փայլեցրած կոշիկները նման էին երկու սև հայելու Գանգուր, կարճ կտրած մազերից օժանելիքի սուր բույր էր գալիս: Նույնիսկ հրամանատարի շունչը մաքուր էր և թարմ, ինչպես օդը սառնամանիքին: Նրա վրա ոչ մի բիծ չկար: Նա նման էր նոր վիրադանակի՝ վարակազերծված և վիրահատության պատրաստ: Ծիշտ այդպիսին էր նաև նրա ողջ անձնակազմը: Թվում էր, նրանցից յուրաքանչյուրի մեջքին բանալի կա, որով եթե լարես՝ գործի կընկնեն: Կարծես թանկ ու լավ հղացված խաղալիքներ էին՝ հլու և անխափան:

Հրամանատարը նայում էր, թե ինչպես է մեծանում մոտեցող Մարսը:

— Մի ժամ հետո վայրէջք կկատարենք այս անիծյալ մուրակի վրա: Սմիթ, դուք երբևէ երազում արնախում հրեշներ և այլ նողկալի մղձավանջներ տեսե՞լ եք:

— Տեսել եմ, սըր: Նյու Յորքից մեր նավի արձակումից մի ամիս առաջ: Սպիտակ առնետները կրծում էին պարանոցս, արյունս էին թծում: Վախենում էի ձեզ ասել, մտածում էի՝ չեք տանի ձեզ հետ:

— Ղե լավ,— հոգոց հանեց հրամանատարը,— ես էլ եմ երազ տեսել: Կյանքիս հիսուն տարիների ընթացքում առաջին անգամ: Թոհչբից մի քանի շաբաթ առաջ: Իսկ հետո՝ ամեն գիշեր: Իբր ես ձերմակ գալլ եմ, որի հետ հաշվեհարդար են տեսել ձյունոտ բլրի վրա: Ինձ վրա կրակել են, կապարե գընդակը մխրձվել է մարմնիս մեջ: Իսկ հետո թաղել են հողում և սիրտս ցից խրել:— Նա գլխով Մարսը ցույց տվեց:

— Սմիթ, կարծում եք նրանք սպասո՞ւմ են մեզ:

— Ով գիտե, գուցե, մարսեցիներ՞ր կան այնտեղ, սըր:

— Ուրիշ էլ ով: Նրանք սկսեցին մեզ ահաբեկել թոհչբից դեռ երկու ամիս առաջ: Այսօր նրանք սպանեցին Փըրսին և Ռեյնոլդսին: Երեկ կուրացավ Գրենվիլը: Ինչո՞ւ: Ոչ ոք չգիտե: Հրեշներ, ասեղներ, երազներ, առանց պատճառի մեռնող մարդիկ: Ուրիշ ժամանակ լիներ կասեի՝ կախարդանք է, բայց մենք ապրում ենք 2120 թվականին, Սմիթ: Մենք գիտակից մարդիկ ենք: Ոչ մի նման բան չպետք է տեղի ունենար: Բայց արի տես, որ տեղի է ունենում: Ովքեր էլ որ լինեն այդ մարդիկ իրենց արնախում հրեշներով ու ասեղներով, նրանք, հավանաբար, ձգտում են վերջ տալ բոլորիս:— Նա կտրուկ շրջվեց,— Սմիթ, բերեք այստեղ իմ պահարանի բոլոր գրքերը, ուզում եմ վայրէջքի ժամանակ ինձ մոտ լինեն:

Սեղանին ոչ պակաս, քան երկու հարյուր գրքից բաղկացած կույտ գոյացավ:

— Ծնորհակալ եմ, Սմիթ: Դուք երբևէ աչքի անցկացրե՞լ եք սրանք: Կարծում եք՝ խելագարվե՞լ եմ: Գուցե: Վերջին պահին դուրս գրել տվեցի պատմության թանգարանից, պատճառը այդ հիմար երազներն էին: Քսան գիշեր չարունակ ինձ խողխողում էին, կտոր-կտոր անում, ճղավող հրեշը գամված էր վիրահատության սեղանին, ինչ-որ զազրելի ու գարշահոտ բան պահվում էր հատակի տակ՝ սև արկղում: Մղձավանջային, ժար-

սափելի երազներ: Մենք բոլորս կախարդների, չարքերի, վիուկների, ուրվականների ու հրեշների մասին մղձավանջային երազներ էինք տեսնում, որոնց մասին երբևէ պատկերացում չէնք ունեցել: Ինչո՞ւ: Որովհետև հարյուր տարի առաջ ոչնչացվել են բոլոր գրքերը, որոնցում խոսվում էր այդ մասին: Օրենքով արգելված են այդ սարսափելի գրքերը: Սրանք, որ դուք տեսնում եք, Սմիթ, վերջին նմուշներն են: Պատմության թանգարանի գրապահոցներում են պահում:

Սմիթը կոացավ, ջանալով կարդալ փոշոտ կազմերի վրալի անվանումները:

— Էդգար Ալան Պո՝ «Մտացածին և խորհրդավոր պատմություններ», Բրեմ Ստոքեր՝ «Դրակուլա», Մերի Շելլի՝ «Ֆրանկենշտայն», Հենրի Ջեյմս՝ «Պտուտակի դարձը», Վաշինգտոն Իրվինգ՝ «Քնկոտ հովտի առասպելը», Նաթանիել Հոթորն՝ «Ռապաչինիի դուստրը», Ամբրոզ Բիրս՝ «Աուքրիք կամրջի միջադեպը», Լուիս Բերոլ՝ «Ալիսան հրաշքների աշխարհում», Ալջըրնոն Բլեքվուդ՝ «Ուոլները», Ֆրենկ Բաում՝ «Խորհրդավոր ստվեր Ինսմութի վրա»: Հապա Ուոլտեր դե լա Մերի, Ուելքֆիլդի, Հարվիի, Ուելսի, Ասկվիթի, Հաքսլիի գրքե՞րը: Սրանք բոլորն արգելված հեղինակներ են, որոնց գրքերն այրեցին նույն այն տարում, երբ դադարեցին նշել սրբերի օրերն ու ծննդյան տոները: Բայց մեր ինչի՞ն են պետք այդ գրքերը:

— Չգիտեմ, — հոգոց հանեց հրամանատարը, — առայժմ չգիտեմ:

Երեք վիուկները վեր պարզեցին հուռույթը: Նրա մեջ նըշմարվում էր հրամանատարի դեմքը: Նրանց ականջին հասան նրա հազիվ լսելի «չգիտեմ, առայժմ չգիտեմ» բառերը:

Կախարդները հալելիները հառեցին միմյանց:

— Պետք է շտապել, — ասաց առաջինը:

— Ժամանակն է զգուշացնել քաղաքում գտնվողներին:

— Հարկավոր է նրանց ասել գրքերի մասին: Գործներս վատ են: Այդ հիմար հրամանատարն է մեղավոր:

— Մի ժամ հետո այստեղ վայրեջք կկատարի նրանց նավը:

Երեք վիուկները ցնցվեցին և նայեցին մարսյան ցամաքած ծովի ափին, որտեղ Ջմրուխտե քաղաքն էր: Նրա ամենաբարձր դստիկոնում փոքրամարմին մարդը մի կողմ քաշեց պատուհա-

նի կարմրածուփ վարագույրը: Նա նայեց ամալի տարածքին, որտեղ կախարդ պառավները իրենց խառնուրդն էին եփում և ձեռքերում տրոփում մոմը: Ավելի հեռվում հազարավոր ուրիշ խարուկներ էին երևում: Մարսյան գիշերային օդում լողում էին գիշերաթիթեռի թևերի պես թեթև անուշահոտության կապույտ շամանդաղը, ծխախոտի սև քուլաները, եղևնու սգո ճյուղերի խարուկի ծուխը ու դարչինի հոտով մառախուղը: Փոքրամարմին մարդը հաշվում էր վիուկների ճարձատող խարուկները: Կարծես իր վրա զգալով երեք կախարդների հայացքները, նա շրջվեց: Բոսորագույն վարագույրի հավաքած եզրը ցած սահեց, կիսով չափ ծածկելով պատուհանը. թվաց, թե հարեվան շքամուտքը աչքով արեց, ինչպես դեղին աչք:

Էդգար Ալան Պոն դուրս էր նայում աշտարակի պատուհանից և գինու հոտը, որ խմել էր, խտղտում էր ուռնգերը:

— Հեկատեի բարեկամները հիմա շատ գործ ունեն,— ասաց նա, նայելով հեռվում երևացող վիուկներին:

— Ես տեսա, թե այսօր ինչպես էր նրանց հալածում Շեքսպիրը,— թիկունքում հնչեց մի ձայն,— ծովափին հավաքվել էր նրա ողջ թիկնագորը, հազարներ էին: Այնտեղ էին երեք վիուկները, Օբերոնը, Համլետի հայրը, Պակը¹, բոլորը: Աստված իմ, հազարներ էին, մարդկային ծով:

— Սքանչելի Վիլյամ,— Պոն շրջվեց:

Մուգ կարմիր ծալազարդ վարագույրը սահեց՝ ծածկելով պատուհանը: Նա դեռ մի վայրկյան կանգնած մնաց, նայելով պատերի կոպիտ որմածքին, սևացած փայտե սեղանին, մոմի լույսին և սեղանի մոտ նստած մարդուն, որը պարապությունից լուցկիներ էր վառում մեկը մյուսի ետևից և նայում էր, թե ինչպես կիսով չափ այրվելուց հետո մարում են: Դա Ամբրոզ Բիրսն էր: Քթի տակ նա ինչ-որ բան էր սուլում, ժամանակ առ ժամանակ կամացուկ ծիծաղելով:

— Հարկավոր է նախազգուշացնել պարոն Դիքենսին,— ասաց Պոն:— Առանց այդ էլ շատ հապաղեցինք, մեր տրամադրության տակ հաշված ժամեր են մնացել: Պուք ինձ հետ կգա՞ք նրա տուն, Բիրս:

¹ Շեքսպիրի պիեսների հերոսներից:

Բիրսը աշխուժորեն նրան նայեց:

— Ես հենց նոր մտածում էի՝ ի՞նչ կպատահի մեզ:

— Եթե չկարողանանք սպանել տիեզերագնացներին կամ գոնե վախեցնել, բնականաբար ստիպված կլինենք թողնել մուլորակը: Կհաստատվենք Յուպիտերի վրա, իսկ եթե նրանք այնտեղ էլ հասնեն՝ կմեկնենք Սատուռն, եթե այդտեղ գան, մեր տրամադրության տակ են Ուրանը, Նեպտունը, վառթարագույն դեպքում՝ Պլուտոնը:

— Իսկ հետո՞...

Էդգար Պոյի դեմքը հոգնած էր, աչքերում մարմրում էին խարույկների ցուլքերը, ձայնը տխուր էր ու օտարոտի, արտահայտիչ շարժումներն ու զարմանալի ձերմակ ճակատին ընկած սև մազափունջը անհամատեղելի էին թվում: Կարծես տապալված դև էր, պարտված զորավար: Մտքերի մեջ ընկնելիս նա սովորություն ուներ կծոտել մուգ, մետաքսափայլ բեղերը, որոնք շատ էին տուժում: Նա այնքան փոքրահասակ էր, որ թվում էր, թե ձերմակ, խոշոր, կարծես լույս ճառագող ճակատը ինքնուրույն շարժվում է սենյակի աղջամուղջում:

— Մենք մի առավելություն ունենք՝ տեղաշարժվելու ավելի կատարյալ միջոցներ, — ասաց նա, — բացի այդ, միշտ էլ կարելի է հույս դնել նրանց ատոմային պատերազմների, պետությունների կործանման, միջնադարի, հետևաբար, սնահամալստության վերադարձի վրա: Եվ մի հրաշալի երեկո բոլորս կկարողանանք վերադառնալ Երկիր: — Էդգար Պոն մտածկոտ աչքերը հառեց առաստաղին, — նրանք թռչում են այստեղ, որպեսզի այս աշխարհն էլ ավերեն: Չե՞ն ուզում համակերպվել այն մտքին, որ դեռ ինչ-որ բան չեն պղծել:

— Մի՞թե գալլերի ումակը կհանգստանա, եթե թեկուզ մի ոչխար կենդանի մնացած լինի, — ասաց Բիրսը: — Իսկական մարտ կլինի: Ես կնստեմ հեռվում ու կհաշվեմ միավորները: Կհաշվեմ, թե քանի երկրացի ընկավ եռացող ձյութի կաթսան և շշերում գտնված քանի ձեռագիր է նետվել խարույկը, քանի երկրացի են ասեղնահարված և քանի Կարմիր մահ է փախուստի դիմել ասեղների տեսքից, հա, հա, հա...

Պոն թեթևակի օրորվեց՝ հարբած գինուց ու զայրույթից:

— Մենք ի՞նչ ենք արել: Ի սեր աստծո, մեզ հետ եղեք, Բիրս: Մի՞թե քննադատները և գրախոսները արդարացի էին

մեր գրքերի հանդեպ: Օ՛ր, ոչ: Նրանք գրքերն ուղղակի բռնում էին մանրեագերծ ունեւիներով և նետում էին կաթսան՝ եռացնելու և վնասակար մանրէները ոչնչացնելու համար: Անիծվեն նրանք:

— Զվարճալի վիճակ է, — ասաց Բիրսը:

Աշտարակի աստիճաններից լսվող հուսահատ աղաղակը ընդհատեց զրույցը:

— Միստր Պո, միստր Բիրս:

— Հիմա, հիմա, գալիս ենք, — մի քանի աստիճան իջնելով, նրանք տեսան պատին հենված մարդուն: Հուզմունքից նրա շունչը կտրվում էր:

— Լսե՛լ եք լուրը, — գոռաց նա: Ապա դողացող ձեռքերով կառչեց նրանցից, ասես ոտքերի տակ անդունդ էր բացվել: — Մի ժամից վայրէջք կկատարեն: Գրքեր են բերում: Վիուկներն ասում են, որ հին գրքեր են: Իսկ դուք օրհասական այս պահին նստել եք աշտարակում: Ինչո՞ւ ոչինչ չեք ձեռնարկում:

— Սենք անում ենք, ինչ հնարավոր է, Բլեքվուդ, — ասաց Պոն: — Ձեզ համար դա նորություն է: Եկեք մեզ հետ, մենք գնում ենք պարոն Չարլզ Ղիքենսի մոտ...

— Որպեսզի կշռադատենք մեր վիճակը, մեր տխուր վիճակը, — ավելացրեց Բիրսը և աչքով արեց:

Նրանք սանդուղքներով իջնում էին ցած՝ ամրոցի խոր լուսթյան մեջ, ավելի ու ավելի ներքև, այնտեղ, ուր սարդոստայն էր, փոշի ու աղտեղություն:

— Մի՛ հուզվեք, — ասաց Պոն, և նրա ծակառը լուսավորեց նրանց ճամփան, ինչպես խոշոր ձերմակ լամպ՝ մերթ բռնկվելով, մերթ մարելով: — Ես կանչել եմ բոլոր նրանց, ովքեր մեռած ծովի ափին են: Նաև մերոնց՝ իմ բարեկամներին, Բլեքվուդ, ձերոնց նույնպես, Բիրս: Բոլորն այնտեղ են: Բոլոր գազանները, վիուկներն ու սուրատամ թերուկները: Թակարդները լարված են, ճոճանակներն ու հորերը սպասում են, Կարմիր մահը նույնպես, — նա կամացուկ ծիծաղեց, — այո, Կարմիր մահը: Կարո՞ղ էի ես մտածել, որ կգա ժամանակը, երբ իսկապես հարկավոր կլինի Կարմիր մահվան գոյությունը: Բայց նրանք ուզում են այդ և կստանան:

— Մենք արդյո՞ք բավականաչափ ուժեղ ենք, — կասկածները տանջում էին Բլեքվուդին:

— Իսկ ի՞նչ է ուժը: Ամեն դեպքում նրանք անակնկալի կգան: Նրանք գուրկ են երևակայությունից, այդ մաքրակենցաղ, երիտասարդ տիեզերագնացները՝ վարակազերծ արտահագուստներով և ակվարիում հիշեցնող գնդաձև սաղավարտներով: Նրանք նոր կրոն են պաշտում, կրթքներին ոսկյա շղթաներից հերձադանակներ են կախված, գլխներին մանրադիտակներից սարքված խույր կա, ձեռքներին՝ ծխացող բուրվառներ, մինչդեռ իրականում դրանք սոսկ մանրեասպան ավտոկլավներ են: Նրանք ուզում են ամեն կարգի սատանայություններին մեկընդմիջտ վերջ տալ: Պոյի, Բիրսի, Հոթորնի, Բլեքվուդի անունները չպետք է պղծվեն նրանց վարակազերծ շուրթերում:

Ամրոցից դուրս գալով, նրանք հատեցին հովիտը: Լիճը լիճ չէր, փայլփլուն էր ու տեսլական, ինչպես մղձավանջային երագում: Օդը լի էր ինչ-որ ձայներով, թևաբախումներով, քամու հառաչով: Խարույկի մոտ քրթմնջոցը մեկ լուում, մեկ նորից էր հնչում, մարմինները ձոճվում էին: Կրակի լույսի տակ Պոն տեսավ, թե ինչպես փայլատակեցին հյուսելու շյուղերը: Նրանք հյուսում ու հյուսում էին: Նրանք կանխագուշակում էին ցավ, տառապանք և չարիք մոմե արձաններին, որոնք պատկերում էին մարդկանց: Եռացող կաթսայից սխտորի, պղպեղի հոտ էր գալիս, կրակի մեջ նետված զաֆրանը գլխապտուպտ առաջացնող բուրմունք էր սփռում...

— Շարունակեք, — գոչեց Պոն, — ես դեռ կվերադառնամ:

Թովի ամալի ափին սև ֆիգուրները ձգվեցին, սկսեցին աճել և հանկարծ երկինք ելան, ինչպես սև ծուխ: Հեռու լեռներում աշտարակների վրա զնգզնգացին զանգակները, և սև ագռավները անհանգստացած բրոնզե զանգերի աղմուկից, թևաբախումով վեր սլացան ու տարածվեցին օդում, ինչպես փոշի:

Միայնակ բլրից Պոն ու Բիրսը հապճեպ իջնում էին հովիտը և շուտով հայտնվեցին սալարկված նրբանցքում: Տուրտ, մոալլ եղանակ էր, նաև մառախուղ, և ետ ու առաջ անող անցորդները դոփում էին, որպեսզի մի քիչ տաքանան. մոմերի լույսեր էին երևում գրասենյակների և կրպակների պատուհան-

ներում, որտեղ կախված էին Ժննդյան տոների հնդկահավերը: Ոտքից գլուխ տաք փաթաթված տղաների խումբը գոլերգում էր Ժննդյան տոները. «Աստված ձեզ երջանկություն տա», և նրանց շունչը սպիտակ ամպ էր դառնում ճքճքան օդում: Աշտարակի ժամացույցը միապաղաղ ավետում էր կեսգիշերը: Երեխաները դուրս էին վազում փոերից, կեղտոտ ձեռքերում ամուր պահած կաթասներն ու մատուցարանները, որոնցից Նոր տարվա ճաշի գոլորշին էր ելնում:

Կանգնելով Սկրուջ, Մարլի և Դիքենս ցուցանակի տակ, Պոն ձեռքն առավ Մարլիի դեմքը պատկերող դրան թակը և հարվածեց դռանը: Այն իսկույն կիսաբացվեց, և երաժշտության ուրախ հնչյունները թվաց հիմա եկվորներին կստիպեն պարել: Անկոչ հյուրերի կողմը ուղղված սրածայր մորուքով և բեղերով մարդու թիկունքում երևում էին ծափ զարկող միստր Ֆիզուիզը և միսիս Ֆիզուիզը՝ տեղովը ժպիտ: Այդ գույգը այնպես կրակոտ էր պարում, որ աջ ու ձախ բախվում էր ուրիշներին: Ծզձգում էր ջուրթակը, և ծիծաղի կարկաչը նման էր քամուց օրորվող բյուրեղապակյա ջահի զնգոցին: Հսկայական սեղանին առատորեն թափված էր աղ դրած խոզի ազդրամիս, հնդկահավի ու սագի ուտեստներ, քաղցր բլիթներ, մատղաշ խոճկորներ, նրբերշիկի շղթաներ, նարինջներ ու խնձորներ:

Սեղանի մոտ նստել էր Բոբ Քրաչիթը, փոքրիկ Դորիթը և պստիկ Թիմը, ինքը՝ միստր Ֆեյզինը, և էլի մեկը, որ նման էր տավարի չեփած մսակտորի կամ մանանեխի ավելցուկի, կամ պանրի շերտի, կամ թերխաշ կարտոֆիլի: Ռա պարոն Մարլին էր՝ իր շղթայով և ամեն ինչով: Գինին հոսում էր գետի նման, իսկ կարմրացրած հնդկահավը անում էր, ինչ պետք է աներ՝ սքանչելի գոլորշի էր արձակում:

— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց պարոն Չարլզ Դիքենսը:

— Սենք նորից եկանք խնդրելու ձեզ, Չարլզ: Սենք ձեր օգնության կարիքն ենք զգում, — ասաց Պոն:

— Օգնությո՞ւն: Հույս ունեք, որ ես կօգնեմ ձեզ հաշվեհարդար տեսնել այդ հրաշալի տղաների հետ, որ այստե՞ղ են թոչում: Իզուր: Ես պատահմամբ եմ այստեղ: Իմ գրքերը սխալմամբ են այրել: Ես չեմ հետաքրքրվում գերբնական երևույթ-

¹ Դիքենսի «Ժննդյան երգեր» պատմվածքի հերոսներից:

ներով, երբեք սարսափազդու և անհավատալի պատմություններ չեն գրել, ինչպես դուք, Պո և դուք՝ Բիրս, կամ էլ ուրիշները: Ես ձեզ հետ ոչ մի ընդհանուր բան չունեմ, սոսկալի մարդիկ եք դուք:

— Դուք համոզելու մեծ տաղանդ ունեք,— հորդորում էր Էդգար Պոն,— կարող էիք հանդիպել տիեզերագնացներին, հանգստացնել, փարատել նրանց կասկածները, միամտացնել, իսկ հետո ինքներս կգբաղվեինք:

Դիքենսը աչքը չէր կտրում սև թիկնոցից, որի մեջ թաղված էին Էդգար Պոյի ձեռքերը: Ժպտալով՝ Պոն թիկնոցի ծալքերից դուրս քաշեց սև կատվին:

— Իսկ սա նվեր է նրանցից մեկին:

— Իսկ մյուսներին:

Պոն գոհունակ ժպտաց:

— Կաղածամ թաղում:

— Դուք մոայլ մարդ եք, Պո:

— Ես վախեցած ու զայրացած մարդ եմ: Ես աստված եմ, ինչպես և դուք, պարոն Դիքենս, ինչպես մենք և բոլոր նրանք, որոնց ստեղծել ենք մեր երևակայությամբ: Մեր հերոսները, եթե կուզեք իմանալ, հիմա ոչ միայն վտանգի են ենթարկվում, այլ հալածված են, արգելված, այրված, պատառ-պատառ արված, հիշողությունից ջնջված: Մեր ստեղծած աշխարհները կործանվում են ու ոչնչանում: Նույնիսկ աստվածները կարող են ապստամբել:

— Ահա թե ինչ,— Դիքենսը անհամբերությամբ շրջեց գլուխը, նա ցանկանում էր որքան հնարավոր է արագ վերադառնալ ուրախ հասարակությանը, երաժշտությանն ու համեղ ուտելիքներին,— այդ դեպքում գուցե բացատրեք, թե ինչպես հայտնըվեցիք այստեղ: Ինչպե՞ս եղավ:

— Պատերազմը պատերազմ է ծնում, ավերումը հղի է ավերածությամբ: Երկրագնդի վրա մի հարյուրամյակ առաջ սկսեցին արգելել մեր գրքերը: Հրեշավոր հաշվեհարդար էր՝ ոչընչացնել այն ամենը, ինչ ստեղծել էինք: Հենց դա ստիպեց մեզ վերադառնալ: Որտեղի՞ց: Մահվան թվաբանությունի՞ց: Անեությունի՞ց: Ես վերացարկումների սիրահար չեմ: Ուղղակի չգիտեմ: Միայն գիտեմ, որ մեր ստեղծած աշխարհները և մեր ստեղծագործությունները օգնության էին կանչում, և մենք

փորձեցինք փրկել նրանց: Միակ հնարավորությունը այստեղ՝ Մարսի վրա մի հարյուր տարի սպասելն էր, մինչև Երկրի վրա այլևս չեն հանդուրժի կասկածամիտ գիտնականներին: Բայց նրանք այժմ էլ որոշել են վնդել մեզ այստեղից, մեզ ու մեր երևակայությունը՝ ալքիմիկոսներին, վիուկներին, արնախում հրեշներին ու շարքերին, որոնք մեկը մյուսի ետևից նահանջում էին գիտության հաղթարշավին զուգահեռ: Մենք փախուստից բացի այլ ճանապարհ չունենք: Դուք պետք է օգնեք մեզ: Դուք կարող եք համոզել: Դուք մեզ հարկավոր եք:

— Սեկ անգամ ևս կրկնում եմ, որ ձեզ հետ ոչ մի ընդհանուր բան չունեմ: Ես ձեզ չեմ քաջալերում, Պո, ոչ էլ ուրիշներին, — բարկացած գոռաց Դիքենսը, — ես երբեք վիուկներ, հրեշներ և այլ սատանայական բաներ չեմ հնարել:

— Իսկ ձեր պատմվածքը՝ «Ծննդյան երգե՞րը»:

— Դատարկ բան է, ընդամենը մի պատմվածք: Հնարավոր է, որ ուրիշ գործ էլ գրած լինեմ ուրվականների մասին, հետո՞ ինչ: Իմ գլխավոր գրքերը այդպիսի անմտությունների մասին չեն:

— Սխալմամբ է, թե ոչ, բայց նրանք ձեզ էլ են մեր շարքը դասել: Նրանք ձեր գրքերն են ոչնչացրել, Դիքենս, ձեր ստեղծած աշխարհները: Դուք պետք է ատեք նրանց:

— Համաձայն եմ, որ նրանք հիմար են ու տգետ, բայց միայն այդքանը: Մնաք բարով:

— Թող գոնե միսոր Մարլին դուրս գա:

— Ոչ:

Դուռը շրխկոցով փակվեց: Երբ Պոն ստոած սալահատակի վրա սայթաքելով փողոցով ցած էր իջնում, եղջերափողի ձայն լսեց և տեսավ մոտեցող փոստային կառքը: Թիծաղելով ու երգելով, կարմրատակած ու աշխույժ, երջանիկ ծնունդ գոռալով դուրս թափվեցին Փիքվիքյան ակումբի անդամները և ինչքան ուժ ունեին սկսեցին թակել դուռը:

Դուռը բացեց մի գիրուկ տղա:

Էդգար Պոն փութկոտ քայլում էր ցամաքած ծովի ափով: Մի պահ նա կանգ էր առնում մեկ այս, մեկ այն խարույկի մոտ, որպեսզի հանձնարարություններ տա, ստուգի՝ կաթւան լա՞վ

է ետում, դեղաթույնը բավարա՞ր է և կավիճով մոզական շոջանները ինչպէս են գծված:

— Լա՛վ է, — բացականչեց նա և առաջ անցավ, — հրաշալի՛ է, — գոռաց և առաջ վազեց: Սյուաները միացան նրան և վազեցին նրա ետևից: Ահա հասան միստր Քափըրդն ու միստր Մաքընը:

Բոլոր չար օձերը և կատաղի դևերը, կրակ ժայթքող վիշապները և ֆշշացող իժերը, ցնցվող վիուկները, թունավոր տատասկները, այրող եղինջը և ծակող կաղշնուկը, այն ամենը, ինչը այս տխուր եզրն էր շարտել երևակայությամբ նահանջած ծովը, այժմ փրփրում էր, քլթքլթում և թշշում:

Միստր Մաքընը հանկարծ կանգ առավ: Նա չոքեց սառն ավազի վրա և լաց եղավ երեխայի նման: Ջանում էին մխիթարել, բայց ապարդյուն:

— Ես հենց նոր մտածեցի..., — շնչաց նա, — ... ես մտածեցի, ի՞նչ կլինի մեզ հետ, եթե անհետանան մեր գրքերի վերջին օրինակները:

Քամին վզոցով անցավ կողքով:

— Չհամարձակվեք այդ մասին խոսել:

— Բայց մենք պարտավոր ենք, — հեծեծաց միստր Մաքընը, — հատկապես հիմա, երբ տիեզերանավը վայրէջք կկատարի, և դուք, պարոն Պո, դուք, Քափըրդ, դուք, Բիրս, կանհետանաք, ինչպէս քամուց քշված ծուխը: Ձեր դեմքերը կսկսեն հալվել...

— Վերահաս մա՞հ է սպասվում բոլորիս:

— Մենք գոյություն ունենք, քանի դեռ մեզ հանդուրժում են Երկրի վրա: Եթե այսօր վերջնական դատավճիռ արձակվի և անհետանան մեր գրքերի վերջին օրինակները, մենք կհանգչենք կրակի պես, — Քափըրդը տխուր մտածմունքի մեջ ընկավ:

— Ո՞վ եմ ես: Երկրի վրա ո՞ւմ հիշողության մեջ եմ դեռ ապրում, որտե՞ղ՝ աֆրիկյան մի հյուղակո՞ւմ, գուցե որևէ ծղոնավոր կարդո՞ւմ է իմ պատմվածքները: Արդյո՞ք նա վերջին մոմն է՝ ժամանակի ու գիտության քամուց երերացող: Թույլ մարմրող բոց, որի շնորհիվ ես դեռ ապրում եմ որպէս հպարտ վտարանդի: Կամ գուցե մի տղա է նա, որը լքված ձեղնահարկում ժամանակին գոցել է ինձ: Երեկ ես այնպե՛ս վատ էի, այնպե՛ս վատ: Հոգին էլ մարմին ունի, ճիշտ ինչպէս մարմինը,

և իմ հոգու մարմինը, նրա յուրաքանչյուր մասնիկը նվում էր...
Երեկ ես մոմ էի, որ հանգչում էր, բայց հանկարծ կրակը նոր
ուժով բոցավառվեց, որովհետև այնտեղ, Երկրում մի երեխա
փոշուց փոշտալով՝ իրենց ձեղնահարկում գտավ քրքրված,
մաշված իմ գիրքը: Եվ ահա ես կարծատև ժամանակ ստացա:

Ափին փոքրիկ խրճիթի դուռը ամուր շրխկաց: Ցածրահա-
սակ մարդը, որի կաշին ու ոսկորն էր մնացել, դուրս եկավ
խրճիթից և ոչ ոքի վրա ուշադրություն չդարձնելով, նստեց ու
հալացքը հառեց իր սեղմած բռունցքներին:

— Այ թե ում եմ ավստսում, — տխուր շշնջաց Բլեքվու-
դը, — նայեք, նրա վերջը մոտ է: Ինչ-որ ժամանակ նա ավե-
լի իրական հիվանդ էր, քան մենք՝ մարդիկս: Դարեր շարու-
նակ նրան՝ մերկ մտահղացմանը, վարդագույն մարմին էին
տվել, ձերմակ մորուք, թավշյա հագուստ ու սև երկարաձիտ
կոշիկներ: Նրան տվել էին սահնակ, եղջերուներ, փալլիլուն
զիզի-պիզիներ և մի ճյուղ փշատերև: Իսկ հետո վերցրին ու
ոչնչացրին, նետեցին, ինչպես անպետք իր:

Բոլորը լուռ էին:

— Ինչպե՞ս է այնտեղ, Երկրի վրա առանց ծննդյան տո-
ների, — մտածեց Պոն, — առանց բոված շագանակների, տո-
նաժառների, մոմերի ու շրխկանների... Ոչինչ չկա, միայն ձյուն,
քամի ու միայնակ, իրապաշտ մարդիկ...

Նրանք նայում էին ցանցառ մորուքով, խամրած կարմիր
թավշյա բաձկոնով ցածրահասակ, նիհար թերունուն:

— Գիտե՞ք, ինչպես այդ եղավ:

— Դժվար չէ պատկերացնել. ֆանատիկոս հոգեբույժ, խե-
լոք ձևացող սոցիոլոգ, փրփրած, դժգոհ ուսուցիչ, ֆանտազիա-
լից գուրկ ծնողներ...

— Ողբալի վիճակ է: Ես չեմ նախանձում ծննդյան տոների
նվերներ վաճառողներին, — քմիծաղեց Բիրսը: — Վերջերս,
որքան հիշում եմ, նրանք սկսել են փշարմավ կախել և ճրագա-
լույցը նշել ամենայն սրբոց տոնի նախօրյակին: Հիմա, եթե
իհարկե դա դեռ իմաստ ունի, թերևս սեպտեմբերին նշեն...

Բիրսը հանկարծ լոռեց և հառաչելով փլվեց գետնին: Ընկ-
նելիս հասցրեց շշնջալ.

— Ի՞նչ տարօրինակ է...

Սարսափից քարացած, նրանք նայում էին, թե ինչպես նրա

մարմինը վերածվում էր գորշ կապտավուն մոխրի և ածխացած ոսկորների, մրի փաթիլները լողում էին օդում:

— Բիրս, Բիրս...

— Նա չկա:

— Զոհվեց նրա գրքի վերջին օրինակը: Ինչ-որ մեկը երկրում հենց նոր այրեց:

— Աստված հոգին լուսավորի: Նրանից այլևս ոչինչ չմնաց: Քանի որ մենք ով ենք, եթե ոչ մեր գրքերը, և եթե գրքերը ոչնչացնում են, անհետ կորչում ենք և մենք:

Երկնքում աղմուկն ուժեղանում էր:

Տազնապալի ծիչերով նրանք վեր նայեցին: Կրակե բոցերով այրելով երկնակամարը, թռչում էր հրթիռը: Ժողովին առկայծեցին լապտերների լույսերը, լսվեց ճոռոց, կրճկրճոց, խլթխլթոց, կախարդական հեղուկի հոտը տարածվեց: Մնամեջ դրում-գանգերը՝ դատարկ ակնախոռոչներում այրվող մոմերով, շրջում էին սառը մաքուր օդում: Ոսկրոտ մատները սեղմված էին, և վիռվի սմբած շուրթերից անեծք էր թափվում:

Նավ, նավ, հապա, ջարդվիր, ընկիր,

Չքվիր, շնչվիր, բոցավառվիր,

Ցրիվ արի, պայթիր, ճայթիր,

Պառավի դի, կատվի կաշի...

— Եկել է մեր ճանապարհվելու ժամանակը, — շշնջաց Բլեքվուդը, — Յուպիտեր, Սատուրն կամ Պլուտոն:

— Փախչե՞նք, — գոռաց Պոն, — երբեք:

— Ես թեր մարդ եմ, հոգնել եմ:

Պոն նայեց թերունու դեմքին և հասկացավ, որ նա ճիշտ է ասում:

Նա մազլցեց հսկայական քարաբեկորներին և դիմեց հազարավոր գորշ ստվերներին, կանաչ լույսերին ու դեղին աչքերին, ոռնացող քամուն:

— Թույնը, դեղաթույնը, — գոռաց նա:

Դառը նշի, քեմոնի, մուշկի, մանուշակի արմատի ու օշինդրի բույր տարածվեց:

Հրթիռը իջնում էր դանդաղ և անդառնալիորեն, բոլորից անիծված մեղսագործի վայունով ու հեծեծյունով: Էդգար Պոն մոլեգնել էր: Նա վեր պարզեց սեղմած բռունցքները, և բույրերի, ատելության ու զայրույթի սիմֆոնիան հնազանդվեց: Փոթոր-

կի կոտրատած ճյուղերի նման վեր խոյացան չղջիկները: Կըր-
դովված սրտերը շիկացած օդում արկերի պես պայթում էին
արնաներկ հրավառությամբ: Ավելի ու ավելի ցած, ճոճանակի
նման անկասելի, իջնում էր հրթիռը:

Զայրացած լուտանքներ թափելով, Պոն ետ էր ընկնում,
իսկ հրթիռը մոտենում էր՝ շամփրելով օդը: Սեռած ծովը դար-
ձել էր ջրհոր, որտեղ, ինչպես ծուղակում, նրանք սպասում
էին, թե երբ կացնի բերանի նման կիջնի չարագուշակ մեքե-
նան: Կարծես կանգնած էին լեռներից գլորվող ճնահլուսի
դեմ-հանդիման:

— Իժե՛ր, — գոռաց Պոն:

Բազմագույն գալարածապավենները վեր սլացան, հրթիռին
ընդառաջ: Բայց այն արդեն վայրէջք էր կատարել՝ ակոսելով,
այրելով օդը:

Եվ ահա այն գտնվում էր ընդամենը մի մղոն հեռավորու-
թյան վրա, հոնդալով, ավազների հենած կրակե պոչը:

— Առա՛ջ, — մոլեգնած գոչեց Պոն, — մեր թրագիրը փոխ-
վեց: Հիմա մենք միայն մի ելք ունենք: Առա՛ջ: Առա՛ջ: Միա-
սին հարձակվենք, ձգմենք, սպանենք նրանց:

Թվաց, դա հրաման էր գազազած ալիքներին փոխելու իրենց
վազքը, ծովին՝ ալեկոծվելու և թողնելու իր նախնական տե-
ղը, մոլեգնած պտտահողմին՝ գալարվելու ավազների վրա,
կրակին՝ հեղեղի պես լցվելու չորացած գետահունները, փոթո-
րիկին, կայծակին, տեղատարափին՝ հարձակվելու ափերի
վրա: Ստվերները ճիչ ու սուլոցով, հեծեծլունով ու հառա-
չանքներով ուղղվեցին դեպի հրթիռը, որը հեռավոր հովտում
շարժիչները անջատած՝ նման էր մետաղյա հանգած ջահի:
Կարծես շրջվել էր սևացած կաթսան: Զայրացած մարդիկ և
մոնչացող գազանները շիկացած լավայի նման հոսում էին
ծովի հատակը անջուր մղոններով:

— Սպանենք նրանց, — գոռում էր վազող Էդգար Պոն:

Տիեզերագնացները դուրս եկան նավից, հրացանները պատ-
րաստ պահած: Զգուշորեն աջ ու ձախ նայելով, նրանք որսա-
չների պես հոտոտում էին օդը: Ամայի էր, ոչ ոք չկար: Նրանք
թեթևացած շունչ քաշեցին:

Վերջինը հրամանատարը դուրս եկավ: Անմիջապես հրամա-

լեց ցախ հավաքել և խարույկ վառել: Բոցերը երկինք ելան: Հրամանատարը կարգադրեց կիսաշրջանաձև մոտենալ:

— Մեր առջև նոր աշխարհ է, — սկսեց նա ստիպելով իրեն խոսել հանդարտ ու վստահ, չնայած ջղաձգորեն անընդհատ գլուխը ետ էր շրջում, նայելով չորացած ծովին:

— Հին աշխարհը մնաց ետևում, սա նոր աշխարհի սկիզբըն է: Ինչ կա ավելի խորհրդանշական, քան այն, որ մի անգամ ևս հաստատենք մեր նվիրվածությունը գիտությանն ու առաջադիմությանը: — Նա գլխով արեց օգնականին, — գրքերը: — Կրակը խաղաց գրքերի խամրած վերնագրերի հետ՝ «Ուրիներ», «Ավելորդ», «Ահավասիկ, երազող է», «Բժիշկ Ջեքըլը և միստր Հայդը», «Զմրուխտե քաղաքի կախարդը», «Փելուսիդար», «Ժամանակի լքած երկիրը», «Ամառային գիշերվա երազը» և Մաքընի, Էդգար Պոլի, Զեբըլի, Դանսընի, Բլեքվուդի, Լուիս Զերոլի ատելի անունները՝ մոռացված, բասադրված անուններ:

— Սա նոր աշխարհ է, և մենք հանդիսավորությամբ հիմա վերջ կտանք այն ամենին, ինչ մնացել է հնից:

Հրամանատարը գրքերից մի էջ պոկեց: Պոկոտում էր մեկը մյուսի ետևից և նետում կրակը:

Ականջ ծակող ծիչ:

Մարդիկ վախեցած ընկրկեցին, և նրանց հայացքները ակամա ուղղվեցին ամալի ծովի ափին վառվող խարույկի կողմը:

Էլի ծիչ, բարձր ու ողբաձայն, նման շնչահատ վիշապի, կատաղությամբ ափի գետաքարերին զարնվող կետի հոգեվարքի, քանի որ Լեիաթանյան ծովը ընկրկեց, որ էլ ետ չգա:

Թվաց՝ օդը սուլոցով սրընթաց լցվեց դատարկության մեջ, որտեղ մի պահ առաջ ինչ-որ բան է եղել:

Հրամանատարը խնամքով հաշվեհարդար տեսավ վերջին գրքի հետ՝ նետելով կրակը:

Օդը այլևս չէր թրթռում:

Լոռություն:

— Հրամանատար, լսո՞ւմ եք:

Մարդիկ գլխահակ ականջ էին դնում:

— Ոչ:

— Ալիք է, սըր: Այս ծովի հատակին: Ինձ թվաց նույնիսկ տեսնում եմ: Հսկայական սև ալիք: Ուղիղ մեր վրա է գալիս:

- Ձեզ թվացել է:
- Նայեք ինքներդ:
- Էլի ի՞նչ կա:
- Տեսեք, տեսեք: Հեռվում քաղաք է, կանաչ քաղաք: Լճի ափին, ճեղքվեց երկու մասի, ավերվում է:

Առաջ թեքված մարդիկ լարեցին տեսողությունը և անհանգիստ շարժվեցին: Սմիթը կանգնել էր նրանց մեջ, դողացնում էր: Ձեռքը հպել էր ծակատին, ձգտում էր ինչ-որ բան հիշել:

— Հիշեցի: Այո, այո, հիշեցի: Շատ վաղուց, դեռ երեխա ժամանակ մի գիրք եմ կարդացել, կարծեմ հեքիաթ էր Ջորջիստե քաղաքի մասին: Հիշեցի՝ «Ջորջիստե քաղաքի հեքիաթը»:

- Ջորջիստե:
- Այո, քաղաքն այդպես էր կոչվում: Ես հիմա տեսա ճիշտ այնպես, ինչպես գրքում էր նկարագրված, բայց փլվեց:
- Սմիթ:
- Այո, սըր:
- Հրամայում եմ անհապաղ գնալ հոգեբույժի մոտ:
- Լսում եմ, սըր, — Սմիթը պատվի բռնեց:
- Բոլորը զգուշություն պահպանեն:

Վախով հրացանները պատրաստ պահած մարդիկ հեռանում էին հրթիռից ու նրա լուսարձակներից, որպեսզի ավելի լավ տեսնեն կեղծ թուվը և ցածր բլուրները:

— Ինչպե՞ս, այստեղ ոչ ոք չկա՞, — հուսախաբ շշնջաց Սմիթը, — ոչ մի կենդանի շո՞ւնչ:

Քամին վայունով մի բոտ ավազ նետեց նրա ոտքերի տակ:

ԱՐԵՎԻ ՈՍԿԵ ԽՆՁՈՐՆԵՐԸ

— Ղեպի հարավ, — ասաց տիեզերանավի հրամանատարը:

— Բայց այստեղ, — առարկեց անձնակազմը, — տիեզերքում պարզապես անհնար է կողմնորոշվել:

— Երբ թռչում ես արևին ընդառաջ, — պատասխանեց հրամանատարը, — և ամեն ինչ դառնում է դեղին, տաք, ծուլաբեր, ապա դուք միայն մի ուղղություն ունեք:

Նա փակեց աչքերը և պատկերացնելով տիեզերքում բոցա-

վառվող հեռավոր, հրաշեկ կղզին, մեղմ հոգոց հանեց:— Ղեպի հարավ:

Դանդաղ գլխով արեց և կրկնեց.

— Հարավ:

Նրանց հրթիռը կոչվում էր «Կոպե դե օրո»¹, բայց ևս երկու անուն ուներ՝ «Պրոմեթևս» և «Իկար»։ Եվ իսկապես նրանք թռչում էին դեպի միջօրեի կուրացուցիչ արևը։ Ի՞նչ բարձր տրամադրությամբ նրանք երկու հազար շիշ թթվաշօջարակ և հազար շիշ փրփրուն գարեջուր բեռնեցին՝ պատրաստվելով այս ճամփորդությանը դեպի անձիր Սահարա։ Եվ այժմ, երբ վերևում արևն էր քլթքլթում, նրանք հիշեցին բանաստեղծություններ և մեջբերումներ:

— Արևի ոսկե խնձորներ՞րը:

— Յե՞լթս²:

— Մի վախեցիր այլևս արևի ջերմությունի՞ց:

— Իհարկե, Շեքսպիրն է:

— Ստայնբեկի «Ոսկե թասը»։ Ստիվընսի³ «Ոսկե սափորը»։ Իսկ հիշո՞ւմ եք ծիածանի ծայրերին թաղված ոսկե անոթները: Գրողը տանի, ահա և մեր ուղեծրին հարմար անուն՝ «Ծիածան»:

— Զերմաստիճա՞նը...

— Տարենհայթի հազար աստիճան:

Հրամանատարը նայեց նավակողի սև, վիթխարի դիտանցքից: Ահա արևը: Եվ նրան ամբողջովին համակեց մեն մի նվիրական միտք՝ հասնել արևին, շոշափել և ընդմիջտ մի մասնիկ փախցնել նրանից: Տիեզերանավը միավորում էր զուսպ հարմարավետություն և սթափ հաշվարկ: Սառցապատ միջանցքներում բքաշունչ ձմռան սառնությունն էր փչում: Տիեզերքում բռնկվող հզոր օջախի ամենաչնչին կայծը, կրակի ամենաչընչին շնչառությունը, եթե ի վիճակի լինի սողոսկել նավի կարծր պատյանից ներս, կհանդիպի նիրհած ձմռանը, ասես այստեղ թաքնվել էին փետրվարյան ամենասաստիկ սառնամանիքները:

¹ Ոսկե թաս (խալ.):

² Կիլամ Բաթլըր Յեյթս (1865—1939) — իռլանդացի բանաստեղծ և դրամատուրգ:

³ Ջեյմս Ստիվընս (1882—1950) — իռլանդացի բանաստեղծ և նուվելիստ:

Բևեռային լուռության մեջ քրթմնջաց խոսող ջերմաչափը՝

— Ջերմաստիճանը երկու հազար աստիճան:

«Ընկնում ենք,— մտածեց հրամանատարը,— ընկնում ենք, ինչպես ձյան փաթիլը շոգ հունիսի, տոթ հուլիսի կամ օգոստոսի հեղձուցիչ տապի գիրկը»:

— Ֆարենհայթի երեք հազար աստիճան:

Չյան ծածկոցի տակ հոնդում էին շարժիչները: Սպիտակ օձազալար խողովակաշարով ժամում տասը հազար մղոն արագությամբ պոմպերը սառեցնող հեղուկ էին մղում:

— Ֆարենհայթի չորս հազար աստիճան:

Կեսօր: Ամառ: Հուլիս:

— Ֆարենհայթի հինգ հազար...

Վերջապես հրամանատարը անշտապ ազդարարեց ճամփորդության նպատակը.

— Այժմ մենք կդիպչենք արևին:

Այդ մտքից նրանց աչքերը փալլեցին հալած ոսկու նման:

— Յոթ հազար աստիճան:

Տարօրինակ է, որ մետաղական ջերմաչափի անկենդան ձայնը կարող է այդպես հուզախոով հնչել:

— Ժամը քանի՞սն է,— հարցրեց ինչ-որ մեկը:

Բոլորը ժպտացին:

Քանի որ այստեղ գոյություն ուներ միայն Արեգակը և կրկին Արեգակը: Արեգակն էր հորիզոնը և աշխարհի բոլոր կողմերը: Նա էր վառում բոպենները, վայրկյանները, ավազի ժամացույցները, զարթուցիչները. նրա մեջ այրվում էր ժամանակը և հավերժությունը: Նա այրում էր կոպերը և կոպերի ետևում գտնվող մութ աշխարհի շիճուկը, ցանցաթաղանթը և ուղեղը: Նա այրում էր քունը և հաճելի հիշողությունները քնի ու զովասուն մթնշաղի մասին:

— Նայեցե՛ք:

— Հրամանատա՛ր:

Առաջին ղեկապետ Բրեթընը փլվեց եղյամածածկ տախտակամածին: Պաշտպանական համազգեստը սուլեց պատոված տեղում: Պոկվեց սառչող գոլորշու ամպը՝ մարդու ջերմությունը, թթվածինը, նրա կյանքը:

— Արագ:

Բրեթընի պլաստմասսայե դիմակը ներսից արդեն պատվել

Էր կաթնագույն սառցափոշով, ապակու վրա եղյամի նախշեր էին երևում: Ընկերները հակվեցին նրա վրա:

— Համազգեստը խոտան է, հրամանատար: Նա մեռած է:

— Սառել է:

Նրանք հայացքները հառեցին ջերմաչափին, որը ցույց էր տալիս, թե ինչ ձմեռ էր տիրում իրենց ձյունե նավում: Հազար աստիճան գրոյից ցածր: Հրամանատարն ակնապիշ նայեց սառած արձանին և կայծկտող սառցաբլուրեղներին, որոնք արագորեն շաղ էին գալիս նրա վրայով: «Ճակատագրի ի՞նչ չար խաղ, — մտածեց նա, — մարդը վախենում էր կրակից, բայց մեռավ սառնամանիքից»:

Հրամանատարը շրջվեց:

— Ժամանակ չկա: Ժամանակ չկա: Թողեք պառկած մնա: Նա զգաց, ինչ դժվարությամբ է շարժվում լեզուն.

— Զերմաստիճա՞նը:

Թվանցույցը ցատկել էր չորս հազար աստիճան:

— Տեսե՛ք, հրամանատար, տեսե՛ք:

Նրանց թռչող սառցալույան սկսեց հալչել:

Հրամանատարը կտրուկ բարձրացրեց գլուխը և նայեց առաստաղին: Եվ ասես մեկեն լուսավորվեց կինոէկրանը. նրա գիտակցության մեջ հստակորեն ծագեց ծիծաղաշարժ տեսարանը, հեռավոր մանկության հիշողությունը:

... Գարնանային առավոտ էր: Ինքը փոքրիկ տղա, ձյան բուրմունքը ունկերում, իր ննջասենյակի պատուհանից կախվել էր տեսնելու, թե ինչպես է արևի տակ պսպղում ձմռան վերջին սառցալույան: Թափանցիկ բլուրեղյա սալից սպիտակ գինու պես կաթում էր գով, բայց հետզհետե տաքացող ապրիլի արյունը: Դեկտեմբերի զենքը թույլ առ թույլ դառնում էր պակաս վտանգավոր: Վերջապես միայնակ զանգերի ղողանջով սառցալույան զարնվեց մանրախճով ծածկված պատին:

— Հրամանատար, ջարդվեց օժանդակ պոմպը: Սառեցման սարքը... Սառույցը հալվում է:

Վերևից տաք անձրև տեղաց: Հրամանատարը գլուխը աջ ու ձախ էր տարուերում:

— Որտե՞ղ է վնասվածքը: Գրողը տանի, մի՛ խանգարեք, մենք ժամանակ չունենք:

Մարդիկ խոնվեցին: Հափոյելով՝ հրամանատարը խույս էր

տալիս տաք անձրևից, նրա ձեռքերը շոշափում էին սառը սարքը, փնտրում-որոնում էին, և քանի դեռ աշխատում էր՝ աչքերի առջև հառնեց ապագան, որից իրենց, թվում էր՝ բաժանում էր լույս մի կարծ հոգոց: Նա տեսնում էր, թե ինչպես էր թափվում տիեզերանավի ծածկույթը, թե ինչպես անպաշտպան մարդիկ վազվզում են, պատեպատ խփվում, բերանները բաց անձայն ծիչով: Տիեզերքը մի սեփ-սև մամոակալած ջրհոր էր, որը մեջ կլանքը խեղդում էր իր աղաղակն ու սարսափը: Ծչա որքան կուգես, տիեզերքը կխեղդի ծիչը ծնվելու պահին: Մարդիկ իրար են անցել, ինչպես մրջյունները այրվող լուցկու տուփի մեջ, տիեզերանավը վեր է ածվել եռման լավալի, շոգեմորրիկի:

— Հրամանատար:

Մղձավանջը ցրվեց:

— Ահա այստեղ է:

Նա աշխատում էր վերին տախտակամածից տեղացող գոլ մանրաշաղ անձրևի տակ:

Նա շոշափեց օժանդակ պոմպը:

— Գրողը տանի:

Հրամանատարը թափով քաշեց ծոպանից: Վերահաս մահը մահերի պատմության մեջ կլինի ամենաարագը: Սոսկ մի ակնթարթ, ճիչ, տաք բռնկում... ապա միայն տիեզերական կրակի միլիարդավոր տոննաներ կշրջան անարձագանք, անծիր տարածության մեջ: Հնոցը նետված մի բուռ կարմիր մորի՝ նրանց մտքերը մի պահ կքարանան շիկացած օդում՝ ավելի երկար ապրելով, քան նրանց ածխացած և լուսածորող գազի վերածված մարմինները:

— Գրողը տանի:

Նա պտուտակահանով հարվածեց պոմպին:

— Աստված իմ:

Հրամանատարը սարսուռաց: Լիակատար ոչնչացում: Նա կկոցեց աչքերը, սեղմեց ատամները:

— Աստված իմ, — մտածեց նա, — մենք սովոր ենք մեռնել ավելի հանգիստ, րոպեների կամ ժամերի ընթացքում: Նույնիսկ քսան վայրկյանը դանդաղ մահ է այն բանի համեմատությամբ, ինչ հիմա կանի մեզ խժոելու պատրաստվող այս քաղցած հրեշը:

— Հրամանատար, հիմա ինչ, խաղից դո՛ւրս ենք գալիս, թե մնում ենք:

— Թասը պատրաստեք: Ա՛յ այստեղ է, արագ վերջացրեք:

Նա շրջվեց հսկայական թասի բանող սարքի կողմը և ձեռքը մտցրեց տարածական կառավարման ձեռնոցի մեջ: Դաստակի մի շարժում, և տիեզերանավի խորքերից դուրս ցցվեց վիթխարի մի ձեռք՝ վիթխարի մատներով: Ավելի մոտ, ավելի մոտ... մետաղյա ձեռքը ընկղմվեց «Կոպե դե օրոյի» բոցկլտուն անշունչ քուրայի մեջ: Արեգակի անմարմին մարմնի մեջ:

Միլիոն տարի առաջ, արագորեն մտածեց նա, թասը ուղղելով, միլիոն տարի առաջ մերկ մարդը հյուսիսային ամալի արահետի մոտ կայծակնահար ծառ տեսավ: Մինչ նրա ցեղը ահաբեկված փախչում էր, մատներն այրելով՝ նա ճանկեց ամխակոթը և մարմնով պաշտպանելով անձրևից, հաղթականորեն նետվեց իր քարայրը, որտեղ գրնգուն ծիծաղով ամխակոթը նետեց չոր տերևների կույտի մեջ և իր ցեղակիցներին ամառ նվիրեց: Սարսափած մարդիկ մոտ սողացին կրակին, պարզեցին իրենց դողահար ձեռքերը և զգացին, ինչպես քարայր մուտք գործեց տարվա նոր եղանակը: Այդ դեղին, փոքրիկ կայծը եղանակը փոխեց: Նրանք վերջապես անհամարձակ ժպտացին: Այդպես կրակը դարձավ մարդկանց սեփականությունը:

— Հրամանատար՛ր:

Ընդամենը չորս վայրկյան էր հարկավոր, որ վիթխարի ձեռքը դատարկ թասը ընկղմեր կրակի մեջ:

«Եվ ահա մենք այսօր կրկին մի ուրիշ արահետի վրա ենք, — մտածեց հրամանատարը, — կպարզենք թասով ձեռքը թանկարժեք գազի և վակուումի ետևից, այլ տեսակի մի բուռ բոցի ետևից, որպեսզի նրա հետ, լուսավորելով մեր ճանապարհը, ետ սլանանք ցուրտ տիեզերքով և Երկիր հասցնենք անմար ընծան: Հանուն ինչի՞»:

Պատասխանը նա գիտեր հարցը տալուց առաջ:

«Որովհետև ատոմները, որոնք հնագանդեցրել ենք Երկրի վրա, ողորմելի են, ատոմային ումբը խղճուկ է և փոքր, մեր գիտելիքները խղճուկ են ու աննշան, և միայն արևն իսկապես գիտի այն, ինչ մենք ուզում ենք իմանալ, միայն արևը գիտի գաղտնիքը: Դրանից բացի հրաշալի, մեծ բան է՝ այստեղ գալ, կաչել նրան և սրընթաց ետ փախչել: Իսկապես, այլ բացատրություն չկա, բացի մժղուկ մարդկանց հպարտությունից և սնա-

փառությունից, որոնք հանդգնում են քաջքել առյուծի պոչը
 և խույս տալիս նրա երախից: Աստված իմ, մենք հետո կա-
 սենք, որ գլուխ հանեցինք: Ահա էներգիայի, կրակի, իմպուլս-
 ների մեր թասը,— կոչեք ինչպես ուզում եք,— այն հոսանք
 կտա մեր քաղաքներին, ընթացքի մեջ կոչի մեր նավերը, լույս
 կտա մեր գրադարաններին և արևայրուկ՝ մեր երեխաներին,
 կթխի մեր հացը հանապազօր, և կօգնի գիտելիքներ լուրացնել
 տիեզերքի մասին: Խմե՛ք այս թասից, բարի մարդիկ, գիտու-
 թյան ու կրոնի ներկայացուցիչներ: Թող այս կրակը տաքացնի
 ձեզ, ցրի տգիտության խավարը և սնահավատության երկար
 ձմեռը, անվստահության ցրտաշունչ քամիները ու ամեն մարդու
 հետապնդող մթության մեծ սարսափը: Եվ այսպես՝ մենք ձեռք
 ենք պարզում մուրացիկի թասով...»:

— Օ՛հ:

Թասը ընկղմվեց արևի մեջ: Նա թեքվեց՝ վերցնելով մի կտոր
 աստվածային մարմին, տիեզերքի մի կաթիլ արյուն, բոցա-
 վառվող միտք, կուրացուցիչ իմաստություն, որը նշագծել ու
 կառուցել է ծիր Կաթինը, բաց է թողել մուլորակները նրա
 ուղեծրով, սահմանել նրանց ընթացքը և ստեղծել է կյանքը՝ իր
 ողջ բազմազանությամբ:

— Զգո՛ւյ՛, — շնչաց հրամանատարը:

— Ի՞նչ է լինելու, երբ մենք թասը ետ քաշենք... Առանց
 այն էլ այսպիսի ջերմաստիճան է:

— Աստված գիտե, — ասաց հրամանատարը:

— Օժանդակ պոմպը սարքին է:

— Միացրե՛ք:

Պոմպն աշխատեց:

— Թասը փակեք կափարիչով և ներս քաշեք: Ռանդա՛ղ,
 ավելի՛ դանդաղ...

Գեղեցիկ ձեռքը տիեզերանավի դրսից ցնցվեց, վիթխարի
 անորադարձումով կրկնելով հրամանատարի շարժումը և անաղ-
 մուկ սահեց իր տեղը: Ամուր փակված թասը, շաղ տալով դե-
 ղին ծաղիկներ և ճերմակ աստղեր՝ անհետացավ տիեզերանավի
 որովայնում: Խոսող ջերմաչափը շչաց: Սառեցման սարքերը
 ցնցվեցին, հեղուկ ամոնիակը գարնվում էր խողովակների պա-
 տերին, ինչպես արյունը ճչացող խելագարի քունքերին:

Նա փակեց դրսի օդախցանով դուռը:

— Պատրաստ է:

Բոլորը սպասման մեջ էին: Տիեզերանավի զարկերակը բաբախեց, սիրտն սկսեց արագորեն տրոփել. ոսկե թասը նավի մեջ էր: Սառն արյունը հորդում էր կարծր երակներով:

Հրամանատարը հանգիստ շունչ քաշեց:

Առաստաղից կաթոցը կտրվեց: Սառույցը դադարեց հալչել:

— Այժմ՝ ետ գնացինք:

Տիեզերանավը շրջվեց ու սլացավ հեռու:

— Լսեցե՛ք:

Տիեզերանավի սիրտը զարկում էր ավելի ու ավելի հանդարտ: Սարքերի սլաքները սրընթաց ցած էին վազում՝ հաշիվը պակասեցնելով հազարներով: Ջերմաչափը երգում էր տարվա եղանակների հերթագայությունը: Եվ բոլորը նույնն էին մտածում. «Սուրա՛, սուրա՛ բոցից ու կրակից, տապից ու եռքից, դեղինից ու սպիտակից հեռու: Սուրա՛ ցրտին և մառախուղին ընդառաջ»: Քսան ժամ հետո, թերևս կարելի լինի անջատել սառնարանների մի մասը, և ձմեռը կմեռնի: Ծուտով նրանք կշարժվեն այդպիսի ցուրտ գիշերվա մեջ, հնարավոր է՝ հարկ լինի օգտվել տիեզերանավի նոր հնոցից, ջերմություն կորզել ամբարած կրակից, որ այժմ տանում են իրենց հետ, ինչպես չծնված երեխա:

Նրանք տուն էին վերադառնում:

Նրանք տուն էին վերադառնում, և հրամանատարը խոնարհվելով Բրեթընի դիակի վրա, որ պառկած էր ձերմակ ձյունակույտի մեջ, հիշեց շատ տարիներ առաջ գրած իր բանաստեղծությունը.

Երբեմն արևն ինձ թվում է այրվող ծառ,
Որի ոսկե մրգերը պայծառ լողում են տաք օդում,
Որի խնձորները ներժժված են ձգողության հյուսով,
Եվ մարդիկ երկրպագում են նրան,
Արեգակը նրանց թվում է այրվող ծառ:

Երկար նստեց հրամանատարը գոհվածի կողքին, և խառն զգացումներ էին պաշարել նրան:— Ես տխուր եմ,— մտածեց նա,— և երջանիկ եմ, ու ինձ այն տղայի նման եմ զգում, որ դպրոցից տուն է գալիս ձեռքին խատուտիկների մի մեծ փունջ:

— Այսպես,— հոգոց հանեց հրամանատարը՝ աչքերը փակ նստած,— ո՞ր ենք այժմ թռչում, ո՞ր...

Նա գիտեր, որ իր բոլոր մարդիկ այստեղ են, կանգնած կամ նստած շուրջը, որ սարսափը մեռել է, նրանք հանգիստ են շնչում:

— Դեպի Արեգակ երկար-երկար ճամփորդությունից հետո, երբ դու հավեցիր նրան, հապաղեցիր մի պահ, պտտվեցիր շուրջը և սլացար հեռու, այժմ ո՞ր ես գնում: Երբ դու հեռացար տապից, միջօրեի լուսից ու քաղցր թմբիրից, ո՞ր ես, արդյոք, գնում:

Անձնակազմը սպասում էր, թե հրամանատարը ինքը երբ կասի: Նրանք սպասում էին, մինչև որ նա իր մտքի մեջ իմի բերեր ողջ սառնությունն ու սպիտակությունը, թարմությունն ու վճիտ օդը մի բաղձալի բառի մեջ, և նրանք տեսան, թե ինչպես է ծնվում բառը նրա շուրթերին ու մեղմորեն սահում պաղպաղակի կտորի պես:

— Մեզ համար տիեզերքում այժմ միայն մի ուղղություն կա,— վերջապես ասաց նա:

Նրանք սպասում էին: Սպասում էին, քանի դեռ տիեզերանավը արագընթաց շարժվում էր լուսից դեպի ցուրտ խավարը:

— Դեպի հյուսիս,— շշնջաց հրամանատարը:— Դեպի հյուսիս:

Բոլորը ժպտացին, ասես տոթակեզ ետմիջօրեին հանկարծ փչել էր զովասուն քամի:

ԲՈՎԱՆՂԱՎՈՒԹՅՈՒՆ

451° ըստ Ֆարենհայթի	3
Երկրագիները	171
Կանաչ առավոտը	190
Գիշերային հանդիպում	196
Տարագիրները	206
Արևի ոսկե խնձորները	223

ՈՒՅ ԲՐԵՂԲԵՐԻ

451° ըստ Ֆարենհայթի

Վեպ: Պատմվածքներ

Ուպրոցական բարձր տարիքի համար

РЭЙ БРЭДБЕРИ

451° по Фаренгейту

Роман, Рассказы

Для старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1986

Խմբագիր՝ Ռ. Ն. Զալաշյան

Նկարիչ՝ Վ. Ա. Հարությունյան

Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան

Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ե. Մամիկոնյան

ИБ 5238

Հանձնված է շարվածքի՝ 23.06.86: Ստորագրված է տպագրության՝ 10.10.86.

Ֆորմատ՝ 84×108¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ «Արմենուտի».

Ցպագրություն՝ բարձր: 12,18 պայմ. տպ. մամ., 12,48 պայմ. ներկ. թերթ.,

11,0 հրատ- մամ.: Գինը 55 կոպ.

Պատվեր՝ 1857: Տպաքանակ՝ 30.000:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Սեդախարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Меганарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

55 կ.

• Վերջին Գրք •

«ՄՈՎԵՏՍՈՎԱՆ ԳՐԱՆ»